Սամվել Մանուկյան

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները

EIDHR

ԱՐԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
CENTRE FOR COUNTER-TERRORISM ASSISTANCE

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 323 (479.25)
ԳՄԴ 66.3 (2Հ)
Մ 283

Մանուկյան Սամվել Արշալույսի
Մ 283 Կոռուպցիան և անցումային շրջանի սոցիալական դինամիկան. Երևանի ուսանողության կոռուպցիոն դիրքորոշումներն ու միտումները - Եր.: Լուսակն, 2005.- 196 էջ:

Գրքույկում տրված է անցումային շրջանում Հայաստանի սոցիալական դինամիկան պայմանավորող գործոնների և դրանց ազդեցության տակ ընթացող գործընթացների հայեցակարգը, ինչպես նաև դրանց համատեքստում Հայաստանի ապագա վերնախավերում կոռուպցիայի նկատմամբ առկա դիրքորոշումներն ու դրանց փոփոխության միտումները:

Կառուցված է հայեցակարգը հիմնավորող կիբեռնետիկական (բազմաչափ մաթեմատիկական) մոդելների համակարգը և ներկայացված են մոդելների կանխատեսումները:

Սոցիալական դինամիկայի վեր հանված միտումների համակարգի ենթատեքստում դիտարկված են Հայաստանի աշխարհ-տնտեսական զարգացման սցենարները և ռազմավարությունները:

Նախատեսված է պետական, սոցիալական և քաղաքական կառավարման ռազմավարություններ մշակող և իրականացնող մասնագետների և ուսանողության համար:

Մ 0803010413 / 0150(01) – 2005 2005 ԳՄԴ 66.3 (2Հ)

ISBN 99941-48-09-5

© Սամվել Մանուկյան
© Ահաբեկչության դեմ պայքարի աջակցության կենտրոն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 6

ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ 10

ՇՆՈՐՀԱԿԱԼԱՆՔ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 15

Հետխորհրդային տարածքում անցումային գործընթացների նախնական պայմանները 16

Հետխորհրդային տարածքում հիմնական սոցիալ-տնտեսական և մշակութային միտումները 20

Գլոբալ տնտեսակարգային դինամիկայի հիմնադրույթը 28

Հայաստանյան հիմնական գործընթացները տնտեսակարգային դինամիկայի համատեքստում և կոռուպցիան 32

ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 44

Կոռուպցիայի տիպաբանական դասակարգումը 45

Կոռուպցիայի հետազոտման ընդհանուր խնդիրները 48

Հետազոտության ընդհանուր նկարագրությունը 49

Հետազոտության օբյեկտը 49
Հետազոտության խնդիրները 49
Հետազոտության մեթոդը 50
Հետազոտության գործիքը 51
Վերլուծական մեթոդները 52

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 55

Կոռուպցիոն դիրքորոշում 55

Կոռուպցիոն դիրքորոշման, սոցիալ-տնտեսական և մշակութային գործոնների փոխկապակցվածությունը որպես կիբեռնետիկական համակարգ 58

Կոռուպցիոն դիրքորոշումը և սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական բնութագրերը 61

Սեռ 61
Ծննդավայրի տիպը 65
Ծնողների կարգավիճակը 67
Ծնողների կրթական մակարդակը 71
Բարեկեցության մակարդակը 74
Բարեկեցության փոփոխությունը 75

Մշակութային պարամետրեր 77
Ինտերնետ և ընթերցանություն 79
Կենսաոճը 85
Ենթամշակութային պատկանելության գործոն 96

Կոռուպցիայի վերաբերյալ ճանաչողական պատկերացումները ...101
Պատկերացումները կաշառակերության տարածվածության վերաբերյալ 101
Կաշառակերության մեխանիզմները 104
Կաշառակերության արմատները 106
Կոռուպցիայի վերացման ուղիները 113

ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ 120

Դիրքորոշումների և պատկերացումների համալիրները. Մոդել 1...120
Աշխարհայացքային առաջին համալիրը և կոռուպցիոն դիրքորոշումը 128

Դիրքորոշումների և պատկերացումների համալիրները. Մոդել 2...131
Երևանի ուսանողության աշխարհայացքային դիրքորոշումները ձևավորող գործոնները 133
Երևանի ուսանողության աշխարհայացքային շերտերը 136
Դիրքորոշումների երկրորդ համալիրը և կոռուպցիոն դիրքորոշումը 141
Օլիգարխները և Հայաստանը 147
Հասարակության տիպը և կոռուպցիոն դիրքրոշումը 150

Բարեկեցության ուղիները և սպասելիքները 155
Հարստանալու ճանապարհները և կոռուպցիոն դիրքրոշումը 155
Կոռուպցիոն դիրքորոշումը և հետագա աշխատավայրը 158
Կոռուպցիոն դիրքորոշումը և ընդունելի կենսամակարդակի գնահատականը 161

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 171

ՀԱՎԵԼՎԱԾ 1. INDEM հիմնադրամի հակակոռուպցիոն հետազոտությունից վերցված հարցերի ցանկը 186

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ուսանողության բնութագրերի ազդեցության չափը կոռուպցիոն անհանդուրժողականության մակարդակի վրա 189

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսանողի աշխատավարձի ակնկալիքի մոդելը..... 193

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 195

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ընտրանքի սեռա-տարիքային կազմը..... 50

Աղյուսակ 2. Ընտրանքի մասնագիտական-սեռական կառուցվածքը . 50

Աղյուսակ 3. Ընտրանքն ըստ մասնագիտության և բուհի կարգավիճակի..... 51

Աղյուսակ 4. «Ձեր կարծիքով՝ ո՞րն է մեր հասարակության մեջ հարստանալու ամենաարդյունավետ ճանապարհը» 62

Աղյուսակ 5. Մոր կարգավիճակի ազդեցությունը զավակի կոռուպցիոն հանդուրժողականության վրա 64

Աղյուսակ 6. Ուսանողների ծնողների կարգավիճակների բաշխումն ըստ բնակավայրի տիպի 68

Աղյուսակ 7. Պետական (վճարովի և անվճար) և մասնավոր բուհերի ուսանողների բաշխումն ըստ հոր կարգավիճակի 69

Ուսանողների ծնողների կրթամակարդակների բաշխումը տրված է Աղյուսակ 8-ում:..... 71

Աղյուսակ 9. Ուսանողների ծնողների կրթամակարդակը:..... 72

Աղյուսակ 10. Ինտերնետից օգտվելու նպատակները 82

Աղյուսակ 11. Ուսանողության կենցաղային կիրառության իրերը..... 86

Աղյուսակ 12. Ուսանողության ազատ ժամանցի վայրերը 87

Աղյուսակ 13. Ուսանողության իդեալական տիպերի գործոնային մատրիցան 89

Աղյուսակ 14. Ուսանողների իդեալական տիպերը և կոռուպցիոն դիրքորոշումը..... 90

Աղյուսակ 15. Կենսառճային կլաստերների ծավալները մասնագի-
տական խմբերում 94

Աղյուսակ 16. Ուսանողների ենթամշակութային պատկանելությունն
ըստ երաժշտական նախասիրությունների..... 97

Աղյուսակ 17. Ուսանողների բարեկեցության ինքնագնա-
հատականները Երևանի և այլ տիպի բնակավայրերի համար..... 100

Աղյուսակ 18. Կաշառակերության պատճառների վերաբերյալ տարբեր
կարծիքների հետ համաձայնության աստիճանը..... 107

Աղյուսակ 19. Կաշառակերության պատճառների վերաբերյալ երկու
ամենակարևոր կարծիքների փոխադարձ կապը 107

Աղյուսակ 20. Կոռուպցիոն անհանդուրժողականության
կախվածությունը կոռուպցիայի արմատների վերաբերյալ
դատողություններից:..... 108

Աղյուսակ 21. Կոռուպցիայի բացակայության պատճառները..... 110

Աղյուսակ 22. Կոռուպցիայի առկայության և բացակայության վերա-
բերյալ պատկերացումների և դրանց փոխազդեցությունների ազդե-
ցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա 111

Աղյուսակ 23. Կառավարության հակակոռուպցիոն պայքարի նկատ-
մամբ վստահության պայմանները 114

Աղյուսակ 24. Կառավարության հակակոռուպցիոն պայքարի նկատ-
մամբ տարբեր դիրքորոշումներով խմբերի կոռուպցիոն դիրքորոշում-
ները 116

Աղյուսակ 25. Կոռուպցիայի դեմ բացահայտ պայքարողի նկարագիրը
ուսանողական պատկերացումներում 116

Աղյուսակ 26. Վերադասի կաշառակերության վերաբերյալ դատախա-
զությանը հայտնած անձին «քաջ» կամ «ազնիվ» որակելու հավանա-
կանության կախվածությունը ենթամշակութային պատկանելությունից 117

Աղյուսակ 27. Ուսանողական դիրքորոշումները կոռուպցիայի դեմ
անանուն հեռախոսազանգերի միջոցով պայքարի նկատմամբ: 118

Աղյուսակ 28. Կոգնիտիվ դիսոնանսը կոռուպցիայի դեմ «անանուն հեռախոսազանգերի» մեթոդի կիրառման դեպքում 119

Աղյուսակ 29. Ուսանողությանը հուզող խնդիրների կարևորության գնահատականները 121

Աղյուսակ 30. Մոդել 1. Ուսանողական դիրքորոշումների համալիրի գործոնային կառուցվածքը. 123

Աղյուսակ 31. Երևանի բնակչության և ուսանողության մոտ հասարակական որոշ խնդիրների դիրքավորվածության համեմատություն 127

Աղյուսակ 32. Հասարակության և հասարակական բարքերի վերաբերյալ Երևանի ուսանողության դիրքորոշում 132

Աղյուսակ 33. Աշխարհայացքային երկրորդ համախմբության գործոնային մոդելի կառուցվածքային մատրիցան 135

Աղյուսակ 34. Հասարակական դիրքորոշումների գործոնների ազդեցությունները կոռուպցիոն դիրքորոշման վրա 142

Աղյուսակ 35. Կոռուպցիոն դիրքորոշումներն իրական աշխարհայացքային շերտերում 143

Աղյուսակ 36. Կոռուպցիոն դիրքորոշման ազդեցությունը աշխարհայացքային տարրի վրա: 145

Աղյուսակ 37-ում տրված է այդ հարցախմբին տրված պատասխանների բաշխումները: Թույլատրվում էր նշել ոչ ավելի, քան երկու պատասխան: 147

Աղյուսակ 38. Ուսանողների դիրքորոշումներն օլիգարխների նկատմամբ: 148

Աղյուսակ 39-ում տրված են օլիգարխների նկատմամբ դիտարկված դիրքորոշումների և դրանց փոխազդեցությունների կապը, ազդեցությունը ուսանողի կոռուպցիոն անհանդուրժողականության վրա: 148

Աղյուսակ 40. Օլիգարխների նկատմամբ դիրքորոշումները և կոռուպցիոն անհանդուրժողականությունը 149

Աղյուսակ 41. «Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պետք է լինի հասարակությունը» 150

Աղյուսակ 42. Հասարակության տիպը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը 151

Աղյուսակ 43. Գաղափարաբանական դիրքորոշումների վարքագծային բեռնվածությունը 153

Աղյուսակ 44. Կոռուպցիոն դիրքորոշման կախվածությունը հարստանալու ուղիների նկատմամբ դիրքորոշումների գործոններից 157

Աղյուսակ 45. Ցանկալի աշխատանքային ոլորտը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը 160

Աղյուսակ 46. Կոռուպցիոն անհանդուրժողականությունը պետական կառավարման ընդհանրացված ոլորտներում աշխատել ցանկացող ուսանողների մոտ 161

Աղյուսակ 47. Աշխատանքային ոլորտի ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա 161

Աղյուսակ 48. Ուսանողների աշխատավարձային սպասումները և նրանց կողմից պետական պաշտոնյաների աշխատավարձերի գնահատականները 162

Աղյուսակ 49. Ուսանողների ցանկալի աշխատավարձը: Նախարարի, պետական միջին և ստորին մակարդակի պաշտոնյաների միջին աշխատավարձերը ըստ աշխատանքային ոլորտների 164

Աղյուսակ 50. 2003 թվին ամսական միջին (անվանական) աշխատավարձերը Հայաստանում ըստ տնտեսության ոլորտների 165

Աղյուսակ 51. Կոռուպցիոն հակվածության կախվածությունը աշխատավարձային ակնկալիքների մակարդակի հետ 167

Աղյուսակ 52. Աշխատավարձային ակնկալիքների կախվածությունը ուսանողի բնութագրիչների հետ 167

Աղյուսակ 53 Ուսանողների աշխատավարձային սպասումների մոդելի կանխատեսումները 169

ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

Գծագիր 0. Կոռուպցիայի խնդրի կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ գործարարների պատկերացումներում, 2002թ.: 35

Գծագիր 0. Կոռուպցիայի խնդրի կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ քաղաքացիների գնահատականներում20, 2002թ.: 36

Գծագիր 0.-ը՝ որտեղ տրված են Երևանի բնակչության վստահության աստիճանները Հայաստանի պետական և հասարակական տարբեր մարմիններին, արտապատկերում է վերը նկարագրված գործընթացների և իրավիճակների ամենաընդհանուր նկարագրության խտացված արդյունքները: Տվյալները հավաքագրված են 2004 թվականի մայիսին:38

Գծագիր 0. Երևանում վստահության աստիճանը պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ, 2004թ., մայիս..... 39

Գծագիր 0. Հետխորհրդային գործընթացների ընդհանուր նկարագիրը41

Գծագիր 0. Երևանի ուսանողության դիրքորոշումները կոռուպցիայի նկատմամբ 55

Գծագիր 0. Կոռուպցիոն դիրքորոշման կայացման, ազդեցության և կառավարման մոդելը 60

Գծագիր 0. Կոռուպցիոն դիրքորոշման կախվածությունը սեռից..... 62

Գծագիր 0. Ուսանողների բաշխումն ըստ բնակավայրի տիպի..... 65

Գծագիր 0. Բնակավայրի տիպի ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա 65

Գծագիր 0. Հայրերի և մայրերի կարգավիճակների ազդեցությունը զավակների կոռուպցիոն հանդուրժողականության վրա 71

Գծագիր 0. Հոր կրթամակարդակի ազդեցությունը զավակների կոռուպցիոն դիրքորոշումների վրա 73

Գծագիր 0. Մոր կրթամակարդակի ազդեցությունը զավակների կոռուպցիոն դիրքորոշումների վրա 73

Գծագիր 0. Բարեկեցության ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա 74

Գծագիր 0. Ուսանողների ընտանիքների բարեկեցության փոփոխությունը վերջին 5 տարիների ընթացքում 76

Գծագիր 0. Բարեկեցության աճի ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա 76

Գծագիր 0. Ինտերնետից օգտվելու հաճախականությունը 79

Գծագիր 0. Մասնագիտական և գեղարվեստական գրականության ընթերցանության հաճախականությունը 80

Գծագիր 0. Ինտերնետից օգտվելու նպատակները 81

Գծագիր 0. Ինտերնետից օգտվելու հաճախականության ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա 83

Գծագիր 0-ից բխում է, որ Ինտերնետից օգտվելու ինտենսիվության աճը զուգորդված է կոռուպցիոն հանդուրժողականության աճով: Կարևոր է նշել, որ այդ աճը դիտվում է դիտարկված նպատակներից ցանկացածը հետապնդողների համար. և՛ «զվարճասերների», և՛ Ինտերնետը որպես «Մասնագիտական կատարելագործման գործիք» օգտագործողների համար: 83

Գծագիր 0. Գրականության օգտագործման ինտենսիվության ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա 84

Գծագիր 0. Կոռուպցիոն դիրքորոշման ասոցիացիան ավտոմեքենայի տիպի հետ 87

Գծագիր 0. Ուսանող երիտասարդության կլաստերների նկարագիրն ըստ հանված գործոնների 91

Գծագիր 0. Ուսանող երիտասարդության կլաստերների համեմատական ծավալները 93

Գծագիր 0. Ուսանողության կենսառճային խմբերի կոռուպցիոն հանդուրժողականությունը 95

Գծագիր 0. Երաժշտական նախասիրությունների ասոցիացիան կոռուպցիոն դիրքորոշման հետ 97

Գծագիր 0. Ենթամշակութային շարքերը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը 99

Գծագիր 0. «Ձեր կարծիքով որքանո՞վ է կոռուպցիան, կաշառակերությունը տարածված Հայաստանում: Նշեք միայն մեկ պատասխան» 102

Գծագիր 0. Ուսանողների կոռուպցիոն դիրքորոշումների կապը պաշտոնյաների կոռումպացվածության մակարդակի գնահատականների հետ 103

Գծագիր 0. «Ի՞նչ եք կարծում, ավելի հաճախ ու՞մ նախաձեռնությամբ և ի՞նչ պատճառներով են մարդիկ կաշառք տալիս» 104

Գծագիր 0. Կաշառակերության մեխանիզմների ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա 105

Գծագիր 0. «Կոռուպցիան ժողովրդի ավանդական հատկանիշն է» կոգնիցիայի ինտենսիվության ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա 109

Գծագիր 0. Երևանի ուսանողության աշխարհայացքային մոդելը ... 125

Գծագիր 0 -ում տրված են Աղյուսակ 29-ի «5+4» այունակի տվյալների միջև տարբերությունները ուսանողների երկու խմբերի համար, նրանց ովքեր կոռուպցիան համարում են Այլասերում և նրանց, ովքեր կոռուպցիան համարում են Նորմա կամ Գործիք: 128

Գծագիր 0. Կոռուպցիոն անհանդուրժողականության աճի ազդեցությունը հասարակական խնդիրների կարևորության գնահատականների վրա..... 129

Գծագիր 0. Հայաստանի զարգացման հեռանկարների կարևորության կախվածությունն ուսանողի մասնագիտական գիտելիքների ինքնագնահատականից 131

Գծագիր 0. Երևանի ուսանողության աշխարհայացքային շերտերը 137

Գծագիր 0. Երևանի ուսանողության աշխարհայացքային տիպերի ծավալները 141

Հետազոտության ընթացքում, ընդհանրացնելու համար կոռուպցիոն դիրքորոշումների և հասարակության տիպի նկատմամբ դիրքորոշումներ, կառուցվել է դրանց սինթետիկ երկչափ տարածությունը, որի կառուցվածքը տրված է Գծագիր 0-ում: 152

Գծագիր 0. «Կոռուպցիոն դիրքորոշումներ x Հասարակության տիպ» տարածության կառուցվածքը 153

Գծագիր 0. Երևանի ուսանողության խմբերի ծավալները «Պետության կարգավորիչ դեր x Կոռուպցիոն հանդուրժողականություն» տարածությունում 155

Գծագիր 0. «Ձեր կարծիքով՝ ո՞րն է մեր հասարակության մեջ հարստանալու ամենաարդյունավետ ճանապարհը»: 156

Գծագիր 0. Հայաստանում հարստանալու ուղիներն ընդհանրացնող գործոնային տարածությունը 157

Գծագիր 0.-ում տրված է, թե որտեղ են ցանկանում աշխատել ուսանողները իրենց ուսումն ավարտելուց հետո: Ոլորտների ցանկալիության աստիճանը գնահատվել է ինտերվալային 1-5 սանդղակով, որտեղ 5-ը նշանակում էր ամենաբարձր ցանկալիությունը, իսկ 1-ը՝ ամենացածրը: 158

Գծագիր 0. Որտե՞ղ կցանկանային աշխատել ուսանողները ուսումն ավարտելուց հետո 158

Գծագիր 0. Ուսանողների աշխատավարձային ակնկալիքների բաշխումը՝ ԱՄՆ $ 166

ՇՆՈՐՀԱԿԱԼԱՆՔ

Հեղինակը շնորհակալ է Եվրամիության Երևանյան գրասենյակից, ի դեմս՝ գրասենյակի ղեկավար պրն. Լոբերի և ծրագրերի կոորդինատոր Մոնիկա Պապյանի, որը ֆինանսավորել է այս հետազոտությունն ընդգրկող «Ընդդեմ Հայաստանում կոռուպցիան խրախուսող պայմանների» Ծրագիրը:

Ծրագրի ղեկավար Գեորգի Ավետիսյանից և ծրագրի գիտական ղեկավար, քաղաքագիտության դոկտոր՝ Արմեն Այվազյանից, ովքեր հնարավորություն ընձեռեցին ինձ հետազոտությունն իրականացնելու համար:

Հեղինակը խորապես շնորհակալ է ՀՀ ԳԱԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ գիտաշխատող, սույն հետազոտության գիտական խորհրդատու, պ.գ.թ. Ռուբեն Օհանջանյանից՝ հետազոտության գործիքի նախապատրաստման և հետազոտության ընթացքում նրա կողմից տրված անգնահատելի աջակցության և խորհուրդների համար:

Հետազոտության ընթացքում հեղինակին մեծ աջակցություն են ցուցաբերել նաև ԵՊՀ Ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ բ.գ.թ. Գայանե Մարկոսյանը, ՀՀ ԳԱԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի գիտաշխատողներ պ.գ.թ. Միհրան Գալստյանը և պ.գ.թ. Սամվել Սկրտչյանը:

Միաժամանակ, բոլոր եզրակացությունների և հաշվարկների համար պատասխանատվությունն ընկնում է միայն հեղինակի վրա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անհավասարությունն իր առավել դաժան դեմքով՝ աղքատությամբ և անարդարությունը իր առավել այլանդակ դրսևորմամբ՝ կոռուպցիայով, բոլոր ժամանակներում և երկրներում եղել են հասարակական դժգոհությունների, հուզումների և ընդվզումների պայմաններ: Քաղաքական շրջանակները շահարկել են այդ երևույթները, իրենց ներխմբային, իսկ պետությունները՝ արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար: Անարդարության և անհավասարության վերացման համար սասանվել է հասարակական կարգը, կործանվել են կայսրություններ, անհետացել են պետություններ, արյուն է թափվել, փոխվել են իշխանավորները, նոր մարդիկ են տիրացել հին հարստությանը: Հասնելով իրենց նպատակներին, կաշառակերության դեմ պայքարողները, որպես կանոն, իրենք են վերածվում կաշառակերների՝ նոր հանդերձներ հագցնելով հին արատին:

Միայն XX դարի երկրորդ կեսից՝ մեկ ու կես դար տևած սոցիալ-քաղաքական և ռազմական հզոր ցնցումներից հետո, քաղաքական կամքի, փիլիսոփայական ու հասարակական-քաղաքական մտքի և տնտեսական զարգացման բարենպաստ համակցության արդյունքում Եվրոպայում առաջացան հասարակություններ, որտեղ կոռուպցիան սկսեց նահանջել:

Աղքատությունն ու կոռուպցիան փոխկապակցված են՝ մեկը պայմանավորում է մյուսը: Ո՞րն է դրանցից առաջնայինը հարցի պատմագրական ուսումնասիրությունը կարող է հասցնել մինչև նախապատմական ժամանակաշրջանը, այդպես էլ չտալով դրա անվիճելի պատասխանը: Մյուս կողմից սակայն, հարցի տրամաբանական պատասխանները համարժեք են և կախված են սահմանվող կանխադրույթների բազմությունից: Բացի այդ, երբ կոռուպցիայի կամ աղքատության խնդիրները գիտակցվում են որպես հասարակական երևույթներ, որոնցից պետք է ձերբազատվել, առաջնայնության հարցը չունի գործնական նշանակություն: Ցանկացած քիչ թե շատ հայտնի հասարակության ցանկացած դիտարկման կետում առկա են անհավասարության և կոռուպցիայի որոշակի մակարդակներ, որոշակի փոխառընչություններ և դրանք ընդգրկող որոշակի մշակութային, հասարակական, տնտեսական և քաղաքական փոխկապակցված պայմանների համալիրներ: Էական խնդիր է, թե ինչպես կոռուպցիայով և աղքատությամբ այլասերված հասարակության մեջ, որտեղ կոռուպցիայի միջոցով բարեկեցության և կարգավիճակի տիրացած «վերնախավը» հայտարարում է դրանք որպես «իրերի բնական կարգ», փոխատեղել աղքատների և կաշառակերների կարգավիճակները պարիայի կարգա-

վիճակը վերցնել առաջիններից՝ փոխարենը տալով պատվարժան աշխատանք, իսկ երկրորդներին արտամղել դեպի հասարակական կյանքի լուսանցքը:

Հետխորհրդային տարածքում անցումային գործընթացների նախնական պայմանները

Հետխորհրդային հանրապետությունների հասարակություններում կոռուպցիայի և աղքատության ընկալումներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորում են այսօր այդտեղ իրականացվող ներքին և արտաքին սոցիալական և քաղաքական ռազմավարություններն ու տեխնոլոգիաները:

Այս հասարակություններին «բախտ է վիճակվել» ապրելու անցումային ժամանակաշրջանում: Նրանց չափահաս անդամների մեծ մասին հայտնի են անհավասարության, անարդարության և անազատության երկու՝ սկզբունքորեն տարբերվող տարատեսակներ՝ կոմունիստականը և ազատականը: Ընդ որում ***այդ երևույթների կոմունիստական տարբերակը պայման և գործիք են հանդիսացել հասարակարգային անցման իրականացման համար:***

*

Խորհրդային հասարակարգի վերջին 25 տարիների ընթացքում վերջնականապես ձևավորվել էր իշխող վերնախավը՝ կոմունիստական նոմենկլատուրան և հրաժարվել էր իր նախկին ռազմավարությունից՝ թարմացվել ժողովրդական լայն շերտերի ներկայացուցիչներով: Ընտրախավի ինքնամեկուսացման հետևանքով գործնականորեն դադարել էր նրա ռոտացիան: Նոմենկլատուրայի ձեռքում էր կենտրոնացված հասարակության ***ամբողջ իշխանական ռեսուրսը*** և դրա հետ ասոցացված բարեկեցությունն ու ազատությունը (որը սահմանափակված էր ներնոմենկլատուրային վարքագծի խստագույն նորմերով[1]):

Ժողովուրդը վերջնականապես ***օտարվել էր*** պետությունից և իշխանությունից: Այդ օտարումը կարող էր և տանելի լինել, հատկապես ԽՍՀՄ կազմում գտնվող ասիական քաղաքակրթական տիպին պատկանող հասարակությունների համար, որոնք կազմում էին երկրի բնակչության նշանակալից հատվածը, սակայն ԽՍՀՄ վերջին փուլի

---

[1] Радаев В.В., Шкаратан О.И., Социальная стратификация., М., “Наука”, 1995.

ժամանակավրեպ դոգմատիզմն ու երեսպաշտությունը (բազմակի ստանդարտները), ուժեղացնում էին այդ օտարման զգացողությունը:

Թերևս գաղափարաբանական երեսպաշտության բացակայությունը կարող էր նշանակալից չափով բարձրացնել խորհրդային հասարակության կայունությունը և երկարաձգել նրա կյանքը:

Իշխանական ռեսուրսի գերկենտրոնացված հիերարխիկ բաշխման և պետական գաղափարաբանական դոգմատիզմի պայմաններում իրական հասարակական հարաբերությունների modus vivendi-ն դարձավ խորհրդային համատարած, համակարգային և ունիվերսալ կոռուպցիան իր բազում մշակութային և ենթամշակութային տարատեսակներով: Կոռուպցիոն փոխանակման սխեմաներն էին պայմանավորում ինչպես ներնոմենկլատուրային (իշխանական) հարաբերությունները, այնպես էլ նոմենկլատուրայի հարաբերությունները խորհրդային ընդհատակյա մասնավոր գործարարության և ժողովրդի միջև: Եթե առաջինների հետ հարաբերություններում կոռուպցիան հիմնականում ստվերային հարկահավաքությունն էր, ապա ժողովրդի հետ կոռուպցիոն հարաբերությունները ներգծված էին ***հասարակական բարիքների վերաբաշխման սխեմաներում,*** որտեղ ոչ-դրամական բարիքները՝ հիմնականում տարատեսակ արտոնությունների տեսքով, փոխանակվում էին անհատի և սոցիալական խմբերի ***տոտալ լոյալության*** հետ՝ հասարակարգին, գաղափարաբանությանը և իշխանությանը:

Պերեստրոյկայի վերջին փուլում, երբ կոմունիստական գաղափարաբանությունը աստիճանաբար տեղակալվում էր հատվածային ազատական գաղափարներով, նեո-լիբերալ տնտեսական տեսաբանները խորհրդային վերջին քսանամյակի տնտեսական հարաբերությունները սկսեցին անվանել ***արմինիստրատիվ շուկա[2],*** վեր հանելով դրա նմանությունները դեռևս 50-ականներին նկարագրված ***բյուրոկրատական շուկայի*** հետ[3]: Շրջանառության մեջ մտցվեց ***արմինիստրատիվ ռենտա*** տնտեսագիտական տերմինը, որը, դիտարկվելով որպես լիիրավ տնտեսական գործիք, պարզապես փոխարինեց կոռուպցիա, կաշառակերություն տերմիններին և որի գաղափարաբանական ֆունկցիան էր քողարկել կոռուպցիայի, որպես այլասերվող և այլասերված հասարակությունների արտաքին կառավարման հիմնական գործիք լինելու ֆունկցիան:

---

[2] Найшуль В.А., Либерализм, обычные права и экономические реформы., 1990.

[3] Buchanan J.M., Tullock G., The Calculas of Consent, Logical Foundation of Constitutional Democracy, Ann Arbor, University of Michigan Press, 1962.

Երկրում հաստատված էր երկու տաբու՝ կոմունիստական գաղափարաբանությունը և նրա կղերը՝ կոմունիստական կուսակցությունը: Դրանց պահպանման պայմաններում համընդհանուր հավասարարությունից (որը խորհրդային աղքատության հոմանիշն է) դուրս գալու ունիվերսալ միջոցը կոռուպցիան էր իր տարատեսակներով (կաշառք, հովանավորչություն, պաշտոնական դիրքի չարաշահում, անօրինական պաշտոնեական գործունեություն ու անգործություն և այլն): Կոռուպցիան բարձրացնում էր անհատի սոցիալական կարգավիճակն ու բարեկեցությունը, մարդու համար հնարավորություն էր ստեղծում որոշակի չափով իրականացնելու իր հակումներն ու հնարավորությունները: Խորհրդային հասարակական հարաբերություններում կոռուպցիան այն հոլովույթն էր, որն ինդուլգենցիա էր տալիս անօրինականություն կատարելու համար՝ լոյալության դիմաց: Կոռուպցիան խորհրդային երեսպաշտության ստվերոտ կողմն էր:

Ազգային հարցը Խորհրդային բազմազգ կայսրության ոչ պակաս խոցելի ոլորտն էր: Անհաջողության էր մատնվել ապազգային հասարակության կառուցման հերթական նախագիծը: Հասարակությանն էին հրամցվում գաղափարաբանական անհեթեթ կառուցվածքներ, ավելի շեշտելով խորհրդային գաղափարաբանության վերջնական սնանկությունը: Եթե խորհրդային հանրապետությունների «տիտուլային» ազգերի վերնախավերը կոռուպցիան վերածել էին ազգային խտրականության և «սպիտակ եղեռնի» գործիքի, ապա հասարակարգային փոփոխության նախաձեռնությունների շրջանակում այն հանդես եկավ որպես ազգամիջյան հարաբերությունների սրման և արյունալի հակամարտությունների վերածվելու կատալիզատոր:

Բյուրոկրատացված տոտալիտար կառավարման հետևանքով անարդյունավետ կառավարումն արգելակում էր տնտեսության բնականոն զարգացումը: Ռեսուրսներով աշխարհի ամենահարուստ պետության տնտեսությունը խրված էր տոտալ դեֆիցիտի մեջ: Հասարակությունը ձևացնում էր, որ աշխատում է, իսկ պետությունը ձևացնում էր, թե վճարում է ըստ աշխատանքի: Թվում էր, թե ժամանակը կանգ է առել:

Այս պայմաններում ճշմարտության ցանկացած մասնիկ վերածվում էր հասարակության, պետության և իշխանությունների օտարվածությունը հակադրության վերածող գործիքի:

Այդ իրավիճակում հնարավոր դարձավ ընդամենը մեկ տնտեսական լծակի արտատնտեսական կիրառմամբ գործարկել Խորհրդային Միությունում ***բոլոր հնարավոր դեստրուկտիվ գործընթացները:*** Նավթի գների կտրուկ անկումը հրատապ դարձրեց խորհրդային ողջ հասարակարգի ***համակարգային վերակենդանացման*** խնդիրը, առանց որի անհնար էր մրցակցությունը մյուս գլոբալ բևեռի հետ, որը սակայն,

ինչպես ապացուցեց պատմությունը, անհնար էր իրականացնել այլասերված պետական ապարատի և վերնախավի միջոցով:

Հասարակարգի համակարգային վերափոխման ներքին ռազմավարություններին զուգահեռ (Перестройка, Гласность, Ускорение, Госприемка), գործարկվեցին նաև արտաքին ռազմավարություններ, որոնց հաջողության նախադրյալները երկրում առկա էին և հասունացած: Արտաքին ռազմավարությունների տրամաբանական շղթան էր. «Ազգամիջյան հարաբերություններն անարդար են»; «***Կոռումպացված*** և այլասերված կուսակցությունը (իշխանությունը, պետությունը) չի կարող և չի ցանկանում վերափոխել իրավիճակը»; «Նրանց ***միակ*** նպատակն է հավերժացնել իրենց իշխանությունը և արտոնյալ վիճակը՝ ի հաշիվ անասնական վիճակում ապրող ժողովրդի»; ***«Երեսպաշտ*** իռացիոնալ գաղափարաբանության շրջանակներում ազգային հարցերը և ***կոռուպցիայի*** վերացումն անհնար են» → «Անհրաժեշտ են ***համակարգային արմատական*** փոփոխություններ»; → «Անհրաժեշտ է ***ժողովրդավարացում*** և ***ազատականացում***[4]»:

Չնայած բոլոր հիմնադրույթները ճիշտ էին, սակայն դրանց կիրարկման արդյունքում համակարգային փոփոխությունները վերածվեցին ***հասարակարգային փոփոխության,*** «պարադոքսալ» կերպով խորհրդային հասարակությունն անցում կատարեց դեպի ազատական աշխարհի հետնախորշը, միաժամանակ բացահայտվեցին նաև համակարգային փոխակերպումների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նպատակները:

---

[4] Ընդ որում, նշված հաջորդականությամբ, նախ՝ ժողովրդավարացում, իսկ հետո՝ ազատականացում: Եթե ժողովրդավարացումը համարենք առավելապես հանրային կառավարմանը վերաբերող հասկացություն, իսկ ազատականացումը՝ տնտեսվարմանը, ապա նախ ժողովրդավարացումը, հետո՝ ազատականացումը, կամ դրանց համընթաց շարժումը բոլոր երկրներում, որտեղ այն կիրառվեց, բերեց համակարգային կոլապսի, որից դուրս գալու գործընթացները դեռևս չեն ավարտված և կազմում են անցումային շրջանի բովանդակության կարևորագույն բաղադրիչը: Հակառակ հաջորդականությունը «[տնտեսության] ազատականացում, որից հետո ժողովրդավարացում», որի կիրառության դասական օրինակն է ՉԺՀ-ն, արդեն չորրորդ տասնամյակն է, ինչ ցուցադրում է իր արդյունավետությունը: Պահպանվում է հասարակության կայունությունը, ազգային անվտանգությունը (լայն իմաստով), տնտեսական հարատև բարձր աճը և աղքատության կրճատման միտումը:

Տես՝ Попов В.В., Государство, демократия и экономический рост, Семинар «Стратегия развития”, 29 сентября, 2003г.

*

1993 թվին՝ նոր հազարամյակի նախաշեմին, երբ արդեն պատմական իրողություն էր դարձել ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ նախկին Նախագահ Քլինտոնը նշեց աշխարհի 3 գլոբալ սպառնալիքները՝ ***ազգայնականությունը***, ***[արմատական] իսլամը*** և ***ահաբեկչությունը***: Որպես դրանց և՛ արմատներ, և՛ արդյունք սահմանվել են ***աղքատությունն ու կոռուպցիան***: Նոր գլոբալ աշխարհաքաղաքական կառուցվածքի կազմավորման արդի փուլի իրականացման համար գործարկվել են արդեն իրենց արդյունավետությունն ապացուցած սոցիալ-քաղաքական ռազմավարությունները, որոնցում նորացվում են միայն տեխնոլոգիաները՝ կախված կոնկրետ երկրում կոնկրետ սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնյունկտուրայից[5]:

Հետխորհրդային տարածքում հիմնական սոցիալ-տնտեսական և մշակութային միտումները

Հետխորհրդային տարածքում անցումային գործընթացների հիմնական բովանդակությունն է ***հասարակարգային փոփոխությունը***: Սոցիալ-տնտեսական և մշակութային նոր հոլովույթների կայացումը, իսկ դրա որոշ բաղադրիչների համար՝ վերահաստատումը, տեղի է ունենում մակերևութային, խորքային, արտաքին և ածանցյալ գործընթացների զուգորդմամբ և փոխազդեցություններով:

Մակերևութային են բարձր էներգիաներով և բացահայտ ընթացող գործընթացները՝ հանրային բարքերի ***առևտրայնացումը***[6] և ***քրեականացումը,*** իսկ մյուս կողմից՝ ***ազգայնականության*** վերելքը:

Խորքային են՝ ցածր էներգիաների (մշակութային և հոգևոր) ազդեցության տակ ընթացող գործընթացները՝ ***ավանդական նորմերի և վարքագծային կարծրատիպերի*** վերահաստատումը և ***կրոնական գիտակցության*** վերակենդանացումը:

Արտաքին են աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական սուբյեկտների էներգիաների (ազդեցությունների) տակ ընթացող գործընթացները՝ ***ժողովրդավարական*** և ***ազատական արժեքների ու***

---

[5] Դրանք են՝ 1990-ականների Բալկանյան պատերազմները, 2003-2005թթ. «գունավոր հեղափոխությունները» Վրաստանում, Ուկրաինայիում, Ղրղզստանում և [դեռևս, 2005թ.] չհաջողված փորձը Ուզբեկստանում:

[6] Այստեղ ***առևտրայնացում*** տերմինը կիրառված է նշանակելու համար ազատական գաղափարաբանությունների կիրառման ընդհանրական (ինտեգրալ) հասարակական ***գործընթաց-արդյունքը***:

ինստիտուտների ներմուծումը, որոնք ընթանում են ֆինանսական և քաղաքական գործիքների կիրառմամբ:

Ածանցյալ են՝ առանց սեփական էներգիայի և վերը նշված գործընթացների հետևանք հանդիսացող գործընթացները՝ ***տնտեսության անցումը դեպի ավելի պարզունակ նիշա***, ***տնտեսության օլիգարխացումը***, ***հասարակության աղքատացումը***, ***սոցիալական անհավասարության խորացումը, արտագաղթը***: Ածանցյալ գործընթացներից առաջինն իր մեջ պարունակում է գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխության նպատակը:

Այս գործընթացների որոշակի հնարավոր կոնֆիգուրացիաներն ունեն ***հասարակական նոր սիմբիոտիկ***[7] ***համակարգեր*** առաջացնելու ներուժ: Մասնավորապես՝ հետխորհրդային քրիստոնեական քաղաքակրթական տարածքներում հնարավոր է ազգային, կրոնական և ժողովրդավարական գործընթացների ազդեցության տակ դրանց գաղափարաբանական սիմբիոզը, որի արդյունքում հնարավոր է նոր տիպի ժամանակակից հասարակությունների ձևավորումը:

Նշված գործընթացների այլ կոնֆիգուրացիաներն ունեն ***քիմերային հասարակություններ***[8] ծնելու ներուժ:

Հետխորհրդային տարածքներում «պարադոքսալ» կերպով առավել «կենսունակ» գտնվեցին քիմերային կառույցները (օրինակ՝ լիբերալ-ժողովրդավարական ինստիտուտների հովանու տակ գործող քրեական առնտրայնացած կառավարման համակարգով էրզաց[9]-պետությունները, որոնք մի կողմից շաղկապված են արմատական կրոնական

---

[7] ***Սիմբիոզ*** է կոչվում երկու համակարգերի փոխներթափանցումը, երբ տեղի է ունենում յուրաքանչյուր համակարգի բնութագրերի բարելավում մյուս համակարգի դրական հատկանիշների առկայությամբ և կիրառմամբ: Սիմբիոտիկ համակարգն ունի ավելի բարձր աղապտիվ և դրանից ածանցվող հատկություններ, քան սիմբիոզը կազմող համակարգերից յուրաքանչյուրը և դրանց պարզ միավորումը:

[8] ***Քիմերա,*** հունական առասպելաբանությունում առջևում՝ առյուծի, մեջտեղում՝ այծի, հետևում՝ օձի մարմնով ***անհեթեթ հրեշ,*** որին ծնել էին Եքիդնա և Տիփոն հրեշները: Սրանց ծնել էր Գեա (Երկիր) աստվածուհին Տարտարոսից (դժոխք), ի պատիժ ***նոր (օլիմպական) աստվածների,*** այն բանի համար, որ նրանք ապստամբելով և հաղթելով ***հին աստվածներին ,*** դաժանորեն էին վարվել նրանց հետ: Վերջինները Գեայի զավակներն էին՝ գահընկեց արված Քրոնոսը (Ժամանակ) և մյուս Տիտանները:

Քիմերային սպանել է ***Պեգասին*** հեծած հերոս Բելերոփոնը:

[9] ***Էրզաց -*** փոխարինող, որը չունի բնօրինակի էական հատկանիշները:

ահաբեկչությանը, իսկ մյուս կողմից՝ ծանրաբեռնված են չքավոր ու անգործ հասարակությամբ[10]):

Հետխորհրդային հասարակությունների համընդհանուր անկայունության հիմնարար պատճառը դրանց քիմերային կառուցվածքն է:

Արտաքին գործընթացներից ***առևտրայնացման*** շարժիչ ուժն ու կոնկրետ բովանդակությունը հանրային ունեցվածքի վերաբաշխումն էր (սեփականաշնորհումը), իսկ գործիքը՝ ***կոռուպցիան***: Այդ գործընթացի ընթացքում կոռուպցիան շուտով դարձավ անթաքույց և դադարեց դասական իմաստով կոռուպցիա լինելուց (քանի որ կոռուպցիան ենթադրում է թաքնվածություն): Այն գործարկեց նաև հասարակական բարքերի ***քրեականացումը,*** քանի որ մի տիպի հանցագործության «լեգիտիմացումը» հարուցում է նաև այլ տիպի հանցագործությունների լեգիտիմացում: Բարքերի անկումը բրգաձև էր՝ առավել այլանդակ ձևերով այն կատարվում էր «վերևում», որը «ներքևներում» առաջացնում էր իր «համեմատաբար անմեղ» տարատեսակները:

Տնտեսվարման գերակա նպատակը՝ տնտեսական արդյունավետությունը, փոխանցվեց հասարակական մնացած բոլոր հարաբերությունների մեջ, իսկ իր առավել ցայտուն արտահայտությունն ստացավ ինֆորմացիոն դաշտում, որտեղ իշխում է՝ «Վերցրու կյանքից ամեն ինչ» սոցիալական նպատակադրումը: Տնտեսական բարեհաջողության նպատակները հակադրվում են մնացած բոլոր արժեքներին՝ ***պարզապես չնկատելով դրանց գոյությունը***: Եթե բարեկեցիկ հասարակություններում այս հոլովույթը զանգվածային հասարակության կառավարման արդյունավետ գործիք է, որը դինամիկ կայունության մեջ է պահում հասարակությանը՝ ուղղորդելով ավելցուկային էներգիան, ապա աղքատ և չկարգավորված հասարակություններում այն խորացնում է բարքերի այլասերումը, բազմապատկում և սրում սոցիալական հակասությունները:

Ազգային զարթոնքն այն գործընթացն էր, որն իր մեջ ներառավ ազգային հոգևոր և մտավոր վերնախավին: Այդտեղ՝ խորհրդային կայսրությունում ձևախեղված ազգամիջյան հարաբերությունների հետևանքների հարթեցման ճանապարհին, պարպվեց նրա համարյա ողջ ներուժը: Շատերը մնացին կայսրության բեկորների տակ: Հասարակարգային փոփոխության բովանդակությունն իրականացվում էր ազգային շարժումների ստվերում: Այդ գործընթացը, որպես

---

[10] Գոյություն ունեն քիմերային հասարակությունների ոչ պակաս անհեթեթ այլ օրինակներ:

առաջնահերթ խնդիր, իր վրա կենտրոնացրեց ազգային հոգևոր և մտավոր վերնախավերի համարյա ամբողջ էներգիան:

Խորքային գործընթացներից առաջինը՝ ***ավանդական*** (ազգային) ***մշակութային և հասարակական նորմերի վերահաստատումը***, առավել նկատելի է Հարավային Կովկասում և Միջին Ասիայում: Դրանք այն հոլովույթներն են, որոնք Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ԽՍՀՄ կազմավորմանը և հզորացմանը զուգընթաց, սկսեցին աստիճանաբար ուժգնացող և համապարփակ դարձող ճնշմամբ դուրս մղվել լեգալ հասարակական կյանքից և սահմանափակվեցին այդ հասարակությունների փոքր, ոչ ձևական, սահմանային (մարգինալ) խմբերում ու տարածքներում: Ընդ որում, այդ ընթացքում իրենց լայն հասարակական ֆունկցիան և մշակութային նախատիպերի հետ լեգալ հարաբերակցման հնարավորության կորստի հետևանքով այդ հոլովույթներն այլասերվում էին: Գաղափարաբանական լիբերալացմանը զուգընթաց բոլոր ճնշված և ապակազմակերպված ավանդական տարրերն սկսեցին ինքնաարտահայտվել, սակայն այդ վերահաստատումը տեղի էր ունենում այն մտածելակերպի և վարքագծի սահմաններում, որոնք դաստիարակվել էին խորհրդային տարիներին: Ազգայինն ու ավանդականը վերականգնվում էին խորհրդայինի կաղապարներով:

Խորհրդային ժամանակաշրջանում նոսրացած ազգային վերնախավերը, որոնք զբաղված էին առաջնահերթ ազգային խնդիրների լուծմամբ, չունեին բավարար ուժեր՝ լուծելու իրենց առջև ծառացած և բազմապատկվող բոլոր խնդիրները, որի հետևանքով նրանք դուրս մղվեցին նոր մշակութային և սոցիալական հոլովույթների կայացման գործընթացներից, որոնք ընթանում էին ինքնաբերաբար: Հետխորհրդային տարածքում սկսվեց մշակութային համապարփակ գռեհկացման գործընթացը:

Կրոնական գիտակցության վերականգնումը տարբեր բնույթ ունի հետխորհրդային քրիստոնեական և իսլամական տարածքներում: Խորհրդային գաղափարախոսության վերացմանը զուգընթաց, մի քանի տարվա ընթացքում հետխորհրդային իսլամական մշակութային տարածքներում ստեղծված գաղափարաբանական վակուումը սկսեց լցվել ավանդական և համեմատաբար նոր իսլամական ուղղություններով:

> Իսլամի ամբողջ պատմության ընթացքում առաջանում և վերանում էին նրա «բողոքական» հոսանքները: Դասական իսլամը՝ իր շիա և 4 սուննի մասհաբներով, կազմավորել էր իր ուրույն կառավարման ոճը, որի կազմում մինչև այսօր էլ առկա են հզոր իմունիտետային մեխանիզմներ նման հոսանքները մարգինալացնելու, կազմալուծելու և չեզոքաց-

> նելու համար: Սակայն XIX դարի կեսերից, երբ եվրոպական կայսրություններում ուժգնանում էին լիբերալ քաղաքական հեղափոխական գործընթացները և ծավալվում էին նոր գլոբալ նվաճողական միտումները, Հյուսիսային Եվրոպայում և Ամերիկայում սկիզբ դրվեց իսլամական աշխարհում մարգինալացված իսլամական ուղղությունների «էմիգրացիոն տարբերակների» սնուցման և դեպի իրենց հայրենիքները իմիգրացիայի ավանդույթը:
>
> Խորհրդային վտանգի վերացումից հետո, որի դեմ պայքարում դասական իսլամը ազատական աշխարհի դաշնակիցն էր, երբ դասական իսլամը վերածվեց նոր աշխարհակարգի կայացման խոչընդոտերից մեկի, նորից ակտուալացվեցին նախորդ դարի կրոնա-քաղաքական տեխնոլոգիաները:

Իսլամական տարածքներում կրոնական գիտակցությունն առավելապես հակադրվում է արտաքին մշակութային և գաղափարական ներթափանցմանը և ընթանում է ***քաղաքակրթությունների ընդհարման*** հիմնադրույթով նախանշած հունով[11]:

Առավելապես քրիստոնյա բնակչությամբ հանրապետություններում կրոնական գիտակցության աճը տեղի է ունենում ավելի ցածր տեմպերով: Այն չունի արտաքին հակադրությունների առաջացման կամ նախաձեռնության միտումներ և հակադրվում է ոչ թե ժողովրդավարացման գործընթացներին, այլ կրոնական աղանդների էքսպանսիային:

> Քրիստոնեական տարածքներում նույնպես ակտիվացել են էրզաց-կրոնական հոսանքները: Սակայն, եթե քրիստոնյա հանրապետություններում կրոնական աղանդների գործունեության հայտարարվող նպատակը դեռևս սոցիալական արդարությունն է և քաղաքական ինքնաօտարումը, ապա իսլամական երկրներում՝ սոցիալական արդարության պահանջը վերածվել է քաղաքական արմատական իսլամի հենասյան:

Հետխորհրդային հասարակություններում տեղի է ունենում ***ազատական և ժողովրդավարական արժեքների, նորմերի և ինստիտուտների ներմուծում***: Ընդ որում, հարավ-արևելյան աշխարհագրական ուղղությամբ շարժվելիս այս միտումն ավելի ու ավելի մեծ խոչընդոտների է հանդիպում: Եթե հետխորհրդային քրիստոնեական տարածքներում այդ արժեքների հիմնական խոչընդոտը հասարակական բարքերի

---

[11] Хантингтон С. П., Столкновение цивилизаций и переустройство мирового порядка (отрывки из книги) // Pro et Contra. Т. 2. №2. Распад и рождение государства, М., 1997.

քրեականացված առևտրայնացումն է, ապա իսլամական տարածքներում այն կրում է կրոնա-մշակութային բնույթ: Իսլամական տարածքներում այդ հակադրության հիմքը ոչ այնքան եվրոպական հասարակական արժեքներում անհատի իրավունքների ու ազատությունների և դրանց ապահովման երաշխիքի՝ օրենքի գերակայության գոյությունն է, որքան այդ համատեքստում ***կրոնական գիտակցության հիմքերի անտեսումը կամ՝ ուղղակի մերժումը***:

Մյուս կողմից՝ ժողովրդավարական արժեքների եվրոպական տարբերակները որոշակիորեն հակադրվում են նաև հետխորհրդային տարածքի ավանդական սոցիալական պատկերացումներին և նորմերին, որոնք նշանակալից չափով հիմնված են եղել արյունակցական կապի կամ «պատրոն-կլիենտ» հարաբերությունների վրա: Այս միտման հզորությունը պայմանավորված է նրանով, որ նոր նորմերի ներմուծումը կատարվում է աղքատացած հասարակություններին և սոցիալական ֆունկցիաները ինքնուրույնաբար կատարելու անընդունակ պետություններին ֆինանսական օգնության տրամադրմամբ:

Տնտեսական պարզունակացման գործընթացն ունեցել է մի քանի փուլեր՝ կազմալուծում, պարզունակացված կառուցվածքով վերակազմավորում և պարզունակ կառուցվածքով աճ: Պարզունակացումը վերաբերում է արտադրական հարաբերություններին, ճյուղերին, տեխնոլոգիաներին:

Տնտեսության օլիգարխացումը հարաբերությունների առևտրայնացման և կոռուպցիայի ուղղակի հետևանքն է:

Աղքատացումը և ***շերտավորումը*** հարաբերությունների առևտրայնացման, տնտեսության պազունակացման, օլիգարխացման և կոռուպցիայի հետևանքներն են:

Վերը նկարագրված գործընթացները բնորոշ են նաև Հայաստանին, որտեղ դրանք լրացված էին մի քանի հզոր յուրահատուկ գործոններով:

Այդ գործոններն էին՝

1. ***Քաղաքակրթական հիմք ունեցող ազգային ազատագրական պայքարի գերբարձր աստիճանը***, որին հետևեց Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ նկատմամբ և հայկական ուժերի ռազմական հաղթանակները:

2. 1988 թվականի ***ավերիչ երկրաշարժը***, որից տուժեց Հայաստանի մոտ 1/3-ը:

3. Հայաստանի ***թշնամական արտաքին միջավայրը***, որի արտահայտման երկու հիմնական ձևերն են՝ տնտեսական շրջափակումը և Հայաստանի նկատմամբ ագրեսիայի կրկնման հարատև վտանգը:

4. ***Հայաստանի փոքր տարածքը***, բնակչության փոքրաքանակությունը, շուկաների փոքր ծավալները և աղքատ ռեսուրսները:

Առաջին երկու գործոնների ուղղակի ազդեցությունները նվազել են, նկատելի են առավելապես դրանց հետևանքները: Երրորդ գործոնը շարունակում է ազդել առանց փոփոխության: Չորրորդ գործոնը մի փոքր մեղմացել է ադրբեջանական կայսերական լծից հայկական պատմական էթնիկ տարածքների մի հատվածի ապագաղութացման արդյունքում:

Այդ գործոններից առաջինն ունեցավ մեծ դրական ազդեցություն Հայաստանում ընթացող բոլոր գործընթացների վրա, սակայն դժվար է դուրս բերել այդ ազդեցության առանձին գնահատականը, քանի որ բոլոր դիտարկվող ***վերլուծական գործընթացներն*** իրականում մեկ ընդհանրական գործընթացի որոշակի տեսանկյուններն են և, հետևաբար, կրում են դրա մյուս բոլոր բաղադրիչների ազդեցությունները: Եվ, քանի որ երկրաշարժն ու շրջափակումն ունեին նշանակալից բացասական ազդեցություններ, այդ պատճառով ազգային զարթոնքի դրական ազդեցությունը երբեմն «դժվար նկատելի է»:

Երկրաշարժի ազդեցությունը ոչ միայն հսկայական մարդկային զոհերն էին ու տնտեսության և բնակֆոնդի ավերումը, այլև դրա հետևանքների վերացման ընթացքում կոռուպցիայի հսկայածավալ աճը, որը նշանակալից ազդեցություն ունեցավ նոր իշխանությունների նկատմամբ շատ բարձր վստահության վարկի (լեգիտիմության) կտրուկ անկման վրա:

Արտաքին թշնամական միջավայրը պայմանավորված է Թուրքիայի և Ադրբեջանի քաղաքակրթական ծագում ունեցող դարավոր թշնամությամբ, որը բարդացած է Արևմտյան Հայաստանում XIX-XX դարերում թուրքական իշխանությունների կողմից իրականացված ցեղասպանությամբ, որի ծայրագույն արտահայտությունն էր 1915-1922 թվականների Հայոց եղեռնը, Ադրբեջանում հայերի սպիտակ ցեղասպանությամբ, հայկական պատմական տարածքներից հայերի էթնիկական զտումներով (որոնք՝ ըստ սահմանման, ցեղասպանության տարատեսակ են) և մի քանի պատերազմներով:

Թույլ և անկայուն Վրաստանի քաղաքականության բացառիկ գերակայություն է սահմանազատումը Ռուսաստանից և անդամակցումը ՆԱՏՕ-ին ու ԵՄ-ին: Դրա իրականացման կարևորագույն գործոնն է հորիզոնական աշխարհատնտեսական կոմունիկացիոն նախագծերը, որոնց անբաժանելի անդամներն են Ադրբեջանը և/կամ Թուրքիան: Վրաստանը թաքնված, սակայն խիստ կախվածություն ունի իր հարավային և հարավ-արևելյան շրջաններում, այդ թվում՝ վրաց-հայկական համարյա ամբողջ սահմանով, ադրբեջանական հոծ

բնակչության լոյալությունից, որի կառավարման լծակները գտնվում են Բաքվում և Անկարայում:

Վերը նշված հետխորհրդային տարածքներում ընթացող գործընթացները Հայաստանում վերափոխվել են յուրահատուկ գործոններով, որոնց շարքում կարևորագույններն են.

Գեր-օլիգարխացումը, որը հայաստանյան շուկաների փոքր ծավալների հետևանք է: Տնտեսության օլիգարխացումը գրավել է տնտեսության նաև այն հատվածները, որոնք ավելի ծավալուն շուկաներում օլիգարխների համար «հետաքրքիր չեն»: Ընդ որում, օլիգարխացման գործընթացը Հայաստանում դեռևս չի հասել իր հագեցման կետին, որի հետևանքով շուկայական տնտեսական հարաբերությունների հնարավոր նիշաները ունեն կրճատման միտումներ:

Արտագաղթը: Խորհրդային Հայաստանում 1989թ. ապրում և աշխատում էր 3.7 միլիոն բնակչություն, որը հնարավոր էր միայն [իր ժամանակի համար] բարձր տեխնոլոգիական արդյունաբերության շնորհիվ: Պարզունակացված տնտեսության, երկրաշարժի ավերածությունների, պատերազմի և շրջափակման պայմաններում առաջացան «ավելորդ մարդիկ», որոնք էլ սկսեցին արտագաղթել: «Տնտեսության պարզունակացում ←→ Արտագաղթ» օղակի պարբերական կրկնությունն ավելի ու ավելի էր իջեցնում Հայաստանը տնտեսական նիշաներով: Ընդ որում, հասնելով իր պարզունակացման նվազագույն կետին և տնտեսական աճի պայմաններում, առաջանում են նոր «ավելորդ մարդկանց» խմբաքանակներ, որոնք արդեն XIX դարի «դասական կապիտալիզմի» տնտեսական աճի տիպի զարգացման արդյունք են: Այդ գործընթացներն առավելապես սպառնում են Հայաստանի գյուղական բնակչությանը, քանի որ գյուղատնտեսության կապիտալացումը գյուղում առաջացնում է անհատական գյուղական տնտեսությունների անմրցունակություն, իսկ արդյունաբերական համապատասխան համամասնական զարգացման բացակայության պայմաններում գյուղ-քաղաք միգրացիան տեղափոխվում է հանրապետությունից դեպի դուրս արտագաղթի հոսքերում: Հարկ է նշել, որ Հայաստանի անկախացման տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթի պատճառների շարքում մոնոտոն աճի միտում ունի կոռուպցիայի, անարդարության, հեռանկարների բացակայության պատճառների ազդեցությունը[12]:

---

[12] Ռ. Եգանյան, Կ. Կույումջյան, Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան 2004:

Հետխորհրդային երկրներից ոչ մեկում դեռևս չի գտնվել այդ տարածքներում առկա տարաբնույթ գործընթացների և դրանց ածանցյալ միտումների բալանսի կամ ներդաշնակեցման բանաձևը, որի հետևանքով նկատելի չեն դրանց հասարակությունների քիմերային կառուցվածքների բարենպաստ կերպարանափոխման շրջանակները:

Գլոբալ տնտեսակարգային դինամիկայի հիմնադրույթը

Համակարգային մոտեցման տեսակետից Հայաստանի, որպես բարդ համակարգի առջև կանգնած խնդիրների սահմանումը, ճշտումը և դրանց միջև աստիճանակարգային (հիերարխիկ) գերակայությունների բաշխումը և, հետևաբար, համակարգային քաղաքականությունների և ռազմավարությունների մշակումները, կախված են Հայաստանի գլոբալ նպատակների սահմանումից:

Ակնհայտ է, որ գլոբալ նպատակների սահմանումը քաղաքական խնդիր է:

Քանի որ Հայաստանը գտնվում է բարդ և բարձր ռիսկային աշխարհաքաղաքական տարածքում և ցածր ռեսուրսապահովվածություն ունեցող պետություն է, ապա նրա համար առաջնահերթ խնդիրներ են՝ համակարգի (պետության) ինքնավարության (սուվերենության) պահպանումը, ներքին համակարգային բալանսի (հոմեոստազի) պահպանումը և, այդ երկու կարգավորիչ նպատակների իրականացվածության պայմաններում, զարգացման (ռեսուրսների, էներգիայի, բազմազանության աճի) ապահովումը: Զարգացման որոշակի տեմպի և մակարդակի դեպքում համակարգը կարող է անցնել ավտոնոմության և հոմեոստազի ավելի բարձր ապահովվածության աստիճանի և իր առջև դնել զարգացման տեմպերի ավելի բարձր պահանջներ: Ընդ որում, ավելի բարձր աստիճանի անցման հետևանքով աճում է համակարգի սուբյեկտությունը արտաքին միջավայրի հետ փոխհարաբերություններում:

Նշված համակարգային նպատակների բարձրագույն բովանդակությունն է համակարգի և նրա անդամների ինքնաիրականացման պայմանների ստեղծումը, ապահովումը և զարգացումը:

Համակարգային տերմինաբանությունից քաղաքագիտականի անցման դեպքում ավտոնոմության և հոմեոստազի ապահովումն արտապատկերվում է ազգային անվտանգություն (լայն իմաստով) հասկացության, մասնավորապես՝ դրա հոգևոր, մշակութային, հասարա-

կական, տնտեսական և ռազմական բաղադրիչների վրա: Այդ բոլոր բաղադրիչների գործունեության դինամիկային ներհատուկ է ցանցային բնույթը: Սակայն վերլուծական և կիրառական տեսակետերից ազգային անվտանգության բաղադրիչների կերպերին կարելի է վերագրել ժամանակավոր հիերարխիկ գերակայություններ:

Ժամանակակից պայմաններում, երբ գլոբալ մրցակցության կիզակետն է աշխարհատնտեսական բևեռների միջև մրցակցությունը, որից ածանցվում են քաղաքակրթական, տնտեսական, աշխարհաքաղաքական և ռազմական մրցակցությունները, ազգային անվտանգության ապահովման տեսակետից արդյունավետ հիմնադրույթներ է պարունակում «աշխարհ-տնտեսությունների» տեսությունը[13]:

Տեսության հիմնական գաղափարն այն է, որ աշխարհում միաժամանակ առկա են տարբեր որակական մակարդակներում գտնվող տնտեսակարգեր, որոնք անվանված են «աշխարհ-տնտեսություններ» (мир-экономика):

Դրանք վերլուծական տեսակետից (որպես կանոն նաև՝ աշխարհագրականորեն) դասավորված են կոնցենտրիկ շրջաններով առավել բարձր բևեռի (աշխարհ-տնտեսության) շուրջը: Բևեռն իր տնտեսակարգային գերազանցության շնորհիվ, որի կարևորագույն բաղադրիչը տեխնոլոգիական գերազանցությունն է, հնարավորություն է ստանում առավել ցածր տնտեսակարգերի հետ հարաբերություններում ունենալ գերիշխող դիրք և, հետևաբար, իր օգտին պարտադրել անհավասար տնտեսական և սոցիալական փոխանակություն: Համանման կերպով՝ բևեռին «ավելի մոտ» գտնվող տնտեսակարգը (փոքր շառավղով կոնցենտրիկ շրջանը) առավելություն ունի բևեռից ավելի «հեռու» գտնվողի նկատմամբ և հետևաբար պարտադրում է ծայրամասին իր օգտին անհավասար փոխանակություն: Այսպիսով, ինչքան ավելի ցածր աշխարհ-տնտեսությունում է գտնվում երկիրը, այնքան ավելի է նա տուժում ցանկացած հարաբերություններում: Այդ անհավասար փոխանակության մասնավոր դեպքերից է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից պարտադրվող «ազատ առևտրի ռեժիմի» հաստատումը տեխնոլոգիական ապրանքներ և հումք արտահանող երկրների միջև, որում տեխնոլոգիական կողմն ունենում է շահույթի նորմայի բազմակի գերազանցում:

---

[13] Бродель Ф., Динамика капитализма. Смоленск, 1993.

Валлерстайн И., Реалии открытого пространства-времени: к пониманию нашей исторической системы., “Historical Systems as Complex Systems” In European Journal of Operational Research, XXX, 2, June, 1987.

Մյուս կողմից՝ առավել բարձր տնտեսակարգերին, իրենց առավելությունների առավել արդյունավետ իրացման համար, անհրաժեշտ է ***համաշափորեն դասավորված կոնցենտրիկ աշխարհ-տնտեսությունների գոյությունը*** (քանի որ գլոբալ ֆինանսական շուկաների սուբյեկտները չեն կարող անմիջականորեն աշխատել ֆեոդալական կամ տոհմատիրական կարգերում գտնվող հասարակությունների և բնատնտեսությունների հետ): Բարձր աշխարհ-տնտեսությանն անհրաժեշտ է որոշակի զարգացման հասած արտաքին միջավայր:

Եթե գլոբալ բարձր տեխնոլոգիաները՝ փոքր բացառություններով, ծագում են ամենաբարձր աշխարհ-տնտեսություններում, ապա դրանց իրացումն ու զարգացումը ***միշտ տեղի է ունենում այդտեղ:*** Երբ առաջանում է նոր, ավելի առաջավոր [տնտեսվարման կամ այլ] տեխնոլոգիա, ապա այդ տեխնոլոգիան կիրառող որոշակի աշխարհ-տնտեսական նիշայի համար իր դերակատարումը սպառած տեխնոլոգիան փոխանցվում է ավելի ցածր աշխարհ-տնտեսություն: Այդպիսով, աշխարհ-տնտեսական բևեռն ապահովում է իր գերազանցությունը ցանկացած պերիֆերիկ աշխարհ-տնտեսության նկատմամբ՝ միաժամանակ իր նոր տեխնոլոգիայի համար ապահովելով առավել զարգացած արտաքին [պերիֆերիկ] միջավայր:

Աշխարհ-տնտեսական տեխնոլոգիական տրանսֆերտի օրինակ է ծրագրավորման ոլորտում աշխատանքի գլոբալ բաժանումը, երբ մայր կազմակերպություններում են մնում ամենաառաջավոր գերժամանակակից նոու-հաուները և դրանց զարգացման գաղափարաբանությունները, իսկ տեխնիկական իրականացումները փոխանցվում են այլ տարածաշրջաններ՝ Թաիլանդ, Հնդկաստան, Հայաստան: Կամ՝ նյութագիտության (նոր նյութերի ստացում) ոլորտում հանքանյութերի մշակման բավական խորը փուլերի տրանսֆերտը հանքանյութ պարունակող երկրներ: Բնական է, որ ժամանակակից ծրագրավորողները, կամ հազվագյուտ մետաղների կորզման մասնագետները չեն կարող ապրել ֆեոդալական կարգերում: Հետևաբար, դրանց «պերիֆերիկ աբորիգենային միջավայրը» պետք է ունենա տնտեսվարման համապատասխան տեխնոլոգիական մակարդակ, տվյալ դեպքում՝ ***ազատ շուկայական տնտեսություն***[14]:

---

[14] Այս տեսակետից ԽՍՀՄ-ը (հանած՝ արդեն նշված գաղափարաբանական, տնտեսական և հասարակական արատները) մի քանի կարգ ավելի բարձր տնտեսվարման տեխնոլոգիա ունեցող աշխարհ-տնտեսություն էր, քան ներկայիս շուկայական տնտեսության անցած հետխորհրդային հանրապետությունները, քանի որ այդ տնտեսակարգը (որը նաև Մեծ ինքնաբավ տարածք էր) ի վիճակի էր կազմակերպելու գերժամանակակից արտադրությունների լիակատար շղթաներ: Հավանաբար,

Հատկանշական է, որ համաձայն աշխարհ-տնտեսությունների տեսության, ***շուկայական տնտեսությունը (որպես տնտեսվարման տեխնոլոգիա) իր բուն բովանդակությամբ ներկայումս չի հանդիսանում ամենաբարձր տնտեսակարգը,*** այն զիջում է տնտեսության իրական հատվածում գործող գլոբալ օլիգոպոլիաներին, որոնք էլ իրենց հերթին (ներկայումս) զիջում են գլոբալ ֆինանսական բևեռներին[15]:

Այս երկու աշխարհ-տնտեսություններում ***չեն գործում [ազատ] շուկայական հարաբերությունները***: Գլոբալ տնտեսական մրցակցությունն ընթանում է երկու բարձրագույն աշխարհ-տնտեսական բևեռների միջև:

Աշխարհ-տնտեսությունների հայեցակարգը թույլ է տալիս նորովի դիտարկել շուկայական հարաբերությունների տեղը և դերը նոր աշխարհակարգում և էական ճշգրտումներ կատարել Հայաստանի տեղը, դերը և աշխարհատնտեսական (геоэкономические) և աշխարհ-տնտեսական (мир-экономические) խնդիրները սահմանելիս:

Այսպիսով.

Ազգային անվտանգության հիմնադրույթի շրջանակներում Հայաստանի՝ որպես պետության, ավտոնոմության, հոմեոստազի պահպանման և դրանց մակարդակի աճի խնդիրների համակարգային լուծումը

այդ հանրապետությունների մեջ միակ բացառությունն է կազմում Ռուսաստանը, որն աստիճանաբար վերականգնում է իր աշխարհ-տնտեսական բարձր կարգավիճակը ի հաշիվ այն գերմոնոպոլիաների (РАО ЕС, Роснефть, Росвооружение), որոնց առիթով նրան խստորեն քննադատում են Արևմուտքում:

15 Այս տեսության սահմաններում, գլոբալ տեսակետից, Իրաքի կոնֆլիկտն իրենից ներկայացնում է ֆինանսական աշխարհ-տնտեսության և իրական աշխարհ-տնտեսության մրցակցության գործիք և օբյեկտ: Միջին արևելքի նավթային ռեսուրսների նկատմամբ համապարփակ վերահսկողությունը իրական հատվածի աշխարհ-տնտեսության համար (գլոբալ նավթային կոնցեռններ և ռազմա-արդյունաբերական համալիր) ստեղծում է բարենպաստ պայմաններ ֆինանսական աշխարհ-տնտեսության հետ նրա մրցակցությունում: Մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի կուրսի անկումը (նվազեցնում է գլոբալ «ազատ» ֆինանսական ռեսուրսներ), որը համարժեք է նավթի գների բարձրացմանը (մեծացնում է գլոբալ իրական հատվածի ռեսուրսները), թույլ է տալիս «քերված» տեսքով գնահատել այդ աշխարհ-տնտեսությունների ֆինանսական հզորությունների հարաբերակցության փոփոխությունը Իրաքի պատերազմից առաջ՝ երբ 1 բարել նավթն արժեր 20$, և ներկայումս՝ 60$:

Տես՝ Манукян С.А., Геоэкономические аспекты Иракской войны, Վերլուծական տեղեկանք, «Նորավանք» ԳԿՀ, 2003 թ.:

առավել համախմբվում է, եթե այն արտապատկերվում է Հայաստանի՝ ցածր աշխարհ-տնտեսությունից բարձրին անցման հետագծի և դրա պայմանների տարածության մեջ:

Ներկայիս Հայաստանն ակնհայտորեն գտնվում է առնվազն առավել ցածր աշխարհ-տնտեսությունում, քան վերոնշյալ երեքն են (գլոբալ ֆինանսներ, գլոբալ իրական հատված, շուկայական տնտեսություն): Հետևաբար, անցումը շուկայական տնտեսությանը անհրաժեշտ է դիտել որպես կոնստրուկտիվ ուղղություն: Այլ հարց է, որ գլոբալ մրցակցության և «ժամանակի խտացման» պայմաններում «աստիճանական պլանավորումը» կառավարվող համակարգը կարող է տանել դեպի այնպիսի ստորադաս և փակուղային իրավիճակ, որից դուրս գալու հավանականությունը գրեթե զերո է:

Դիտարկված հիմնադրույթի շրջանակներում ազատ շուկայական հարաբերությունների կազմավորումը Հայաստանի համար համեմատական առավելություններ կապահովի փոքր (կովկասյան) տարածաշրջանում: Սակայն մեծ տարածաշրջանում (Միջին արևելք) այդ համեմատական առավելության իրացումը դժվար է պատկերացնել Հայաստանի փոքր չափերի պատճառով (համեմատական առավելությունների բացարձակ արժեքը չի կոմպենսացնում ռեսուրսաապահովվածության շատ ցածր բացարձակ արժեքը): Հետևաբար, անհրաժեշտ է ինտեգրվել առավել բարձր աշխարհ-տնտեսական «մեծ տարածք», որն ակնհայտորեն կամ՝ Եվրոպական Միությունն է, կամ՝ Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ ինտեգրել հարակից «փոքր տարածքները[16]»:

Մյուս կողմից՝ Հայաստանը չի կարող կտրվել իր աշխարհագրական և աշխարհաքաղաքական համատեքստից: Հետևաբար, անհրաժեշտ են տնտեսակարգային հարաբերությունների մշակում աշխարհագրական հարևանների հետ:

Հայաստանի մարգինալությունը՝ մի կողմից զարգացման երկարաժամկետ խոչընդոտ է, որը սակայն՝ նորարարական հայացքի

---

[16] Ցանկացած աշխարհ-տնտեսություն հիմնվում է որևէ աշխարհագրական տարածքի՝ հողի վրա: Անհնար է պատկերացնել XVII դարի անգլիական տնտեսական և տեխնոլոգիական թռիչքը առանց Բրիտանական կղզիներում տեղակայված հզոր ազգային, աշխարհագրականորեն սահմանազատված և պաշտպանված տնտեսության: Կամ ԱՄՆ իրական հատվածի գերմոնոպոլիաների հզորությունը՝ առանց ԱՄՆ գերհարուստ և գորպաշտպանված մեծ աշխարհագրական տարածքի: Այս է՝ ազատագրված տարածքների ինտեգրման ժամանակակից մեկնաբանության բուն բովանդակությունը:

դեպքում, կարող է վերածվել նորարարական տնտեսվարման տեխնոլոգիաների հղացման շուրջը ազգային վերնախավի համախմբման նպատակի և ռազմավարության:

Հայաստանյան հիմնական գործընթացները տնտեսակարգային դինամիկայի համատեքստում և կոռուպցիան

Նախորդ պարագրաֆում դիտարկված գործընթացները Հայաստանում ունեն իրենց մասնավոր արտապատկերումները հասարակական-քաղաքական, մշակութային և տնտեսական ոլորտներում:

Քաղաքական գործընթացներ. իշխանությունների լեգիտիմության կորուստը, ժողովրդի օտարումը իշխանություններից և ժողովրդավարության հետընթացը

Նորանկախ Հայաստանի հասարակական-քաղաքական գլխավոր միտումն էր ժողովրդի մոտ պետական իշխանության նկատմամբ վստահության աստիճանի նվազումը, որն սկսվեց 1992 թվականից: Դրա պատճառներն էին արդեն դիտարկված՝ սեփականաշնորհման հիմքի վրա բարքերի առևտրայնացումն ու քրեականացումը: Ազգային զարթոնքը, որը կենտրոնացած էր արդի փուլի կարևորագույն խնդրի՝ ***հայկական իռեդենտայի***[17] իրականացման վրա, արգելակում էր հասարակական-քաղաքական բարձր լարվածության փոխակերպումը սոցիալական ընդվզումների[18]: Սակայն դրա դիմաց՝ շագրենի կաշվի նման, նվազում էր իշխանությունների լեգիտիմությունը: Վստահության վարկի նվազման պայմաններում իշխանությունների ձեռնարկած գործողությունները անհամապատասխան եղան հայկական պետա-

---

17 ***Իռեդենտա*** - XIX դարում հասարակական քաղաքական հոսանք Իտալիայում ուղղված ուրիշի տիրապետության տակ գտնվող իտալական հողերն Իտալիային միավորելու համար: Լայն իմաստով՝ ազգային հողահավաքի փուլ, որն անցել են եվրոպական ազգային պետությունները, այդ թվում՝ Ֆրանսիան, Գերմանիան:

18 Հարկ է նշել, որ հայերի մոտ ազգային ինքնապահպանման ձգտումը գերակա է սոցիալ-տնտեսական խնդիրների նկատմամբ, որի շնորհիվ անգամ բացառիկ ծանր տարիներին չարձանագրվեցին լուրջ սոցիալական ընդվզումներ:

կանության զարգացման գլոբալ նպատակներին և էականորեն փոխեցին Հայատանում ընթացող հասարակական-քաղաքական զարգացումների կարևորագույն բնութագրերը:

Սկսվեց ժողովրդավարացման հետընթացը, որը խորհրդանշվեց 1994 թվի դեկտեմբերին ՀՅԴ արգելումով, ինչը խաթարեց Հայաստանում քաղաքական համակարգի բնականոն կայացումը: Անցումային ժամանակաշրջանում Հայաստանի գլոբալ խնդիրների լուծմանն առավել համապատասխան սոցիալ-դեմոկրատական և, միաժամանակ ազգային գաղափարաբանության ավանդույթներով կուսակցության բացակայության պայմաններում սկսվեց էրզաց, անդեմ և պատեհապաշտ կուսակցությունների ստեղծումը, որի արդյունքն է ներկայիս Հայաստանի ***ապազաղափարականացված քաղաքական համակարգի քիմերային կառուցվածքը:*** Կենսունակ սոցիալ-դեմոկրատական քաղաքական ուժի բացակայության պայմաններում ավելի մեծ թափ ստացավ հասարակության առևտրայնացումն և քրեականացումը, տնտեսության օլիգարխացումը: Ընդարձակվեց կոռուպցիան:

1995թ. Ազգային ժողովի ընտրություններում, Հայաստանում քաղաքական համակարգի ձևախեղման պայմաններում, ***առաջին անգամ քաղաքական իշխանության հայտ ներկայացրեց լիբերալ իշխանության հետ դաշնակցած բիզնեսը և տարավ խոշոր հաղթանակ***:

Այդ ընտրություններով Հայաստանում սկիզբ դրվեց ***քաղաքական կոռուպցիային***, որից հետո այն արագորեն ընդարձակեց իր ընդգրկումն ու տարատեսակները, յուրաքանչյուր նոր ընտրություններում (անկախ մակարդակից) գրավելով նոր ոլորտներ: Հասարակության ***առևտրայնացումը*** ներթափանցեց քաղաքական համակարգ և քաղաքական նպատակադրումը, տրամաբանությունն ու վարքը փոխարինվեցին քրեականացված բիզնեսի նեղ խմբային տրամաբանությամբ, նորմերով և վարքով: Այս քայլի հետևանքները նույնպես առկա են մինչ այսօր՝ ազգային և պետական նպատակները ստորադասված են օլիգարխիկ բիզնեսի նպատակներին:

Կիսանախագահական մոդելով ՀՀ Սահմանադրության ընդունումը գործիք դարձավ լեգիտիմացնելու համար հասարակության մեջ ընթացող բոլոր բացասական գործընթացները, գերկենտրոնացնելու քաղաքական կառավարումը՝ նեղ խմբային ոլորտ տեղափոխելով ազգային և պետական կարևորագույն խնդիրների լուծումը: Սահմանադրությունն իրավական հիմք հանդիսացավ պետության և հասարակության զարգացումները հակաժողովրդավարական ուղով տանելու համար:

1996 թվականի նախագահական ընտրությունների ձևախեղումը, ժողովրդական կամքի բռնաղատումը և դրան հետևած լայնածավալ քաղա-

քական հալածանքները վերջնականապես հաստատեցին ***ժողովրդի և պետության օտարումն*** ու փոխադարձ անվստահությունը:

Դրա հետևանքով պայմաններ ստեղծվեցին Հայաստանում վերնախավային առաջին հեղաշրջման համար: 1998-ից՝ 1988-ին սկսված ազգահավաքն ու հողահավաքը փոխադրվեցին վերնախավային հարաբերություններ: Դրան զուգահեռ հասարակության պրոտո-վերնախավային շերտը սահմանազատվեց հասարակությունից: Վերնախավերի ձևավորումն արդեն տեղի էր ունենում «իշխանություն-կապիտալ» տանդեմում:

Կրկնակի ստանդարտներ, կոռուպցիա, աղքատություն, գաղափարաբանական դիսոնանս[19]

Հայաստանի օրենսդրության զարգացումը՝ իր ելեկտներով, ընթանում է դեպի եվրոպական ստանդարտներ: Դրա հետ զուգընթաց, ինչպես հետևում է **Գծագիր** 1 և **Գծագիր** 2-ից՝ աճում է նաև կոռուպցիան: Այսինքն, տեղի է ունենում առևտրայնացած հարաբերությունների ադապտացիան ներմուծվող նորմերին և ինստիտուտներին: Արդյունքում՝ աճում է հասարակության քիմերայնությունը:

Հասարակական հարաբերությունների կարևորագույն բաղադրիչը՝ աշխատանքային հարաբերությունները պետության, գործարարների և աշխատուժի միջև, զույգ առ զույգ ունեն երկակի բնույթ: Պետության և գործարարների միջև փոխհարաբերություններում շարունակվում է վարչական ռեսուրսի կապիտալացումը, որի մեխանիզմը ***կոռուպցիան է***: Ընդ որում, եթե հետխորհրդային տարածքի մեծ մասում կոռուպցիոն գործարքն իրենից ներկայացնում է պետական պաշտոնյայի կողմից ***անօրինական գործունեության կամ անգործության*** իրականացում, ապա Հայաստանում, որպես կանոն, կոռուպցիոն գործարքում գործարարին տրվում է ***օրենքով նրան պատկանող իրավունքի իրականացումը:***:

Փոքր բիզնեսում «Գործատու – վարձու աշխատող» հարաբերություններում գերիշխում են երկու հիմնական տիպեր: Առաջինը՝ արյունակցական կապերի վրա հիմնված հարաբերություններն են, երբ առավել հաջողակ և բարեկեցիկ անձն իր մոտ աշխատանքի է վերցնում իր հարազատներին և բարեկամներին: Երկրորդը՝ գործազրկության բարձր մակարդակի պայմաններում՝ աշխատուժի վարձումն առանց աշխատանքային պայմանագրի: Եթե առաջին դեպքում աշխատուժը որոշ չափով պաշտպանված է ավանդական հարաբերություններով, ապա երկրորդ դեպքում՝ այն բացարձակապես անպաշտպան է:

---

19 ***Դիսոնանս***՝ աններդաշնակություն, անհամապատասխանություն:

Գծագիր 1. Կոռուպցիայի խնդրի կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ գործարարների պատկերացումներում[20], 2002թ.:



Գծագիր 2. Կոռուպցիայի խնդրի կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ քաղաքացիների գնահատականներում[20], 2002թ.:



---

20 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Տարածաշրջանային զարգացման կենտրոն, Թրանսփերենսի ինթերնեշնլ Հայաստանյան մասնաճյուղ, Երևան, 2002:

Այդ հարաբերություններում՝ կոռուպցիոն ռենտան, որը գանձում է պետական պաշտոնյան փոքր բիզնեսի գործատուից, վերջինս տեղափոխում է աշխատողի վրա: Հատկանշական է, որ փոքր բիզնեսում լայն տարածում ունի օրավարձային և բնամթերքով վճարումը:

Միջին բիզնեսից գործունեության իրավունքի փոխարեն պահանջվում է ոչ միայն կոռուպցիոն ռենտա, այլև ***քաղաքական լոյալություն:*** Ընդ որում, միջին բիզնեսին ***կոռուպցիոն վարքագծի պարտադրումը հանդիսանում է լոյալության վերահսկման մեխանիզմ***:

Խոշոր բիզնեսը սերտաճած է բարձրագույն իշխանական խավին: Եթե փոքր և միջին բիզնեսի ոլորտում հիմնականում գերիշխում են ասիական տիպի հարաբերություններ, ապա խոշոր բիզնեսում դրանք ստանում են աֆրիկյան մոդելին բնորոշ գծեր, երբ սեփականաշնորհվում են ամբողջական ոլորտներ և տարածքներ: Եթե փոքր բիզնեսը ստվերային հարկեր է վճարում իր տնտեսական գոյության համար, իսկ միջին բիզնեսը վճարում է նաև քաղաքական լոյալությամբ (որը հիշեցնում է խորհրդային ժամանակաշրջանի «պետություն – ընդհատակյա բիզնես» հարաբերությունները): Խոշոր բիզնեսի և բարձրագույն պաշտոնյաներն արդեն կազմում են այն շերտը, որոնք վեր են կանգնած օրենքներից: Քաղաքական բալանսը բարձրագույն իշխանության և օլիգարխիկ բիզնեսի միջև իրենից ներկայացնում է Հայաստանյան զարգացումների ամենահզոր գործոնը:

Աղքատությունը նշված գործընթացների հակառակ կողմն է: Հայաստանում այն 50%-ի կարգի է: Ճշգրիտ գնահատականները բավական խնդրահարույց են, դժվար հաշվառվող այնպիսի գործոնների առկայության հետևանքով, որոնք կարող են նշանակալից նվազեցնել կամ բարձրացնել այդ մակարդակի գնահատականը: Օրինակ՝ Հայաստանի բնակչությունն իր արտագաղթած ազգականներից տարեկան ստանում է մոտ 1 միլիարդ դոլարի կարգի մասնավոր տրանսֆերտներ: Բացի այդ, ստվերային տնտեսության մեծ ծավալի հետևանքով, գոյություն ունեն պաշտոնապես չհաշվառվող աշխատանքային եկամուտներ: Մյուս կողմից, 2003 թվականին աղքատության պաշտոնապես սահմանված շեմը մեկ անձի համար՝ 12,629 դրամ[21], կրկնակի ցածր է նվազագույն սպառողական զամբյուղի իրական արժեքից՝ 35,000 դրամ[22]:

Այլ խնդիր է հասարակության մեջ ***անհավասարության*** շատ բարձր մակարդակը, որն արտահայտվում է ոչ միայն եկամուտների տարբե-

---

[21] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ, Երևան 2004:

[22] «Հայացք տնտեսությանը», թիվ 11 (23), սեպտեմբեր, 2002 թ., էջ 26:

րություններում, այլ նաև որպես աղքատ խավի սոցիալական զրկվածություն և իրավական անպաշտպանություն, դրանից բխող հոգեբանական ընկճվածությամբ և ***աղքատության մշակույթի*** ձևավորմամբ:

Վերջին 5 տարիների ընթացքում նկատվում են պետական կառավարման մարմինների կողմից նախաձեռնված քաղաքականություններ, որոնք միտված են ազգային արժեքների վերականգնմանը, ***ազգային մտավորական վերնախավի ձևավորմանը և նրա դերակատարության աճին,*** ինչպես նաև երիտասարդությանը:

Սակայն, հետխորհրդային առաջին տասնամյակում ձևավորված իրողությունները և, հատկապես, հասարակության առևտրայնացումն ավելի ուժեղ ազդեցություն ունեն հայաստանյան գործընթացների և դրանց ընդհանուր միտումների ուղղության վրա:

Բարքերի առևտրայնացման, համակարգային կոռուպցիայի և տնտեսության օլիգարխացման ենթատեքստում հայտարարվող և իրականում գործող արժեհամակարգերի հակադրությունը, որը հիշեցնում է խորհրդային գաղափարաբանական երեսպաշտությունը, հասարակության մեջ առաջանում է ***գաղափարաբանական դիսոնանս:***

Գծագիր 3.-ը՝ որտեղ տրված են Երևանի բնակչության վստահության աստիճանները Հայաստանի պետական և հասարակական տարբեր մարմիններին, արտապատկերում է վերը նկարագրված գործընթացների և իրավիճակների ամենաընդհանուր նկարագրության խտացված արդյունքները: Տվյալները հավաքագրված են 2004 թվականի մայիսին[23]:

Գծագրից ակնհայտ է պետական մարմինների նկատմամբ անվստահության սպառնալից ցածր աստիճանը, որը, համաձայն ներկայացված հայեցակարգի, արտապատկերում է ***բարքերի առևտրայնացման, քրեականացման, դրանք պետական կառավարման մարմիններ ներթափանցման, պետությունից ժողովրդի օտարման*** հետևանքը: Այդ ֆոնի վրա ՀՀ Նախագահին վստահության աստիճանի առավել բարձր լինելը ներկայացուցչական ժողովրդավարության մարմնի (Ազգային Ժողով) և ժողովրդավարական հասարակության կարևորագույն ինստիտուտի (կուսակցություններ) նկատմամբ, արտահայտում է հասարակության մեջ ***ժողովրդավարության և կենտրոնացված կառավարման*** նկատմամբ վերաբերմունքների հարաբերակցությունը:

---

[23] Ս. Ա. Մանուկյան, Հարավկովկասյան մայրաքաղաքների հասարակությունների որոշ բնութագրեր, Տարածաշրջան, #2, «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2005թ.:

Գծագիր 4. Երևանում վստահության աստիճանը պետական և հասարակական ինստիտուտների նկատմամբ, 2004թ., մայիս



Բանակի և Եկեղեցու նկատմամբ շատ բարձր վստահության մակարդակները ցույց են տալիս ***ազգային արժեքների*** և ***ազգային զարթոնքի գործընթացների*** անվերապահորեն բարերար ազդեցությունները հասարակության վրա: Ընդ որում, պետական մարմինների՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ բանակի ու եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի շատ մեծ տարբերությունը, ցույց է տալիս, որ ***հասարակության մեջ հստակորեն սահմանազատված են հետխորհրդային գործընթացների դրական և բացասական արդյունքների գիտակցումը և գնահատականները***:

Բիզնեսի նկատմամբ վստահության մակարդակի միջին մակարդակը արտահայտում է այն փաստը, որ հասարկությունն իր համար ավելի օգտակար է տեսնում բիզնեսը, քան՝ պետությունը, որն էլ ցույց է տալիս բարքերի առևտրայնացման ընդհանուր բացասական ազդեցությունը ***պետության որպես ազգային արժեքի*** կայացման վրա: Պետության կերպարի վրա այն ունի կատաստրոֆիկ ազդեցություն, քանի որ ***առևտրայնացումը անհարիր է պետության բովանդակությանը***, իսկ բիզնեսին՝ այն ներհատուկ է: Եվ, չնայած առևտրայնացումը հակակրելի է հասարակությանը, սակայն այն հանդուրժելի է այն սուբյեկտների համար, որոնց դա ներհատուկ է, այսինքն՝ բիզնեսին:

Ժողովրդավարական արժեքների կայացածության (***ժողովրդավարական*** և ***ազատական արժեքների ու ինստիտուտների ներմուծում***

գործընթացի [ան]հաջողության) մասին է խոսում ՁԼՄ-ների և քաղաքացիական հասարակության հիմնական սուբյեկտներից մեկի հասարակական կազմակերպությունների նկատմամբ վստահության մակարդակի ցածր աստիճանը:

Արտաքին ազդեցություններ

Եվ, վերջապես, Հայաստանի նկատմամբ աճել և բազմացել են արտաքին ազդեցությունների հնարավորությունները, որոնց շարքում են՝ Հայաստանին տրվող արտաքին ֆինանսական աջակցությունը, ազգային օլիգարխիկ կապիտալների կախվածությունը արտաքին կոնյուկտուրայից և միջազգային ֆինանսները վերահսկող ազգային և վերազգային կառույցներից, ազգային մակարդակի ընտրությունները, ԼՂՀ հարցը, Հայաստանի կարևորագույն ենթակառուցվածքների արտաքին կառավարումը:

Եվ, քանի որ արտաքին ազդեցությունների հնարավորությունները բաշխված են տարածաշրջանում և Հայաստանում մրցակցող արտաքին սուբյեկտների միջև, ապա գոյություն ունեն նշանակալից հավանականություններ, որ գլոբալ կամ տարածաշրջանային լարումների աճի դեպքում Հայաստանի ներքին իրավիճակի փոփոխությունը կարող է տատանվել անկայուն հավասարակշռությունից մինչև կայուն անհավասարակշռության:

Գծագիր 5-ում տրված է դիտարկված իրավիճակների և զարգացումների սխեմատիկ պատկերը:

Հայաստանում ներկա իրավիճակի և ԽՍՀՄ-ում անցումային գործընթացների նախնական պայմանների միջև առկա է կառուցվածքային նմանություն, որից բխում է, որ Հայաստանում հաստնացել և հնարավոր են համակարգային փոփոխություններ:

Խնդիրն այն է, որպեսզի դրա նախաձեռնումը սկսվի Հայաստանում, այլ ոչ թե ներմուծվի: Բացի դրանից, ակնհայտ է, որ համակարգային փոփոխությունների բովանդակությունը պետք է լինի ազգային, պետական և հասարակական արժեհամակարգերի ներդաշնակեցումը, որում առևտրային հարաբերությունները պետք է սահմանափակվեն տնտեսական համակարգում: Դրա հիման վրա պետք է նախաձեռնվեն պետության շինարարության, տնտեսական և հասարակական-քաղաքական նոր գործընթացները: Վերոշարադրյալից ակնհայտ է նաև, որ այդ համակարգային փոփոխությունների համակարգային գործիքը ***կոռուպցիայի*** դեմ համակարգային պայքարն է, որը պետք է ընկալվի և նախաձեռնվի Հայաստանում՝ ազգային վերնախավի և ժողովրդի միջև կոնսենսուսի պայմաններում, քանի որ. «ժամանակը չի սպասում»:

Գծագիր 5. Հետխորհրդային գործընթացների ընդհանուր նկարագիրը



*

Հետազոտությունը կատարվել է ***կիբեռնետիկական մոտեցման*** շրջանակներում, որի հիմնական յուրահատկությունն են ***օբյեկտի դիտարկումը որպես համակարգ*** և ***հասարակական կառավարման տեխնոլոգիականացումը***:

Գրքույկում, հետխորհրդային տարածքում անցումային շրջանի սոցիալական դինամիկայի ներկայացված հայեցակարգը ընդունելով որպես ***աշխատանքային վարկած,*** փորձ է կատարված մաթեմատիկական մոդելների կիրառմամբ հիմնավորել դրա բաղադրիչները, վեր հանել և քանակապես գնահատել վերը նշված մակերևութային, խորքային, արտաքին և ածանցյալ գործընթացները պայմանավորող գործոնները, դրանցով պայմանավորված միտումները և արդյունքները:

Համակարգային կոռուպցիան դիտարկելով որպես հետխորհրդային տարածքում առավել հզոր գործընթացի՝ առևտրայնացման ամենաէական մոդալ իրականացում, աշխատանքային վարկածի օպերացիոնալացումը կատարվել է ***կոռուպցիայի ընկալման*** շուրջը:

Օպերացիոնալացված հայեցակարգի փորձարկումը կատարվել է Երևանի ուսանող երիտասարության շրջանակում, որը հանդես է եկել, որպես ***հետազոտության օբյեկտ***:

Ուսանողությունն ընտրվել է որպես հետազոտության օբյեկտ, քանի որ հասարակական այդ շերտից են կազմավորվելու հայաստանյան վերնախավերը և, հետևաբար, այն իրավիճակը, գործոնները և միտումները, որոնք առկա են ներկայիս ուսանող երիտասարդության շրջանակում, կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում վերածվելու են Հայաստանի վերնախավային շերտերին վերաբերող իրողությունների: Իսկ վերնախավային իրողությունները [հատկապես ներկայիս հայաստանյան տիպի հասարակությունների համար] առավել նշանակալից ազդեցությունն ունեն ընդհանուր հասարակական գործընթացների վրա:

Որպես ***հետազոտական մեթոդ*** ընտրվել է ***զանգվածային հետազոտությունը*** առավելագույնս խուսափելու համար հավաքվող տեղեկությունների սուբյեկտիվիզմից:

Որպես ***տվյալների մշակման մեթոդ*** ընտրվել են ***բազմաչափ մաթեմատիկական վիճակագրական և էվրիստիկ մեթոդները*** առավելագույնս խուսափելու համար վերլուծական փուլի սուբյեկտիվիզմից:

Հետազոտության արդյունքների մի մասը կարող են համարվել «հանրահայտ», սակայն դրանց հաստատումը և քանակական գնահատումը շատ կարևոր են, քանի որ այնպիսի բարդ համակարգում, ինչպիսին հասարակությունն է՝ նույնքան «հանրահայտ են» այդ

արդյունքների ճիշտ հակառակ պնդումները: Հետևաբար, արժե ունենալ հակոտնյա «հանրահայտ» իրողություններից որևէ մեկի գիտական հիմնավորումը:

Արդյունքների մեկ այլ հատված կարող է դիտվել, որպես հանրահայտ և փորձարկված տեսություններին հակասող: Սակայն, հետազոտության հատկապես ա՛յդ արդյունքներն են առավել արժեքավոր: Վստահաբար կարելի է պնդել, որ գոյություն ունի նշանակալից հավանականություն, որ պատմական երկար ժամանակաշրջանում քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվող Հայաստանը և հայ հասարակությունը, կարող են ունենալ «օրթոդոքս» տեսություններին չենթարկվող, կամ դրանց զարմանալի համադրություններից բխող բնութագրեր:

Բնականաբար, հետազոտության արդյունքների մի այլ հատված՝ հնարավոր է, որ կարիք ունի հետագա ավելի համակողմանի հիմնավորման կամ, գուցե, հերքման:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես երիտասարդության, այնպես էլ հասարակության ավելի լայն շերտերի և/կամ յուրահատուկ խմբերի նկատմամբ սոցիալական, տնտեսական և քաղաքական ռազմավարությունների մշակման և դրանց արդյունքների կանխատեսման նպատակով:

ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիան ամենաընդհանուր կերպով սահմանվում է որպես.

կազմակերպության կառավարմանը մասնակցող պաշտոնյայի կողմից իր դիրքի չարաշահումն այնպիսի անձնական կամ կորպորատիվ շահ ստանալու համար, որը դուրս է գտնվում կազմակերպության գործունեության նպատակների շրջանակից և նախատեսված չէ կազմակերպության գործունեության կանոնակարգերով[24]:

Կոռուպցիայի արտահայտման հիմնական ձևերն են կաշառակերությունը, վատնումը, շորթումը, քննարկման իրավունքի չարաշահումը, շահերի բախման հանգամանքի օգտագործում, ապօրինի նպաստ, արտոնություն կամ պարգևատրում ստանալը, հովանավորչությունը, խնամիությունը, ապօրինի նվիրատվությունը և ներդրումները և այլն[25]:

Գործողությունը, որը որոշակի քաղաքակրթական-մշակութային նորմերի տեսանկյունից սահմանվում է որպես կոռուպցիա, միշտ ունի հասարակականորեն բացասական իմաստ և ***այդ հասարակությունում տեղի ունի որպես թաքցվող հարաբերություն***: Սակայն մեկ այլ մշակույթում այդ նույն գործողությունը կարող է բոլորովին էլ բացասական երանգ չունենալ: Երկու դեպքում էլ այն սոցիալական փոխանակման ձևերից մեկն է:

Օրինակ, իդեալական պատերնալիստական հասարակությունում, որտեղ հասարակական հարաբերություններում հիմնական կարգավորող մեխանիզմը «հոր» հեղինակությունն է, դժվար է պատկերացնել կոռուպցիայի երևույթը, քանի որ իշխանությունը պատկանում է «հորը», ով դրա ուժով կատարում է ռեսուրսների բաշխում՝ հիմնվելով ավանդույթի և/կամ իր հայեցողության վրա: «Հայրն» է կրում և՛ ավանդույթը, և՛ դրա մեկնաբանությունը, իսկ նրա հեղինակությունը մշակութային տարր է:

---

[24] Այս սահմանումից մասնավորապես բխում է, որ կոռուպցիան դիտվում է ոչ միայն պետության հետ փոխհարաբերությունների բնութագիր: Օրինակ, մասնավոր կորպորացիայի կառավարչի անձնական շահ ստանալուն միտված գործողությունը, որը չի սահմանված կորպորացիայի կողմից, նույնպես կոռուպցիա է: Հարկ է նշել, որ պետության թուլացմանը և կորպորացիաների ուժեղացմանը զուգընթաց, այս տիպի կոռուպցիան ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանալու:

[25] Հակակոռուպցիոն միջոցառումների հավաքածու, Հակակոռուպցիոն ռազմավարությունների միջազգային փորձը. գիտական նյութերի հատընտիր, Երևան, 2005:

Դժվար է պատկերացնել կոռուպցիան ֆիզիկական ուժի միջոցով կառավարվող հասարակություններում: Այստեղ կարգավորող նորմը ուժին տիրապետողի կամքն է և այն, ինչ այլ մշակույթում կանվանվեր կոռուպցիա, այստեղ թույլի գոյության իրավունքի փրկագինն է:

Կոռուպցիան առաջանում է օրենքի առկայության պայմաններում, երբ հասարակական փոխանակությանը մասնակցող կողմերն իրավահավասար են, հայտարարված է օրենքի գերակայությունը և գոյություն ունի օրինական պարտադրանքի ֆունկիցա և այն իրականացնող մարմին, օրենքի խախտումը արգելելու կամ պատժելու համար:

Կոռուպցիայի տիպաբանական դասակարգումը

Կոռուպցիայի ուսումնասիրման համար մշակված տեսությունները պարունակում են դրա դասակարգման տարբեր տիպաբանություններ, որոնցից յուրաքանչյուրն ունենալով իր ուրույն վերլուծական նշանակությունը, կարող է կիրառվել կոռուպցիայի կոնկրետ ուսումնասիրությունների համար: Թվարկենք կոռուպցիայի դասակարգման մի քանի տիպաբանություններ:

Իր չափերի, տարածվածության և ազդեցության տեսակետից լինում է[26].

1. Սահմանափակ կոռուպցիա, որը չունի նշանակալից ազդեցություն հասարակական կյանքի ընդարձակ ոլորտների վրա և հիմնականում կենտրոնացված է պետության և հասարակության վերին շերտերում:
2. Կոռուպցիա, որն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, հասարակական և տնտեսական համարյա բոլոր հարցերը կարգավորվում են կաշառքների միջոցով:
3. Կոռուպցիա, որը կազմալուծում է հասարակարգը:

Հայդենհայմերը[27] դասակարգել է կոռուպցիան ըստ ավանդական և ժամանակակից հասարակություններում իր գոյության ձևերի: Յուրաքանչյուր տիպի հասարակության համար նա սահմանել է կոռուպցիայի երկու տիպ.

---

[26] Syed Hussein Atlas S. H. The problem of corruption. Singapure: Pang Guck Cheng, 1986.

[27] Arnold J. Heidenheimer. Perspectives on the Perception of Corruption // Political Corruption., 1986.

1. Ավանդական հասարակությունում.
   1.1. կոռուպցիա, որը հիմնված է ազգակցական հարաբերությունների վրա,
   1.2. կոռուպցիա, որը հիմնված է «Պատրոն – Կլիենտ» տիպի հարաբերությունների վրա,
2. Ժամանակակից հասարակություններում.
   2.1. կոռուպցիա, որը հիմնված է «Առաջնորդ - Հետևորդ» հարաբերությունների վրա,
   2.2. կոռուպցիա, որը հիմնված է քաղաքացիական մշակույթի հարաբերությունների վրա:

Կոռուպցիայի մեկ այլ դասակարգման համար կիրառվում է քաղաքակրթական հայտնի դասակարգումը[28].

1. ***Արևմտաեվրոպական մոդել***: Այստեղ առկա է քաղաքացիական բարձր մշակույթ ունեցող հասարակություն, կոռուպցիան հազվադեպ երևույթ է և քաղաքացիների կողմից դիտվում է որպես բացահայտ անոմալիա: Կոռուպցիոն գործարքները հազվադեպ են և պատահական: Մշտական կոռուպցիոն կապերը ջանադրաբար թաքցվում են: Այս կոռուպցիան երբեմն անվանում են ***տնտեսական***:
2. ***Ասիական մոդել***: Այստեղ կոռուպցիան սովորական և հասարակականորեն ընդունելի երևույթ է, որը ներհյուսված է այլ սոցիալական հարաբերությունների հետ միասնական համակարգում: Այս կոռուպցիան երբեմն անվանում են ***սոցիալական***:
3. ***Աֆրիկյան մոդել***: Տեղի է ունենում պետության հստակ բաժանում տնտեսական կլանների միջև, որոնցից յուրաքանչյուրը լիակատար կերպով տնօրինում է իր սեկտորը և, միաժամանակ քաղաքական միջոցներով պահպանում այդ իրավիճակի անփոփոխելիությունը: Այս մոդելը գործում է թույլ պետություններում: Անցումն աֆրիկյան մոդելին հնարավոր է, երբ երկրում քաղաքական իշխանությունը համախմբված չէ կամ երբ տնտեսական վերնախավերը, ընդհանուր վտանգի առկայության պայմաններում, փոխհամաձայնության են գալիս տիրող իրավիճակը պահպանելու համար, կամ երբ օլիգարխիկ կոնսենսուս է առաջանում տնտեսական և քաղաքական վերնախավերի միջև: Երկրում ժողովրդավարությունը

---

[28] Atlas S.H. The Problem of Corruption. – Singapore: Times Book International, 1986.

վերածվում է իրավիճակի քողարկման միջոցի: Տնտեսությունը պարզունակացվում է: Սոցիալական խնդիրները լուծվում են այնքանով, որքանով դա անհրաժեշտ է սոցիալական պայթյունները կանխելու համար:

4. ***Լատինաամերիկյան մոդել***: Ստվերային կոռուպցիոն հանցագործ կառույցների հզորությունը համեմատելի է պետության հզորության հետ, որոնք վերածվում են պետության մեջ՝ պետությունների: Պետությունը տասնամյակներով ներքաշվում է հանցագործ կառույցների հետ արյունալի պատերազմների մեջ: Տնտեսական խնդիրները, այլ ավելի հրատապ խնդիրների նկատմամբ մղվում են երկրորդ պլան:

Կոռուպցիայի պայմաններում վարքագծային մոդելները ստորաբաժանվում են որպես[29].

1. ***Հարմարվողական վարքագիծ***, առավել տարածված վարքագծային մոդելն է: Քաղաքացիները վատ կառավարման պայմաններում կոռուպցիան դիտարկում են որպես ***գործիք*** իրենց խնդիրների լուծման համար:
2. ***Խուսափման վարքագիծ***, առաջանում է քաղաքացու մոտ իրավական նիհիլիզմի պայմաններում, կոռուպցիան օգտագործվում է օրենքը խախտելու կամ սեփական պարտականությունների կատարումից խուսափելու համար:
3. ***Գրավման վարքագիծ***[30], որն ունի երկու տարատեսակ.
    a. ***Պետության գրավում***, բիզնեսի վարքագիծ, որի արդյունքում այն ստվերային վերահսկողության հնարավորություն է ստանում պետության նկատմամբ:
    b. ***Բիզնեսի գրավում***, երբ իշխանության ներկայացուցիչները կամ իշխանական կառույցները վերահսկողություն են սահմանում բիզնեսի վրա և ստանում են իրենց «ադմինիստրատիվ ռենտան» ոչ թե կաշառքների ձևով, այլ որպես փայաբաժիններ տնտեսվարող կազմակերպություններից:

---

[29] Հակակոռուպցիոն ռազմավարության միջազգային փորձը. գիտական նյութերի հատընտիր, Երևան, 2005:

[30] Seize the State, Seize the Day: Stata Capture, Corruption and Influence in Transition Economies (World Bank Policy Research Group Working PAper 2444), September, 2000. J. Hellman, G. Jones and D. Kaufmann.

Վերջին երկու վարքագծերն ունիվերսալ են և հանդիպում են բոլոր տիպի հասարակություններում, ունենալով տեղական յուրահատկություններ:

Կոռուպցիայի հետազոտման ընդհանուր խնդիրները

Կոռուպցիայի հետազոտությունները համեմատաբար նոր են, սակայն արդեն այդ ոլորտում հայտնի են բազմաթիվ ուսումնասիրություններ[31]: Հետազոտուղները կոռուպցիան դիտում են որպես համակարգային արատ, որն օրգանապես սերտաճած է այլ հասարակական հարաբերությունների հետ, հետևաբար և՛ ***կոռուպցիայի հետազոտությունը, և՛ դրա դեմ պայքարը նույնպես դիտվում են որպես համակարգային աշխատանքներ:***

Կոռուպցիայի ուսումնասիրության համակարգային մոտեցման շրջանակներում դիտարկվում են հետևյալ հետազոտական խնդիրները[32].

1. Տվյալ հասարակությունում տարածված կոռուպցիոն գործողությունների ուսումնասիրությունը:
2. Կոռուպցիոն գործարքների մեխանիզմների բացահայտումը,
3. Կոռուպցիայի մակարդակի գնահատումը:
4. Կոռուպցիայի կառուցվածքի գնահատումը՝ ըստ տարաբնույթ կառուցվածքաբանական տիպաբանության:
5. Կոռուպցիային նպաստող գործոնների բացահայտումը:
6. Հակակոռուպցիոն ռեսուրսի բացահայտումը:
7. Հակակոռուպցիոն գործունեությանը հակազդեցության հնարավոր օջախների բացահայտումը:

Հայաստանում 1999-2003 թթ. նույնպես իրականացվել են կոռուպցիայի խնդիրների հետ կապված հետազոտություններ, որոնցում դիտարկված են հ.3. «Կոռուպցիայի մակարդակի գնահատումը» և հ.4.

---

31 Կոռուպցիայի վերաբերյալ ուսումնասիրությունների գրականության մեծ ցանկ է պարունակում՝ Սյուզան Ռոուզ-Աքերման, Կաշառվածությունը և պետությունը, Երևան, 2004:

32 Антикоррупционная политика. Под. ред. Сатарова, ИНДЕМ, М., 2004.

«Կոռուպցիայի կառուցվածքի գնահատումը՝ ըստ տարաբնույթ կառուցվածքաբանական տիպաբանության» խնդիրները[33]:

Հետազոտության ընդհանուր նկարագրությունը

Հետազոտության օբյեկտը

Հետազոտության օբյեկտ է եղել Երևանի բուհական ուսանողությունը: Այս հասարակական խումբն ընտրվել է որպես հետազոտության օբյեկտ, քանի որ պետական (քաղաքացիական) ծառայության այն պաշտոնները, որոնց ծառայողական լիազորությունների շրջանակում է պետական կառավարման վճիռների ձևավորումը, կայացումը և վերահսկումը, կարող են զբաղեցվել միայն բարձրագույն կրթությամբ անձանց կողմից: Հետևաբար, ներկայիս բուհական երիտասարդության շրջանակներում է գտնվում այն անձանց նշանակալից մասը, ովքեր մոտակա 3-10 տարիների ընթացքում համալրելու են պետական պաշտոնյաների խավը: Բացի այդ, խաղաղ պայմաններում ուսանողությունն է ազգային վերնախավը համալրող հիմնական խումբը: Ներկայիս ուսանողներն են զգալի չափով բնութագրելու միջնաժամկետ ապագայում Հայաստանի պետական կառավարման ոճը և որակը: Նրանց անհատական բնութագրերն այն «նյութն են», որի ձևավորման արդյունքում ունենալու ենք ապագա պետական ծառայողներին և ազգային բարոյական նորմերը կրող, ձևավորող և զարգացնող վերնախավը:

Իհարկե, թե ինչպիսին կլինեն այդ անձինք որպես պետական ծառայող, գուցե առավել նշանակալից չափով որոշվում է նրանով, թե ովքեր

---

[33] Տնային տնտեսություններն սպասարկող հանրային ծառայությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն, Հայ ժողովրդական ֆորում, Հաշվետվություն, Երևան, 2001:

Մասնավոր ձեռնարկությունները սպասարկող հանրային ծառայությունների մասին ձեռներեցների կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն, Հայ ժողովրդական ֆորում, Երևան 2001:

Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. Հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Թրանսփերենսի ինթրնեյշնլ Հայաստանյան մասնաճյուղ, Երևան 2002:

ՄԱԶԾ «Աջակցություն տեղեկատվական հասարակությանը և ժողովրդավարական կառավարմանը» ծրագրի աջակցությամբ իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքներ:

են այսօ՛ր պետական կառավարիչները, որոնք ընտրում են այդ երիտասարդներին, իսկ հետո՝ նրանց աշխատանքային գործունեության ընթացքում դաստիարակում որպես իրենց ենթակա և փոխարինող: Այս հետազոտության շրջանակներում այս գործոնը, նրա ազդեցության բնույթը և չափը չեն դիտարկվել:

Հետազոտության խնդիրները

Ներկայացվող աշխատանքում դիտարկված է՝ ***Կոռուպցիային նպաստող գործոնների բացահայտումը Երևանի ուսանող երիտասարդության շրջանակներում:***

Այդ տեխնիկական նպատակը ծառայում է ավելի էական խնդրի լուծման շրջանակները նախանշելու համար.

1. ***Հայ հասարակության մոտ ապագայի մտավոր վերնախավի մշակութային, հասարակական նորմատիվային և վարքագծային տիպերի շաղկապվածությունը կոռուպցիայի նկատմամբ տարբեր դիրքորոշումների հետ:***
2. ***Հայ հասարակության մեջ առկա այն գործոնները, որոնք ազդում են (նպաստում են կամ խոչընդոտում) մտավոր վերնախավում կոռուպցիոն դիրքորոշումների դինամիկայի վրա:***

Այս խնդիրների լուծումից է կախված Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարությունների կիրառման երկարատև սոցիոմշակութային համատեքստերը և ա՛յն հիմնական խնդրի լուծումը, որը դիտարկվել է նախաբանում՝

Ունակ կլինի՞ արդյոք հայ մտավոր վերնախավը առաջնորդել Հայաստանը դեպի առավել բարձր աշխարհ-տնտեսական նիշա:

Հետազոտության մեթոդը

Հետազոտությունը կատարվել է զանգվածային հարցման միջոցով: Հետազոտության ընտրանքի ծավալն էր 500: Հարցվել են Երևանի 10 պետական և մասնավոր բուհերի ուսանողներ: Ընտրանքի կառուցվածքային բնութագրերը տրված են Աղյուսակ 1-3-ում:

Աղյուսակ 1. Ընտրանքի սեռա-տարիքային կազմը

Տարիքը	Արական	Իգական	Ընդամենը

17-19	9.6%	19.4%	29.1%
20-22	23.4%	39.9%	63.3%
23 և բարձր	5.4%	2.2%	7.6%
Ընդամենը	***38.5%***	***61.5%***	***100.0%***

Աղյուսակ 2. Ընտրանքի մասնագիտական-սեռական կառուցվածքը

Մասնագիտություն	Արական	Իգական	Ընդամենը
Տնտեսագիտական	8.0%	14.6%	22.6%
Իրավագիտական	8.8%	16.0%	24.8%
Հումանիտար	10.6%	21.8%	32.5%
Ինժեներական, գիտական	11.0%	9.0%	20.0%
Ընդամենը	***38.5%***	***61.5%***	***100.0%***

Աղյուսակ 3. Ընտրանքն ըստ մասնագիտության և բուհի կարգավիճակի

Մասնագիտության տիպ	Բուհի կարգավիճակը		
	Պետական	Մասնավոր	Ընդամենը
Տնտեսագիտական	13.0%	9.8%	22.8%
Իրավագիտական	7.2%	17.6%	24.8%
Հումանիտար	27.0%	5.4%	32.4%
Ինժեներական, գիտական	20.0%	0.0%	20.0%
Ընդամենը	**67.2%**	**32.8%**	**100.0%**

Հետազոտության ընտրանքի բնութագրերը սահմանվել են հիմնվելով Երևանի ուսանողության վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալների վրա[34]:

Հետազոտության գործիքը

Հետազոտության գործիքը կառուցվել է հետազոտության խնդիրներին համապատասխան: Այստեղ ընդգրկված են պարամետրեր (հարցեր), որոնք բնութագրում են կոռուպցիոն դիրքորոշումները, ինչպես նաև

[34] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004:

հարցախմբեր, որոնք նկարագրում են ուսումնասիրվող երևույթի տարբեր համատեքստերը:

Կիրառվել են հետևյալ հարցախմբերը.

1. Կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումները որոնք վերցված են ИНДЕМ հիմնադրամի 2001 թվականի հետազոտության հարցաշարից[35]:
2. Ուսանողների մասնագիտական դիրքորոշումները, գնահատականները և սպասումները:
3. Հասարակական դիրքորոշումները, գնահատականները և պատկերացումները:
4. Ենթամշակութային պատկանելությունը մոտարկող պարամետրեր[36], ինչպես նաև կենսառճի բնութագրեր:
5. Սոցիալ-ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրեր:
6. Անձի դոմինանտ բնազդները վեր հանող տեստ[37]:

Վերլուծական մեթոդները

Հետազոտության վերլուծական մեթոդներն ընտրվել են, ելնելով հետազոտության հիմնական նպատակից՝ վեր հանել կոռուպցիային նպաստող գործոնները, գնահատել դրանց ազդեցությունը, կառուցել և նկարագրել ուսանողության իրական տիպաբանական շերտերը: Այդ խնդիրների լուծման համապատասխան գործիքներ են դիտվել բազմաչափ վիճակագրական և էվրիստիկ մեթոդները:

Հետազոտության տվյալներն ունեին և՛ ինտերվալային, և՛ նոմինալ չափման սանդղակներ: Մասնավորապես բացառապես նոմինալ սանդղակներով էին չափված ИНДЕМ հիմնադրամի հարցաշարից վերցված հարցերը: Հիմնադրամում այդ պարամետրերի սանդղակի ընտրությունը պայմանավորված էր եղել այն հետազոտական վերլուծական գործիքի բնույթով, որը կիրառվել է իրենց հետազոտության ընթացքում: Այդտեղ նախնական վերլուծական

---

35 Այդ հարցերը տրված են Հավելված 1-ում: ИНДЕМ հիմնադրամի էլեկտրոնային հասցեն է՝ http://dbs100.indem.ru/

36 ***Մոտարկող պարամետր՝*** այնպիսի պարամետր, որը կիրառվում է օբյեկտի դժվար չափելի կամ թաքնված բնութագրերն արտապատկերելու համար՝ կորելացված լինելով դրանց հետ:

37 Գրքույկում հետազոտության այս հատվածը ընդգրկված չէ:

փուլի խնդիրն է եղել վեր հանել հասարակության մի քանի տիպաբանություններ, այդ թվում նաև այնպիսիք, որոնք նկարագրում են կոռուպցիոն հակվածությունը:

Տիպաբանությունների վեր հանման համար ИНДЕМ հիմնադրամում մշակվել է համապատասխան մեթոդ, որն իրենից ներկայացնում է սոցիոլոգիական ընդհանրացված պարամետրերի կառուցում փորձագիտական գնահատականների միջոցով: Ընդհանրացված փոփոխականները կառուցվում են նոմինալ սանդղակ ունեցող նախնական ինդիկատորների (հարցաթերթիկային հարցերի) կատեգորիաներին վերագրելով փորձագիտական գնահատականներ, որոնք արտացոլում են այն ***հավանականությունները***, որով կարելի է տվյալ պատասխանի տարբերակն ընտրած հարցվողին դասել կառուցվող (նպատակային) տիպաբանության տարբեր կատեգորիաներում: Մեթոդի անբաժանելի մասն է կազմում ստացված ընդհանրացված փոփոխականների բազմաչափ վիճակագրական մեթոդներով փորձարկումը՝ դրանց կայունության և վալիդության գնահատման համար[38]:

Սույն հետազոտության ռեսուրսապահովման շրջանակներում հնարավոր չէր ապահովել այդ մեթոդի լիակատար կրկնությունը[39]: Բացի այդ, մեր գերակա խնդիրն էր գործոնների փոխազդեցության դինամիկայի վեր հանումը, որի համար ավելի համապատասխան են ինտերվալային սանդղակով չափված բնութագրերը: Ընդ որում, սուբյեկտիվ գնահատականների հետ ասոցացված շեղումներից խուսափելու համար դինամիկ կապերը վեր են հանվել բացառապես ձևական մաթեմատիկական մեթոդների միջոցով: Վերը նշված պատճառներով անհրաժեշտություն առաջացավ բազմազանեցնել հետազոտության վերլուծական գործիքները:

Հետազոտությունն իր մեջ ուներ նաև մեթոդական մաս՝ վեր հանել տարբեր սանդղակների և դրանց համապատասխան մշակման մեթոդների ազդեցությունը միևնույն սոցիոլոգիական բնութագրի մեկնաբանությունների վրա: Տարբեր

---

[38] Сатаров Г., О новом подходе построения обобщенных социологичеких переменных., http://www.indem.ru/satarov/28_04_2000.htm

[39] Այդպիսի հետազոտությունը հնարավորություն կտար լայնորեն համադրելի դարձնել երկու հետազոտությունների արդյունքները, ինչը կարող էր դառնալ ինքնին ուշագրավ համեմատական հետազոտություն, քանի որ այդ դեպքում հնարավոր կլիներ դուրս բերել նախկին ընդհանուր (խորհրդային) տարածքի երկու օբյեկտների միջև հեռավորությունների առաջացման դինամիկան և ուղղությունները և, միգուցե, այդ հեռավորությունները պայմանավորող խորքային թաքնված սոցիալ-մշակութային գործոնները:

մեթոդներով ստացված արդյունքների փոխադարձ արտապատկերելիության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի քանակական մեթոդների արդյունքների կիրառման տարաբնույթ հարցերում: Այդ պատճառով մի շարք ինդիկատորներ (փոփոխականներ), այդ թվում նաև ИНДЕМ հիմնադրամի հետազոտության կոռուպցիայի վերաբերյալ հարցերը, չափվել են երկու սանդղակով՝ նոմինալ և ինտերվալային: Միևնույն փոփոխականին ինտերվալային սանդղակ վերագրելու դեպքում հնարավոր է կիրառել առավել զարգացած բազմաչափ վիճակագրական և էվրիստիկ մեթոդներ, սակայն երբեմն հետազոտվող բնութագրի ինքնին բնույթը էականորեն որակական է և դրա ինտերվալային սանդղակով չափման դեպքում, երբ անհրաժեշտ է վերաձևակերպել հարցը, դժվար է ապահովել հարցի բովանդակության համապատասխանությունը բնօրինակ հարցին: Մյուս կողմից՝ նոմինալ (կատեգորիական) սանդղակների կիրառությունը հետազոտողին առավել մեծ ազատություն և հարմարություն է տալիս երևույթն ուսումնասիրել իր որակական բազմազանության մեջ, ինչպես նաև կիրառել տիպաբանական առավել համապատասխան մոտեցումներ: Սակայն նոմինալ սանդղակներով չափված փոփոխականների ընդհանրացումը «դասական» բազմաչափ մեթոդներով երբեմն վիճահարույց է կամ անհնար[40]: Բացի այդ, նոմինալ փոփոխականների մշակման բազմաչափ մեթոդների կիրառությունն ունի այնպիսի յուրահատկություններ, որոնք դժվարացնում են ստացված արդյունքների մեկնաբանությունները (պահանջում են երևույթների «հավանականային» ընկալում) և դրանց կիրառությունները պահանջում են համատեքստային (նախնական) պայմանների հստակ սահմանում:

Ինտերվալային սանդղակներով չափված փոփոխականների համար կիրառվել է գործոնային վերլուծության (Factor Analysis) տարբեր մեթոդներ և ընդհանրացված ռեգրեսիոն մոդելներ (General Regression Models, GLS): Գործոնային վերլուծության օգնությամբ վեր են հանվել այն գործոնները, որոնց «մաքուր» ազդեցությունները սահմանում են «իդեալական տիպեր»: Նոմինալ փոփոխականների ընդհանրացման և փոխազդեցությունների վեր հանման ու

---

40 Չնայած գոյություն ունեն ոչ քիչ դեպքեր, մասնավորապես մեծ ընտրանքների դեպքում, ինչպես նաև, երբ կարևորվում են փոփոխականների ***ոչ սահմանային արժեքները***, երբ թույլ սանդղակներով չափված փոփոխականներն ուժեղ սանդղակներին համապատասխան մեթոդներով ուսումնասիրելիս ստացվում են այնպիսի արդյունքներ, որոնց մեկնաբանությունները տալիս են սկզբունքորեն համանման արդյունքներ:

գնահատման համար կիրառվել են բազմարժեք և երկարժեք լոգիստիկ ռեգրեսիաներ (Multinominal Logistic Regression և Binominal Logistic Regression), հոմոգենության վերլուծությունը (Homogenity Analysis), համապատասխանությունների վերլուծությունը (Correspondence Analysis): Վերջին երկու մեթոդները կարելի է մեկնաբանել որպես գործոնային վերլուծության նմանակներ նոմինալ փոփոխականների համար: Մյուս կողմից՝ արդյունքների ներկայացման ընկալելիության աստիճանը բարձրացնելու համար լայնորեն կիրառվել են բազմաչափ մեթոդների արդյունքները տեսանելի դարձնող գծագրեր:

Վեր հանված գործոնների ազդեցության և փոխազդեցության հետևանքով առաջացած ուսանողության իրական տիպերը վեր հանելու և դրանց ծավալների փոխհարաբերությունների գնահատման համար կիառվել է կլաստերային (էվրիստիկ) վերլուծության տարբեր մեթոդներ (Cluster Analysis):

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Կոռուպցիոն դիրքորոշում

Կոռուպցիայի նկատմամբ անհատի դիրքորոշումը բնութագրելու համար կիրառվել է հետևյալ հարցը.

«Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում այն բանին, որ մեզ մոտ իրենց հարցերը լուծելու համար քաղաքացիները հաճախ կաշառք են տալիս:»

Պատասխանների հնարավոր տարբերակներն էին.

1. «Դա մեր կյանքի անբաժանելի մասն է, առանց դրա ոչինչ անել հնարավոր չէ»:

2. «Դրանից կարելի է խուսափել, սակայն կաշառքները հեշտացնում են գործերի առաջ տանելը»:

3. «Դրանից անհրաժեշտ է ազատվել, քանի որ կոռուպցիան, կաշառակերությունը այլասերում են հասարակությունը և իշխանությունը»:

Գծագիր 6-ում տրված է դիտարկվող փոփոխականի բաշխումն ամբողջ ընտրանքի համար:

Գծագիր 6. Երևանի ուսանողության դիրքորոշումները կոռուպցիայի նկատմամբ



Ենթադրվել է, որ պատասխանների այս տարբերակները կարելի է դիտարկել որպես կաշառակերության նկատմամբ որոշակի դիրքորոշումները ***մոտարկող պարամետրեր***: Ընդ որում, առաջին պատասխանը համապատասխանում է այն դիրքորոշմանը, երբ հարցվողը կաշառակերությունն ընկալում է որպես հասարակական վարքագծային ***նորմա***, երկրորդը՝ երբ կաշառակերությունը դիտվում է որպես նպատակներին հասնելու ***գործիք*** և երրորդը՝ երբ այն դիտվում է որպես հասարակական բարքերի ***այլասերում***: Եթե պայմանականորեն համարենք, որ առաջին երկու դիրքորոշումները սահմանում են կոռուպցիայի նկատմամբ «ասիական» դիրքորոշման հետևորդներին, իսկ երրորդ խումբը՝ «եվրոպականին» (տես՝ էջ 46), ապա այդ խմբերն ունեն 40:60 հարաբերակցություն[41]:

Առավել համապատասխան է ստացված երեք խմբերից երկու հակադիրները (***նորմա*** և ***այլասերում***) դիտարկել որպես ***ստացիոնար վիճակներ,*** իսկ երկրորդը՝ (երբ կոռուպցիան ընկալվում է որպես ***գործիք***) որպես անցումային վիճակ, որը համապատասխան պայմաններում կարող է փոխակերպվել հակադիր ստացիոնար խմբերից որևէ մեկին: Այս մոտեցման դեպքում ստացված թվային հարաբերակցությունը կարելի է դիտարկել որպես հակակոռուպցիոն ռազմավարությունների արդյունավետության գնահատման ցուցանիշ:

> Սա իհարկե, չի նշանակում, որ Երևանի, և, առավել ևս, Հայաստանի բնակչության նույն տոկոսն ունի համանման դիրքորոշում: Հավանաբար, Երևանում և Հայաստանում այդ տոկոսն աճում է: Այստեղ էականն այն է, որ բարձրագույն կրթության ձգտումը ասոցացված է օրենքների գերակայությունն ընդունող դիրքորոշման հետ:
>
> ՄԱԶԾ 2005, բուհական ուսանողության հետազոտության արդյունքներով ուսանողների 57.4%-ը երբեք ուղղակի կամ անուղղակի կերպով չի շփվել բուհական կոռուպցիայի հետ: Անմիջապես աչքի է ընկնում այս երկու թվերի իրար շատ մոտ լինելը: Կարելի է ենթադրել, որ.
>
> ***H: Կաշառատվության ուղղակի կամ անուղակի փորձը և դրա նկատմամբ դիրքորոշումները ուժեղ ասոցացված են***
>
> և՝

---

[41] Ինչպես ցույց կտրվի հաջորդիվ՝ Երևանի ուսանողության համար կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումների «ասիական - եվրոպական» ստորաբաժանումը իրոք ***պայմանական է,*** քանի որ հիմքեր են առաջացել ենթադրելու, որ կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումները ենթամշակութային պատկանելության, իսկ գուցե և՝ անհատի դոմինանտ բնազդների սոցիալիզացված մոդալ արտահայտությունն են:

H: Կաշառատվության ուղղակի կամ անուղղակի փորձը կարող է որակապես փոխել կոռուպցիայի նկատմամբ անհատի դիրքորոշումը «եվրոպականից» դեպի «ասիական»:

Ընդ որում, հակառակ անցման հավանականությունը շատ ավելի փոքր է՝ հոգևոր կատարսիսը բնորոշ է բացառիկ անհատներին:

Հետագա շարադրանքում **Գծագիր** 6-ում պատկերված արդյունքները գործածվելու են որպես համեմատության բազա կոռուպցիոն դիրքորոշման վրա ուսանողության տարբեր բնութագրերի ազդեցությունների վեր հանման և մեկանաբանության համար: Դիտվելու է կոռուպցիան որպես ***Այլասերում, Գործիք*** և ***Նորմա*** համարող անձանց հարաբերական քանակի կախվածությունը անհատին բնութագրող տարբեր պարամետրերից: Ընդ որում, հիմնականում շեշտը դրվելու է կոռուպցիայի նկատմամբ բացասական դիրքորոշումը ներկայացնող ***Այլասերում*** կատեգորիայի փոփոխության վրա:

Քանի որ կոռուպցիան ***Նորմա*** համարող անձանց քանակը բավականաչափ փոքր է ստացվել, երբեմն դրա փոփոխության աստիճանը չի ունեցել բավարար վիճակագրական հավաստիություն ($\alpha < 0.05$): Այդ դեպքերի ուսումնասիրության համար կառուցվել է նոր փոփոխական, որում միավորվել են կոռուպցիան ***Նորմա*** և ***Գործիք*** համարող պատասխանները: Այդպիսի միավորումը հիմնավորված է նրանով, որ այդ դիրքորոշումների բովանդակություններն ավելի մոտ են միմյանց և, ըստ էության, սահմանում են պատկանելությունն «ասիական» մոդելին: Ստացված նոր փոփոխականի մեկնաբանությունն արդեն ավելի համապատասխան է ***կոռուպցիոն հանդուրժողականություն*** անվանմանը:

Այս գլխում ներկայացված են կոռուպցիոն դիրքորոշումների պայմանավորվածությունն ուսանողությունը բնութագրող տարբեր պարամետրերից:

Ներկայացվող արդյունքները դուրս են բերվել հետևյալ հիմնական տեսական հոլովույթի հիման վրա:

Կոռուպցիայի նկատմամբ տարբեր դիրքորոշումները չեն առաջանում «դատարկ տեղում» և չեն կենսագործում առանձնացված: Դրանք պայմանավորված են ինչպես անհատի ***անձնական հատկանիշներով***, այնպես էլ այն ***պայմաններով, որտեղ նա դաստիարակվել է*** (սոցիալիզացվել է) և ***ապրում է***, նախ և առաջ՝ ընտանիքով: Կոռուպցիոն դիրքորոշման առաջացման, ամրապնդման և իրականացման վրա հնարավոր ազդեցություն կարող են ունենալ նաև բազմապիսի ենթամշակութային պայմաններ: Դրանց նշանակալից մասը ասոցացված են ***«բնակավայրի տիպ»*** հասկացության բովանդակային տարրերի հետ:

Օրինակ՝ հայտնի է, որ մեծ քաղաքի, փոքր քաղաքի կամ գյուղաբնակի աշխարհայացքները որոշակի տեսակետերից նշանակալից տարբերվում են: Կոռուպցիոն դիրքորոշումը կարող է ինտեգրված լինել նաև անհատի ***ճանաչողական (կոգնիտիվ) համալիրում*** կամ ենթահամալիրներում, այսինքն՝ անհատի մոտ իրար հետ տրամաբանորեն և/կամ հուզականորեն փոխկապակցված պատկերացումներում, դիրքորոշումներում և գիտելիքներում: Հետևաբար, ցանկացած ազդեցություն այդ տարրերից որևէ մեկի կամ դրանց խմբի վրա, որպես կանոն, տարածվում է նաև ճանաչողական այլ համալիրներում, ենթահամալիրներում և դրանց տարրերում: Կոռուպցիոն դիրքորոշումը (ինչպես նաև ցանկացած այլ դիրքորոշում), լինելով ***անհատի*** կայացման գործընթացի արդյունք, ինքն էլ՝ իր կայացմանը զուգընթաց, ընդգրկվում է այդ գործընթացի մեջ:

Կոռուպցիոն դիրքորոշման, սոցիալ-տնտեսական և մշակութային գործոնների փոխկապակցվածությունը որպես կիբեռնետիկական համակարգ

Նկարագրված հոլովույթը հեշտությամբ արտապատկերվում է ***կիբեռնետիկական համակարգ*** հասկացության վրա, քանի որ ***անհատը, արտաքին աշխարհը*** (հասարակությունը) և ***դրանց միջև փոխհարաբերությունները*** կարող են դիտվել որպես կիբեռնետիկական համակարգ, որում տեղի են ունենում ինֆորմացիայի (ցածր էներգիաներ) և փոխազդեցության (բարձր էներգիաներ) շրջանառություն, որի արդյունքում վերափոխվում է ամբողջ համակարգը և աճում նրա գլոբալ նպատակային ֆունկցիայի արժեքն արդեն ավելի ընդհանրական համակարգային հարաբերություններում՝ ֆիզիկական աշխարհի և գերբնականի տիրույթներում[42]: Ակնհայտ է, որ կոռուպցիոն դիրքորոշումը և կոռուպցիոն վարքի տարրերն ու տեսանկյուններն առկա են և՛ անհատի մեջ, և՛ արտաքին աշխարհում, և՛ որպես հետևանք, դրանց միջև փոխհարաբերություններում: Հետազոտության մեջ դիտարկված և դուրս բերված ցանկացած պարամետրի կամ գործոնի համար կարելի է որոշել, թե կիբեռնետիկական համակարգի ո՞ր բաղադրիչին է այն պատկանում՝ անհատի՞ն, արտաքին աշխարհի՞ն, թե՞ նրանց միջև փոխհարաբերության որևէ տեսանկյանը:

---

[42] Парсонс Т., Понятие общества: компоненты и их взаимоотношения //Американская социологическая мысль.- М.- 1996.- С.494-526.

Այս հետազոտությունում որպես կառավարվող օբյեկտ (ելքային պարամետր) է դիտարկված անհատի կոռուպցիոն դիրքորոշումը, իսկ որպես մուտքային պարամետրեր՝ նրա անհատական, սոցիալ-տնտեսական, ճանաչողական և այլ բնութագրերը: Այս շրջանակներում, կոռուպցիոն դիրորոշման կայացման և վերափոխման գործընթացը կարելի է դիտարկել որպես փոխազդեցություններ բազմամակարդակ համակարգի տարրերի միջև: Այդ փոխազդեցությունները հնարավոր է դուրս բերել և նկարագրել «սև արկղի» ուսումնասիրության հայտնի մեթոդներով, երբ օբյեկտի մուտքային և ելքային պարամետրերի արժեքների բազմությունների հիման վրա դուրս է բերվում օբյեկտի ***փոխանցման ֆունկցիան*** (ներքին կառուցվածքի մոդելը):

Այդպիսով հնարավոր է դառնում ոչ միայն կանխատեսել համակարգի վարքը առանց դրա գործունեությանը միջամտելու, այլև էական ազդեցություն գործել համակարգին ներհատուկ բնութագրերի (փոխանցման ֆունկցիայի) վրա: Այսինքն՝ իրականացնել ***ռազմավարական պլանավորում*** և ***կառավարում:***

Երբեմն կիբեռնետիկական համակարգի հիմնադրույթի շրջանակներում կոռուպցիան դիտվում է, որպես ***շփման*** նմանակ, որը նվազեցնում է ամբողջ համակարգի գործունեության արդյունավետությունը: Այս մոտեցման դեպքում կոռուպցիան հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր վերլուծական բաղադրիչին ներհատուկ բնութագիր: Այսպիսով հակակոռուպցիոն պայքարը (ռազմավարությունները) մեկնաբանվում են համակարգում անարդյունավետ շփման նվազեցմանն ուղղված գործողություններ[43]:

Գծագիր 7-ում տրված մոդելը, որը նկարագրում է այն կապերը, որոնք դուրս են բերված հետազոտության ընթացքում: Այդ ընդհանուր մոդելը կառուցվել է որպես առանձին մաթեմատիկական մոդելների համախմբություն, որոնք բացատրում են Գծագրում տրված յուրաքանչյուր կապի կոնկրետ բովանդակությունը, չափը և ուղղությունը: Կառուցված կոնկրետ մոդելների կիրառմամբ հնարավոր է

---

[43] Ֆիզիկական համակարգերի գոյությունն ու գործունեությանը, հնարավոր են միայն շփման առկայության դեպքում: Այդ պատճառով հասարակական հարաբերություններում կոռուպցիան որպես շփման ուժ դիտարկելիս, լիովին ընդունելի է դրա զատումը որպես արդյունավետ և ոչ արդյունավետ շփում:

մշակել ուսանողության հետ աշխատանքների ռազմավարություններ[44]:

Հետագա շարադրանքում դիտարկված են **Գծագիր** 7-ում տրված գործոնները՝ նրանց համառոտ նկարագրությունը, ինչպես նաև դրանց ազդեցության բնույթն ու չափը կոռուպցիոն դիրքորոշման վրա: Տրված են միայն այն արդյունքները, որոնք վիճակագրորեն նշանակալից են առնվազն $\alpha = 0.05$ մակարդակում: Սակայն արդյունքների մեծ մասի հավաստիությունը գերազանցում է տասնորդական ստորակետից հետո հազարերորդական նիշը:

Գծագիր 7. Կոռուպցիոն դիրքորոշման կայացման, ազդեցության և կառավարման մոդելը



Հարկ է նշել, որ ***դուրս բերված կախվածությունները, որպես կանոն, չեն նշանակում ուղղակի պատճառա-հետևանքային կապեր,*** այլ ցույց են տալիս երկու փոփոխականների ասոցիացիան: Ներկայացվող ուսումնասիրության մեջ կոռուպցիան դիտվում է որպես առավելապես մակրո գործընթացների փոխազդեցության տիրույթում դիտարկվող խորքային երևույթ: Հետևաբար, վեր հանված ասոցիացիաների մեկնաբանությունների հիմնական նախնական ենթադրությունն

---

[44] Նախաբանում տրված մոդելը հավակնում է առավել ընդհանրության, իսկ հետազոտության ընթացքում այն որպես հիպոթեզների համախմբություն փորձարկվել է հասարակության որոշակի և սահմանափակ ենթաբազմության վրա: Հետևաբար, արդյունքները պետք է դիտել որպես նախաբանում տրված մոդելի համապատասխանության ***մասնակի հիմնավորում:***

այն է, որ գոյություն ունեն խորքային [թաքնված], անհատական, սոցիալ-հոգեբանական և մշակութային գործոններ, որոնք ազդում են «մակերևույթում» դիտվող երկու երևույթների (ավելի ճիշտ՝ դրանք ***մոտարկող ինդիկատորների***) վրա, որն էլ արտահայտվում է վերջիններիս փոխադարձ կախվածությամբ: Նախաբանում և **Գծագիր** 5-ում սխեմատիկ ներկայացված իրավիճակների և գործընթացների համակարգը դիտվում է որպես վեր հանված ասոցիացիաների մակրո մեխանիզմ: Սակայն շարադրանքում որոշակի արդյունքների համար տրված են նաև հիպոթեզներ դրանց սոցիալ-հոգեբանական բացատրության մեխանիզմների վերաբերյալ: Հետազոտության նախագիծը ենթադրել է մակրո գործոնների վերհանում: Դրանց ազդեցությունների սոցիալ-հոգեբանական մեխանիզմները կարող են լինել բազմազան և նույնիսկ իրարամերժ: Պարզելու համար, թե ազդեցության հավանական մեխանիզմներից ո՞րն է առավել համապատասխանը, կամ՝ միաժամանակ գործող մեխանիզմներից ո՞րը որքանով է պայմանավորում մակրո ազդեցությունը, պահանջում է հետազոտության առանձնահատուկ նախագծում: Չի բացառվում, որ սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն իրենց հերթին կազմավորվում են անհատական-հոգեբանական մեխանիզմների համադրումով:

Քանի որ ուսումնասիրվող երևույթը «կոռուպցիան» է, այդ պատճառով այն մոտարկող պարամետրը դիտվում է որպես կախյալ (բացատրվող) փոփոխական, իսկ մնացած պարամետրերը, այդ թվում նաև սոցիոլոգիական ստանդարտ և բացատրողական մեծ ներուժ ունեցող պարամետրերը, դիտվում են որպես անկախ (բացատրող) փոփոխականներ:

Մյուս կողմից, չեն բացառվում նաև ուղղակի պատճառա-հետևանքային կապերի բացահայտումները: Այդ դեպքերը հատուկ նշված են:

Կոռուպցիոն դիրքորոշումը և սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական բնութագրերը

Սեռ

Գծագիր 8-ում տրված է, թե որքանո՞վ են տարբերվում ուսանողների և ուսանողուհիների դիրքորոշումները կոռուպցիայի նկատմամբ: Ստացվել է, որ ուսանողուհիները նշանակալից կերպով ավելի անհաշտ են դրա նկատմամբ, քան ուսանողները:

Եթե կոռուպցիան ասոցացված է սեռի հետ, ապա դա նշանակում է, որ գոյություն ունեն վերջինիս հետ կապված մշակութային և հասարակական վարքի այնպիսի նորմներ, որոնք առավել հավանական են դարձնում տղամարդկանց մոտ կոռուպցիան որպես հասարակական վարքի նորմ կամ նպատակներին հասնելու գործիք դիրքորոշման առաջացումը:

Գծագիր 8. Կոռուպցիոն դիրքորոշման կախվածությունը սեռից



Հավանաբար, դա առաջին հերթին կապված է տղամարդու հասարակական առավել ակտիվ դերի հետ: Հայ հասարակության մեջ որպես տղամարդու պարտավորություններ են դիտվում ընտանիքի և հասարակության միջև տնտեսական փոխհարաբերությունների իրականացումը, իսկ ներկա հասարակությունում հաջողությունը և բարգավաճումը պահանջում է վարքագծային նորմաների այնպիսի ընդարձակ սպեկտր, որում կոռուպցիոն վարքի պատրաստակամությունն ունի կարևոր նշանակություն: Հետևաբար տղամարդու դերային համակարգը պետք է իր մեջ ներառի հնարավորինս ընդարձակ վարքագծային և գործիքային անվանացանկ, այդ թվում նաև կոռուպցիայի նկատմամբ առավել հանդուրժողականություն: Այս պնդումը, որը դուրս է բերվել «Սեռ x Կոռուպցիոն դիրքորոշում» հարաբերությունից, ստացվել է նաև այլ անկախ ճանապարհով: Ուսանողներին հարց է առաջադրվել. «Ո՞րն է մեր հասարակության մեջ հարստանալու ամենաարդյունավետ ճանապարհը» (տես՝ **Աղյուսակ** 4):

Աղյուսակ 4. «Ձեր կարծիքով՝ ո՞րն է մեր հասարակության մեջ հարստանալու ամենաարդյունավետ ճանապարհը»

Հարստանալու ճանապարհը	*Արբ.*	*Իգ*
Պետք է լինել իշխանության մեջ և հնարավորինս բարձր դիրք գրավել	***31.9%***	***17.6%***
Տաղանդով, ժամանակակից և խորը գիտելիքներով	***25.7%***	***38.9%***
Աշխատասիրությամբ, համբերատարությամբ, համառությամբ	19.4%	21.6%
Զբաղվելով անօրինական բիզնեսով	***12.0%***	***7.5%***
Զբաղվելով օրինական բիզնեսով	7.9%	10.8%
Առնտրի միջոցով՝ հարմարվելով ժամանակից իրականությանը	3.1%	3.6%
Ընդամենը	100.0%	100.0%
Տրված է առաջին պատասխանի բաշխումը		

Ուսանողուհիների համեմատ ուսանողներն ակնհայտորեն ավելի հաճախ են նշել անօրինական բիզնեսի և պետական ծառայության միջոցով (ընդ որում՝ բարձր դիրք գրավելով) հաջողության հասնելու տարբերակները, ինչը հիմնավորում է վերևում ստացված արդյունքը: Ընտանիքի բարեկեցության ապահովման հարցում ավելի բարձր պարտավորություններ ունենալը տղամարդկանց պարտադրում է ավելի «իրատես» լինել: Իսկ աղջիկները, որոնց մոտ դաստիարակվել է ընտանիքի տնտեսվարման (բարեկեցության ապահովման) հարցերում առավել ցածր պարտավորությունների դիրքորոշումը, հնարավորություն ունեն ավելի «իդեալիստական» պատկերացումներ ունենալ հարստանալու ուղիների մասին:

Այստեղից՝ կարող են դուրս բերվել երկու իրարամերժ հետևություններ կանանց սոցիալ-տնտեսական ակտիվացման ռազմավարության վերաբերյալ.

H1: Կանանց առավել ակտիվ ընդգրկումը հասարակական և տնտեսական կյանքում կարող է նպաստել հասարակության մեջ կոռուպցիայի նվազմանը:

H1՝: Կանանց առավել ակտիվ ընդգրկումը հասարակական և տնտեսական կյանքում կբերի նրանց մոտ կոռուպցիոն հանդուրժողականության աճին:

Առաջին հիպոթեզը, հավանաբար, իր «ակնհայտությամբ» ավելի շուտ իրականության պարզունակացում է, քան արդյունավետ ռազմավարական սկզբունք:

Առավել ուշադրության է արժանի երկրորդ՝ H1՛ հիպոթեզը, քանի որ, եթե այն ճիշտ է, ապա կանանց՝ որպես բարոյական նորմերի կրողների, հասարակությունը *ներկայումս* պետք է թողնի իր «ռազմավարական ռեզերվում՝» ընտանիքում, որպեսզի նրանք ընտանիքում կատարեն բարոյական արժեքները հաջորդ սերունդներին փոխանցելու իրենց ֆունկցիան: Կանանց ընդգրկվածության աճը տնտեսական և հասարակական կյանքում նրանց մոտ «կոռուպցիոն դիրքորոշումն աճեցնող ուղի» է բացում, որով հասարակության մեջ բարոյական նորմերի խարխլման գործընթացն առավել ուժգնորեն կներթափանցի ընտանիքի «սիրտը»:

Ասվածը հիմնավորում են նաև Աղյուսակ 5-ի տվյալները, որոնցից ակնհայտորեն բխում է, որ մոր սոցիալական ակտիվության և սոցիալական կարգավիճակի աճի հետ միաժամանակ աճում է նաև զավակի կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Աղյուսակ 5. Մոր կարգավիճակի ազդեցությունը զավակի կոռուպցիոն հանդուրժողականության վրա

Մոր կարգավիճակը	*Անհանդուրժողականություն*
Գործարար, Կառավարիչ, Պետ. պաշտոնյա	52.1%
Մասնագետ	55.1%
Փոքր բիզնես	63.2%
Բանվոր, գործազուրկ, թոշակառու	68.0%
Տնային տնտեսուհի	61.6%
Այլ	77.8%

Այսինքն՝

H1[2]: Կնոջ հասարակական տնտեսական ակտիվացումը բարձրացնում է զավակների կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Որից բխում է, որ.

C1: Ներկայիս հայ հասարակության մեջ հասարակական-տնտեսական հարաբերությունների ազդեցության համեմատական ուժն ավելի մեծ է ընտանեկան դաստիարակության համեմատ;

և, հետևաբար

T: Կանանց «հակակոռուպցիոն պոտենցիալի» գործարկումը պետք է լինի ընտանիքի պաշտպանության սոցիալական քաղաքականության

ոլորտում: Պաշտպանելով մայրությունը՝ պետությունը և հասարակությունը պահպանում է բարոյական բարձր արժեքների ժառանգականությունը:

Հակակոռուպցիոն ռազմավարություններում անհրաժեշտ է կնոջ դերը և ներուժը կիրառել ընտանեկան դաստիարակության հարցերում, միաժամանակ պաշտպանելով կնոջը և ընտանիքը հասարակության այլասերող ազդեցությունից:

Ծննդավայրի տիպը

Գծագիր 9-ում տրված է հետազոտության ընտրանքում տարբեր տիպի բնակավայրերում ծնված ուսանողների բաշխումը, իսկ

Գծագիր 10-ում՝ կոռուպցիոն դիրքորոշման կախվածությունը ուսանողների ծննդավայրի տիպից:

Արդյունքներից բխում է, որ Հայաստանի փոքր քաղաքներում և գյուղերում ծնված ուսանողների մոտ հակակոռուպցիոն դիրքորոշումների մակարդակներն ավելի բարձր են:

Գծագիր 9. Ուսանողների բաշխումն ըստ բնակավայրի տիպի



Գծագիր 10. Բնակավայրի տիպի ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա



Մնացած հավասար պայմաններում, մի կողմից՝ Երևանի, իսկ մյուս կողմից՝ փոքր քաղաքների և գյուղերի ուսանողների կենսապայմանների առավել նշանակալից տարբերությունն այն է, որ Երևանը, որպես մայրաքաղաք, բնականաբար առավել զարգացած է նոր տնտեսակարգի և դրա հարակից պայմանների կայացման հարցերում: Այստեղ առավել ինտենսիվ է կատարվել հասարակական հարաբերությունների ***առևտրայնացումը:***

Մայրաքաղաքում շատ ավելի բարձր է սոցիալական շարժունությունը և դրա հետ ասոցացված վարքագծային մոդելների բազմազանությունը: Կոռուպցիան դրանցից մեկն է: Եվ, ինչպես ցույց տվեցին **Աղյուսակ** 4-ի տվյալները, հասարակական բարքերի ***առևտրայնացման*** պայմաններում, վարքագծի կոռուպցիոն մոդելները կյանքում հաջողության հասնելու համար ուսանողների կողմից գնահատվել են որպես առավել արդյունավետը:

Հետևաբար (նույնիսկ հաշվի չառնելով մայրաքաղաքային և գավառական կենսապայմանների, այդ թվում նաև ինֆորմացիոն դաշտի ազդեցությունները, որոնք տվյալ հետազոտության մեջ չեն դիտարկվել), կարելի է ասել, որ.

T: Նոր տնտեսակարգի հետ ասոցացված գործընթացների գումարային ազդեցությունը [= առևտրայնացում] բարձրացնում է կոռուպցիոն դիրքորոշումը:

Այս պնդումը կարելի էր համարել նաև պարզունակ, եթե հաշվի չառնեինք, որ հասարակության մեջ, բացի ***մակերևութային*** (բարձր էներգիաներով) ընթացող գործընթացներից, առկա են նաև ***արտաքին*** գործընթացներ՝ ժողովրդավարական նորմերի և ինստիտուտների ներմուծում: Ակնհայտ է, որ Հայաստանի օրենսդրության զարգացման միտումն է՝ դեպի եվրոպական ստանդարտներ և այդ միտումը գործում է արդեն բավականաչափ երկար ժամանակ:

Հետևաբար՝

T: Հայաստանում բարքերի առևտրայնացման գործընթացների ներուժը գերազանցում է արտաքին ժողովրդավարացման ազդեցությունների ներուժին:

Դրա անկախ հիմնավորումն է նաև «**Գծագիր 1. Կոռուպցիայի խնդրի կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ գործարարների պատկերացումներում, 2002թ.**» և «Գծագիր 2. Կոռուպցիայի խնդիրների կարևորությունը և փոփոխության միտումները ՀՀ քաղաքացիների պատկերացումներում, 2002թ.» բերված տվյալները:

Իրական գործընթացների (առևտրայնացման և կոռուպցիայի աճի) և իրավական գործընթացների (Հայաստանի օրենսդրության շարժը դեպի եվրոպական ստանդարտներ) միջև հակասության հետ փոխազդում է պաշտոնական քարոզչությունը, որն առավելապես շեշտադրում է երկրորդ գործընթացը, առանց հակազդելու առաջին գործընթացին, այդպիսով աճեցնելով իր նկատմամբ հասարակության անվստահության աստիճանը և առաջացնելով ***գաղափարաբանական դիսոնանս,*** որը համանման է նախաբանում դիտարկված ***խորհրդային գաղափարաբանական երեսպաշտությանը*** և բարձրացնում է հասարակության մեջ կուտակվող բացասական տրամադրությունները պետական մարմինների նկատմամբ:

Վերը նշվածը հիմնավորվում է նաև ուսանողների կողմից կառավարության հակակոռուպցիոն գործունեության նկատմամբ վստահության պայմանների վերլուծությունը, որտեղ նշանակալից հատվածն է կազմում՝ «Թող իրենք կաշառք չվերցնեն», «Երբ կոնկրետ քայլեր ձեռնարկեն» և «[պարզապես] ոչ մի դեպքում չեմ հավատա», «Երբ պատժվեն կաշառակերները» պատասխանները: (Տես՝ Աղյուսակ 23, էջ՝ 115):

Ծնողների կարգավիճակը

Ծնողների կարգավիճակը կիրառվել է վեր հանելու համար ուսանողների կոռուպցիոն դիրքորոշումների կախվածությունը իրենց սոցիալիզացիայի պայմաններից: Ծնողների կարգավիճակը դիտարկվել է որպես նրանց ***զբաղմունքի տիպի*** և ***կրթամակարդակի*** ածանցյալ: Ծնողների զբաղմունքը և կրթական մակարդակը ենթադրվել են որպես ուսանողի սոցիալիզացիայի պայմանները ***մոտարկող*** ձևական պարամետրեր: Դիտարկվել են և՛ հոր, և՛ մոր կարգավիճակները:

Աղյուսակ 6-ում տրված է ուսանողների ծնողների զբաղմունքների բաշխումներն ըստ բնակավայրի ուսանողների ծննդավայրի տիպի:

Աղյուսակ 6. Ուսանողների ծնողների կարգավիճակների բաշխումն ըստ բնակավայրի տիպի

	Հոր կարգավիճակը			
Կարգ	***Եր.***	***Քաղ.***	***Գյ.***	***Ընդ.***
1. Գործարար	17.5%	13.1%	10.0%	**15.3%**
2. Կառավարիչ	11.6%	14.1%	2.9%	**10.8%**
3. Մասնագետ	26.2%	32.3%	31.4%	**28.4%**
4. Պետական պաշտոնյա	17.1%	7.1%	12.9%	**14.2%**
5. Փոքր բիզնես	19.3%	17.2%	17.1%	**18.5%**
6. Չինծառայող	-	4.0%	1.4%	**1.1%**
7. Բանվոր	2.5%	4.0%	12.9%	**4.5%**
8. Գործազուրկ	4.7%	7.1%	10.0%	**6.1%**
9. Թոշակառու	1.1%	1.0%	1.4%	**1.1%**
10. Տնային տնտեսուհի				**-**
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	**100.0%**
	Մոր կարգավիճակը			
Կարգ	***Եր.***	***Քաղ.***	***Գյ.***	***Ընդ.***
1. Գործարար	2.7%	3.6%	1.4%	**2.7%**
2. Կառավարիչ	0.7%	0.9%	1.4%	**0.8%**
3. Մասնագետ	33.0%	34.5%	29.2%	**32.8%**
4. Պետական պաշտոնյա	7.0%	5.5%	5.6%	**6.4%**
5. Փոքր բիզնես	5.0%	2.7%	1.4%	**3.9%**
6. Չինծառայող	-	-	-	**-**
7. Բանվոր	-	3.6%	-	**0.8%**
8. Գործազուրկ	3.0%	9.1%	1.4%	**4.1%**
9. Թոշակառու	0.3%	-	-	**0.2%**
10. Տնային տնտեսուհի	48.3%	40.0%	59.7%	**48.1%**
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	**100.0%**

Երևանի բուհերի ուսանողությունը ներկայացված է առավելապես դիպլոմավորված մասնագետների ընտանիքներով, որոնց շարքին են դասվել ուսուցիչները, ինժեներները, բժիշկները և այլն: Ուշագրավ է, որ ուսանողների մոտավորապես կեսի մայրերը տնային տնտեսուհիներ են, ինչը հաշվի առնելով, որ տիպաբանության մեջ կար գործազուրկ կատեգորիան, կարելի է մեկնաբանել.

T: Երևանի ուսանողության կազմում են առավելապես բարեկեցիկ ընտանիքների երեխաները:

Տարբեր կառուցվածքային մոդելների վերլուծությունները ցույց տվեցին, որ հոր կարգավիճակի տեսակետից ***Գործարար***, ***Կառավարիչ*** և ***Պետական պաշտոնյա*** կատեգորիաները զավակի կոռուպցիոն դիրքորոշման վրա ունեն համանման ազդեցություններ: Համանման էին նաև՝ ***Բանվոր***, ***Գործազուրկ*** և ***Թոշակառու*** կատեգորիաների ազդեցությունները: Այդ պատճառով հետագա կառուցված մոդելներում այդ կատեգորիաները միավորվել են:

Տվյալների ուսումնասիրության ընթացքում, որպես հավելյալ կողմնակի արդյունք, ստացվել է հետևյալ հարցի պարզաբանումը.

Հանրության մեջ կարծիք է տարածված, որ կոռուպցիայի հետևանքով, պետպատվերի շրջանակներում, անվճար բուհական տեղերը «գրավված են» առավել բարեկեցիկ ընտանիքների երեխաներով, իսկ ոչ բարեկեցիկ ընտանիքների երեխաները սովորում են վճարովի տեղերում: Աղյուսակ 7-ի տվյալները պատկերացում են տալիս այդ հարցի վերաբերյալ:

Աղյուսակ 7. Պետական (վճարովի և անվճար) և մասնավոր բուհերի ուսանողների բաշխումն ըստ հոր կարգավիճակի

	Պետական		*Մասնավոր*	*Ընդ.*
Հոր կարգավիճակը	*Անվճար*	*Վճարովի*	*Վճարովի*	
1.Գործարար, կառավարիչ, պետ.պաշտոնյա	*28.6%*	*38.6%*	37.7%	35.8%
2. Մասնագետ	*30.4%*	*22.8%*	22.8%	25.2%
3. Փոքր բիզնես	18.8%	16.6%	13.6%	16.4%
4. Բանվոր, գործազուրկ, թոշակառու	8.9%	10.8%	11.1%	10.4%
5. Զինվորական	1.8%	0.9%	0.6%	1.0%
6. Պատասխան չկա	11.6%	8.5%	14.2%	11.2%
Ընդամենը	100.0%	100.0%	100%	100%

Աղյուսակի տվյալներից բխում է, որ «Գործարար, Կառավարիչ, Պետական պաշտոնյա» հայրեր ունեցող երեխաների համար ***բարձրագույն կրթությունն ավելի մատչելի է***:

Սակայն, ***մնացած հավասար պայմաններում***, այդ խմբի երեխաների պետական բուհի ***վճարովի բաժնում սովորելու հավանականությունն*** ավելի մեծ է, քան մյուս խմբերինը (Փոքր բիզնես, Բանվոր, Զինվորական խմբերում տվյալների տարբերությունները չունեն բավարար վիճակագրական հավաստիություն):

Աղյուսակի տվյալներից հետևում է նաև, որ,

T: Մնացած հավասար պայմաններում, անվճար բաժնում սովորելու հավանականությունն ավելի մեծ է «Մասնագետ» հայրերի զավակների համար:

Սա հնարավոր է այն դեպքում, երբ մտավորականության երեխաները շատ ավելի բարձր պատրաստվածություն ունենային բուհ ընդունվելու համար: Որպես հետևություն կարելի է ենթադրել, որ.

C: Չնայած հասարակության ստրատիֆիկացիայում տեղի ունեցող հզոր կառուցվածքային փոփոխություններին, մտավորականության մոտ շարունակում են գործել այդ շերտի վերարտադրության մեխանիզմները:

Պարզվել է, որ կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումների վրա ազդեցության տեսակետից ավելի ուժեղ ազդեցություն ունի հոր կարգավիճակը:

T: Կոռուպցիայի նկատմամբ առավել անհանդուրժող են ցածր կարգավիճակ ունեցող հայրերի զավակները:

Անհանդուրժողականության տեսակետից նրանց հաջորդում են մասնագիտական որակավորմամբ (մտավորականություն) և փոքր բիզնեսում ներգրավված հայրերի զավակները, որոնք ունեն համարյա նմանատիպ դիրքորոշումներ: (Այդ կատեգորիաները չեն միավորվել, քանի որ այլ բնութագրերի տեսակետից հավանական է համարվել դրանց միջև նշանակալից տարբերությունների գոյությունը): Իսկ առավել հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ բարձր կարգավիճակով հայրեր ունեցող ուսանողները:

Գծագիր 11. Հայրերի և մայրերի կարգավիճակների ազդեցությունը զավակների կոռուպցիոն հանդուրժողականության վրա



T: Ներկայիս հայ հասարակությունում հակակոռուպցիոն դիրքորոշման վրա ունեցած ազդեցությամբ կարգավիճակի հետ ասոցացված հասարակական գործոններն առավել ազդեցիկ են, քան սեռի հետ ասոցացված գործոնների ազդեցությունը:

Ծնողների կրթական մակարդակը

Ուսանողների ծնողների կրթամակարդակների բաշխումը տրված է Աղյուսակ 8-ում:

Տվյալներից երևում է, որ ուսանող զավակներ ունեցող կեսից ավելի ընտանիքներում հոր և մոր կրթամակարդակները համընկնում են, ընդ որում, նրանք ունեն բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն:

Աղյուսակ 9. Ուսանողների ծնողների կրթամակարդակը:

Հոր կրթությունը	*Մոր կրթությունը*				
	1	2	3	4	Ընդ
1. Գիտական կոչումով	1.6%	4.7%	0.6%	0.6%	**7.5%**
2. Բարձրագ., թերի բարձրագ.	1.8%	**54.6%**	**7.7%**	3.5%	**67.6%**
3. Միջնակարգ-մասնագիտական	0.0%	**6.1%**	**8.3%**	2.8%	**17.2%**
4. Միջնակարգ	0.0%	1.6%	2.6%	2.6%	**6.9%**
5. Թերի միջնակարգ, տարրական	*0.0%*	*0.2%*	*0.2%*	*0.4%*	***0.8%***
Ընդամենը	**3.5%**	**67.1%**	**19.5%**	**9.9%**	**100.0%**
«Մոր կրթությունը» սյունախմբի համարները համապատասխանում են «Հոր կրթությունը» սյան համապատասխան համարներով տարրերին:					

Բուհերի ուսանողները հիմնականում բարձրագույն և ավելի կրթությամբ ընտանիքների զավակներ են: Նրանց մոտավորապես 75%-ի ծնողներից մեկն ունի բարձրագույն կամ ավելի բարձր կրթություն: Հատկանշական է, որ շատ փոքր տոկոս են կազմում կրթական երկու մակարդակ (կիրառված սանդղակում) տարբերությամբ ամուսնական զույգերը: Մյուս կողմից՝ ամուսնական զույգերը, որոնցում ավելի բարձր է հոր կրթամակարդակը կազմում են համարյա 20%, իսկ մոր՝ ավելի բարձր կրթամակարդակով զույգերը՝ 13%: Այս տարբերությունը չի կարելի համարել շատ մեծ և, հետևաբար, կրթությունը որպես կարգավիճակը սահմանող տարր ավելի փոքր նշանակություն է ունեցել հայ հասարակության մեջ (քանի որ դիտում ենք 20-25 տարեկան անձանց ծնողների կրթական մակարդակը, որոնց ամուսնության ժամանակը եղել է նախկին հասարակարգը):

Ներկայումս կրթությունը վերագտնում է իր՝ կարգավիճակը սահմանող նշանակությունը, սակայն որպես ածանցյալ՝ անձի բարեկեցության և իշխանական կարգավիճակներից:

Գծագիր 12-ց երևում է, որ հոր՝ առավել բարձր կրթական մակարդակը նվազեցնում է ուսանողի անհանդուրժողականությունը կոռուպցիայի նկատմամբ: Մոր կրթական մակարդակի ազդեցությունը կոռուպցիայի նկատմամբ զավակի դիրքորոշման վրա ունի որոշակի յուրահատկություն, չնայած որպես ընդհանուր միտում, կրթական մակարդակի աճը բերում է զավակի կոռուպցիոն անհանդուրժողականության նվազման՝ ընդ որում, ավելի մեծ չափով, քան հոր կրթամակարդակի ազդեցությունը, սակայն միջնակարգ կրթությամբ մայրերի դեպքում զավակների կոռուպցիոն անհանդուրժողականությունը համարյա նույն մակարդակի վրա է, ինչ բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթությամբ մայրերի դեպքում:

Գծագիր 12. Հոր կրթամակարդակի ազդեցությունը զավակների կոռուպցիոն դիրքորոշումների վրա



Գծագիր 13. Մոր կրթամակարդակի ազդեցությունը զավակների կոռուպցիոն դիրքորոշումների վրա



T: Ծնողների կրթամակարդակի աճը ասոցացված է առավել բարձր կոռուպցիոն հանդուրժողականության հետ:

Այս փաստի նշանակալից հատվածը մեկնաբանվում է նրանով, որ կրթամակարդակը և կարգավիճակն իրար հետ դրական ասոցացված են, սակայն մոր կրթամակարդակի ազդեցության ոչ կանոնավոր բնույթը թույլ է տալիս ենթադրել, որ այդ ասոցիացիան գծային չէ, հավանաբար գոյություն ունեն կրթության և կարգավիճակի հետ ասոցացված այլ բնութագրեր, որոնք էականորեն վերափոխում են դրանց ազդեցությունները:

Սակայն ուսանողի կոռուպցիոն հանդուրժողականության վրա նրա ծնողների կարգավիճակի և կրթամակարդակի ազդեցության համընկնող ուղղությունները ցույց են տալիս, որ.

T: Հայ հասարակության մեջ կոռուպցիոն հանդուրժողականությունը կենտրոնանում է դրա վերնախավային շերտերում, կազմավորվող (արդեն բավականաչափ կազմավորված) դասերի միջև աճում է դասային հակադրությունը:

Հետևաբար.

C: Հայ հասարակության մեջ «եվրոպամետ» զարգացման պոտենցիալն առավել մեծ չափով կենտրոնացած է առավել ցածր դասերում, իսկ «ասիականությունը» կուտակվում է վերնախավային շերտերում:

Այս պնդումը ո՛չ պատահական է, ո՛չ էլ հատվածային: Համանման արդյունք է ստացվել նաև INDEM հիմնադրամում, որտեղ ընտրանքը ներկայացուցչական էր ՌԴ ամբողջ չափահաս բնակչության համար:

Բարեկեցության մակարդակը

Որպես ուսանողի բարեկեցության մակարդակը մոտարկող առավել պարզ գնահատական կիրառվել է «Հանգստացե՞լ եք արդյոք վերջին 5 տարիների ընթացքում արտասահմանում» հարցը:

Այն, իհարկե, չի կարելի համարել բարեկեցության որակյալ ինդիկատոր, քանի որ հնարավոր է թվարկել մի շարք հնարավորություններ, որոնց հետևանքով արտասահմանում կարող են հանգստացած լինել նաև ավելի ցածր բարեկեցությամբ ընտանիքների զավակները: Սակայն բարեկեցության մակարդակի ազդեցության վիճակագրորեն հավաստի գոյության փաստը հայտնաբերելու տեսակետից այն ունեցել է բավարար տարանջատող ուժ (Գծագիր 13):

Չի բացառվում, որ ավելի համապատասխան ինդիկատորի կիրառման դեպքում այդ կապը շատ ավելի ուժեղ կարող էր լինել:

Գծագիր 14. Բարեկեցության ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա

«Հանգստացե՞լ եք արդյոք արտասահմանում վերջին 5 տարիների ընթացքում»



T: Առավել բարեկեցիկ ընտանիքների զավակներն ավելի հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ:

Բարեկեցության փոփոխությունը

Բարեկեցության փոփոխությունը գնահատվել է ուղղակի հարցի միջոցով. «Ինչպե՞ս է փոփոխվել Ձեր ընտանիքի բարեկեցությունը վերջին 5 տարիների ընթացքում»: Արդյունքները տրված են

Գծագիր 15-ում: Գծագրի առավել ուշագրավ հետևությունն այն է, որ.
T: Ուսանողներ ունեցող ընտանիքների 60%-ի բարեկեցությունն աճել է, իսկ մոտ 30%-ինը՝ չի վատացել:

Հետազոտության տվյալները թույլ չեն տալիս բարեկեցության աճն ընդհանրացնել հասարակության նշանակալից հատվածների վրա, սակայն վեր հանված փաստը վկայում է, որ բարձրագույն կրթությունը՝ «վերելքի վրա» գտնվող ընտանիքների մենաշնորհն է:

Գծագիր 16-ում տրված է կոռուպցիոն հանդուրժողականության կախվածությունը բարեկեցության աճից: Ակնհայտ է, որ բարեկեցության հետ զուգընթաց աճում է նաև կոռուպցիոն հանդուրժողականությունը: Ընդ որում՝ ***շանսը***[45], որ կոռուպցիոն հանդուրժողականության աճի հետևան-

---

45 ***Շանսն*** իրենից ներկայացնում է A և ^A այլընտրանքային պատահարների տեղի ունենալու հավանականությունների (P_A և $P_{\wedge A}$ ընդ որում՝ $P_A+P_{\wedge A}=1$) հարաբերությունը ($P_A/P_{\wedge A}$):

քով կոռուպցիոն դիրքորոշումը կդառնա *նորմա* ավելի մեծ է, քան, որ այն կդառնա *գործիք*:

Գծագիր 15. Ուսանողների ընտանիքների բարեկեցության փոփոխությունը վերջին 5 տարիների ընթացքում



Գծագիր 16. Բարեկեցության աճի ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա



Այս փաստից բխում է տվյալ շերտում կոռուպցիոն դիրքորոշման փոփոխության միտումների վերաբերյալ կարևոր հետևություն:

H: Մնացած հավասար պայմաններում հայ հասարակության մեջ առկա հասարակական և տնտեսական գործոնների ազդեցության հետևանքով բարձրագույն կրթություն ունեցող հասարակական շերտում աճելու է կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Այս հետևությունը հիմնավորված է նույնիսկ առանց հաշվի առնելու հանրային կառավարման համակարգերում կոռուպցիոն հանդուրժողականության և հակվածության աճին նպաստող գործոնները:

Հաշվի առնելով, որ անհատի կարգավիճակը բարձրացնող բոլոր գործոնները՝ ծնողների կարգավիճակը, ծնողների կրթությունը, ընտանիքի բարեկեցկությունը, ընտանիքի բարեկեցության աճը հանգեցնում են կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողականության աճին, կարող ենք պնդել, որ.

T: Հայաստանում հասարակության առևտրայնացման հետևանքով, հասարակական պայմանները հասարակության անդամին իր կարգավիճակի բարձրացման համար պարտադրում են, որ նա առավել հանդուրժող լինի կոռուպցիայի նկատմամբ:

Հաշվի առնելով վերը նշված օրինաչափությունը.

T: Հայաստանում նվազած է հավանականությունը, որ հասարակության ընդհանուր բարեկեցության աճը ինքնաբերաբար կզուգորդվի կոռուպցիոն անհանդուրժողականության աճով:

T: Հասարակության մեջ կոռուպցիոն անհանդուրժողականությունն աճեցնելու համար անհրաժեշտ են վերնախավի (իշխանությունների) կամային գործողություններ, որոնք ուղղված պետք է լինեն հասարակության առևտրայնացումը կասեցնելուն և նվազեցնելուն: Դա համարժեք է բարձրագույն իշխանական մարմիններում նոր բարոյական արժեհամակարգի կայացմանը, որտեղ հանրային բարիքին ուղղված գործողությունները կլինեն պետության և ազգային վերնախավի վարքագծի գերակայությունները:

Մշակութային պարամետրեր

Բարեկեցության և կարգավիճակային բնութագրերի հետ ասոցացված են անհատի մշակութային և կենսաոճի բնութագրերը: Անցումային շրջանում, բարձր սոցիալական շարժունության պայմաններում, հին սոցիալական խմբերի խարխլման ու կերպարանափոխման և նորերի առաջացման հետ միաժամանակ, փոփոխվում են նաև մշակութային

կարծրատիպերը և դրանցով պայմանավորված սոցիալական վարքագծերը: Նախկին կարգավիճակային խմբերը մի կողմից կորցնում են իրենց նախկին մշակութային բնութագրերը, մյուս կողմից ձեռք են բերում նորերը:

Նորացվող հասարակությունների վրա ազդող ամենահզոր գործոններից է գլոբալ ինֆորմացիոն դաշտը, որի հոսքը դեպի նորացվող հասարակությունները անցնում է դրանց յուրատեսակ սոցիո-մշակութային «ոսպնյակների» միջով, բաղադրվում է իր ամբողջ սպեկտրով, այդ թվում նաև գավառականացվում՝ յուրաքանչյուր հասարակությանը ներհատուկ ձևերով և ողողում է այդ հասարակությունների բոլոր կառույցները, տարրերն ու փոխահարաբերությունները, և նույնիսկ «դատարկ խորշերը»:

Գլոբալ ինֆորմացիոն դաշտի աստիճանաբար հզորացող բաղադրիչը, որը սկսում է մրցակցել հեռուստատեսության հետ, իսկ որոշ նիշաներում արդեն վերջնականապես հաղթանակել է՝ Ինտերնետն է:

«Նախկին» վերնախավային մշակութային հոլովույթն առավել խորությամբ ներդրվում էր վերնախավային [մտավորական] շրջանակներում գեղարվեստական գրականության միջոցով[46]: Դա տեղի էր ունենում հիմնականում դպրոցական միջին և բարձր դասարաններում, ինչպես նաև ուսանողության ժամանակաշրջանում: Առավելապես դա վերաբերում է հումանիտար կրթությամբ երիտասարդներին[47]: Ակնհայտ է, որ ներկայումս գեղարվեստական գրականության ընթերցանությունը, որը նախկին՝ ոչ ինֆորմացիոն հասարակությունում, կարևոր գործոն էր մտավորական վերնախավի աշխարհայացքի կազմավորման հարցում, աստիճանաբար կորցնում է իր ազդեցության ոլորտներն ու ծավալները: Սակայն «հին» և «նոր» մշակութային հոլովույթները կրող և տարածող գործոնների փոխհարաբերությունն անհրաժեշտ է քանակապես և որակապես գնահատել:

Հետագա շարադրանքում դիտարկված են Ինտերնետի կիրառության, գեղարվեստական և մասնագիտական գրականության ընթերցանության, կենսաոճի և ենթամշակութային պատկանելությունը բնութա-

---

46 Ինչպես նաև դասական երաժշտության միջոցով, որը սակայն առանձին լուրջ և խորը քննարկման հարց է:

47 Հարկ է հիշեցնել, որ խորհրդային [դանդաղ] ժամանակշրջանում, երբ երիտասարդությունն ուներ ավելի քան բավարար ժամանակ զբաղվելու ինքնակրթությամբ, սեփական նախասիրությունների համապատասխան, հիմնարար և տեխնիկական ուղղվածության ուսանողները նույնպես ձեռք էին բերում լայն աշխարհայացք:

գրող երաժշտական նախասիրությունների ասոցիացիաները կոռուպցիոն դիրքորոշման հետ:

Ինտերնետ և ընթերցանություն

Հեռուսատեսության և Ինտերնետի միջոցով Հայաստանն ավելի ու ավելի է ընդգրկվում գլոբալ տեղեկատվական դաշտում:

Հեռուստատեսային տեղեկատվության ազդեցությունը, որպես կանոն, իրականացվում է ոչ լրիվ կենտրոնացած ուշադրության պայմաններում, ունի խիստ կախվածություն հեռուստահաղորդման ժամանակից, Հայաստանի հասարակության համար դրա մենյուն բավական սահմանափակ է և, բացի այդ, հեռուստատեսությունը հնարավորություն չի տալիս լիովին ազատ փնտրել և գտնել ցանկալի ինֆորմացիան:

Ի տարբերություն հեռուստատեսության, Ինտերնետում մարդն ունի ցանկացած ինֆորմացիայի փնտրման համարյա լիակատար ազատություն: Ինտերնետը տալիս է համարյա ցանկացած տիպի տեղեկություններ, Ինտերնետում տեղակայված ինֆորմացիան ունի բավական մեծ կայունություն և ***կրկնակի հասանելիություն***: Երբ ինֆորմացիոն հոսքերի հետ աշխատող անձը չունի բավարար ուժեղ և գիտակցված մոտիվացիա, նա հայտնվում է ինտերնետային հզոր ինֆորմացիոն հորձանքում, որը գործարկում է նրա ենթագիտակցական մոտիվները, այդ թվում նաև այնպիսիք, որոնք հասարակական հարաբերություններում ճնշված են անհատի սոցիո-մշակութային «ցենզորի» կողմից: Որպես կանոն, Ինտերնետում ճանապարհորդողը զերծ է նաև սոցիալական համատեքստի վերահսկողությունից: Այդ պատճառով Ինտերնետը դեռևս լիովին չկազմավորված մտավոր և հուզական հոգեբանական կառուցվածքով և չկայացած մշակութային հոլովույթով անձանց վրա ունենում է հզոր դաստիարակող ազդեցություն:

Ընդ որում, ***ինտերնետային դաստիարակը ապաանձնավորված է***:

Ինտերնետը, որպես «տոտալ» ինֆորմացիոն գործիք, համապարփակ սպեկտրով և ծավալով ընդարձակում է իր դիրքերը և համապարփակ ազդեցություն է գործում իր օգտագործողների վրա:

Հետազոտության ընթացքում, չանդրադառնալով Ինտերնետի ազդեցության բովանդակային վերլուծությանը, վեր է հանված նրա ազդեցության ասոցիացիան կոռուպցիոն դիրքորոշման հետ:

Գծագիր 15-ում տրված է ուսանողների՝ Ինտերնետից օգտվելու, իսկ Գծագիր 16-ում՝ գեղարվեստական և մասնագիտական գրականության ընթերցանության հաճախականությունները:

Գծագիր 17. Ինտերնետից օգտվելու հաճախականությունը



Գծագիր 18. Մասնագիտական և գեղարվեստական գրականության ընթերցանության հաճախականությունը



Չնայած Ինտերնետի կիրառման և ընթերցանության հաճախականությունների չափման սանդղակները ճշգրիտ կերպով չեն համադրվում, այնուամենայնիվ, տվյալների համեմատությունից ակնհայտ է, որ եթե Ինտերնետի գործածման ինտենսիվությունը կիրառենք, որպես դրա մշակութային ազդեցությունը մոտարկող փոփոխական, ապա

Հայաստանի ուսանողության շրջանակներում այն արդեն ակնհայտորեն գերազանցում է գեղարվեստական գրականության ազդեցությանը: Եթե շաբաթվա ընթացքում Ինտերնետից օգտվում է ուսանողության 40%-ից ոչ պակաս հատվածը, իսկ Ինտերնետ-սրճարան է հաճախում ուսանողների 53.2%-ը (Տե՛ս **Աղյուսակ 12. Ուսանողության ազատ ժամանցի վայրերը**, էջ՝ 88) ապա շաբաթվա ընթացքում գեղարվեստական գրականություն է ընթերցում նրանց միայն 27%-ը: Ընդ որում, Ինտերնետի ազդեցությունը շատ հզոր է «ֆոնային» ռեժիմում:

Հարկ է նշել, որ Ինտերնետի օգտագործման տեսակետից ուսանողությունն արդեն այնպիսի խումբ է, որն ակնհայտորեն գտնվում է այլ մշակութային համատեքստում, համեմատած հասարակության այլ խմբերի հետ[48]: Հետևաբար.

T: Ինտերնետն արդեն իրենից ներկայացնում է Հայաստանի ապագա վերնախավի և հասարակության մնացած հատվածների մեծ մասի միջև մշակութային նշանակալից դիստանցիա առաջացնող գործոն:

Գծագիր 19-ում տրված են Ինտերնետից օգտվելու նպատակները:

Գծագիր 19. Ինտերնետից օգտվելու նպատակները



48 2004 թ. մայիսին Երևանում Կովկասյան հետազոտական ռեսուրս կենտրոնի «Տվյալների հավաքագրման նախաձեռնության» տվյալներով Երևանում Ինտերնետը որպես քաղաքական տեղեկությունների աղբյուր օգտագործում է Երևանի բնակչության մոտ 4.1%-ը:

Գծագրի կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ «Հետաքրքրությունների բավարարում» նպատակը՝ որպես երկրորդ (ֆոնային նպատակ) նշանակալից գերազանցում է ոչ միայն բոլոր երկրորդ, այլև բոլոր առաջին նպատակներին:

Ինտերնետից օգտվելու առաջին և երկրորդ նպատակների համադրումը ցույց է տվել, որ Ինտերնետից օգտվելու նպատակների տեսակետից ուսանողներին կարելի է ստորաբաժանել 4 խմբի:

Առաջինը խումբ. այս խմբում Ինտերնետը հիմնականում օգտագործում են «Ժամանցի» համար:

Երկրորդ խումբ. Ինտերնետը կիրառվում է որպես «Մասնագիտական կատարելագործման միջոց»:

Այս երկու խմբերի համար Ինտերնետի օգտագործման ֆոնային նպատակն է՝ հետաքրքրությունների բավարարումը:

Երրորդ և չորրորդ խմբերն առաջացել են Ինտերնետը հիմնականում որպես հաղորդակցության միջոց օգտագործող ուսանողներից, որոնց մի մասի համար դրա ֆոնային նպատակն է՝ ծանոթությունների հաստատումը, իսկ մյուս մասի համար՝ Հետաքրքրությունների բավարարումը:

Աղյուսակ 10. Ինտերնետից օգտվելու նպատակները

Առաջին նպատակ	*Երկրորդ նպատակ*						
	Ժամանց	*Հաղորդ.*	*Մասնագ.*	*Ծանոթ.*	*Աշխատ.*	*Հետաքր.*	*Ընդ.*
Ժամանց		5.1%	3.2%	2.5%	.3%	***13.3%***	**24.4%**
Հաղորդ.	1.9%		**15.8%**	1.6%	3.5%	***16.1%***	**38.9%**
Մասնագ.	.6%	2.2%		1.3%	1.3%	***18.4%***	**23.7%**
Ծանոթ.					.6%	3.2%	**3.8%**
Աշխատ.			.6%			.9%	**1.6%**
Հետաքր.	2.2%	1.3%	3.8%	.3%			**7.6%**
Ընդ.	**4.7%**	**8.5%**	**23.4%**	**5.7%**	**5.7%**	**51.9%**	**100%**

Այժմ դիտենք Ինտերնետի և գրականության ընթերցանության ազդեցությունները կոռուպցիոն դիրքորոշումների վրա (Գծագիր 19):

Գծագիր 20. Ինտերնետից օգտվելու հաճախականության ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա



Գծագիր 21-ից բխում է, որ Ինտերնետից օգտվելու ինտենսիվության աճը զուգորդված է կոռուպցիոն հանդուրժողականության աճով: Կարևոր է նշել, որ այդ աճը դիտվում է դիտարկված նպատակներից ցանկացածը հետապնդողների համար. և՛ «զվարճասերների», և՛ Ինտերնետը որպես «Մասնագիտական կատարելագործման գործիք» օգտագործողների համար:

Այդ էֆեկտը բացատրող հիպոթեզ կարող է հանդիսանալ Ինտերնետն ինտենսիվ օգտագործողների մոտ անդեմ, սոցիալական վերահսկումից ազատ վարքագծի արմատավորումը, որը նրանց առավել հանդուրժողական է դարձնում շեղվող վարքագծերի նկատմամբ, քանի որ նրանք այդպիսի վարքագիծ ցուցադրում են Ինտերնետում: Նրանց համար խստորեն դատապարտել կոռուպցիան, անուղղակիորեն, նշանակում է խիստ դատել հենց իրենց: Դա հատկապես կարող է վերաբերել «Հետաքրքրությունների բավարարում», «Ժամանց» և «Ծանոթությունների հաստատում» նպատակները հետապնդող անձանց: «Հետաքրքրությունների բավարարումով» Ինտերնետում զբաղվում են այն օգտագործող ուսանողների 59.5%, «Ժամանցով» և/կամ «Ծանոթությունների հաստատմամբ՝ 38.6%-ը, իսկ նշված երեք նպատակներից որևէ մեկով՝ 98.1%, հետևաբար համարյա բոլոր Ինտերնետ օգտագործող ուսանողները մեծ կամ փոքր պարբերությամբ իրենց դուրս են բերում սոցիալական վերահսկողության համա-

տեքստերից և դրանով իսկ բարձրացնում իրենց ընդհանուր «հանդուրժողականությունը[49]»:

Հակառակ դրան, Գծագիր 20-ը, որում տրված է կոռուպցիոն հանդուրժողականության կապը գեղարվեստական և մասնագիտական գրականության ընթերցման ինտենսիվության հետ, ցույց է տալիս, որ և՛ մեկի, և՛ մյուսի աճը բերում է կոռուպցիոն անհանդուրժողականության աճին[50]:

Գծագիր 22. Գրականության օգտագործման ինտենսիվության ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա



Այսպիսով, ակնհայտ է ***դասական*** և ***ժամանակակից*** մշակույթները կրող և դաստիարակող գործիքների հակադիր ազդեցությունը ուսանող երիտասարդության վրա:

T: Երևանի ուսանողության մոտ Ինտերնետն առաջացնում է բարքերի անկման, իսկ ընթերցանությունը՝ [դասական] բարոյական նորմերի վերարտադրության միտում:

---

[49] Սույն հետազոտության մեջ հանդուրժողականության այլ տեսանկյուններ չեն դիտարկված: Հնարավոր է, որ Ինտերնետն, իրոք, բարձրացնում է հանդուրժողականության այնպիսի տեսանկյուններ, որոնք ունեն դրական սոցիալական ուղղվածություն: Սակայն ինտերնետի շնորհած ***կոռուպցիոն հանդուրժողականությունը*** ակնհայտորեն հակասոցիալական է:

[50] Սա այն դեպքերից է, երբ գործոնն ***ուղղակի ազդեցություն*** ունի կոռուպցիոն դիրքորոշման վրա:

Սա հիմնավորում է նաև մեկ այլ հանրահայտ դրույթ, որ միևնույն նորարարական գործիքը տարբեր մշակութային հոլովույթներ ունեցող հասարակություններում կարող է ունենալ տարբեր (նույնիսկ հակադիր) սոցիալ-մշակութային ազդեցություններ: Այն, ինչ բարերար է մեկի համար, կարող է կործանարար լինել մյուսի համար:

T: Ներկայիս Հայաստանի հասարակությունն այնպիսին է, որի համար Ինտերնետը մշակութային մարտահրավեր է և, որը չունի Ինտերնետն օգտագործելու մշակույթ:

Մյուս կողմից՝ Ինտերնետը ժամանակակից գլոբալ գերիզոր սոցիալական փաստ է: Դրանից հնարավոր չէ ոչ թաքնվել, ոչ խուսափել, ոչ էլ մարտնչել: Հնարավոր է միայն մշակել ռազմավարություններ՝ այն սեփական նպատակներին ծառայեցնելու համար:

Ակնհայտ է, որ

T: Ժամանակը անվերապահորեն պահանջում է ինֆորմացիոն անվտանգության ազգային ծրագրի մշակումը[51] և դրա կիրառությունը:

T: Դասական դաստիարակության բաղադրիչների ներդրում կրթական ողջ համակարգում:

T: Ինֆորմացիոն հասարակության գործիքներից ու հնարավորություններից օգտվելու համար պետք է այնտեղ մտնել համաշխարհային և ազգային դասական մշակույթի հիմքի վրա:

Կենսաոճը

Կենսաոճը բնութագրող պարամետրերի շարքում հետազոտությունում կիրառվել են ուսանողներին և/կամ նրանց ընտանիքներին պատկանող այն իրերը, որոնք բնութագրում (մոտարկում) են տվյալ անձի կամ ընտանիքի կենսաոճը:

Այդ բնութագրերը դիտարկվում են կենսաոճի այլ բնութագրերի հետ, քանի որ երիտասարդության (կամ նրա զգալի հատվածի) համար կենցաղային գործածության իրերը ոչ միայն (և ոչ այնքան) բարեկեցության, այլև վարկի, հեղինակության և, դրա հետևանքով, նաև կենսաոճի հետ կապված բնութագրեր են:

---

51 Армянский интернет, Анив, #1, 2005.

Գ. Հարությունյան, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003:

Աղյուսակ 11. Ուսանողության կենցաղային կիրառության իրերը

Իր	*1*	*2*	*3*	*4*	*Ընդ.*	*5*
Բջջային հեռախոս	64.0%	40.8%	46.3%	34.6%	**50.9%**	29.4%
Երաժշտական կենտրոն	77.5%	57.1%	70.7%	55.8%	**66.3%**	21.8%
Մագնիտոֆոն	74.7%	82.5%	75.6%	73.1%	**77.8%**	1.6%
Տեսամագնիտոֆոն	82.6%	72.2%	80.5%	59.6%	**75.0%**	23.0%
Թվային լուսանկարչ. ապարատ	41.6%	29.4%	29.3%	19.2%	**33.7%**	22.3%
Տեսախցիկ	41.6%	23.8%	28.0%	19.2%	**30.8%**	22.3%
Ավտոմեքենա	32.2%	20.6%	22.0%	9.6%	**23.6%**	22.6%

1 - Գործարարներ, Բիզնեսի կառավարիչ, Պետական պաշտոնյա հայրերի զավակներ
2 – Մասնագետ հայրերի զավակներ
3 – Փոքր բիզնեսով զբաղվող հայրերի զավակներ
4 - Բանվոր, գործազուրկ կամ թոշակառու հայրերի զավակներ
5 – 1 և 4 խմբերի միջև տվյալների տարբերությունները:

Ռեգրեսիոն մոդելների կիրառությամբ դիտարկված իրերի առկայության կամ բացակայության ազդեցությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բարեկեցության և հեղինակության վերլուծության տեսակետից առավել բնութագրական է տեսախցիկի և ավտոմեքենայի առկայությունը: Ընդ որում, ավտոմեքենայի առկայության դեպքում, դիրքորոշումների բաղադրման տեսակետից ուժեղ ազդեցություն ունի մեքենայի արտադրության երկիրը՝ արդյոք այն արտադրված է «խորհրդայի՞ն տարածքում», թե՞ «արտասահմանում»:

Գծագիր 21-ից հետևում է, որ.

T: Վարկի հետ շաղկապված (պրեստիժային) բարեկեցության հետ աճում է նաև կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Ընդ որում, պարզվել է, որ առավել բարեկեցիկ ընտանիքների երեխաների պատկերացումներում կոռուպցիան առավելապես նպատակներին հասնելու գործիք է:

Գծագիր 23. Կոռուպցիոն դիրքորոշման ասոցիացիան ավտոմեքենայի տիպի հետ



Հետազոտության ընթացքում կիրառված կենսաոճի մյուս բաղադրիչն էր ուսանողների ազատ ժամանցի վայրերը և այդ վայրերը հաճախելու ինտենսիվությունը (Աղյուսակ 11):

Աղյուսակ 12. Ուսանողության ազատ ժամանցի վայրերը

	Համարյա թե ամեն օր	*Շաբաթը 1-3 անգամ*	*Ամսական 2-3 անգամ*	*Ամսական 1 անգամ*	*Չեմ հաճախում*	*Միջին ամսական*
Սրճարան, բար	9.8%	31.5%	27.5%	17.6%	13.6%	**7.0**
Ինտերնետ սրճարան	5.2%	14.9%	18.5%	14.5%	46.8%	**3.7**
Կինո	2.8%	8.5%	33.2%	40.1%	15.4%	**2.9**
Թատրոն, համերգ	1.6%	3.8%	27.4%	48.3%	18.9%	**2.0**
Յուցահանդես	1.6%	3.4%	15.6%	45.4%	33.9%	**1.7**
Ռեստորան	1.4%	4.4%	13.1%	39.9%	41.1%	**1.6**
Դիսկոտեկ	1.0%	1.6%	7.8%	16.3%	73.2%	**0.8**
Խաղատուն	1.8%	0.8%	3.1%	2.2%	92.0%	**0.7**
Գիշերային ակումբ, 23^{00}-ից հետո	0.6%	1.6%	5.6%	11.5%	80.6%	**0.6**
Ջազ ակումբ	0.8%	1.0%	1.4%	6.5%	90.3%	**0.4**

Ուսանողների կենսաոճը պայմանավորող գործոնները

Ընդհանրացված պատկերացում կազմելու համար ուսանողների կենսաոճային կողմնորոշումները պայմանավորող հասարակական գործոնների վերաբերյալ[52] և ուսանողների կենսաոճային ընդհանրացված տիպաբանությունը կառուցելու համար, կիրառվել է գործոնային վերլուծության մեթոդը: Օգտագործվել են Աղյուսակ 11-ի տվյալները (10 պարամետր), ինչպես նաև Ինտերնետի կիրառության և գրականության ընթերցանության պարամետրերը (3 պարամետր):

Մի շարք գործոնային մոդելներից ընտրվել է ստորև ներկայացված քառագործոն մոդելը:

Գործոն 1. «***Ոսկե երիտասարդության ժամանցի***» գործոն: Բնութագրում է ուսնողների այն սոցիո-մշակութային տիպը, որի ներկայացուցիչն ավելի հաճախ է այցելում կազինո, դիսկոտեկ, ջազ-ակումբ և գիշերային ակումբ:

Գործոն 2. Եվրոպական վերնախավային ժամանցի գործոն: Բնութագրում է ուսանողների այն սոցիո-մշակութային տիպը, որի ներկայացուցիչն ավելի հաճախ է այցելում կինոթատրոն, ռեստորան, սրճարան, բար, համերգ և թատրոն:

Գործոն 3. Դասական մտավորականության ժամանցի գործոն: Բնութագրում է ուսանողների այն սոցիո-մշակությաին տիպը, որն ավելի հաճախ է օգտվում գեղարվեստական և մասնագիտական գրականությունից, որի հետ մեկտեղ՝ ավելի հաճախ է այցելում ցուցահանդես, թանգարան, համերգ և թատրոն:

Գործոն 4. Ինֆորմացիոն ժամանցի գործոն: Բնութագրվում է սոցիո-մշակութային տիպը, որի ներկայացուցիչն ավելի ինտենսիվ է օգտվում Ինտերնետից և ավելի հաճախ է այցելում Ինտերնետ-սրճարան:

Գլխավոր կոմպոնենտների մեթոդով վեր են հանվել օրթոգոնալ գործոններ, կիրառվել է վարիմաքս պտույտի մեթոդը: Գործոնները բացատրում են փոփոխականների դիսպերսիայի 61%-ը: Գործոնային վերլուծության կառուցվածքային մատրիցան տրված է Աղյուսակ 13-ում:

Յուրաքանչյուր գործոնի «մաքուր» ազդեցության հետևանքով (երբ ուսանողի վրա չեն ազդում այլ գործոններ)

---

[52] Բնականաբար, այն ինֆորմացիայի շրջանակներում, որը պարունակվում է հետազոտության գործիքում՝ հարցաթերթում:

կազմավորվում են տվյալ գործոնին համապատասխանող ուսանողների ***իդեալական տիպերը***:

Սակայն միևնույն ուսանողը, որպես կանոն, բեռնված է լինում բոլոր մնացած գործոններով, ինչպես նաև ***բազմաթիվ այլ*** գործոններով, որոնք հաշվառված չեն տվյալ մոդելի կառուցման համար կիրառված պարամետրերում:

Աղյուսակ 13. Ուսանողության իդեալական տիպերի գործոնային մատրիցան

Պարամետր	*Գ 1*	*Գ2*	*Գ3*	*Գ4*
Կազինո	**0.780**	0.029	0.056	-0.121
Դիսկոտեկ	**0.714**	0.190	-0.081	0.256
Ջազ-ակումբ	**0.702**	0.072	0.190	0.057
Գիշեր. ակումբ, 23^{00}-ից հետո	**0.611**	0.189	-0.282	0.251
Ցուցահանդես, թանգարան	0.285	0.121	**0.678**	-0.089
Ռեստորան	0.219	**0.697**	-0.074	0.165
Համերգ, թատրոն	0.142	**0.518**	**0.520**	-0.135
Ինտերնետի կիրառում	0.128	0.261	0.069	**0.777**
Ինտերնետ կաֆե	0.107	0.119	0.086	**0.828**
Կինո	0.098	**0.724**	0.173	0.071
Սրճարան, բար	0.010	**0.715**	-0.188	0.235
Մասնագիտական գրականություն	-0.086	-0.131	**0.604**	**0.354**
Գեղարվեստական գրականություն	-0.153	-0.055	**0.669**	0.091

Ընդհանրացված գործոնները, որոնցում խտացված են 13 պարամետրերի ազդեցությունները, այդ պարամետրերի համատեքստում հավաք կերպով ներկայացնում են Երևանի սոցիո-մշակութային դաշտում առկա և ուսանողների կենսառճի ձևավորման վրա ազդող հասարակական «ուժերի» որոշակի տեսանկյունները, որոնց ազդեցության տակ ձևավորվում են ուսանողության սոցիո-մշակութային հոլովույթները: Օգտագործված պարամետրերի համեմատ դուրս բերված գործոնների փոքր քանակը թույլ է տալիս ավելի հավաք, սակայն ընդգրկուն կատեգորիաներով նկարագրել Հայաստանի ուսանող երիտասարդության շրջանակներում առկա սոցիալական դինամիկան:

Ուսումնասիրվել են վեր հանված 4 գործոնների ազդեցությունները կոռուպցիոն դիրքորոշումների վրա:

Այդ նպատակի համար կիրառվել է երկնշանակ լոգիստիկ ռեգրեսիան (Binominal Logistic Regression): Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 13-ում: Կիրառված ընտրանքի սահմաններում պարզվել է, որ կոռուպցիոն հանդուրժողականության վրա վիճակագրականորեն նշանակալից ազդեցություն ունեն ***Ոսկե երիտասարդություն*** և ***Դասական մտավորական*** գործոնները: Առաջինի աճը մեծացնում է ուսանողության մեջ կոռուպցիոն հանդուրժողականության հավանականությունը, իսկ երկրորդի աճը՝ այն նվազեցնում է: Արդյունքները սպասելի էին, սակայն ոչ ակնհայտ: Վիճակագրական հավաստիության շեմին են գտնվում ***եվրոպական վերնախավային ոճի*** և ***ինֆորմացիոն*** գործոնների ազդեցությունները: Մենք հակված ենք այն դիրքորոշմանը, որ դրանց վիճակագրական հավաստիության հարցը ըստ էության հանգում է ընտրանքի ծավալի խնդրին՝ ավելի մեծ ընտրանքի դեպքում դրանք նույնպես կունենային վիճակագրական բավարար հավաստիություն, հատկապես, որ այդ գործոնների ***առաջատար պարամետրերը*** վիճակագրորեն հավաստի կերպով ազդում են կոռուպցիոն հանդուրժողականության վրա՝ ***համապատասխան գործոնի ազդեցության ուղղությամբ:***

Աղյուսակ 14. Ուսանողների իդեալական տիպերը և կոռուպցիոն դիրքորոշումը

Գործոն	B	Sig.	Exp(B)
Ոսկե երիտասարդություն	-.279	0.008	.757
Եվրոպական վերնախավային	-.165	0.089	.848
Դասական մտավորական	.429	0.000	1.535
Ինֆորմացիոն	-.164	0.092	.848

T: Երևանի ուսանողության վրա ազդող վեր հանված չորս կենտրոնային գործոններից միայն դասական մտավորականության գործոնն է նվազեցնում ուսանողների կոռուպցիոն հանդուրժողականությունը: Մնացած գործոնների ազդեցության տակ այն աճում է:

Երբ ուսանողի մոտ բեռնվածությունը ***Ոսկե երիտասարդություն*** գործոնով աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ այդ ուսանողը կլինի անհանդուրժողական կոռուպցիայի նկատմամբ, նվազում է 24.3%-ով[53]:

[53] Տվյալ դեպքում ***շանսն*** իրենից ներկայացնում է A պատահարի (ուսանողը կոռուպցիան համարում է ***Այլասերում***) և ^A այլընտրանքային

Երբ ուսանողի մոտ բեռնվածությունը ***Եվրոպական վերնախավային*** գործոնով աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ այդ ուսանողը կլինի անհանդուրժողական կոռուպցիայի նկատմամբ, նվազում է 15.2%-ով[54]:

Երբ ուսանողի մոտ բեռնվածությունը ***Դասական մտավորական*** գործոնով աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ այդ ուսանողը կլինի անհանդուրժողական կոռուպցիայի նկատմամբ, աճում է 53.5%-ով:

Երբ ուսանողի մոտ բեռնվածությունը ***Ինֆորմացիոն*** գործոնով աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ այդ ուսանողը կլինի անհանդուրժողական կոռուպցիայի նկատմամբ, նվազում է 15.2%-ով:

Այսպիսով.

T: Հասարակարգային փոփոխության (առևտրայնացումը) և գլոբալ ինֆորմացիոն ազդեցության (Ինտերնետ) հետևանքով Հայաստանում առաջացած ուսանողական կենսառճային գործոնները նպաստում են կոռուպցիոն հանդուրժողականության աճին:

T: Ինտերնետը Հայաստանում արդեն վերածվել է ուսանողությունը տարբեր սոցիո-մշակութային տիպերի տարանջատող գործոնի:

T: Դասական մտավորական դաստիարակող գործոնները բարձրացնում են ուսանողության կոռուպցիոն անհանդուրժողականությունը:

Ուսանողների կենսառճային շերտերը

Վեր հանված 4 գործոնների կիրառությամբ իրականացվել է ուսանող երիտասարդության ստորաբաժանում տիպերի (կլաստերների): Առանձնացվել են 6 կլաստերներ, որոնց գործոնային կառուցվածքները տրված ենԳ-ծագիր 24-ում: Եթե վեր հանված 4 գործոնները սահմանում էին ուսանողության իդեալական տիպերը, ապա կլաստերները, որոնցում միաժամանակ արտահայտվել են բոլոր 4 գործոնները, սահմանում են ուսանողության իրական շերտերը և դրանց ծավալները:

պատահարի (ուսանողը կոռուպցիան համարում է ***Նորմա*** կամ ***Գործիք***) տեղի ունենալու հավանականությունների հարաբերությունը ($P_A/P_{\wedge A}$): Այդ հարաբերությունը նվազում է 24.3%-ով:

[54] Այսպիսով, ***Եվրոպական վերնախավային*** գործոնի անվանումը ստանում է փոքր ինչ հեգնական երանգ, քանի որ եթե իր արտահայտման արտաքին ձևով այն նման է եվրոպականին, ապա դրա ներքին բնույթն արդեն եվրոպական չէ:

Գծագիր 24. Ուսանող երիտասարդության կլաստերների նկարագիրն ըստ հանված գործոնների



Իրականացվել է երկաստիճան կլաստերային վերլուծություն: Յուրաքանչյուր կլաստերում կենսառճային գործոնների ազդեցության չափը որոշվում է 0-ից դրանց արժեքների հեռավորությամբ: Ինչքան գործոնի արժեքը տվյալ կլաստերում ավելի հեռու է հորիզոնական առանցքի 0-ից, այնքան ավելի բնութագրական է այդ գործոնը տվյալ կլաստերի (կլաստերում ընդգրկված ուսանողների) նկարագրի մեկնաբանության համար :

Կլաստեր 1. Ոսկե երիտասարդություն

Այս շերտը ներկայացնում է Ոսկե երիտասարդություն գործոնի շատ բարձր արժեքներով բեռնված ուսանողներին, որոնք ազատ ժամանակն անց են կացնում թանկարժեք զվարճավայրերում՝ կազինո, գիշերային ակումբ, ջազ-ակումբ: Մնացած գործոնների տեսակետից նրանք էականորեն չեն տարբերվում «միջին ուսանողից» (ընտրանքային միջինից):

Կալստեր 2. Դասական մտավորականություն

Այս ուսանողական շերտն ունի դասական մտավորական գործոնի ամենաբարձր արժեքը՝ միջինից ավելի շատ են օգտվում գեղարվեստական և մասնագիտական գրականությունից և հաճախում

համերգ, թատրոն, թանգարան, ցուցահանդես, իսկ մնացած գործոն-ներով բեռնվածությունը միջինից ցածր է՝ նրանք ավելի քիչ են հաճախում համարյա բոլոր զվարճավայրերը:

Կլաստեր 3. Եվրոպական վերնախավային ոճի ուսանողություն.

Այս շերտի հիմնական բնութագիրը եվրոպական վերնախավային ժամանցի գործոնով բարձր բեռնվածությունն է: Նրանք ավելի հաճախ են այցելում ռեստորան, սրճարան, բար և կինո: Այս ուսանողների մոտ առկա է նաև դասական մտավորականի գործոնի ազդեցությունը՝ նրանք միջինից ավելի շատ են կարդում մասնագիտական և գեղար-վեստական գրականություն, սակայն «դասականությունը» նրանց համար ***երկրորդական*** գործոն է և իր նշանակությամբ զիջում է դասական մտավորականության խմբում ընդգրկված ուսանողներին: Կարևոր է նաև, որ այս խմբում միջինից ցածր է «ոսկե երիտա-սարդության» ժամանցային ոճի առկայությունը:

Կլաստեր 4. «Կիբեռ»-ուսանողություն

Այս ուսանողների մոտ ամենահատկանշական բնութագիրն է ինֆոր-մացիոն գործոնով շատ բարձր բեռնվածությունը՝ նրանք շատ հաճախ են օգտվում Ինտերնետից և շատ հաճախ են այցելում Ինտերնետ-սրճարաններ: Այս ուսանողներին բնութագրում է նաև եվրոպական վերնախավային ժամանցի գործոնի ցածր արժեքները:

Կլաստեր 5. Քաղքենացված ուսանողություն

Սա այն ուսանողական շերտն է, որն ամենից քիչն է զբաղվում մասնա-գիտական և գեղարվեստական ընթերցանությամբ, շատ քիչ է հաճա-խում համերգ, թատրոն, ցուցահանդես, թանգարան, սակայն միջինից ավելի շատ է հաճախում ռեստորան, բար և սրճարան: Ընդ որում, սրանց համար ավելի բնութագրական է «դասականության դեֆիցիտը», քան «եվրոպականության պրոֆիցիտը»:

Կլաստեր 6. Մարգինալներ

Այս ուսանողների մոտ միջինից ցածր արժեքներ ունեն բոլոր վեր հանված գործոնները: Հավանաբար, սրանք առավել ցածր բարեկե-ցությամբ և գյուղական և փոքր քաղաքներում ծնված ուսանողներն են:

Հարկ է նշել, որ ի տարբերություն մնացած գործոնների, «Ոսկե երի-տասարդության» գործոնը համարյա ամբողջությամբ վերաբերում է իրենով պայմանավորված «Ոսկե երիտասարդության» շերտին: Մնա-ցած շերտերում այդ գործոնի միջին արժեքը աննշան փոքր է (տե՛ս **Աղյուսակ** 12):

Գծագիր 23-ում տրված է վեր հանված ուսանողական շերտերի ծավալները:

Գծագիր 25. Ուսանող երիտասարդության կլաստերների համեմատական ծավալները



Աղյուսակ 15-ում տրված է դիտարկված բուհական մասնագիտությունների խմբում յուրաքանչյուր կլաստերի ծավալը, որտեղ ընդգծված է յուրաքանչյուր մասնագիտական խմբում գերակշռող ուսանողական տիպը:

Աղյուսակ 15. Կենսաոճային կլաստերների ծավալները մասնագիտական խմբերում

Մասնագիտություն	Կլ. 1	Կլ. 2	Կլ. 3	Կլ. 4	Կլ. 5	Կլ. 6	Ընդ.
Տնտեսագետ	3.7%	13.8%	**27.5%**	21.1%	**24.8%**	9.2%	100.0%
Իրավաբան	6.3%	**28.8%**	18.0%	16.2%	15.3%	15.3%	100.0%
Հումանիտար	7.4%	**35.1%**	23.0%	16.9%	8.1%	9.5%	100.0%
Տեխնիկական	7.4%	16.8%	**24.2%**	**27.4%**	17.9%	6.3%	100.0%

***Կլաստեր 1**. Ոսկե երիտասարդություն:*

***Կլաստեր 2.** Դասական մտավորականության խումբ:*

***Կլաստեր 3.** Եվրոպական վերնախավային ոճի ուսանողական խումբ.*

***Կլաստեր 4.** «Կիբեռ»-ուսանողություն*

***Կլաստեր 5**. Քաղքենացված ուսանողության խումբ;*

***Կլաստեր 6.** Մարգինալներ*

Ուսանողական շերտերի բաշխումն ըստ մասնագիտական պատկանելության տվել է «բնականին մոտ» արդյունքներ:

Հետաքրքրական, անսպասելի [և հուսադրող] արդյունք է այն, որ իրավաբանական մասնագիտություններում ամենամեծ ենթախումբը ***դասական մտավորականությունն է:***

Մյուս կողմից, հատկանշական է նաև ***Եվրոպական վերնախավային*** և ***Քաղքենացված ուսանողության*** կոնցենտրացիան տնտեսագիտական մասնագիտություններում:

Գծագիր 26-ում տրված են ուսանողության կենսաոճային իրական խմբերի կոռուպցիոն անհանդուրժողականության միջին արժեքները:

Գծագիր 26. Ուսանողության կենսաոճային խմբերի կոռուպցիոն հանդուրժողականությունը



Գծագիր ***Ոսկե երիտասարդությունը և Քաղքենացված խմբերը:***

Մարգինալների կոռուպցիոն անհանդուրժողականությունը սոցիալական անկայունության պոտենցիալ է[55]: Իսկ ***Դասական մտավորակա-***

[55] Ինչպես կներկայացվի հաջորդիվ՝ ***«մարգինալներ»*** են առանձնանում նաև ուսանողության աշխարհայացքային պատկերացումների հիման վրա

նության կոռուպցիոն անհանդուրժողականությունը, պետք է ենթադրել, արդեն բարոյական արժեքների վրա հիմնված դիրքորոշում է:

Հարկ է նշել, որ.

T: Ստացված իրական խմբերում կոռուպցիոն անհանդուրժողականությունը շատ ավելի լավ է զատված, քան դրանք կազմող առանձին պարամետրերի կամ գործոնների կիրառման դեպքում, ինչը հիմնավորում է, որ ուսանողության կենսառճի հիման վրա կառուցված տիպաբանությունը լավ է մոտարկում իրական պատկերը:

Այստեղ հարկ է որոշակի հավելյալ մեկնաբանություն տալ Աղյուսակ 13-ում տրված ռեգրեսիոն մոդելի և գործոնային տարածության մեջ ստացված իրական կենսառճային խմբերի առնչությունների վերաբերյալ:

Ակնհայտ է, որ Դասական մտավորականության գործոնը հզոր ազդեցություն է թողնում կոռուպցիոն հանդուրժողականության վրա, ինչը երևում է ռեգրեսիոն մոդելից, որտեղ այդ գործոնի գործակիցը բացարձակ արժեքով ամենամեծն է: Մյուս կողմից՝ Մարգինալների կլաստերում ուսանողները այդ գործոնով համարյա բեռնվածություն չունեն և, առաջին հայացքից կարող էր տարօրինակ թվալ, որ այդ իրական շերտում կոռուպցիոն անհանդուրժողականությունն ամենաբարձրն է: Սակայն այդ թվացյալ հակասությունը բացատրվում է նրանով, որ Մարգինալների խմբում ***միաժամանակ ցածր (բացասական) արժեքներ ունեն այն բոլոր 3 գործոնները, որոնք նվազեցնում են կոռուպցիոն անհանդուրժողականությունը*** (Ոսկե երիտասարդության, եվրոպական վերնախավային և ինֆորմացիոն) և դրանց գումարային ***նվազեցնող ազդեցությունն*** այդ խումբը «վերածել» է ամենաանհանդուրժող կոռուպցիայի նկատմամբ:

Սակայն, բոլոր դեպքերում, առավել կարևորն այն է, որ Մարգինալների խմբի այդ բնութագիրն ունի շատ պարզ բովանդակային մեկնաբանություն:

Ենթամշակութային պատկանելության գործոն

Որպես ենթամշակութային պատկանելության բնութագրիչ հետազոտությունում կիրառված է ուսանողության երաժշտական նախասիրությունները: Աղյուսակ 16-ում ներկայացված է «Ինչպիսի՞ երաժշտու-

---

դուրս բերված շերտերում: Տե՛ս **Գծագիր** 39. **Երևանի ուսանողության աշխարհայացքային տիպերի ծավալները**:

թյուն եք ավելի գերադասում լսել: Նշեք երկուսից ոչ ավելի պատասխան» հարցին տրված առաջին և երկրորդ պատասխանների, իսկ Գծագիր 27-ում՝ որպես առաջին նախասիրություն նշված պատասխանների ասոցիացիաները կոռուպցիոն դիրքորոշման հետ: Հետագա շարադրանքում ենթամշակութային տիպերը պայմանականորեն կանվանվեն երաժշտական նախասիրության տիպերով:

Կոռուպցիոն անհանդուրժողականությունը տեսակետից դիտարկված տիպերը ստորաբաժանվում են 3 խմբի՝

ա) «Փոփ», «Դասական», «Արևելյան» և «Հեղինակային» տիպերում կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքների բաշխումը համարյա [վիճակագրականորեն] նույնական են և նման են ընտրանքային միջին բաշխմանը (տես՝ **Գծագիր** 6):

բ) Կոռուպցիոն անհանդուրժողականությունը ցածր է երկու՝ ***բովանդակային տեսակետից միմյանց հակոտնյա***, ենթամշակութային տիպերում՝ «Ջազ» և «Ռաբիս»,

գ) Կոռուպցիոն անհանդուրժողականությունը նշանակալից չափով բարձր է նույնպես ***հակոտնյա «Ռոք» և «Հայկական ազգագրական» ենթամշակութային տիպերում***:

Աղյուսակ 16. Ուսանողների ենթամշակութային պատկանելությունն ըստ երաժշտական նախասիրությունների

Ենթամշակութային տիպ	I	II	Գումար
Փոփ	39.0%	15.6%	54.6%
Դասական	21.2%	26.8%	48.0%
Արևելյան	4.4%	19.8%	24.2%
Հեղինակային	7.6%	13.4%	21.0%
Ռաբիս	10.6%	5.2%	15.8%
Հայկական ազգագրական	6.4%	5.6%	12.0%
Ջազ	3.4%	5.6%	9.0%
Ռոք	6.0%	2.6%	8.6%
Այլ	1.4%	2.0%	3.4%
Պատասխան չկա		3.4%	3.4%
Ընդամենը	100.0%	100.0%	

Գծագիր 27. Երաժշտական նախասիրությունների ասոցիացիան կոռուպցիոն դիրքորոշման հետ



Նշենք, որ ասոցիատիվ վերլուծության արդյունքում ստացվել է, որ «Արևելյան», «Դասական» և «Փոփ» տիպերը ունեն միմյանց հետ բարձր ասոցիացիա, ընդ որում՝ այն առավել բարձր է «Դասական» և «Փոփ» տիպերի միջև: Նշված երեք տիպերի մեծ ծավալները և դրանց միջև բարձր ասոցիացիաները պայմանավորել են դրանցում կոռուպցիոն դիրքորոշման տիպերի համարյա նույնատիպ բաշխումը:

Առավել նշանակալից արդյունք է այն, որ

T: Կոռուպցիոն բարձր, միջին և ցածր անհանդուրժողականության բոլոր երեք խմբերում առկա են և՛ «ավանդական» (ազգային, ասիական) և՛ ժամանակակից (վերազգային, «եվրոպական») մշակութային ենթատիպեր սահմանող երաժշտական նախասիրությունները:

«Ջազ» և «Ռաբիս» տիպերում կոռուպցիոն հանդուրժողականության աճը, հավանաբար, ունենալով հակոտնյա բնույթ, այնուամենայնիվ սոցիալական դիրքորոշումներում ձևականորեն դրսևորվում են իրար նման: Հարկ է նշել, որ «Ռաբիս» տիպում, որը չի դրսևորել նշանակալից ասոցիացիա այլ ենթամշակույթային տիպի հետ, նշանակալից աճել է կոռուպցիան որպես ***նորմա*** գնահատողների քանակը: Իսկ «Ջազ» ենթատիպում նշանակալից բարձր է կոռուպցիան որպես ***գործիք*** գնահատումը, որը կարելի է մեկնաբանել որպես մնացած հասարակությունից այդ ենթատիպի անջրպետվածության, հակադրվածության և, դրա հետ միաժամանակ պարադոքսալ կերպով զուգորդված, ներողամիտ հանդուրժողականության արդյունք:

Դրան հակառակ, «Ռոք» տիպում կոռուպցիոն անհանդուրժողականության նշանակալից գերազանցումը ընտրանքային միջինին,

ասոցիատիվ նմանություն է հուշում 60-ականների եվրոպական երիտասարդական սոցիալական շարժումների հետ:

Ուշագրավ և կարևոր արդյունք է ստացվում, եթե Գծագիր 25-ի տվյալները տարանջատվում են ըստ իրենց մշակութային պատկանելության, իսկ հետո յուրաքանչյուր տիպի անդամները դասավորվում ըստ կոռուպցիոն անհանդուրժողականության նվազման (Գծագիր 26):

Առաջանում են կոռուպցիոն անհանդուրժողականության երկու կախվածություններ՝ (շարքեր) «եվրոպական» («Ռոք» - «Փոփ» - «Ջազ») և «ասիական» («Հայկական ազգագրական» - «Արևելյան» - «Ռաբիս»), որոնցում կոռուպցիոն անհանդուրժողականությունը փոփոխվում է համարյա միևնույն սահմաններում, որից հետևում է, որ կոռուպցիոն անհանդուրժողականությունն ուղղակիորեն կախված չէ «ասիական» և «եվրոպական» մշակութային պատկանելությունից:

Գծագիր 28. Ենթամշակութային շարքերը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը



Ստացված արդյունքները թույլ են տալիս առաջ քաշել հիպոթեզ, որ.

T: Բարձր կոռուպցիոն հանդուրժողականության և հակվածության վերագրումը որպես առավելապես «ասիական» քաղաքակրթությունների հասարակական հարաբերություններին ներհատուկ բնութագիր՝ իրենից ներկայացնում է գաղափարականացված պարզունակեցում:

T: Կոռուպցիոն հանդուրժողականությունը ոչ թե քաղաքակրթությունների և մշակույթների՝ այլ դրանց ենթամշակութային տարատեսակների բնութագիր է,

Եվ, որպես վերջին դրույթի անմիջական հետևանք.

C: Ենթամշակութային տիպերի իդենտիֆիկացիոն կարևորագույն հատկանիշների շարքում են դրանցում արխետիպային բարոյական նորմերի դիրքավորվածությունը[56]:

Այստեղ հարկ է նշել նաև ***Բնակավայրի տիպը*** բնութագրի ազդեցությունը, որը հուշում էր, որ Հայաստանի այն վայրերում, որտեղ ***ավանդականն ավելի լավ է պահպանվել***՝ գյուղերում և փոքր քաղաքներում, կոռուպցիոն անհանդուրժողականությունն ավելի բարձր է, քան ***առևտրայնացման բևեռում***՝ Երևանում:

Ընդ որում, հաշվարկները ցույց են տվել, այստեղ ***Բարեկեցություն*** գործոնն էական չէ, քանի որ ուսանողների բարեկեցության ինքնագնահատականները Երևանի բնակիչ և գյուղի կամ այլ քաղաքի բնակիչ ուսանողների համար էականորեն չեն տարբերվում:

Աղյուսակ 17. Ուսանողների բարեկեցության ինքնագնահատականները Երևանի և այլ տիպի բնակավայրերի համար

	Երևան	Գյուղ կամ այլ քաղաք
Միջինից բարձր	29.6%	28.2%
Միջին	66.6%	65.4%
Միջինից ցածր	3.9%	6.4%
Ընդամենը	100.0%	100.0%

Հետևաբար՝

T: Երևանի և այլ բնակավայրերից եկած ուսանողների կոռուպցիոն անհանդուրժողականության տարբերությունները պետք է վերագրել ***ենթամշակութային տարբերություններին,*** այն է՝

[56] Դա է վկայում նաև կրոնա-բարոյական և կրոնա-փիլիսոփայական ավանդական գրականության ամբողջ կորպուսը, որի «եվրոպական» և «ասիական» բոլոր տարբերակներն ինվարիանտ են:

- Երևանում ***Առևտրայնացման ուժեղ ազդեցություն և Ավանդականի ցածր պահպանվածություն,***
- իսկ մնացած բնակավայրերում՝ ***Ավանդականի բարձր պահպանվածություն և Առևտրայնացման թույլ ազդեցություն:***

Կոռուպցիայի վերաբերյալ ճանաչողական պատկերացումները

Այժմ դիտարկենք, թե ինչպես են ուսանողների մոտ կոռուպցիոն դիրքորոշումներն ասոցացված ճանաչողական պատկերացումների համալիրների հետ: Այդ ասոցիացիաները մի կողմից ունեն նկարագրողական նշանակություն, քանի որ ցույց են տալիս կոռուպցիոն դիրքորոշման տեղը և դերը ուսանողության մտավոր համալիրներում, իսկ մյուս կողմից կարող են ունենալ կոնկրետ կիրառություններ, քանի որ ուսանողների մտավոր ճանաչողական համալիրների ասոցացված տարրերի վրա համալիր ազդեցությունը բարձրացնում է դրանց կառավարման հնարավորությունները հիմք հանդիսանալով դրանց կառավարման ռազմավարությունների մշակման համար:

Դիտարկված ճանաչողական տարրերի շարքում են ***կաշառակերության տարածվածության***, ***մեխանիզմների, հիմնարար պատճառների*** և ***կոռուպցիայի վերացման ուղիների*** վերաբերյալ պատկերացումները: Այդ պատկերացումները կարող են հիմնված լինել տարբեր բնույթի տեղեկությունների և գիտելիքների վրա, որոնք ստացվել են անձնական անմիջական կամ միջնորդավորված փորձից, զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումներից, գեղարվեստական գրականությունից կամ կինոֆիլմերից, գիտական գրականությունից, սեփական մտորումներից ու այլ տիպի տեղեկությունների և գիտելիքների աղբյուրներից:

Պատկերացումները կաշառակերության տարածվածության վերաբերյալ

Գծագիր 29-ում տրված է «Ձեր կարծիքով, որքանո՞վ է կոռուպցիան, կաշառակերությունը տարածված Հայաստանում» հարցի պատասխանների բաշխումը: Թույլատրվում էր նշել միայն մեկ պատասխան:

Գծագիր 29. «Ձեր կարծիքով որքանո՞վ է կոռուպցիան, կաշառակերությունը տարածված Հայաստանում: Նշեք միայն մեկ պատասխան»



T: Պետական ծառայողների բարձր կոռումպացվածությունը բացարձակ գերակշռող է ուսանողների ճանաչողական պատկերացումներում:

Իսկ արդյո՞ք կոռուպցիայի նկատմամբ ուսանողների վերաբերմունքները կախված են նրանց կողմից տրված պետական ծառայողների կոռումպացվածության մակարդակի գնահատականից (տես՝ Գծագիր 30): Գծագրից բխում է, որ.

T: Պաշտոնյաների կոռումպացվածության մակարդակի բարձր գնահատականը ասոցացված է կոռուպցիայի նկատմամբ ավելի բարձր անհանդուրժողականության հետ,

բացի այդ, հատկանշական է և կարևոր, որ.

T: Պետական պաշտոնյաների կոռումպացվածության մակարդակի վերաբերյալ պատկերացումների բացակայության դեպքում կոռուպցիոն անհանդուրժողականությունն ամենաբարձրն է:

Հավանաբար, երկու արդյունքն էլ բացատրվում են ուսանողների նշանակալից մասի մոտ ***կոռուպցիոն անմիջական փորձի բացակայությամբ:***

Ընդ որում, առաջին դեպքում տեղի ունի ***կոգնիտիվ էքստրապոլյացիա՝*** երբ, ուսանողի անհատական կոռուպցիոն փորձից դուրս ծագում

ունեցող կոռուպցիոն անհանդուրժողականությունը, մակածվում է պետական պաշտոնյաների կերպարի վրա, առաջացնելով առասպելականացված գիտելիք (կոգնիցիա):

Երկրորդ դեպքը վերաբերում է ***ռացիոնալ մտածող և կոռուպցիոն փորձ չունեցող*** ուսանողներին, որոնց մոտ կոռուպցիոն փորձի բացակայությունը պատկանում է (ասոցացված է) կոռուպցիոն անհանդուրժողականություն պարունակող այլ հոգեբանական-ճանաչողական համալիր[ներ]ի, սակայն որոնց ռացիոնալիզմը թույլ չի տալիս դատողություններ կատարել (գնահատականներ մակածել) իրենց անձանոթ առարկայի վերաբերյալ:

Գծագիր 30. Ուսանողների կոռուպցիոն դիրքորոշումների կապը պաշտոնյաների կոռումպացվածության մակարդակի գնահատականների հետ[57]



Արդյունքներից բխում է, որ կոռուպցիայի տարածվածության և դիրքավորվածության վերաբերյալ հավաստի տեղեկությունները կարող են մեղմել հասարակական պատկերացումները պաշտոնյայի կոռումպացվածության վերաբերյալ, քանի որ ***վերնախավային կոռուպցիոն գործունեությամբ,*** որը հիմնականում կապված է պետական խոշոր միջոցների տնօրինման հետ, հնարավորություն ունեն զբաղվելու առա-

---

57 «Պետական պաշտոնյաների փոքր մասն է կաշառք վերցնում» տարբերակը դիտարկված չէ, քանի որ այդ պատասխանը տվել են շատ քիչ քանակով անձինք:

վել բարձր մակարդակի և, հետևաբար, փոքր քանակով պաշտոնյաները, իսկ ***կենցաղային կոռուպցիայով***, որը կապված է հասարակությանը սոցիալական ծառայություններ մատուցելու գործունեության հետ, զբաղված են գործադիր մարմինների որոշակի պաշտոններում գտնվող միջին և ցածր մակարդակի պաշտոնյաները: Այսինքն, պետական ծառայողների նշանակալից մասը չունեն կոռուպցիայով զբաղվելու հնարավորություն, [թեկուզ և] այն պատճառով, որ իրենց պաշտոնները չեն ենթադրում ուղղակի կամ անուղղակի կոնտակտ բիզնեսի կամ հասարակության հետ:

Կաշառակերության մեխանիզմները

Գծագիր 31-ում տրված է «Ի՞նչ եք կարծում, ավելի հաճախ ու՞մ նախաձեռնությամբ և ի՞նչ պատճառներով են մարդիկ կաշառք տալիս» հարցի պատասխանները:

Գծագիր 31. «Ի՞նչ եք կարծում, ավելի հաճախ ու՞մ նախաձեռնությամբ և ի՞նչ պատճառներով են մարդիկ կաշառք տալիս»



Գծագրի հորիզոնական առանցքի կատեգորիաների վերծանումը.
1 – Պետական պաշտոնյան կաշառք վերցնելու համար ստեղծում է համապատասխան իրավիճակ, ակնարկում է այդ մասին կամ ստիպում է:
2 – Քաղաքացիներն իրենք են դա նախաձեռնում:
3 - Երկու կողմերն էլ նախօրոք գիտեն, որ կաշառքը տվյալ իրավիճակում հարցի լուծման ընդունված ձևն է:
4 – Հարցերի լուծման այլ ձևեր մեզ մոտ պարզապես չկան:

Գծագիր 31-ից բխում է, որ

T: Կոռուպցիայի մեխանիզմների թվում հասարակության մեջ ամենատարածված պատկերացումներն են.

1. «Երկու կողմերն էլ նախօրոք գիտեն, որ կաշառքը տվյալ իրավիճակում հարցերի լուծման ընդունված ձևն է» և

2. «Պետական պաշտոնյան կաշառք վերցնելու համար ստեղծում է համապատասխան իրավիճակ, ակնարկում է այդ մասին կամ ստիպում»:

Ընդ որում, այդ ամենատարածված կոգնիցիայի դեպքում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականությունը նվազ է (Գծագիր 32):

Հակակոռուպցիոն ռազմավարությունների հիմնական նպատակների շարքում պետք է լինի այս կոգնիցիայի խարխլումը և արտամղումը հասարակական գիտակցությունից, որը սակայն առավել դժվար հասանելին է[58]:

Գծագիր 32. Կաշառակերության մեխանիզմների ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա



Գծագրից բխող հետևություններն են.

T: Կոռուպցիոն փորձի բացակայության և ռացիոնալ դիրքորոշման դեպքում կոռուպցիոն անհանդուրժողականությունն ամենաբարձրն է:

---

58 Ինչպես ցույց կտրվի հաջորդիվ՝ դրա համար անհրաժեշտ է իշխանությունների կողմից «քաղաքական կամքի դրսևորում» և «իրական քայլեր»:

T: Կոռուպցիայի նկատմամբ առավել հանդուրժողական են նրանք, ովքեր համարում են, որ քաղաքացիներն են կոռուպցիայի նախաձեռնողները:

Այս և նմանատիպ նախորդ արդյունքներից բխում է, որ

C: Հասարակության մեջ կոռուպցիոն անհանդուրժողականության բարձր մակարդակը պահպանելու և ավելի բարձր տարիքի անձանց փոխանցելու կարևոր ռեզերվ է երիտասարդությանը կոռուպցիոն առաջին փորձից զերծ պահելու ռազմավարությունը:

Հակակոռուպցիոն դիրքորոշումների բարձր մակարդակի համար ավելի կարևոր է երիտասարդությանը զերծ պահել կոռուպցիոն ***առաջին փորձից,*** քան հետո՝ տարիներ շարունակ, հետ պահել դրանից «մտրակի և քաղցրաբլիթի» կիրառմամբ:

Սա առավել ևս վերաբերում է դպրոցին, որտեղ երեխաներն առաջին անգամ, գիտակցաբար, ուղղակիորեն կամ անուղղակի կերպով, առնչվում են կոռուպցիային՝ լինի դա առօրյա գնահատականի բարձրացում, թե պարբերական նվիրատվությունների դրդում, ուսուցիչների կողմից բազմակի ստանդարտների կիրառում և այլն:

Այդ խնդիրը հատկապես կարևորվում է նրանով, որ ներկայումս դպրոցներին՝ ավարտական քննությունների հետ կապված ավելի մեծ իրավունքներ են տրված[59]:

Կաշառակերության արմատները

Կոգնիտիվ դիսոնանս առաջացնող ցանկացած միտում և գործողություն ռացիոնալիզացվելու կարիք ունեն[60]: Ռացիոնալիզացումը ինքնին բարդ կոգնիտիվ գործընթաց է, որի ընթացքում գործարկվում են տարբեր ոլորտների և մակարդակների կոգնիցիաները, որոնք իրենց հերթին ունեն հուզականացված (բարոյականացված) երանգավորումներ:

---

[59] Այստեղ կոռուպցիոն վարքի զանգվածային դրսևորումները ակնհայտորեն իրենցից ներկայացնում են ***երեխաների զանգվածային այլասերման գործողություն***, որը՝ հանդիսանալով կոռուպցիոն հանդուրժողականության թռիչքաձև աճի գործոն, անհակադարձելի կերպով խարխլում է հասարակական բարքերի, նորմերի և պետականության հիմքերը:

[60] Անձը ***կոգնիտիվ դիսոնանսի*** վիճակում է, երբ որևէ բանի մասին նրա գիտելիքը ներդաշնակ չէ դրա մասին մեկ այլ գիտելիքի հետ:

Տե՛ս Լ. Ֆեստինգեր, Կոգնիտիվ դիսոնանսի տեսությունը,//«Գիտափորձը կոգնիտիվ դիսոնանսում», Երևան, 2002:

Աղյուսակ 18-ում տրված կաշառակերության արմատների վերաբերյալ չորս դատողությունների հետ ուսանողների համաձայնության կամ անհամաձայնության աստիճանների բաշխումները: Այդ դատողությունները ներկայումս շատ տարածված իդեոլոգեմաներ են, որոնցով տարբեր քաղաքական-հասարակական շրջանակներ բացատրում են ներկայիս իրականությունը:

Գործոնային վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողությունը որպես ամբողջական օբյեկտ դիտարկելու դեպքում, այս կոգնիցիաներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է բավականաչափ ***անկախ ճանաչողական տարր*** և, հետևաբար, կարող է կիրառվել որպես սոցիալ-հոգեբանական կառավարման անկախ պարամետր:

«Շուկայական հարաբերությունները» և «Մարդու էությունը» որպես կոռուպցիայի արմատ ավելի հակված են դիտելու կանայք, իսկ «Խորհրդային ժառանգությունը»՝ տղամարդիկ: Կոռուպցիան որպես «Ժողովրդի ավանդական հատկանիշ» համանման կերպով է գնահատված և՛ կանանց, և՛ տղամարդկանց կողմից:

Աղյուսակ 18. Կաշառակերության պատճառների վերաբերյալ տարբեր կարծիքների հետ համաձայնության աստիճանը

Պատասխանի տարբերակ	1	2	3	4	5	Ընդ.
«Կաշառակերությունն ու կոռուպցիան բխում են մարդու էությունից»	7.8%	7.0%	12.3%	23.7%	**49.3%**	100%
«Կաշառակերության, կոռուպցիայի արմատները շուկայական հարաբերություններն են»	14.1%	12.3%	27.5%	22.1%	**24.0%**	100%
«Կաշառակերության ու կոռուպցիայի ավանդույթները մենք ժառանգել ենք խորհրդային հասարակարգից:»	19.0%	19.8%	**24.1%**	17.9%	19.2%	100%
«Կաշառակերությունն ու կոռուպցիան մեր մեր ժողովրդի ավանդական հատկանիշներն են»	**28.1%**	19.1%	23.4%	16.2%	13.3%	100%
Կիրառված սանդղակը՝ 5 – Լիովին համաձայն եմ: 1 - Բոլորովին համաձայն չեմ:						

Հաջորդ աղյուսակում տրված են նույն հարցերին տրված բաշխումները, երբ խնդրվել է նշել պատճառներից երկու ամենակարևորները:

Աղյուսակ 19. Կաշառակերության պատճառների վերաբերյալ երկու ամենակարևոր կարծիքների փոխադարձ կապը

	Երկրորդ պատասխան

Առաջին պատասխան	1	2	3	4	Ընդ.
1.«Կաշառակերության, կոռուպցիայի արմատները շուկայական հարաբերություն-ներն են»	0.0%	5.8%	5.2%	22.3%	33.3%
2.«Կաշառակերությունն ու կոռուպցիան մեր մեր ժողո-վրդի ավանդական հատկա-նիշներն են»	2.2%	.0%	3.0%	8.0%	13.2%
3.«Կաշառակերության ու կո-ռուպցիայի ավանդույթները մենք ժառանգել ենք սովե-տական հասարակարգից:»	2.8%	2.4%	0.0%	12.1%	17.3%
4.«Կաշառակերությունն ու կոռուպցիան բխում են մարդու էությունից»,	19.7%	6.9%	9.3%	0.2%	36.1%
Ընդամենը	24.7%	15.2%	17.5%	42.6%	100%

Կոռուպցիայի արմատները բնութագրող դիտարկված չորս պարա-մետրերից միայն երկուսն ունեն վիճակագրականորեն հավաստի ազդեցություն կոռուպցիոն դիրքորոշումների վրա: Դրանք են՝ կոռուպցիան «Ժողովրդի ավանդական հատկանիշ» և որպես «Մարդու էությունից բխող հատկանիշ» դիտելու ինտենսիվությունները:

Այդ ազդեցությունների գնահատականները դուրս են բեր-ված երկնշանակ լոգիստիկ ռեգրեսիոն մոդելների տեսքով: Առավել ուժեղ ազդեցություն ունի կոռուպցիան «Ժողովրդի ավանդական հատկանիշ» համարող կոգնիցիայի ինտեն-սիվության աճը: **Աղյուսակ** 20-ում տրված են երկնշանակ լոգիստիկ ռեգրեսիայի գործակիցները:

Աղյուսակ 20. Կոռուպցիոն անհանդուրժողականության կախվածությունը կոռուպցիայի արմատների վերաբերյալ դատողություններից:

Պարամետր	B	Sig.	Exp(B)
Կաշառակերության ու կոռուպ-ցիայի արմատները մեր ժողո-վրդի ավանդական հատկանիշ-ներն են	.314	.000	1.369
Կաշառակերությունն ու կոռուպցիան բխում են մարդու էությունից	-.229	.000	.795

Երբ «Կաշառակերության և կոռուպցիայի արմատները մեր ժողովրդի ավանդական հատկանիշներն են» դատողության հետ համաձայնության աստիճանը աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ ուսանողի կոռուպցիոն դիրքորոշումը կընդունի ***Այլասերում*** արժեքը, աճում է 36.9%-ով:

Երբ «Կաշառակերությունն ու կոռուպցիան բխում են մարդու էությունից» դատողության հետ համաձայնության աստիճանը աճում է մեկ միավորով, ապա շանսը, որ ուսանողի կոռուպցիոն դիրքորոշումը կընդունի ***Այլասերում*** արժեքը նվազում է 20.5%-ով:

Գծագիր 33-ում տրված է կոռուպցիան որպես «Ժողովրդի ավանդական հատկանիշ» կոգնիցիայի ինտենսիվության և կոռուպցիոն դիրքորոշման միջև առկա ասոցիացիան: Որքան ավելի է համոզված ուսանողը, որ կոռուպցիան ժողովրդի ավանդական հատկանիշ է, այնքան ավելի հանդուրժող է նա կոռուպցիայի նկատմամբ (նվազում է կոռուպցիան որպես Այլասերում դիտելու հավանականությունը):

Գծագիր 33. «Կոռուպցիան ժողովրդի ավանդական հատկանիշն է» կոգնիցիայի ինտենսիվության ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա



Ակնհայտ է, որ երիտասարդների ճանաչողական համալիրներում առկա է իր իսկ ժողովրդի վերաբերյալ այնպիսի ճանաչողական պատկերացում, որը, ինչպես տեսանք վերևում (էջ՝ 98), հիմնավորվում է ընդամենը գաղափարաբանացված պատկերացումներով: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ այդ ***գաղափարաբանական*** պատկերացումները նշանակալից ազդեցություն ունեն կոռուպցիոն դիրքորոշման վրա, ստանում ենք, որ.

T: Ժողովրդի ավանդական կերպարի վերաբերյալ գիտական պատկերացումների տարածումը նշանակալից կերպով կբարձրացնի երիտասարդության կոռուպցիոն անհանդուրժողականությունը[61]:

Դիտենք ***կոռուպցիայի գոյության*** արմատների վերաբերյալ «հակադարձ» կոգնիտիվ պատկերացումները, այսինքն՝ որո՞նք են ***կոռուպցիայի բացակայության*** պատճառները, ինչը վեր է հանում դիտարկվող խնդրի նոր բովանդակային չափողականությունները: Աղյուսակ 21-ում ներկայացված են հետևյալ հարցին տրված պատասխանների բաշխումները. «Հաճախ խոսում են այն մասին, որ որոշ երկրներում կաշառակերություն համարյա չկա: Ձեր կարծիքով ո՞րն է դրա պատճառը»:

Աղյուսակ 21. Կոռուպցիայի բացակայության պատճառները

	II պատասխան						
I պատ.	**1**	**2**	**3**	**4**	**5**	**Պատ. չկա**	Ընդ.
1	0.0%	3.6%	3.6%	1.8%	0.6%	0.6%	10.2%
2	1.6%	0.0%	**21.1%**	**11.8%**	2.4%	1.0%	38.0%
3	1.8%	6.4%	0.0%	**12.4%**	**9.8%**	2.4%	32.9%
4	0.6%	2.4%	3.8%	0.0%	3.6%	0.0%	10.4%
5	0.8%	1.2%	2.6%	1.0%	0.0%	2.4%	8.0%
Պատ. չկա	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.4%	0.4%
Ընդամենը	**4.8%**	**13.7%**	**31.1%**	**27.1%**	**16.5%**	**6.8%**	100.0%

Պատասխանների տարբերակները՝
1. «Բարձր կենսամակարդակի դեպքում կաշառքներ պետք չեն»
2. «Այնտեղ իրավապահ մարմիններն անկաշառ են, իսկ օրենքները խիստ, կաշառակերներին անմիջապես հայտնաբերում են և պատժում»
3. «Այնտեղ գործարարները և քաղաքացիները կախում չունեն պետական պաշտոնյաներից, որի հետևանքով կարիք չունեն թույլտվություններ գնել իրենց ամեն մի քայլի համար»
4. «Իմ կարծիքով, կաշառակերությունն այնտեղ համարյա նույնքան տարածված է»
5. «Այդ երկրների մշակույթը և ավանդույթը խոչընդոտում են կաշառակերությանը»
Ընդգծված են միճակագրականորեն հավաստի ասոցիացիաները:

---

61 Այստեղ չենք անդրադառնում այդ քարոզչության տեխնոլոգիական և տեխնիկական խնդիրներին, համարելով դրանք առանձին դիտարկման հարցեր, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ քարոզչության հաջողությունը կախված է ոչ միայն (և ոչ այնքան) քարոզվող իդեոլոգեմաների բնույթից և ճշմարտացիությունից, այլ նրանից, թե ***ո՞վ*** և ***ինչպե՞ս*** է դա իրականացնում:

Արդյո՞ք կոռուպցիայի առկայության և բացակայության դիտված պատճառների փոխազդեցությունը ուսանողական պատկերացումներում ազդեցություն գործում է նրանց կոռուպցիոն դիրքորոշումների վրա: Աղյուսակ 22-ում տրված են այդ կոգնիտիվ պատկերացումների հիմնական ազդեցությունները և դրանց զույգական փոխազդեցությունների ազդեցությունները կոռուպցիոն անհանդուրժողականության վրա:

Աղյուսակ 22. Կոռուպցիայի առկայության և բացակայության վերաբերյալ պատկերացումների և դրանց փոխազդեցությունների ազդեցությունը կոռուպցիոն անհանդուրժողականության վրա

Պատճառ	Հետևանք՝ կոռուպցիայի ...	Ընդ.
4Ա x 1Ա		72.5%
4Ա x 2Բ		72.1%
4Ա + 3Բ		69.2%
2Բ. Իրավապահների լավ աշխատանք և օրենքի գերակայություն	Բացակայություն	66.1%
4Ա. Բխում է մարդու էությունից	Առկայություն	65.0%
3Ա. Խորհրդային ժառանգություն	Առկայություն	63.5%
Ընդամենը		**59.6%**
5Բ. Նույնքան տարածված է	Բացակայություն	57.5%
3Բ. Բարձր կենսամակարդակ	Բացակայություն	57.3%
1Ա. Շուկայական հարաբերությունները	Առկայություն	55.6%
4Բ. Անկախություն պետությունից	Բացակայություն	53.8%
4Ա x 2Ա		53.1%
1Բ. Երկրների մշակույթը խոչընդոտում են կոռուպցիային	Բացակայություն	51.0%
2Ա. Կոռուպցիան ժողովրդի ավանդական հատկանիշ է	Առկայություն	48.5%
1Ա x 3Բ		48.0%
1Բ x (3,4,5)Բ		43.3%

«Ընդ.» **-** սյունում տրված է կոռուպցիան ***Այլասերում համարող*** ուսանողների քանակը:
«4Ա x 1Ա» – տիպի նշանակումներով տրված են համապատասխան թվատառային համար ունեցող երկու պատկերացումների միաժամանակ հանդես գալու (փոխազդեցության) դեպքերը:

Որպես կոռուպցիայի բացակայության պատճառներ ակնհայտորեն գերակշռել են մի կողմից՝ բարձր կենսամակարդակը, մյուս կողմից՝

օրենքները և իրավապահները, երրորդ տեղում է՝ քաղաքացիների և բիզնեսի անկախությունը պետական պաշտոնյաներից[62]:

Դիտարկենք կոռուպցիոն անհանդուրժողականության աճի երեք դեպք:

Դեպք առաջին: Երբ ուսանողների մոտ խաչաձևվում են այն պատկերացումները, որ կոռուպցիան «մարդու էության» և «շուկայական հարաբերությունների» արդյունք է, ապա կոռուպցիոն անհանդուրժողականությունը կտրուկ աճում է: Այս արդյունքն, ակնհայտորեն, չհանգուցալուծված կոգնիտիվ դիսոնանսի հետևանք է, քանի որ, եթե կոռուպցիան «բխում է մարդու էությունից», ապա չափազանց խիստ տրամադրվելը դրա դեմ ակնհայտորեն անհեթեթություն է: Այս կոգնիցիաների խաչաձևումը նկարագրում է անհատին, որին իր ներքին ցենզորը թույլ չի տալիս անցնել «կոռուպցիոն այլասերման» սահմանը: Մյուս կողմից, եթե դա «մարդու էությունն է», ապա նա ինքն էլ այդպիսին է: Հետևաբար, այդ կոգնիցիայի թաքնված իմաստն է՝ այն կրողի ինքնասահմանազատումը «նրանցից, ում էությունից է բխում կոռուպցիան»: Եվ հատկանշական է արդեն այդ կոգնիտիվ դիսոնանսի հանգուցալուծման ***անհաջող*** փորձը՝ խաչաձևելով այն «շուկայական հարաբերությունների» մեղսակցությամբ:

Դեպք երկրորդ. Երբ ուսանողի պատկերացումներում խաչաձևվում են կոռուպցիայի վերաբերյալ այն դիրքորոշումները, որ այն «բխում է մարդու էությունից», իսկ բացակայության պատճառը «Այնտեղ իրավապահ մարմիններն անկաշառ են, իսկ օրենքները խիստ, կաշառակերներին անմիջապես հայտնաբերում են և պատժում են» կոգնիցիան է, ապա այստեղ նույնպես արտահայտված է կոգնիտիվ դիսոնանսը, որի հիմքը արդեն դիտարկված ինքնասահմանազատումն է, իսկ մյուս կողմից՝ անուղղակի մեղադրանքը պետությանը՝ որ «այստեղ» (ի տարբերություն «այնտեղի») չեն գործում օրենքն ու իրավապահները:

Դեպք երրորդ. Երբ ուսանողի պատկերացումներում խաչաձևվում են կոռուպցիայի վերաբերյալ այն դիրքորոշումները, որ այն «բխում է մարդու էությունից», իսկ բացակայության պատճառը՝ «Բարձր կենսամակարդակի դեպքում կաշառքներ պետք չեն», ապա այստեղ արդեն ունենք կոգնիտիվ դիսոնանսի որոշակի հանգուցալուծում, որն իրենից ներկայացնում է դրա տեղափոխում ռացիոնալ ոլորտ՝ «Բարձրացրեք ժողովրդի կենսամակարդակը և կոռուպցիան կնվազի»,

---

[62] Ակնհայտ է, որ այս պատասխանները պետք է մեկնաբանել ոչ թե որպես՝ երկրներում կոռուպցիայի բացակայության իրական պատճառներ, այլ որպես՝ դրա մասին Երևանի ուսանողների պատկերացումներ:

սակայն, այնուամենայնիվ, մնում է սեփական անձի սահմանազատումը: Այսպիսով,

T: Հետազոտական տվյալներում արտապատկերվել է հետխորհրդային հակասական գործընթացների արդյունքում կազմավորված քիմերային հասարակությանը հատուկ հասարակական կոգնիտիվ դիսոնանսը:

Ինչ վերաբերում է կոռուպցիոն անհանդուրժողական ամենացածր արժեքներին, երբ հիմնական կոգնիցիան՝ «Կաշառակերությունն ու կոռուպցիան մեր ժողովրդի ավանդական հատկանիշներն են», որը խաչաձևվում է «նրանց մոտ» կոռուպցիայի բացակայության տարբեր ռազիոնալացումներով՝ «Բարձր կենսամարդակ», «Անկախությունը պետությունից» կամ «Այնտեղ կոռուպցիան նույնպես տարածված է», ապա այստեղ արդեն ունենք լիովին հանգուցալուծված կոգնիտիվ դիսոնանս, քանի որ հիմնական կոգնիցիան «համաձայության հիմք» է ստեղծել կոռուպցիոն հանդուրժողականության համար, մնում է միայն այն ռացիոնալիզացնել: Այսպիսով.

T: Քիմերային հասարակություններում կոռուպցիոն հանդուրժողականության աճն իրականանում է կոգնիտիվ դիսոնանսի հանգուցալուծման միջոցով:

Այս երկու հետևությունների միավորումը բերում է արդեն բոլորովին այլ հարթության վրա գտնվող հետևության.

T: Քիմերային հասարակություններում, որտեղ գերակշռում են դրա պահպանման և աճի գործոնները, հասարակական կոգնիտիվ դիսոնանսի առկայությունը հասարակական անկայունության պոտենցիալ է, իսկ հանգուցալուծումը հասարակական հետընթացի գործոն:

Կոռուպցիայի վերացման ուղիները

ՀՀ կառավարությունը 2003թ. ընդունել է Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր: Հայաստանը անդամագրված է Միջազգային ԳՐԵԿՈ կազմակերպությանը: ԶԼՄ-ներում նկատելիորեն աճել են հակակոռուպցիոն թեմաներով հրապարակումները: Հրապարակումներում արծարծվող կոռուպցիոն դեպքերի քննարկումները առավելագույնս ապաանձնավորված են: Տարբեր հիմնավորումներով չեն հրապարակվում ոչ միայն կոռուպցիոն գործարքների մասնակից ֆիզիկական, այլև իրավաբանական անձանց և պետական կառավարման մարմինների անունները: Նշվում են պետական բյուջե վերադարձված աննշան գումարների մասին:

Որքանո՞վ են համապատասխան պետական մարմինների կողմից իրականացվող հակակոռուպցիոն գործողությունները հասարակական վստահություն առաջացնելու համար, որն այդ պայքարին հասարակական մասնակցության նախապայմանն է:

Ուսանողներին տրվել է ուղղակի հարց. «Հասարակության մեջ թերահավատություն կա Հայաստանի իշխանությունների կողմից հայտարարված կոռուպցիայի դեմ պայքարի նկատմամբ: Իշխանությունների ո՞ր գործողությունների դեպքում Դուք կհամարեք, որ նրանք իրոք և լրջորեն, ցանկանում են պայքարել կոռուպցիայի դեմ»:

Աղյուսակ 23. Կառավարության հակակոռուպցիոն պայքարի նկատմամբ վստահության պայմանները

Պատասխանի տիպ	I	II
Թերահավատներ, այդ թվում.	**28.6%**	**43.1%**
Երբ (= թող) իրենք կաշառք չվերցնեն	11.0%	16.6%
[պարզապես] Չեմ հավատում	10.9%	16.4%
Երբ կատարեն կոնկրետ քայլեր	6.7%	10.1%
Բարեփոխիչներ	**17.4%**	**26.2%**
Քաղաքացիական հասարակության կողմնակիցներ	9.4%	14.2%
Կառավարման բարեփոխիչներ	5.5%	8.3%
Հակա-օլիգարխիստներ	2.5%	3.8%
Պատիժների կողմնակիցներ	**15.7%**	**23.6%**
Վստահության պայմանավորում սոցիալական բարեփոխումներով	**3.3%**	**5.0%**
Այլ	**1.4%**	**2.1%**
Դժվ. պատասխանել	**33.6%**	
Ընդամենը	**100.0%**	**100.0%**

Տրված է հետևյալ հարցի պատասխանների բաշխումը:

«Հասարակության մեջ թերահավատություն կա Հայաստանի իշխանությունների կողմից հայտարարված կոռուպցիոյի դեմ պայքարի նկատմամբ: Իշխանությունների ո՞ր գործողությունների դեպքում Դուք կհամարեք, որ նրանք իրոք և լրջորեն ցանկանում են պայքարել կոռուպցիայի դեմ:»

I – Սյունակում տրված են տոկոսները հարցվածների ընդհանուր քանակի նկատմամբ

II – Սյունակում տրված են տոկոսները *կոնկրետ պատասխաններ տված* հարցվածների քանակի նկատմամբ:

Տրված պատասխանների հիման վրա կազմավորվել են դիրքորոշումների մի քանի տիպեր: Ստացված խմբերից ամենամեծը ***Թերահավատների*** խումբն է, որը կազմված է երեք ենթախմբից՝

ա) պարզապես չհավատացողներ,

բ) անձինք, որոնց թերահավատությունը ռացիոնալացված է իրենց պատկերացումներով ***անիրականանալի պայմանով՝*** «Թող իրենք կաշառք չվերցնեն» և,

գ) որոնք «սպասողական վիճակում են», այսինքն՝ կհավատան, եթե տեսնեն կոնկրետ քայլեր (հավանաբար այս խումբն իրենից ներկայացնում է կոռուպցիայի և դրա հետ պայքարի վերաբերյալ աղոտ կամ չձևավորված պատկերացումներ ունեցող անձանց):

Երկրորդ խումբը կազմում են ***Բարեփոխիչները***, որոնք նույնպես ունեն երեք հիմնական ենթախումբ՝

ա) ***«Քաղաքացիական հասարակության կողմնակիցները»***, որոնք իրենց վստահությունը պայմանավորել են Հայաստանում քաղաքացիական հասարակության հատկանիշների արմատավորմամբ,

բ) ***Կառավարման բարեփոխիչները,*** որոնք իրենց վստահությունը պայմանավորել են Հայաստանի կառավարման համակարգում ակնկալվող բարեփոխումներով և

գ) այն անձինք, ովքեր կառավարության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի լրջությունը պայմանավորել են Հայաստանի օլիգարխներին հարկային դաշտ բերելու փաստով, Ազգային Ժողովում օլիգարխներին «իրավաբաններով և տնտեսագետներով» փոխարինելով, մոնոպոլիաների վերացմամբ և նմանատիպ այլ խնդիրներով:

Երրորդ խումբը կազմում են այն անձինք, ովքեր իրենց վստահությունը պայմանավորում են կոռուպցիոներների նկատմամբ կիրառվող ***պատիժների հրապարակումներով***:
Չորրորդ խումբը կազմում են այն անձինք, ովքեր կառավարության հակակոռուպցիոն պայքարի (և հավանաբար նաև այլ ծրագրերի) նկատմամբ վստահությունը պայմանավորում են ***սոցիալական բարեփոխումներով:***

Վեր հանված խմբերի կոռուպցիոն դիրքորոշումները տրված են Աղյուսակ 24-ում:

Բարեփոխիչների և ***Պատիժների կողմնակիցների*** մոտ կոռուպցիոն անհանդուրժողականությունը նույն մակարդակի վրա է և միջինից նշանակալից բարձր, ***Թերահավատների*** մոտ այն հավասար է ընտրանքային միջինին: Կոռուպցիոն բարձր հանդուրժողակա-

նությամբ անձինք հայտնվել են այն խմբում, ովքեր ***չեն պատասխանել այդ հարցին*** (հավանաբար, ակնարկելով, որ այդպիսի պայքար ընդհանրապես պետք չէ):

Աղյուսակ 24. Կառավարության հակակոռուպցիոն պայքարի նկատմամբ տարբեր դիրքորոշումներով խմբերի կոռուպցիոն դիրքորոշումները

	Դժ. պատ.	Թերահավատներ	Բարեփոխիչներ	Պատիժների կողմնակիցներ	Ընդ.
Նորմա	7.9%	10.9%	3.8%	6.4%	7.7%
Գործիք	37.6%	29.5%	30.0%	28.2%	32.4%
Այլասերում	54.5%	59.6%	66.3%	65.4%	59.9%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Հակադարձ ուղղությամբ կապը վիճակագրականորեն նշանակալից չէ, այսինքն, եթե հայտնի է կոռուպցիոն դիրքորոշումը, ապա դժվար է կանխատեսել, թե կառավարության ո՞ր հակակոռուպցիոն ռազմավարությունն արձագանք կգտնի տվյալ ուսանողի մոտ:

Ուսանողների դիրքորոշումները բացահայտ հակակոռուպցիոն վարքի նկատմամբ

Կոռուպցիայի նկատմամբ տարբեր դիրքորոշումները դիրքավորված են ոչ միայն դրա հասարակական նշանակության մակարդակում, այլև միջանձնական, ներխմբային հարաբերությունների և նորմերի համատեքստերում: Այդ համատեքստի վեր հանման համար կիրառվել է հետևյալ հարցը.

«Ենթադրենք Ձեզ պատմել են մի մարդու մասին, որն իմանալով, որ իր ղեկավարը կաշառք է վերցնում, այդ մասին դիմում է գրել դատախազություն: Ընտրեք այն բառերը, որոնք, Ձեր կարծիքով, առավել ճշգրիտ են բնութագրում այդ մարդուն (երկուսից ոչ ավելի պատասխան)»:

Աղյուսակ 25. Կոռուպցիայի դեմ բացահայտ պայքարողի նկարագիրը ուսանողական պատկերացումներում

	Ընդամենը		Տղամարդիկ		Կանայք	
Պատասխանի տարբերակ	**I պատ.**	**II պատ.**	**I պատ.**	**II պատ.**	**I պատ.**	**II պատ.**
Քաջ մարդ	**29.0%**	**13.6%**	**16.7%**	**13.0%**	**36.7%**	**14.0%**
Ազնիվ մարդ	**23.6%**	**26.8%**	**24.0%**	**19.3%**	**23.4%**	**31.5%**
Դավաճան	9.2%	9.6%	**15.6%**	9.4%	5.2%	9.7%
Նախանձ մարդ	9.0%	4.2%	9.9%	5.7%	8.4%	3.2%
Ենթամիտ	6.2%	5.6%	5.2%	7.8%	6.8%	4.2%
Տարօրինակ, գիժ մարդ	4.2%	5.0%	5.7%	8.3%	3.2%	2.9%
Այլ		2.8%		3.6%		2.3%
Դժ. պատ.	**18.8%**	**32.4%**	**22.9%**	**32.8%**	**16.2%**	**32.1%**
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Կոռուպցիայի դեմ ***բացահայտ*** և ***անձնավորված*** պայքարողի մասին առավել տարածված դիրքորոշումներն են՝ «Քաջ» և «Ազնիվ» մարդ որակումները: Ընդ որում՝ հատկանշական է, որ տղամարդկանց մոտ գերակշռել է «Ազնիվ», իսկ կանանց մոտ՝ «Քաջ» որակումը: Այդ մարդուն բացասական՝ «Դավաճան» որակումը նշանակալից կերպով դրսևորվել է տղամարդկանց մոտ: Ընդ որում, առկա է շատ ուժեղ ասոցիացիա դրական որակումների (Քաջ և Ազնիվ) և բացասական որակումների միջև (Դավաճան, Ենթամիտ և Նախանձ):

Այդ մարդու որակումներում նույնպես դիտվել է կոգնիտիվ դիսոնանսը, որը համարվել է առկա, եթե որակումներից մեկը դրական էր, իսկ մյուսը՝ բացասական: Պարզվել է, որ ուսանողության 13.0%-ի մոտ առկա է այդպիսի կոգնիտիվ դիսոնանս: Ընդ որում, այն ավելի ուժեղ է նրանց մոտ, ովքեր որպես առաջին պատասխան տվել են արարքի դրական որակումը (9.4%):

Հաջորդ աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ կոռուպցիայի դեմ բացահայտ և անձնավորված արտահայտվողի նկատմամբ դրական (քաջ և ազնիվ մարդ) որակումների հավանականությունն արդեն կախված է ենթամշակութային «ավանդական - եվրոպական» պատկանելությունից (բացառություն է կազմում միայն «Ջազը»): Այստեղ տվյալների նվազման հաջորդականությունը փոքր ինչ այլ է քան Գծագիր 27-ում:

Աղյուսակ 26. Վերադասի կաշառակերության վերաբերյալ դատախազությանը հայտնած անձին «քաջ» կամ «ազնիվ» որակելու հավանականության կախվածությունը ենթամշակութային պատկանելությունից

Ենթամշակութային տիպ	Որակել են որպես «Քաջ կամ ազնիվ մարդ»
Փոփ	**70.92%**
Հեղինակային	**69.23%**
Դասական	**66.27%**
Ընդամենը	*65.12%*
Ռոք	**65.00%**
Հայ ազգագր.	**60.00%**
Արևելյան	**60.00%**
Ջազ	**53.85%**
Ռաբիս	**50.00%**

«Անանուն հեռախոսազանգերի» մեթոդ

Տոտալիտար խորհրդային և ազատական հասարակություններում, որտեղ միջանձնական կապերը ճնշված են կամ խարխլված, հակակոռուպցիոն պայքարում կոռուպցիայի դեպքերի հայտնաբերման համար հաճախ կիրառում են «անանուն հեռախոսազանգերի» մեթոդը:

Աղյուսակ 27-ում տրված է անանուն հեռախոսազանգերի մեթոդի կիրառելիության վերաբերյալ հարցերին տրված պատասխանների բաշխումը:

«Շատ երկրներում կաշառակերության դեմ պայքարում են կաշառքի դեպքերի վերաբերյալ քաղաքացիների անանուն հեռախոսազանգերով: Որքանո՞վ եք համաձայն հետևյալ կարծիքների հետ:»

Աղյուսակ 27. Ուսանողական դիրքորոշումները կոռուպցիայի դեմ անանուն հեռախոսազանգերի միջոցով պայքարի նկատմամբ:

	1	2	3	Total
22.1. Այդ ձևը Հայաստանում չի գործի, քանի որ այն դեմ է մեր սովորություններին	**32.4%**	44.7%	22.9%	100.0%
22.2. Այդ ձևը չարժե կիրառել, քանի որ դա կփչացնի ազգային բարքերը	**25.2%**	47.6%	27.2%	100.0%
22.3. Կարելի է փորձարկել այդ ձևը և տեսնել, թե դրանից ինչ կստացվի	**45.3%**	25.2%	29.6%	100.0%
1 - Ամբողջ շուտ համաձայն եմ *2 - Դժվարանում եմ պատասխանել* *3 - Ամբողջ շուտ համաձայն չեմ*				

Պատասխանների տարբերակները ուսանողներին են ներկայացվել Աղյուսակ 27-ում տրված հաջորդականությամբ: Առավել ընդունելի է եղել այդ ձևը փորձարկելու կողմնակիցների քանակը: Ընդ որում, դրան ավելի կողմնակից են եղել կանայք և առավել ցածր բարեկեցությամբ ընտանիքների զավակները: Վերջինս սոցիալական դժգոհության արտահայտումներից մեկն է:

Պետք էր ենթադրել, որ այս մեթոդի կիրառությունը կարող է առաջացնել կոգնիտիվ դիսոնանս: Դրա հայտնաբերման համար Աղյուսակ 28-ում դիտվել է մեթոդի ընդունելիության և մերժման առավել խիստ տարբերակի խաչաձևումը:

Աղյուսակ 28. Կոգնիտիվ դիսոնանսը կոռուպցիայի դեմ «անանուն հեռախոսազանգերի» մեթոդի կիրառման դեպքում

	Ձևը չարժե կիրառել			
Տարբերակը կարելի է փորձարկել	Ավելի շուտ համաձայն եմ	Դժվ. պատ.	Ավելի շուտ համաձայն չեմ	Ընդ.
Ավելի շուտ համաձայն եմ	5.9%	20.0%	**19.4%**	45.3%
Դժվ. պատ.	6.3%	16.2%	2.6%	25.1%
Ավելի շուտ համաձայն չեմ	**12.9%**	11.5%	5.3%	29.7%
Ընդ.	25.1%	47.7%	27.3%	100.0%

Կոգնիտիվ դիսոնանսը բացակայում է՝ ներքևի ձախ և վերևի աջ (ոչ սահմանային) վանդակներում (12.9% և 19.4%), այսինքն դեպքերի մոտ 1/3-ում (32.3%): Ընդ որում, կոգնիտիվ դիսոնանսի բնույթը և ծավալները կոռուպցիան ***Նորմա, Գործիք*** և ***Այլասերում*** համարողների մոտ համարյա չեն տարբերվում միմյանցից: Այսինքն՝ այն կախված չէ կոռուպցիոն դիրքորոշումներից:

ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Եթե կոռուպցիան համակարգային երևույթ է, ապա այն պետք է, որ ինտեգրված լինի անհատի տարբեր պատկերացումների, դիրքորոշումների և կողմնորոշումների համալիրներում:

Այս գլխում դիտարկվում են դրանց երկու համախմբություններ, որոնց վերլուծության և ընդհանրացման արդյունքում կազմավորվել են ուսանողության աշխարհընկալումների փոխկապակցված համալիրներ: Դատողությունների երկու դիտարկված համախմբություններն ընտրված են այնպես, որպեսզի դրանք, մի կողմից ընդգրկեն Հայաստանի առջև կանգնած իրական խնդիրները (որոնք սահմանված են տարբեր հետազոտությունների, կառավարման մարմինների և փորձագիտական գնահատականների արդյունքում), իսկ մյուս կողմից, որպեսզի պարունակեն իրարից բավականաչափ «հեռու» գտնվող խնդիրներ, այդպիսով ընդարձակելով աշխարհայացքային համալիրի բովանդակությունը:

Դիտարկված երկու համախմբություններից առաջինում բացահայտորեն ներդրված է կոռուպցիայի հիմնախնդիրը, իսկ երկրորդում՝ ներդրված են այնպիսի դիրքորոշումներ, որոնք, չնայած անբացահայտ, սակայն տրամաբանորեն ընդունելի կերպով, առնչվում են կոռուպցիոն դիրքորոշումների հետ:

Համալիրները կառուցվել են գործոնային վերլուծության կիրառմամբ: Դրանք, բնականաբար, չեն սահմանափակվում գործոնային վերլուծությանը մասնակցած պարամետրերի բովանդակությամբ, կարող են պարունակել նաև այլ դիրքորոշումներ, սակայն կառուցված համալիրները, լինելով պարամետրերի խմբերի ասոցիացիաների միասնական վերլուծության արդյունք, ավելի բովանդակալից են արտապատկերում գոյություն ունեցող իրական բարդ համալիրները:

Դիրքորոշումների և պատկերացումների համալիրները. Մոդել 1.

Ուսանողներին առաջադրված առաջին համախմբությունն իրենից ներկայացնում էր Հայաստանում առկա 11 հասարակական խնդիրների ցանկ:

> Այդ խնդիրները առաջարկվել է գնահատել երկու սանդղակներով: Նախ դրանց կարևորության աստիճանը գնահատվել է ***միմյանցից անկախ***՝ կիրառելով 1-5 ինտեր-

վալային սանդղակը, որտեղ 1-ը նշանակում էր ամենացածր կարևորությունը, իսկ 5-ը՝ ամենաբարձր գնահատականը: Որից հետո՝ երբ խնդիրների ցանկը անկախ գնահատականների ձևավորման հետևանքով ***արդեն ծանոթ էր հարցվողին***, առաջարկվել է ընտրել իր կարծիքով այդ 11 խնդիրներից երեք ամենակարևորները:

Այլընտրանքային սանդղակների կիրառությունը տվել է փոխլրացնող արդյունքներ:

Աղյուսակ 29-ում տրված են առաջադրված 11 խնդիրների երկու տիպի գնահատումների արդյունքները:

Աղյուսակ 29. Ուսանողությանը հուզող խնդիրների կարևորության գնահատականները

Պատասխաններ	I	II	III	Ընդ.	5+4
3. Երիտասարդության համար մասնագիտական և բարձր վճարվող աշխատանք գտնելու դժվարությունները	22.3%	17.5%	13.1%	52.9%	88.5%
11. Աղքեջանի հետ պատերազմի վերսկսման վտանգը	12.7%	11.1%	17.8%	41.6%	79.6%
1. Հասարակության մեջ առկա աղքատությունը և անհավասարությունը	23.5%	9.7%	8.9%	42.1%	83.2%
7. Հայաստանում կաշառակերության դեմ պայքարը	5.2%	8.3%	6.5%	20.0%	75.7%
8. Մարդու իրավունքների ցածր պաշտպանվածությունը	6.4%	11.5%	11.0%	28.9%	78.7%
10. Բնության պահպանությունը՝ անտառների վիճակը, հողերի անապատացումը, բնության և բնակավայրերի աղտոտումը	2.4%	7.5%	9.7%	19.6%	70.3%
5. ԼՂՀ անկախության ճանաչումը միջազգային հանրության կողմից	11.3%	11.5%	8.6%	31.4%	70.0%
2. Մարդկանց միջև վստահության և համագործակցության պակասը	5.0%	8.1%	6.5%	19.6%	67.6%
4. Հայաստանի զարգացման հստակ նպատակների և հեռանկարների բացակայությունը	5.0%	5.2%	6.3%	16.5%	69.2%

9. Փոքր բիզնեսի իրավունք-ների ցածր պաշտպանվա-ծությունը	2.0%	5.0%	5.7%	12.7%	56.9%
6. Հայաստանի վերածումը գավառական, հետամնաց երկրի	1.8%	3.4%	3.4%	8.6%	50.1%
Այլ	2.2%	1.2%	2.6%	6.0%	
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**		

I - Առաջին ամենակարևոր խնդիրը:
II – Երկրորդ ամենակարևոր խնդիրը:
III - Երրորդ ամենակարևոր խնդիրը:
Ընդ. – Տվյալ խնդրին տրված I, II և III կարևորությունների ընդհանուր քանակը:
5+4 – Տվյալ խնդրին տրված ամենաբարձր (5 և 4) գնահատականների գումարը:

Առաջնահերթ կարևորության տեսակետից (I կարևոր խնդիրը) ուսանողության ուշադրության կենտրոնում են՝ սեփական ապագայի (աշխատանքի, կարիերայի) հետ կապված խնդիրները (22.3%), հասարակության աղքատությունը (23.5%) և հայրենիքի անվտանգության հարցերը՝ նոր պատերազմի վտանգը (12.7%) և ԼՂՀ անկախության ճանաչումը (11.3%): Դրանց գումարային ծավալն է՝ 69.7%: Սակայն, երբ դիտարկվում են նաև ֆոնային խնդիրները (II և II կարևորություններ ունեցող), ինչպես նաև «5+4» սյան տվյալները, ապա խնդիրների փոխակապակցվածությունների կառուցվածքը («Ընդ.» և I սյուների տվյալների համեմատությունը) բավական բարդանում է: Այդ պատճառով խնդիրների փոխկապակցվածության կառուցվածքի վեր հանման և վերլուծության համար կիրառվել է գործոնային [մաթեմատիկական] վերլուծության մեթոդը:

> Գործոնային վերլուծության կորելյացիոն մատրիցայի վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողության դիրքորոշումներում փոխկապակցված են համարյա բոլոր դիտարկված խնդիրները: Ընդ որում՝ այդ փոխկապակցվածությունն ուներ բավական բարդ բնույթ, որի հետևանքով հնարավոր չէր այդ ասոցիացիաները զատել իրարից տիպաբանորեն տարբերվող և, միաժամանակ անկախ, գործոնների: Այսինքն, դիտարկվող խնդիրների տեսակետից, ուսանող երիտասարդությունն իրենից ներկայացնում է ***«միասնական համակարգ»***, որում առկա դիրքորոշումները պայմանավորված են մի քանի հստակ արտահայտված գործոնների ազդեցությամբ, որոնք, իրենց հերթին, «կամրջված են» այլ խնդիրներով:

Գործոնային վերլուծության մի քանի տասնյակ մոդելներից ընտրվել է **Աղյուսակ** 30-ում տրված 4 օրթոգոնալ գործոններից կազմված մոդելը: Մոդելը բացատրում է պարամետրերի ընդհանուր դիսպերսիայի 56.8%-ը:

Աղյուսակ 30. Մոդել 1. Ուսանողական դիրքորոշումների համալիրի գործոնային կառուցվածքը.

Par	Գ1	Գ2	Գ3	Գ4
5. ԼՂՀ անկախության ճանաչումը միջազգային հանրության կողմից	**0.763**			
11. Ադրբեջանի հետ պատերազմի վերսկսման վտանգը	**0.606**			0.282
10. Բնության պահպանությունը, անտառների վիճակը, հողերի անապատացումը, բնության և բնակավայրերի աղտոտումը	**0.570**	0.297		
7. Հայաստանում կաշառակերության դեմ պայքարը	*0.504*	*0.378*	*0.294*	
4. Հայաստանի զարգացման հստակ նպատակների և հեռանկարների բացակայությունը	*0.339*	*0.248*	*0.248*	*0.485*
3. Երիտասարդության համար մասնագիտական և բարձր վճարվող աշխատանք գտնելու դժվարությունները		*0.377*	*0.481*	
9. Փոքր բիզնեսի իրավունքների ցածր պաշտպանվածությունը		**0.831**		
8. Մարդու իրավունքների ցածր պաշտպանվածությունը	0.265	**0.744**		
1. Հասարակության մեջ առկա աղքատությունը և անհավասարությունը			**0.800**	
2. Մարդկանց միջև վստահության և համագործակցության պակասը			**0.716**	
6. Հայաստանի վերածու-				**0.897**

մը գավառական, հետամնաց երկրի				
Ներկայացված են միայն 0.2-ից մեծ բեռնվածությունները				

«Կամրջող» խնդիրների գործոնային բեռնվածությունները տրված են շեղագիր թվերով:

Վերհանված գործոններն են.

Գործոն 1. Ազգային պահպանողականություն

5. ԼՂՀ անկախության ճանաչումը միջազգային հանրության կողմից:
11. Ադրբեջանի հետ պատերազմի վերսկսման վտանգը:
10. Բնության պահպանությունը, անտառների վիճակը, հողերի անապատացումը, բնության և բնակավայրերի աղտոտումը:

Գործոն 2. Քաղաքացիական իրավունքներ

9. Փոքր բիզնեսի իրավունքների ցածր պաշտպանվածությունը:
8. Մարդու իրավունքների ցածր պաշտպանվածությունը:

Գործոն 3. Սոցիալական համագործակցություն

1. Հասարակության մեջ առկա աղքատությունը և անհավասարությունը:
2. Մարդկանց միջև վստահության և համագործակցության պակասը:

Գործոն 4. Մոդեռնիզմ

6. Հայաստանի վերածումը գավառական հետամնաց երկրի:

Մոդելը ցույց է տալիս, որ այն ընդհանուր հասարակական համատեքստի ազդեցությունը (վերը դիտարկված չափով), որում գտնվում է Երևանի ուսանողությունը, կարող է արտահայտվել վեր հանված 4 ուժերի միջոցով, որոնց բովանդակությունը բացահայտված է գործոնների պայմանական անուններում և գործոնները կազմավորող դատողությունների (պարամետրերի) բովանդակություններում:

Յուրաքանչյուր գործոնի «առկայության չափը» տվյալ ուսանողի մոտ նշանակում է, որ նա ավելի բարձր է գնահատում այդ գործոնի բաղկացուցիչ դատողությունների կարևորությունը Հայաստանի հասարակության համար:

Հարկ է նշել, որ հարցախումբը, որի հիման վրա դուրս են բերվել գործոնները, պարունակում է «դրական երանգավորված» դատողություններ: Այսինքն՝ որոշակի դատողության հետ բարձր համաձայնության աստիճանը կարող է մեկնաբանվել որպես տվյալ ուսանողի մոտ դիտարկվող «հասարակական առաքինության» առկայություն և գնահատել այդ առկայությունը որպես դրական երևույթ: Սակայն դատողությունների հետ համաձայնության ցածր աստիճանից ***չի բխում,*** որ տվյալ անձին կարելի է դասել «հասարակական առաքինություններից զուրկ», քանի որ նրա մոտ այդ դատողությունները կարող են փոխարինված լինել «էլ ավելի կարևոր հասարակական

առաքինություններով», որոնք առկա չէին դիտարկված հարցախմբում:

Մյուս կողմից, տվյալների հիման վրա ուսանողների դիրքորոշումների հասարակական «բարոյականացումը» տվյալ գործոնների շրջանակում ընդունելի չէ, քանի որ երիտասարդության համար առավել կարևոր խնդիրը՝ «Երիտասարդության համար բարձր վճարվող մասնագիտական աշխատանքի բացակայությունը» ***տարբալուծված է*** դուրս բերված գործոնների մեջ:

Բացահայտ հասարակական նեգատիվիզմ արտահայտող դատողություններն ընդգրկված են մեկ այլ՝ 17 դատողություն պարունակող հարցախմբում, որոնք կդիտարկվեն հաջորդիվ (տե՛ս Մոդել 2):

Գծագիր 34-ում սխեմատիկ ձևով տրված են վեր հանված 4 գործոնների միջև առկա կապերը: Պարամետրերի (սխեմայում՝ երկրորդ շարք) և գործոնների (սխեմայում՝ առաջին շարք) միջև սլաքների հաստությունը ցույց է տալիս առավել ուժեղ դրական ասոցիացիաները:

Սխեման կարող է կիրառվել ուսանող երիտասարդության շրջանում տարվող ռազմավարական գործունեության մշակման համար:

Գծագիր 34. Երևանի ուսանողության աշխարհայացքային մոդելը



Մասնավորապես, սխեմայից բխում է, որ.

T: Կոռուպցիայի, Հայաստանի զարգացման հեռանկարների և երիտասարդության համար բարձր վճարվող մասնագիտական աշխատա-

տեղերի ստեղծման խնդիրներն առավել համապատասխան են ուսանողության նկատմամբ միասնական և անհակասական ռազմավարությունների մշակման և գործարկման համար,

քանի որ այդ խնդիրները շաղկապում են «տարբեր հարթություններում» գտնվող գործոնները:

Տ: Առավել բազմազան են «Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը» պարամետրի կապերը: Այն ասոցացված է բոլոր գործոնների հետ:

Ուսանող երիտասարդությանը հուզող խնդիրներն ավելի լայն համատեքստների հետ շաղկապելու համար կատարվել է կոռուպցիայի, ԼՂՀ հարցի կարգավորման և աշխատատեղերի ստեղծման խնդիրների դիրքավորվածության համեմատություն Երևանի ուսանողության և Երևանի չափահաս բնակչության պատկերացումներում:

Դրա համար կիրառվել են 2002 թվականին Երևանի բնակչության շրջանում իրականացված զանգվածային հետազոտության արդյունքները[63]: Այդ հետազոտության ընթացքում նույնպիսի 5-աստիճան ինտերվալային սանդղակով գնահատվել էին հինգ խնդիրներ: Բոլոր հինգ խնդիրների ամենաբարձր՝ 5 և 4 գնահատականների գումարային բաշխումը տրված է Աղյուսակ 31-ի «1» սյունակում: Նույն աղյուսակի «3» սյունակում տրված են **Աղյուսակ** 29-ի համապատասխան տվյալները:

Դիտարկվող հետազոտությունների արդյունքների համադրելիությունը հիմնված է երկու ենթադրությունների վրա.

Առաջինը. անհատի մոտ հասարակական դիրքորոշումների և գնահատականների ձևավորումը, ի թիվս այլ կոգնիտիվ և էմոցիոնալ գործոնների, կատարվում է նրա անհատական և կենցաղային պատկերացումների և գնահատականների ***էքստրապոլյացիայի*** և ***մակրոսոցիալական ատրիբուցիայի*** ազդեցության ներքո: Առաջինն իրենից ներկայացնում է այն երևույթը, երբ անհատն իր անձնական կարևոր խնդիրները (և դրանց գնահատականները) ***պրոյեկտում*** է հասարակական խնդիրների վրա, իսկ երկրորդը, երբ անհատն իր խնդիրները ***շաղկապում*** է մակրոսոցիալական իրավիճակներին, գործընթացներին և հարաբերություններին[64]:

Նման ենթադրության դեպքում, 2002 թվականի հետազոտության ժամանակ Երևանի բնակչության կողմից դիտարկված «Աշխատատեղերի

---

63 Մանուկյան Ս.Ա. Անցումային գործընթացները հայ հասարակության մեջ, Ձեռագիր, ուսումնասիրությունը իրականացվել է 2002թ., հետազոտության ընտրանքի ծավալը 500, ընտրանքը ռեպրեզենտատիվ էր Երևանի 18 և բարձր տարիքի բնակչության համար՝ ըստ սեռի և տարիքի:

64 Дилигенский Г.Г., Социальнополитическая психология, М., “Наука”, 1994.

ստեղծում» խնդիրը՝ ***որոշակի մոտավորությամբ,*** կարելի է համարժեք համարել 2005 թվականի սկզբում Երևանի ուսանողների հետազոտության դեպքում՝ «Երիտասարդության համար մասնագիտական և բարձր վճարվող աշխատանք գտնելու դժվարությունները» խնդրին:

Նույն ենթադրությամբ՝ համարժեք են ***ենթադրվել*** նաև Երևան 2002թ. հետազոտության «ԼՂՀ հարցի կարգավորումը» հարցը և Ուսանողներ 2005թ. հետազոտության՝ «ԼՂՀ անկախության ճանաչումը միջազգային հանրության կողմից» հարցերը:

Երկրորդը. արտամղելու համար ստացված պատասխաններում հարցախմբերի կառուցվածքների տարբերության ազդեցությունը (Երևան 2002թ. հարցախումբը պարունակում է 5 հարց, իսկ Ուսանողներ 2005թ. հետազոտության հարցախումբը՝ 11 հարց) կիրառվել են յուրաքանչյուր հարցախմբում համապատասխան խնդիրների z-արժեքները (նորմավորված արժեքները): Դրանք տրված են Աղյուսակ 25-ի «2» և «4» սյունակներում: z-արժեքները հաշվարկվել են յուրաքանչյուր հետազոտության համապատասխան հարցախմբերի համար:

Կիրառված մեթոդի համապատասխանության օգտին է վկայում այն փաստը, որ երկու հետազոտություններում էլ ամենաբարձր գնահատականները ստացած «Աշխատատեղերի ստեղծում» խնդրի z-արժեքները բավական մոտ են միմյանց՝ 1.62 և 1.56:

Աղյուսակ 31. Երևանի բնակչության և ուսանողության մոտ հասարակական որոշ խնդիրների դիրքավորվածության համեմատություն

Խնդիր	Երևան, 2002	z-արժեք, 2002	Ուսանողներ, 2005	z-արժեք, 2005
	1	2	3	4
Աշխատատեղերի ստեղծում	61.8%	1.62	88.5%	1.56
Օրենքների կատարումը բոլորի կողմից	48.5%			
Արտագաղթի կասեցումը	34.5%			
Կաշառակերության վերացումը	31.1%	**-0.66**	75.7%	**0.37**
ԼՂՀ հարցի կարգավորումը	24.5%	-1.17	70.0%	-0.17

Հարկ է նշել, որ գնահատականների նորմավորման արդյունքում տվյալներից ***արտամղվել է նաև*** Երևանի ուսանողների և ամբողջ բնակչության գնահատականների միջև ևս մեկ էական տարբերություն՝ այն, որ ուսանողները (երիտասարդները) հակված էին նշանակալից ավելի բարձր գնահատելու իրենց ներկայացված ***բոլոր*** խնդիրները:

Պարզ համեմատության դեպքում այդ շեղումը կարող էր խաբուսիկ մեկնաբանությունների տեղիք տալ:

Կոռուպցիայի խնդրի վերահաշվարկված z-արժեքների համեմատությունից (որը հավասար է «-0.66» 2005 թվականի հետազոտության համար և «0.37» 2005 թվականի հետազոտության համար) բխում է, որ

T: Երևանի ուսանողության համար 2005 թվականի սկզբին կոռուպցիայի հիմնախնդիրն ուներ նշանակալից ավելի բարձր կարևորություն, քան Երևանի ամբողջ հասարակության համար 2002 թվականին:

Ընդ որում, եթե նկատի ունենանք, որ հասարակական կարծիքը դիտարկվող երկարաժամկետ խնդիրների համար բավական դանդաղ է փոփոխվում, ինչպես նաև համապատասխան գնահատականների միջև մեծ տարբերությունը, ապա, տվյալ դեպքում, ժամանակի ազդեցությունը կարելի է համարել ոչ նշանակալից:

Աշխարհայացքային առաջին համալիրը և կոռուպցիոն դիրքորոշումը

Այժմ դիտենք, թե ինչպես են ազդում կոռուպցիայի նկատմամբ ուսանողների դիրքորոշումները իրենց կողմից հասարակական խնդիրների կարևորությանը տրված գնահատականների վրա:

Գծագիր 35 -ում տրված են **Աղյուսակ** 29-ի «5+4» սյունակի տվյալների միջև տարբերությունները ուսանողների երկու խմբերի համար, նրանց ովքեր կոռուպցիան համարում են ***Այլասերում*** և նրանց, ովքեր կոռուպցիան համարում են ***Նորմա*** կամ ***Գործիք***:

Գծագիր 36. Կոռուպցիոն անհանդուրժողականության աճի ազդեցությունը հասարակական խնդիրների կարևորության գնահատականների վրա



Գծագրից բխում է, որ.

T: Կոռուպցիային որպես Այլասերում վերաբերվող ուսանողներն ավելի բարձր են գնահատում բոլոր հասարակական խնդիրների կարևորությունները, կոռուպցիան որպես Նորմա կամ Գործիք ընկալողների համեմատ: Բացառություն է կազմում միայն «Փոքր բիզնեսի անպաշտպանությունը» խնդիրը, որն ավելի կարևոր է գնահատված կոռուպցիան որպես Նորմա կամ Գործիք ընկալողների կողմից:

Ընդ որում, հատկանշական է, որ

T: Կոռուպցիոն անհանդուրժողական դիրքորոշման դեպքում առավել բարձր գնահատականներ են ստանում.

- ***Կոռուպցիայի դեմ պայքարը (հնչը բնական էր սպասել),***
- ***ՀՀ կառավարության կողմից Հայաստանի համար կարևորագույն ռազմավարական խնդիր սահմանված՝ «Հասարակության մեջ առկա աղքատությունը[65] և***
- ***Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայությունը:***

Կարևոր հետևություն է բխում այն փաստից, որ կոռուպցիան որպես Այլասերում ընկալողները նշանակալից ավելի կարևորում են նաև «Հայաստանի զարգացման հեռանկարի բացակայության» խնդիրը և քանի որ վերջինս ասոցացված է ուսանողի մասնագիտական գիտելիքների ավելի բարձր ինքնագնահատականի հետ, (տե՛ս Գծագիր 37), հետևաբար, կոռուպցիայի դեմ պայքարի անտեսումը կբերի ապագա բարձրորակ մասնագետների կողմից մեր հասարակության մեջ իրենց արժանի տեղը չգտնելու ռիսկի և միգրացիոն հակվածության աճին:

Այս դատողություններից և այն փաստից, որ «Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը» պարամետրը ասոցացված է բոլոր չորս գործոնների հետ, բխում է ևս մեկ կարևոր հետևություն.

---

65 ... և անհավասարությունը»: Ի դեպ՝ ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում անհավասարության կրճատումը չի դիտվում որպես ***կարևոր*** թիրախ, քանի որ, չնայած ԱՀՌԾ-ում այն [ձևականորեն] նշված է որպես թիրախ, սակայն, դատելով Ջինիի գործակցի նախատեսվող կրճատումից, այնուամենայնիվ, 2015 թվականին՝ ԱՀՌԾ իրականացումից հետո, Հայաստանում մնալու է աշխարհում ամենաբարձրերից մեկը: Տե՛ս

ԱՀՌԾ, Երևան, 2003:

T: Առավել բարձր առաջադիմությամբ ուսանողներն առավել բարձր են գնահատում հասարակական խնդիրները:

Գծագիր 37. Հայաստանի զարգացման հեռանկարների կարևորության կախվածությունն ուսանողի մասնագիտական գիտելիքների ինքնագնահատականից



Դիրքորոշումների և պատկերացումների համալիրները. Մոդել 2.

Այժմ դիտարկենք տարբեր աշխարհայացքային դիրքորոշումներ, պատկերացումներ և կողմնորոշումներ պարունակող դատողությունների երկրորդ համախումբը, որը կազմված էր 17 հարցերից, որոնք գնահատվել են 1-5 ինտերվալային սանդղակով, ***միմյանցից անկախ:***

Ինչպես արդեն նշվել է, այստեղ արդեն առկա են հասարակության դիրքորոշումների և հասարակական վարքի ինչպես կոնստրուկտիվ, այնպես էլ դեստրուկտիվ դատողություններ: Այս դատողությունների համախմբությունը և դրա կառուցվածքային վերլուծությունն ունի նաև կոռուպցիայի խնդրից անկախ ինքնուրույն հետաքրքրություն: Այնուամենայնիվ, դրանց շարքում կան այնպիսիք, որոնք, ակնհայտորեն, ասոցացված են կոռուպցիոն դիրքորոշումների հետ:

Աղյուսակ 32-ում տրված են դիտարկվող դատողությունների հետ համաձայնության ամենաբարձր աստիճանների (5 և 4) գումարային տոկոսները:

Աղյուսակ 32. Հասարակության և հասարակական բարքերի վերաբերյալ Երևանի ուսանողության դիրքորոշում

Հարց	*5+4*
15. Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխ-ներն ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:	**87.4%**
8. «Արյունով նվաճվածը՝ փողով չի վաճառվում»:	**80.3%**
11. Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին:	**76.1%**
12. Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ վճռում է փողը:	**74.2%**
9. Ինչքան էլ քաղաքակրթվեն, միևնույն է՝ թուրքը մնում է թուրք:	**69.0%**
5. Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումն առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար:	64.8%
17. Զանգվածային լրատվամիջոցները, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս հավաստի տեղեկություններ:	58.6%
2. Դեմոկրատիան պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար:	58.1%
16. Հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր:	57.4%
13. Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «հաղթում է ուժեղը»:	56.7%
1. Այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտո-րիտար կառավարումը:	50.1%
3. Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն	48.8%
14. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն է և հիմարություն:	47.1%
6. Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը:	44.6%
7. Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը:	31.2%
4. Սոցիալիզմից հրաժարվելով, մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք:	25.1%
10. Մեզ մոտ իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևերը ցույցերն ու միտինգներն են:	24.8%

Տվյալներում հատկանշական է հինգ դատողությունների հետ համա-ձայնության տարածվածության բարձր աստիճանները, որոնցից

յուրաքանչյուրը ներկայացնում է հասարակական դիրքորոշումների որակապես տարբերվող տարածություններ: Դիտարկված դատողությունների շրջանակում.

T: Երևանի ուսանողության մոտ առավել տարածված դիրքորոշումներն են.

- *Հայաստանում օլիգարխների ազդեցության աճը,*
- *Հայրենի տարածքը զիջելու անթույլատրելիությունը,*
- *Երիտասարդության հասարակական ակտիվության հրամայականը,*
- *Ժամանակակից հայ հասարակության մեջ փողի ուժի անվերապահ գերակայությունը,*
- *Թշնամու արխետիպային սիմվոլի շաղկապվածությունը «թուրքի» հետ:*

Երևանի ուսանողության աշխարհայացքային դիրքորոշումները ձևավորող գործոնները

Դիտարկվող 17 դիրքորոշումների համախմբությունն ընդհանրացնելու համար իրականացվել է դրանց միասնական գործոնային վերլուծություն որի արդյունքում որպես օպտիմալ լուծում է դիտվել ստորև ներկայացվող 6 օրթոգոնալ գործոններից կազմված մոդելը:

Յուրաքանչյուր գործոնի տրված է պայմանական անվանում, որին հաջորդում է այն պայմանավորող (կազմող) դատողությունների շարքը (որոնց բաշխումները տրված են Աղյուսակ 32-ում), որոնք բավականաչափ պատկերավոր կերպով տալիս են գործոնի ազդեցության տակ ձևավորվող անհատի (իդեալական տիպի) կերպարը:

Գործոն 1. Պրագմատիզմ

12. «Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ վճռում է փողը»:
15. «Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխները ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:»
14. «Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է»:
13. «Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «Հաղթում է ուժեղը»:

Գործոն 2 Եվրոպամետ լավատեսություն

16. «Հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր»:

5. «Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումը առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար»:

7. «Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը»:

Գործոն 3. Ազգային պահպանողականություն[66]

8. «Արյունով նվաճվածը փողով չի վաճառվում»:

6. «Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը»:

9. «Ինչքան էլ քաղաքակրթվեն միևնույնն է՝ թուրքը մնում է թուրք»:

Գործոն 4. Ակտիվ ժողովրդավարություն

11. «Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին»:

2. «Դեմոկրատիան պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար»:

Գործոն 5. Իշխանամետ քաղաքականություն

1. «Այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտորիտար կառավարում»:

17. «Զանգվածային լրատվամիջոցները, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս հավաստի տեղեկություններ»:

3. «Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն»:

Գործոն 6. Ակտիվ սոցիալիստական դիրքորոշման գործոն

10. «Մեզ մոտ իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևերը ցույցերն ու միտինգներն են»:

4. «Սոցիալիզմից հրաժավելով՝ մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք»:

Աղյուսակ 33-ում տրված է ներկայացված գործոնային մոդելի կառուցվածքային մատրիցան: Վեց գործոնները

---

66 Հարկ է նշել, որ այստեղ կիրառված «Ազգային պահպանողական» տերմինի բովանդակությունը չի համընկնում դրա քաղաքագիտական բովանդակության ամբողջ ծավալին, քանի որ տվյալ դեպքում բացակայում է քաղաքագիտական բովանդակության ***տնտեսական բաղադրիչը:***

բացատրում են 17 պարամետրերի ընդհանուր դիսպերսիայի 52.6%-ը:

Աղյուսակ 33. Աշխարհայացքային երկրորդ համախմբության գործոնային մոդելի կառուցվածքային մատրիցան

Դատողություն	*Գ1*	*Գ2*	*Գ3*	*Գ4*	*Գ5*	*Գ6*
12. Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ վճռում է փողը:	**0.745**		0.204			
15. Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխները ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:	**0.627**			0.372		
14. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է:	**0.525**				0.371	
13. Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «Հաղթում է ուժեղը»:	**0.518**	0.378				0.207
16. Հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր:		**0.688**		0.202		
5. Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումն առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար:		**0.686**				
7. Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը:		**0.554**	0.332	-0.310		0.240
8. «Արյունով նվաճվածը փողով չի վաճառվում»:			**0.730**			
9. Ինչքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է՝ թուրքը մնում է թուրք:	0.231		**0.530**		0.316	
6. Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը:		-0.342	**0.598**		0.226	

11. Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին:				**0.679**		
2. Դեմոկրատիան պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար:				**0.600**		
1. Այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտորիտար կառավարում:					**0.620**	
17. ԶԼՄ-ները, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս հավաստի տեղեկություններ:				0.359	**0.580**	
3. Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն:	0.282			-0.263	**0.418**	0.241
10. Մեզ մոտ իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևերը ցույցերն ու միտինգներն են:				0.311	-0.224	**0.715**
4. Սոցիալիզմից հրաժարվելով՝ մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք:					0.273	**0.663**

Վեր հանված 6 գործոններից երեքն իրենց մեջ ընդգրկում են Աղյուսակ 32-ի առավել տարածված 5 դիրքորոշումները: Դրանցից՝ ***Պրագմատիզմն*** իր մեջ ընդգրկում է Օլիգարխների ազդեցության աճի և Փողի գերակա նշանակության պարամետրերը, իսկ ***Ազգային պահպանողականությունը***, միավորել է Հայրենիքի տարածքի պահպանության և արխետիպային թշնամուն ներկայացնող պարամետրերը: Երիտասարդության հասարակական ակտիվության իմպերատիվը վերածվել է առանձին ***Երիտասարդ ժողովրդավարություն*** գործոնի առանցքին:

Երևանի ուսանողության աշխարհայացքային շերտերը

Բնականաբար, չի ենթադրվում, որ ուսանողությունը կազմված է «իդեալական տիպերին» պատկանող անհատներից: Յուրաքանչյուր «իրական» ուսանող ընդհանուր դեպքում կարող է առավել կամ նվազ

չափով ունենալ բոլոր վեց գործոններից յուրաքանչյուրով պայմանավորված դիրքորոշումներ:
Դիտարկելու համար երկրորդ մոդելի գործոնների ազդեցության տակ կազմավորված Երևանի ուսանողության փաստացի կառուցվածքը, իրականացվել է ուսանողների կլաստերացում 6-գործոնային տարածության մեջ, որի արդյունքում ստացվել է աշխարհայացքային պատկերացումներով միմյանց նման ուսանողական 5 իրական շերտեր: Դրանք ներկայացված են ստորև տրված Գծագրում:

Ուսանողության աշխարհայացքային շերտերը կազմավորվել են երկաստիճան կլաստերային վերլուծության միջոցով: Օպերացիոնալ տեսակետից ուսանողության աշխարհայացքային շերտն իրենից ներկայացնում է որոշակի կլաստեր:

Յուրաքանչյուր կլաստերում գործոնների ազդեցության չափը որոշվում է 0-ից դրանց արժեքների հեռավորությամբ: Ինչքան գործոնի արժեքը տվյալ կլաստերում ավելի հեռու է հորիզոնական առանցքի 0-ից, այնքան ավելի բնութագրական է այդ գործոնը տվյալ կլաստերի մեկնաբանության (կլաստերում ընդգրկված ուսանողների նկարագրության) համար:

Գծագիր 38. Երևանի ուսանողության աշխարհայացքային շերտերը



Շերտ 1. Պրագմատիկ ազգայնական

Այս շերտի հիմնական բնութագիրն է ***պրագմատիզմը***՝ օրենքով շարժվելը հիմարություն է, հաղթում է ուժեղը, դրա ապացույցն են օլիգարխները և վերջապես՝ ամեն ինչ վճռում է փողը: Մյուս կողմից, այս շերտում բարձր է ***ազգային պահպանողականությունը***՝ չի կարելի զիջել հայրենի տարածքները, եվրոպական արժեքները խորթ են հայերին, իսկ թուրքը ավանդական և անփոփոխ թշնամի է: Նրանք հակադրվում են ***եվրոպամետ լավատեսությանը*** (որ Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլը, և Եվրոպայի հետ հարաբերությունների զարգացումը լավ հեռանկարներ է բացում Հայաստանի համար, որը կիրականանա 5-10 տարվա ընթացքում) և երիտասարդ ժողովրդավարին (որը համարում է, որ ժողովրդավարությունը պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար, իսկ դրա նախապայմաններից է երիտասարդության ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին):

Հարկ է նշել, որ այստեղ շատ թույլ, սակայն վիճակագրորեն հավաստի կերպով կա նաև սոցիալիստական դիրքորոշում:

Այսպիսով, այս խմբի հիմնական նկարագրությունից դուրս է բերվում նաև դրա որոշակի սինթետիկությունը և ***պատկերացումների քիմերայնությունը***[67]:

Շերտ 2. Մարգինալ

Այս շերտը բնութագրվում է պրագմատիզմի, երիտասարդական ժողովրդավարական ակտիվության և ազգային պահպանողականության բացակայությամբ, այսինքն այն գործոնների և պատկերացումների դեֆիցիտով, որոնք պարունակում են ***որևէ մոտիվացիա:*** Նրանց մոտ որոշակիորեն ցածր է եվրոպական դիրքորոշման նկատմամբ վերաբերմունքը:

Միակ գործոնը, որն ունի միջինից բարձր արժեք՝ դա ակտիվ սոցիալիստական դիրքորոշումն է, որը սակայն չունի բավարար հավաստիություն այդ շերտի նույնականացման համար: Այն ընդամենը պոտենցիալ է:

---

67 ***Պատկերացումային քիմերայնությունը*** ռացիոնալիզացված վիճակում նշանակում է ***հասարակական վարքի բազմակի ստանդարտների առկայություն,*** իսկ չռացիոնալիզացված վիճակում՝ ***կոգնիտիվ դիսոնանս:***

Շերտ 3. Երիտասարդ ակտիվ ժողովրդավար

Այս շերտի հիմնական բնորոշիչն է երիտասարդության հասարակական ակտիվության գործոնը՝ երիտասարդությունը պարտավոր է մասնակցել երկրում ընթացող հասարակական-քաղաքական իրադարձություններին, որը զուգորդված է ժողովրդավարական դիրքորոշումներով՝ ժողովրդավարությունը պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից և բարեկեցիկ երկիր դարձնելու համար:

Այս շերտում մերժելի է ***իշխանամետ քաղաքենիությունը*** և ***պրագմատիզմը,*** իսկ մյուս կողմից՝ նրանց մոտ բարձր է ***ազգային պահպանողականության*** գործոնը: Վերջինիս տեսակետից այս շերտը երկրորդն է բոլոր 5 խմբերի շարքում:

Հարկ է նշել, որ այս շերտի իդենտիֆիկացիայի համար ***եվրոպամետ լավատեսությունը չունի որևէ նշանակություն,*** ինչը որոշակիորեն համապատասխանում է ***ազգային պահպանողականության*** գործոնի բարձր արժեքների կարևորության հետ որպես շերտի բնութագրի:

Շերտ 4. Իշխանամետ ժողովրդավար

Այս շերտի հիմնական երկու բնութագրերն են՝ ***ակտիվ ժողովրդավարությունը*** (երիտասարդությունը պարտավոր է մասնակցել երկրում ընթացող հասարակական քաղաքական իրադարձություններին և ժողովրդավարությունը պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից և բարեկեցիկ երկիր դարձնելու համար) և ***իշխանամետ քաղաքենիությունը*** (Հայաստանին այսօր անհրաժեշտ է կենտրոնացված կառավարում, անվտահություն ՁԼՄ-ների և Հայաստանում արդար ընտրությունների նկատմամբ):

Այս շերտին խորթ չէ նաև ***պրագմատիզմը*** (օրենքով շարժվելը հիմարություն է, հաղթում է ուժեղը, դրա ապացույցն են օլիգարխները և վերջապես՝ ամեն ինչ վճռում է փողը):

Ի՞նչը հատկապես ընդունելի չէ այս շերտում, դա ***ազգային պահպանողականությունն է*** և ***ակտիվ սոցիալիստական*** դիրքորոշումը («Սոցիալիզմից հրաժարվելով մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք» և «իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևերը ցույցերն ու միտինգներն են»):

Այս շերտի աշխարհայացքային կառուցվածքին նույնպես հատկանշական է ***պատկերացումների քիմերայնությունը:***

Շերտ 5. Եվրոպամետ լավատես

Այս շերտի հիմնական բնութագրիչն է ***եվրոպամետ լավատեսությունը*** (Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումն առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար: Որպես դրա ուղղությամբ քայլ՝ Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը և, այդպես շարունակելով, հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր):

Այս հիմնական բնութագիրը նրանց մոտ որոշակիորեն զուգորդված է ***իշխանամետ քաղաքացիության*** հետ (նրանք համարում են, որ այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտորիտար կառավարումը չնայած խոսքի ազատությունը և ԶԼՄ-ները կայացել են, այնուամենայնիվ դրանք՝ օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս են հավաստի տեղեկություններ և ավելի շուտ՝ Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն):

Շերտի աշխարհայացքային պատկերացումների ֆոնային ռեժիմում առկա է նաև որոշակի չափով ***ազգային պահպանողականությունը*** (թուրքը, ամեն դեպքում, թշնամի է և արյունով հետ նվաճված Հայրենիքը, այնուամենայնիվ, չարժե փողով վերադարձնել, եվրոպական արժեքներն էլ գուցե որոշակի չափով հակադրվում են ազգային արժեքներին և վտանգ ներկայացնում դրանց համար):
Շերտում՝ ***պրագմատիզմը*** ընտրանքային միջինի մակարդակի վրա է:
Եվրոպամետ լավատեսներին նույնպես հատկանշական է ***պատկերացումների քիմերայնությունը:***

> Նկարագրված ուսանողական պատկերացումային շերտերում, ցանկության դեպքում, կարելի է տեսնել ներկայիս Հայաստանի քաղաքական կոնսենսուսի արտապատկերումը իր միջխմբային և ներխմբային կապերով ու հակասություններով:

Գծագիր 39-ում տրված են վեր հանված ուսանողական աշխարհայացքային տիպերի համեմատական ծավալները: Գծագրում առկա է նաև այն ուսանողական շերտը, որի անդամները չեն տիպականացվել խմբավորման ընթացքում, քանի որ ներկայացվող մոդելը (ինչպես և ցանկացած այլ մոդել) ունի սահմանափակ նշանակություն և բացատրողական ուժ: Չխմբավորված են մնացել ուսանողների մոտ 10.8%-ը:

Գծագիր 39. Երևանի ուսանողության աշխարհայացքային տիպերի ծավալները



[illegible]ոն դիրքորոշումը

Երկրորդ մոդելի պարամետրերի հիման վրա վեր հանված վեց գործոններից երեքն ունեն վիճակագրականորեն նշանակալից ազդեցություն կոռուպցիոն դիրքորոշումների փոփոխության վրա: Դրանք են՝ ***Պրագմատիզմը, Ազգային պահպանողականությունը և Ակտիվ ժողովրդավարը:***

Ստորև տրված աղյուսակում ներկայացված է կոռուպցիոն անհանդուրժողականության փոփոխությունը նկարագրող մոդելի կառուցվածքը: Տրված է այն մոդելը, որտեղ առկա են բոլոր 6 գործոնները՝ պատկերացում տալու համար այն հարցի վերաբերյալ, թե ինչպիսին կարող է լինել մնացած գործոնների ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշումների վրա[68]:

---

[68] Հարկ է նշել, որ վիճակագրական հավաստիության նվազագույն ընդունելի մակարդակը, ըստ էության, ***բանական պայմանավորվածությունների*** արդյունք է և, հետևաբար, այդ պայմանավորվածություններին մոտ գտնվող արդյունքների հաղորդումը կարող է օգտակար լինել որոշ հետազոտողների համար:

Աղյուսակ 34. Հասարակական դիրքորոշումների գործոնների ազդեցությունները կոռուպցիոն դիրքորոշման վրա

Անկախ փոփոխականներ	B	Std. Error	Sig.	Exp(B)
Գործոն 1. Պրագմատիզմ	-.433	.106	.000	**.648**
Գործոն 2 Եվրոպամետ լավատեսություն	-.062	.103	.544	.940
Գործոն 3. Ազգային պահպանողականություն	.392	.106	.000	**1.480**
Գործոն 4. Ակտիվ ժողովրդավար	.400	.105	.000	**1.491**
Գործոն 5. Իշխանամետ քաղքենիություն	-.134	.103	.190	.874
Գործոն 6. Ակտիվ սոցիալիստական դիրքորոշում	-.106	.101	.291	.899

Աղյուսակ 34-ի մոդելից բխում է, որ.

T: Երբ ուսանողի մոտ մեկ միավորով աճում է Պրագմատիզմի գործոնով բեռնվածությունը, ապա շանսը, որ ուսանողի մոտ կոռուպցիոն դիրքորոշումը կլինի Այլասերում՝ նվազում է 35.2%ով:

T: Երբ ուսանողի մոտ մեկ միավորով աճում է Ազգային պահպանողականության գործոնով բեռնվածությունը, ապա հավանականությունը, որ ուսանողի մոտ կոռուպցիոն դիրքորոշումը կլինի Այլասերում՝ աճում է 48.0%ով:

T: Երբ ուսանողի մոտ մեկ միավորով աճում է բեռնվածությունը Ակտիվ ժողովրդավար գործոնով, ապա հավանականությունը, որ ուսանողի մոտ կոռուպցիոն դիրքորոշումը կլինի՝ Այլասերում աճում է 49.1%-ով:

Ակտիվ ժողովրդավար և ***Ազգային պահպանողական*** գործոնների համանման ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա հիմնավորում է «***Ենթամշակութային պատկանելության գործոններ»*** (էջ 97) պարագրաֆում ստացված արդյունքները, մասնավորապես այն, որ.

T: Կոռուպցիոն հակվածությունը ոչ թե քաղաքակրթական-մշակութային տիպերի, այլ դրանց ենթամշակութային ենթատիպերի բնութագիր է և պայմանավորված համապատասխան ենթամշակույթում գործող բարոյական նորմերով:

Այսինքն, եթե վերանանք «եվրոպական» և «ասիական» մշակութային տիպերի վարքագծային կարծրատիպերի ***ընդհանուր*** համակարգից և դիտարկենք դրանց ենթատիպերի բարոյական նորմերը և դրանցով

պայմանավորող վարքագծերը, ապա կոռուպցիոն հանդուրժողականությունը և անհանդուրժողականությունը միատեսակ կերպով են բնութագրական դրանց համար:

Ընդ որում, հարկ է նշել, որ այդ ***համանման արդյունքներն*** ստացվել են ***միմյանցից անկախ պարամետրերի վերլուծության արդյունքում,*** ինչը բարձրացնում է դրանց հիմնավորվածության աստիճանը:

Սակայն վեր հանված վեց գործոնների հիման վրա կառուցված ուսանողական շերտերում կոռուպցիոն դիրքորոշումների հետ կապված իրավիճակը փոքր ինչ այլ է: Ստորև տրված աղյուսակում ներկայացված են կոռուպցիոն դիրքորոշումների բաշխումները հինգ իդենտիֆիկացված իրական և մեկ չիդենտիֆիկացված խմբերում:

Աղյուսակ 35. Կոռուպցիոն դիրքորոշումներն իրական աշխարհայացքային շերտերում

	Չխմբավորվածներ	Շերտ 1	Շերտ 2	Շերտ 3	Շերտ 4	Շերտ 5
Նորմա	5.6%	**14.3%**	2.0%	5.0%	3.2%	**11.5%**
Գործիք	37.0%	30.8%	40.8%	22.7%	**42.9%**	32.8%
Այլասերում	57.4%	54.9%	57.1%	**72.3%**	54.0%	55.7%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Շերտ 1. Պրագմատիկ ազգայնական

Շերտ 2. Մարգինալ

Շերտ 3. Ակտիվ ժողովրդավար

Շերտ 4. Իշխանամետ ժողովրդավար

Շերտ 5. Եվրոպամետ լավատես

Աշխարհայացային համալիրների հիման վրա դուրս բերված ուսանողական շերտերը սինթետիկ խմբեր են, ավելին, ինչպես տեսանք վերևում, դրանցից երեքի աշխարհայացքային համալիրներն ունեն ակնհայտորեն ***քիմերային կառուցվածք,*** որի հետևանքով կոռուպցիոն դիրքորոշումների վրա հակադիր գործոնների փոխազդեցությունը «միջինացրել է» դրանց ազդեցությունները[69]:

---

[69] Ի դեպ դրանով է պայմանավորված ***վերլուծական գործոնների*** անհատական և խմբային վերլուծության և դրանց ազդեցության տակ ձևավորված ***իրական խմբերի*** վերլուծության զուգորդման անհրաժեշտությունը: Իրական խմբերը տալիս են օբյեկտի կառուցվածքը, իսկ վերլուծական գործոններն ***օպերացիոնալացնում*** են օբյեկտի վերափոխմանն ուղղված ռազմավարությունները:

Մասնավորապես, դիտենք ***պրագմատիկ ազգայնական*** շերտը: Այն իրենից ներկայացնում է 1998-2005թթ. հայ ուսանող երիտասարդության մեջ ձևավորված ազգայնացված «կոմերիտական ախտանիշների համակցության[70] (սինդրոմի)» արտապատկերումը, որը ԽՍՀՄ ժամանակաշրջանի ինտերնացիոնալ կոմերիտմիության ախտանիշների համակցության նմանակն է:

Հետևաբար,

T: Երիտասարդության հետ աշխատանքներում հարկ է հաշվի առնել ոչ հեռու անցյալի փորձը՝ ոչ հեռու անցյալի փորձանքից խուսափելու համար:

T: Հարկ է մշակել Ազգային պահպանողականության (կոռուպցիան նվազեցնող) ***և Պրագմատիզմի (***կոռուպցիան աճեցնող***) գործոնների ազդեցությունների տակ ձևավորվող շերտերի տարանջատման տեխնոլոգիաները:***

Ըստ էության, սա համարժեք է վերլուծական գործոնների հետ համակարգային աշխատանքների ռազմավարությունների մշակմանը, կամ այլ խոսքերով՝ վերը նշված համապատասխան ուսանողական շերտերի հզորացման կամ խարխլման, բաժանման և/կամ վերակազմավորման ու կերպարանափոխման սոցիալական տեխնոլոգիաների մշակմանը:

Այդ տեսակետից արդեն կարող են օգտակար լինել նաև դիտարկված գործոնների առանձին բաղադրիչների յուրահատուկ ազդեցությունների վերաբերյալ տեղեկությունների կիրառումը[71]:

---

70 ***Կոմերիտական ախտանիշների համակցություն*** հասկացության տակ նկատի ունենք խորհրդային սոցիալապես ակտիվ և պրագմատիկ երիտասարդությանը բնորոշ կոմերիտական կարիերիզմը (քանի որ խորհրդային պետությունում կարիերայի այլ տարբերակ հնարավոր չէր), որը շաղկապված էր բարոյական ամենակերություն, սոցիալական միմիկրիայի և լոյալության հետ: Այդ կարիերիզմը կոմունիստական լճացման կարևորագույն գործոններից էր, քանի որ բարոյապես ամենակեր երիտասարդության շարքերից խորհրդային վերնախավ հնարավոր էր կոռպտացնել միայն հենց այդպիսիք:

71 Ըստ էության, հետազոտության ընթացքում կատարվել է ուսանող երիտասարդության հիերարխիկ կիբեռնետիկական մոդելի կառուցում, որտեղ համակարգի հիերարխիկ կառուցվածքն ու տարրերն են՝ «ուսանողական շերտերը → [դրանք կազմավորող] գործոնները → [գործոններն արտապատկերող] պարամետրերը», իսկ համակարգային կապերը՝ (փոխանցման ֆունկցիաները) մոդելների պարամետրերի համախմբություններն են: Կիբեռնետիկական մոդելի կիրառմամբ իրականացվում է ***հասարակական***

*

Այժմ քննենք դիտարկվող 17 դատողությունների հետ համաձայնության կամ անհամաձայնության ինտենսիվության [հակադարձ] պայմանավորվածությունը կոռուպցիոն դիրքորոշումների հետ:

Աղյուսակ 36-ում տրված են՝ կոռուպցիան որպես «Այլասերում» և կոռուպցիան որպես «Գործիք կամ Նորմա» ընկալող ուսանողների երկու խմբերի կողմից դիտարկվող դատողություններին տրված գնահատականների տարբերությունները:

Աղյուսակ 36. Կոռուպցիոն դիրքորոշման ազդեցությունը աշխարհայացքային տարրի վրա:

Պարամետր	Տարբերություն
11. Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին:	17.3%
2. Դեմոկրատիան պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից և բարեկեցիկ երկիր դարձնելու համար:	17.3%
8. «Արյունով նվաճվածը փողով չի վաճառվում»:	14.2%
6. Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը:	9.5%
17. ԶԼՄ, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս հավաստի տեղեկություններ:	7.1%
10. Մեզ մոտ իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևերը ցույցերն ու միտինգներն են:	6.0%
9. Ինչքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է՝ թուրքը մնում է թուրք:	5.6%
1. Այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտորիտար կառավարումը:	4.0%
15. Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխները ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում:	-0.4%

կառավարում (կիբեռնետիկական մոտեցման հիմնական նպատակը), կառավարվող համակարգի յուրաքանչյուր հիերարխիկ մակարդակին համապատասխան տարրերի և կապերի վրա ազդեցություններ գեներացնելու միջոցով:

Հիշեցնենք կիբեռնետիկայի դասական սահմանումը՝ ***Կիբեռնետիկան գիտություն է բնության և հասարակության մեջ կառավարման մասին:***

7. Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը:	-1.0%
5. Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումն առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար	-2.8%
16. Հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր:	-3.1%
12. Ինչ էլ որ ասեն ու խոսեն, այսօր ամեն ինչ վճռում է փողը:	-3.6%
4. Սոցիալիզմից հրաժավելով՝ մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք:	-5.3%
3. Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն:	-7.6%
13. Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «Հաղթում է ուժեղը»:	-14.2%
14. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է:	-16.3%

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ՝

T: Կոռուպցիան որպես «Գործիք կամ Նորմա» ընկալող ուսանողների մոտ՝ այն որպես «Այլասերում» ընկալողների համեմատ աճել է համաձայնության աստիճանը

«14. Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է»՝

«13. Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «հաղթում է ուժեղը»՝

«3. Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն»

դատողությունների հետ, և նվազել է՝

11 «Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին»,

2. «Դեմոկրատիան պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար»,

8. «Արյունով նվաճվածը՝ փողով չի վաճառվում»,

6. «Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը»,

17. «Զանգվածային լրատվամիջոցները, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս են հավաստի տեղեկություններ»,

դատողությունների հետ:

Մնացած հարցերի համար այդ տարբերությունները վիճակագրորեն հավաստի չեն:

Ներկայացված տվյալները թույլ են տալիս պլանավորել գործոնների կիրառման տարաբնույթ ռազմավարությունները:

Օլիգարխները և Հայաստանը

Նախորդ պարագրաֆների տվյալներից պարզ դարձավ, որ դատողությունների երկրորդ համախմբությունում տրված 17 հարցերից ամենամեծ տարածումն ուներ այն, որ «Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխները ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում» դատողությունը:

Հետազոտության նախագծման փուլում կանխատեսվում էր այդ կարգի արդյունք և այդ պատճառով հարցաթերթում նախատեսված էր առանձին հարցախումբ վերլուծելու համար Հայաստանում մեծահարուստների նկատմամբ տարբեր դիրքորոշումների դիրքավորվածությունը:

Աղյուսակ 37-ում տրված է այդ հարցախմբին տրված պատասխանների բաշխումները: Թույլատրվում էր նշել ոչ ավելի, քան երկու պատասխան:

Տվյալներից ակնհայտ է մեծահարուստների նկատմամբ բացասական դիրքորոշումների բացարձակ գերակշռությունը:

Հարկ է նշել, որ եթե երկու ամենատարածված առաջին պատասխաններն ակնհայտորեն կրում են բացասական երանգ և դիրքավորված են ուսանողների 2/3-ից ավելի մասի մոտ, ապա երրորդ պատասխանը՝ արտաքուստ ունենալով դրական երանգ (ի վերջո, մեծահարուստներն են Հայաստանը դարձնելու բարեկեցիկ երկիր), ունի նաև թաքնված համակերպվողականության արտահայտություն, որը կարող է կազմված լինել նախ՝ պետության նկատմամբ եղած սպասումների ֆրուստրացիայով և երկրորդը՝ կոգնիտիվ դիսոնանսի հանգուցալուծման մոտիվացիայով (այն է՝ «միևնույնն է՝ պետությունը և հասարակությունը արդեն պարտվել են օլիգարխներին, մյուս կողմից, եթե Հայաստանում կա մի ուժ, որն ի զորու է իրականացնել *իր* նպատակները, ապա հենց այդ ուժն էլ ի զորու կլինի երկիրը դուրս բերելու զարգացած և բարեկեցիկ երկրների շարքը: Դա օլիգարխներն են»):

Աղյուսակ 38. Ուսանողների դիրքորոշումներն օլիգարխների նկատմամբ:

Դատողություն	I պատ.	II պատ.	Ընդ.
2. Հայաստանի մեծահարուստները խոչընդոտում են փոքր ու միջին բիզնեսի զարգացմանն ու հարստացմանը:	**43.1%**	25.9%	69.0%
3. Մեծահարուստները նպաստում են Հայաստանում խոշոր կոռուպցիայի գոյությանը:	**25.7%**	30.3%	56.0%
1. Հայ մեծահարուստներն, ի վերջո, Հայաստանը վերածելու են զարգացած և բարեկեցիկ երկրի:	**15.5%**	9.4%	24.9%
4. Մեծահարուստների պատճառով է, որ մարդիկ՝ հեռանկար չտեսնելով, թողնում ու հեռանում են երկրից:	10.3%	23.4%	33.7%
5. Այսօր փաստորեն մեծահարուստները հայկական պետության և հայ ազգի հենասյուներն են:	5.4%	10.9%	16.30%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**200.00%**

Նույնպիսի բացատրություն հնարավոր է կիրառել նաև հինգերորդ դատողության վերաբերյալ, որտեղ կոգնիտիվ դիսոնանսի հանգուցալուծման տրամաբանությունն է՝ «Եթե այսօր Հայաստանում ինչ որ բան էֆեկտիվ է գործում և իրականացնում իր նպատակները, ապա դա օլիգարխներն են», որից բխում է դիսոնանսի հակադիր կոգնիտիվ բեռը՝ «Այսօր Հայաստանում ոչ մի կառույց կամ հասարակական խումբ չի կարողանում իրականացնել իր բացահայտորեն հայտարարվող հասարակական ֆունկցիան»:

Ինչ վերաբերում է օլիգարխների նկատմամբ դրական դիրքորոշումներին, ապա դրանց մեջ կոգնիտիվ դիսոնանսն ավելի նկատելի է օլիգարխներին որպես Հայաստանի և ազգի հենասյուն տեսնելու դիրքորոշման դեպքում, որի հետ նշանակալից չափով ասոցացված են օլիգարխների նկատմամբ բացասական վերաբերմունքները:

Օլիգարխների նկատմամբ վերաբերմունքներն ուժեղ ասոցացված են կոռուպցիոն անհանդուրժողականության հետ:

Աղյուսակ 39-ում տրված են օլիգարխների նկատմամբ դիտարկված դիրքորոշումների և դրանց փոխազդեցությունների կապը, ազդեցությունը ուսանողի կոռուպցիոն անհանդուրժողականության վրա:

Աղյուսակ 40. Օլիգարխների նկատմամբ դիրքորոշումները և կոռուպցիոն անհանդուրժողականությունը

Առաջին պատասխան	Երկրորդ պատասխան					
	1	2	3	4	5	Ընդ
1. Հայ մեծահարուստներն, ի վերջո, Հայաստանը վերածելու են զարգացած և բարեկեցիկ երկրի:					50.0%	49.4%
2. Հայաստանի մեծահարուստները խոչընդոտում են փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը:			58.3%	50.8%		56.2%
3. Մեծահարուստները նպաստում են Հայաստանում խոշոր կոռուպցիայի գոյությանը:		**75.0%**		65.8%		69.3%
4. Մեծահարուստների պատճառով է, որ մարդիկ, հեռանկար չտեսնելով, թողնում ու հեռանում են երկրից:		**75.8%**				66.7%
5. Այսօր, փաստորեն, մեծահարուստները հայկական պետության և հայ ազի հենասյուներն են:						57.1%
Ընդամենը	**48.9%**	**71.8%**	**57.9%**	**56.8%**	**53.8%**	59.6%
Ներկայացված են միայն վիճակագրորեն հավաստի տվյալները:						

Օլիգարխների նկատմամբ երկու հակոտնյա վերաբերմունքները (նպաստում են խոշոր կոռուպցիային և Հայաստանը դարձնելու են բարեկեցիկ երկիր) ստորաբա-ժանում են նաև դրանք կրողներին ըստ կոռուպցիոն անհանդուրժողականության, համապատասխանաբար՝ 69.3% և 49.4%:

Ուշագրավ արդյունքներ են դուրս բերվում «2. Հայաստանի մեծահարուստները խոչընդոտում են փոքր ու միջին բիզնեսի զարգացմանն ու հարստացմանը» դիրքորոշման դիտարկումից: Նախ՝ այն միակ դիրքորոշումն է, որը ֆոնային ռեժիմում (որպես *երկրորդ* դիրքորոշում) նշանակալից բարձրացնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը: Ընդ որում, առաջնային ռեժիմում ասոցացվելով բացահայտ հակա-օլիգարխիկ դիրքորոշումներից մեկի հետ («Օլիգարխների պատճառով են մարդիկ հեռանում երկրից»), այն նվազեցնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը, բացահայտելով, որ այդ

դիրքորոշումը հատկանշական է «փոքր և միջին բիզնեսի» լոբինգային դիրքորոշումներով խմբին (հավանաբար կամ այդ ընտանիքներից, կամ իրենց ապագան փոքր բիզնեսում տեսնող): Իսկ փոքր բիզնեսին հակված անձինք ունեն միջինին մոտ կոռուպցիոն անհանդուրժողականություն (տե՛ս էջ 50,

Աղյուսակ 45): Սակայն այդ դիրքորոշումը ֆոնային ռեժիմում ասոցացվելով հակա-օլիգարխիկ դիրքորոշումներից յուրաքանչյուրի հետ նշանակալից կերպով բարձրացնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը (մինչև՝ 75.8%):

Հետևաբար.

T: Փոքր և միջին բիզնեսի իրավական պաշտպանությանն ուղղված ռազմավարություններն ունեն այպիսի բովանդակային ներուժ, որն ունակ է հակակոռուպցիոն գործունեության մեջ ընդգրկել կոռուպցիայի նկատմամբ հակադիր դիրքորոշումներով անձանց:

Հասարակության տիպը և կոռուպցիոն դիրքորոշումը

Ինչպիսի՞ն պետք է լինի հասարակությունը: Որո՞նք պետք է լինեն նրա գերակայությունները: Արդյո՞ք պետության առաջին գերակայությունը պետք է լինի իր յուրաքանչյուր անդամի գործունեության ազատության ապահովումը, թե՞ պետք է ստանձնի նաև որոշակի պարտավորություններ անհաջողության մատնվածների և թույլերի նկատմամբ, թե՞, այնուամենայնիվ, պետք է կարգավորի հասարակական հարաբերությունները՝ սահմանափակելով ուժեղներին:

Այդ հարցերի պատասխանը տրված է Աղյուսակ 41-ում:

Աղյուսակ 41. «Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պետք է լինի հասարակությունը»

Դիրքորոշում	Ընդ.
1. Հասարակությունը պետք է առավելագույն հնարավորություն տա քաղաքացուն իրականացնելիու իր ձգտումները, նույնիսկ, եթե դրա պատճառով որոշ մարդիկ շատ անբարենպաստ կամ աղքատ վիճակում հայտնվեն:	11.1%
2. Հասարակությունը պետք է հոգ տանի այն անձանց մասին, ովքեր պարտվում և տուժում են ուժեղների և հարուստների հետ մրցակցության մեջ:	23.1%
3. Հասարակությունը պետք է զսպի ուժեղներին և հարուստներին, որպեսզի նրանք չտիրանան ազգի և հասարակության բոլոր բարիքներին:	65.8%
Ընդամենը	100.0%

Իսկ հաջորդ աղյուսակում տրված է հասարակության և կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումների միջև առկա կապը:

Աղյուսակ 42. Հասարակության տիպը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը

Դիրքորոշում	Նորմա	Գոր-ծիք	Այլա-սերում	Ընդ.
1. Հասարակությունը պետք է առավելագույն հնարավորություն տա քաղաքացուն իրականացնելու իր ձգտումները, նույնիսկ եթե դրա պատճառով որոշ մարդիկ շատ անբարենպաստ կամ աղքատ վիճակում հայտնվեն:	20.0%	41.8%	38.2%	100%
2. Հասարակությունը պետք է հոգ տանի այն անձանց մասին, ովքեր պարտվում և տուժում են ուժեղների և հարուստների հետ մրցակցության մեջ:	7.9%	30.7%	61.4%	100%
3. Հասարակությունը պետք է զսպի ուժեղներին և հարուստներին, որպեսզի նրանք չտիրանան ազգի և հասարակության բոլոր բարիքներին:	5.8%	30.8%	63.4%	100%

Եթե դիտարկված դիրքորոշումները արտապատկերվեն քաղաքական գաղափարաբանությունների վրա, ապա [որոշակի մոտավորությամբ] առաջին դիրքորոշմանը համապատասխանում է հասարակության ***լիբերալ մոդելը***, երկրորդին՝ ***սոցիալ-դեմոկրատականը***, իսկ երրորդին՝ ***մարքսիստականը***:

Ընդ որում, հասարակության տիպի նկատմամբ դիրքորոշումների բաշխումը (Աղյուսակ 38, «Ընդամենը» սյունը) ***կախված չէ ծննդավայրի տիպից***, իսկ ***մարքսիստական դիրքորոշումն աճում է բարեկեցության նկազմանը զուգահեռ***:

Չնայած Աղյուսակից ակնհայտորեն բխում է, որ կոռուպցիոն հանդուրժողականությունը բավական ուժեղ ասոցացված է հասարակության ցանկալի տիպի հետ, սակայն մյուս կողմից, նույնիսկ կոռուպցիան որպես ***Նորմա*** դիտարկողների համարյա կեսը, հասարակության վերաբերյալ ունեն «մարքսիստական» դիրքորոշում, ինչը կարելի է մեկնաբանել.

T: Հայ հասարակության մեջ առկա անոմալիան, որը շատ մեծ շեղում ունի մարդու մոտ արդարության արխետիպային պատկերացումից[72], հասարակական դիրքորոշումներում ձևավորում է պետության և

[72] ***«Արդարության արխետիպային պատկերացում»*** կիրառված է որպես քրիստոնեական բարոյական կոդեքսի կամ Կանտի բարոյական իմպերատիվի համարժեք:

հասարակության նկատմամբ չգիտակցված մարքսիստական դիրքորոշում:

Հետազոտության ընթացքում, ընդհանրացնելու համար կոռուպցիոն դիրքորոշումների և հասարակության տիպի նկատմամբ դիրքորոշումներ, կառուցվել է դրանց սինթետիկ երկչափ տարածությունը, որի կառուցվածքը տրված է Գ-ծագիր 40-ում:

Տարածության կառուցվածքն իր պարզության մեջ պարունակում է բավական անսպասելի արդյունք:

Այն կազմված է ընդամենը 5 տարրերից, որոնցից երկուսը դիրքորոշումներ են կոռուպցիայի վերաբերյալ, [73] իսկ 3-ը՝ հասարակության տիպի վերաբերյալ:

Կարելի էր սպասել, որ տարածության մեջ կառաջանան երկու [համարյա օրթոգոնալ] առանցքներ՝ «գաղափարաբանական» և «կոռուպցիոն», որոնց ուղղությամբ կդասավորվեն տարածությունը սահմանող 5 տարրերը:

Ըստ էության այդպես էլ ստացվել է, սակայն մեկ տարբերությամբ՝ «***լիբերալիզմը***» գաղափարաբանությունից «վերածվել է» կոռուպցիոն դիրքորոշման (այն գտնվում է գաղափարաբանական առանցքի սկզբնակետին մոտ), ընդ որում, այն «ավելի կոռուպցիոն է», քան ինքը բացահայտորեն կոռուպցիոն հանդուրժողականությունը (կոռուպցիոն հանդուրժողականության կիսաառանցքի վրա դրա արժեքը կրկնակի ավելի մեծ է, քան կոռուպցիոն հանդուրժողականություն բացահայտ արտահայտությունը՝ «***Կոռուպցիան Գործիք է կամ Նորմա***»):

Գաղափարաբանական և կոռուպցիոն դիրքորոշումների վերաբերյալ կառուցված տարածության շրջանակներում հնարավոր է առաջ քաշել հետևյալ հարցը.

Q: Ինչպիսի՞ն է տվյալ գաղափարաբանության մեջ ինքնին գաղափարաբանական և հասարակական վարքագծային դիրքորոշումների հարաբերակցությունը,

կամ, ավելի պարզ՝

Q՛: Ինչպիսի՞ն է տվյալ գաղափարաբանության վարքագծային բեռնվածությունը:

---

[73] Այդ դիրքորոշումները երկուսն են, քանի որ կոռուպցիան որպես ***Գործիք*** և որպես ***Նորմա*** ընկալող ուսանողները միավորված են որպես կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ունեցողներ:

Գծագիր 41. «Կոռուպցիոն դիրքորոշումներ x Հասարակության տիպ» տարածության կառուցվածքը



	գծային կոորդինատ	բանական կոորդինատ	բեռնվածություն
Լիբերալ	2.15	-0.27	-8.04
Սոցիալ-դեմոկրատական	-0.14	1.83	-0.08
Մարքսիստական	-0.33	-0.60	0.55

Այսպիսով, Երևանի ուսանողության մոտ.

T: Կոռուպցիոն դիրքորոշումների համատեքստում լիբերալ գաղափարաբանությունն ունի շատ մեծ վարքագծային բեռնվածություն, որի հետևանքով այն կարող է մեկնաբանվել որպես կոռուպցիոն դիրքորոշման ածանցյալ:

Լիբերալ գաղափարաբանության կոռուպցիոն գերբարձր բեռնվածությունը հասարակության առևտրայնացման հետևանքն է:

T: Կոռուպցիոն դիրքորոշումների համատեքստում մարքսիստական դիրքորոշման գաղափարաբանական և վարքագծային պայմանավորվածության հարաբերակցությունն է՝ 2:1:

Մարքսիստական դիրքորոշման վարքագծային բարձր բեռնվածությունը պայմանավորված է հասարակության մեջ արդարության արխետիպային զգացողության ճնշվածությամբ:

Մարքսիստական գաղափարաբանությանը հակվածների բարձր մակարդակը նույնիսկ կոռուպցիայի նկատմամբ ամենահանդուրժող տիպի (48.7%, կոռուպցիան որպես նորմա դիտարկողների), *մոտ արտացոլում է այն փաստը, որ արխետիպային բարոյական դիրքորոշումն անհրաժեշտ է հասարակության բուն գոյության հնարավորության համար:*

T: Սոցիալ-դեմոկրատական գաղափարաբանությունը կախված չէ կոռուպցիոն դիրքորոշումներից՝ կոռուպցիոն դիրքորոշումների համատեքստում այն «մաքուր» գաղափարաբանություն է:

Գծագիր 42-ում տրված է Երևանի ուսանողության դասակարգումը դիտարկված «գաղափարաբանական-վարքագծային» տարածության մեջ:

> Գծագրի վեց շրջանները գտնվում են երեք մակարդակների վրա՝ յուրաքանչյուր մակարդակում երկուական շրջան: Շրջանների կենտրոններն իրենցից ներկայացնում են խմբային միջինները[74], իսկ շառավիղները՝ տվյալ երկչափ տիպին պատկանող անձանց քանակը: Յուրաքանչյուր մակարդակի վրա գտնվող ձախ շրջանը պատկերում է կոռուպցիոն ցածր հանդուրժողական, իսկ աջ շրջանը՝ բարձր հանդուրժողական հատվածը:
>
> Վերևի մակարդակի երկու շրջանները արտապատկերում են սոցիալ-դեմոկրատական հասարակության կողմնակիցներին: Երկրորդ մակարդակի երկու փոքր շրջանները պատկերում են լիբերալ հասարակության կողմնակիցներին, իսկ երրորդ՝ ամենավերևի մակարդակում են մարքսիստական տիպի հասարակության կողմնակիցները:

Հարկ է նշել, որ.

T: Մասնագիտության տիպը չի ազդում հասարակության տիպի ընտրության վրա:

Գծագիր 42. Երևանի ուսանողության խմբերի ծավալները «Պետության կարգավորիչ դեր x Կոռուպցիոն հանդուրժողականություն» տարածությունում

---

[74] Գծագրում տրված են կառուցված տարածության մեջ իրական հարցվողների *արտապատկերումները*, որոնք կազմում են իրական տվյալների տեսականացված մոդելը:



Բարեկեցության ուղիները և սպասելիքները

Հաջորդ պարագրաֆներում կդիտարկվեն ուսանողների դիրքորոշումները՝ կյանքում հաջողության հասնելու ուղիների և նրանց ակնկալիքների մակարդակների վերաբերյալ: Կդիտարկվեն այդ դիրքորոշումների կապերը կոռուպցիոն դիրքորոշումների հետ:

Հարստանալու ճանապարհները և կոռուպցիոն դիրքորոշումը

Գծագիր 43.-ում տրված են Երևանի ուսանողների կողմից Հայաստանում բարեկեցության հասնելու տարբեր ճանապարհների արդյունավետությունների գնահատականները: Այդ ուղիները գնահատված են 1-5 ինտերվալային սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ուղու արդյունավետության ամենացածր աստիճանը, իսկ 5-ը՝ ամենաբարձրը: Գծագրում տրված է հարստանալու յուրաքանչյուր ուղուն տրված 5 գնահատականների քանակը: Գծագրի ամենաաչքի ընկնող արդյունքն ակնհայտ է՝ Հայաստանում ամենաարդյունավետ ուղին կոռուպցիան է: Սակայն իրենց տարածվածությամբ երկրորդ և երրորդ տեղերում են «Աշխատասիրությունը, համբերատարությունը» և «Տաղանդը, գիտելիքները»:

Գծագիր 43. «Ձեր կարծիքով՝ ո՞րն է մեր հասարակության մեջ հարստանալու ամենաարդյունավետ ճանապարհը»:



Հարստանալու ուղիների նկատմամբ ընդհանրացված դիրքորոշումները կազմավորվել են գործոնային վերլուծության միջոցով, որի արդյունքները տրված են Գծագիր 44-ում: Գծագրում ներկայացված է այն երկչափ գործոնային տարածության կառուցվածքը, որն ընդհանրացնում է հաջողության հասնելու ուղիները:

Ուղղահայաց առանցքը ներկայացնում է ***Քաղաքացիական վարքագիծը,*** որի վերին կիսաառանցքը ներկայացնում է օրինապահ և բարոյական վարքի բարձր գնահատականները, իսկ ներքևի կիսաառանցքը՝ բարոյական և օրինապահ վարքի մերժումը (ցածր գնահատականները):

Տարածության հորիզոնական առանցքն է՝ ***Կոռուպցիոն վարքագծի*** գործոնը, որի դրական (աջ) արժեքները նշանակում են կոռուպցիոն վարքագծի կարևորության բարձր մակարդակներ, իսկ բացասական (ձախ) արժեքները՝ կոռուպցիոն վարքի արդյունավետության ցածր արժեքներ:

Գծագիր 44. Հայաստանում հարստանալու ուղիներն ընդհանրացնող գործոնային տարածությունը



Երկու գործոններն էլ վիճակագրորեն հավաստի կերպով ազդում են կոռուպցիոն դիրքորոշման ձևավորման վրա (**Աղյուսակ** 44):
Կոռուպցիոն վարքագծի գործոնի աճը 1 միավորով բերում է կոռուպցիոն անհանդուրժողականության շանսի նվազեցմանը 28.5%-ով, իսկ ***Քաղաքացիական վարքագծի*** գործոնի աճը 1 միավորով բերում է կոռուպցիոն անհանդուրժողականության աճին 38.5%-ով:

Աղյուսակ 44. Կոռուպցիոն դիրքորոշման կախվածությունը հարստանալու ուղիների նկատմամբ դիրքորոշումների գործոններից

	B	S.E.	Sig.	Exp(B)
Գ-1. Կոռուպցիոն վարքագիծ	-.335	.100	.001	.715
Գ-2. Քաղաքացիական վարքագիծ	.326	.098	.001	1.385

Կոռուպցիոն դիրքորոշումը և հետագա աշխատավայրը

Գծագիր 45.-ում տրված է, թե որտեղ են ցանկանում աշխատել ուսանողները իրենց ուսումն ավարտելուց հետո: Ոլորտների ցանկալիության աստիճանը գնահատվել է ինտերվալային 1-5 սանդղակով, որտեղ 5-ը նշանակում էր ամենաբարձր ցանկալիությունը, իսկ 1-ը՝ ամենացածրը:

Գծագրի յուրաքանչյուր սյունախմբում վերևի սյունը պատկերում է տվյալ ոլորտում աշխատելու ցանկության ամենաբարձր գնահատականների (4 և 5) գումարային տոկոսը, միջին սյունը՝ նույն ոլորտում աշխատելու առաջին գերակայությունը, իսկ ներքևինը՝ երկրորդ գերակայությունը:

Գծագիր 46. Որտե՞ղ կցանկանային աշխատել ուսանողները ուսումն ավարտելուց հետո

Տրված են ամենաբարձր 4 և 5 գնահատականների գումարային բաշխումը, առաջին ցանկալի աշխատավայրը և երկրորդ ցանկալի աշխատավայրը



Գծագրում արտահայտված գերակայություններն արտացոլում են Հայաստանի աշխատաշուկայում դիպլոմավորված մասնագետների համար և, միաժամանակ, նրանց տեսակետից առկա իրավիճակը:

Իրավիճակի բնութագրման համար հատկանշական են մի կողմից՝ միջազգային կազմակերպություններում և պետական կառավարման

մարմիններում աշխատելու ցանկությունների համեմատությունը (որոնք հիմնականում կառավարչական աշխատատեղեր են), իսկ մյուս կողմից՝ սեփական բիզնեսում և բիզնեսում որպես վարձված մասնագետ աշխատելու ցանկությունների համեմատությունը: Առաջին դեպքում ցանկությունների տարբերությունը, անկախ գնահատումների դեպքում, 14%-է, իսկ երկրորդ զույգի համար՝ համարյա 40%:

Չնայած պետական կառավարման մարմիններում և միջազգային կազմակերպություններում աշխատավարձերի շատ մեծ տարբերությանը՝ ի օգուտ միջազգային կազմակերպությունների, պետք է ենթադրել, որ դիտված տարբերությունը շատ մեծ չէ, ինչը, հավանաբար, նախ և առաջ պայմանավորված է պետական պաշտոնյաների աշխատատեղերի երկարաժամկետությամբ, ի տարբերություն միջազգային կազմակերպությունների աշխատատեղերի, որոնց մեծ մասը, չնայած բարձր աշխատավարձերին, կարճաժամկետ են, որի հետևանքով այնտեղ աշխատողների համար պարբերաբար առաջանում են լարվածություններ:

Ինչ վերաբերում է սեփական բիզնեսում և բիզնեսում որպես վարձու մասնագետ աշխատելու ցանկությունների միջև շատ մեծ տարբերությանը, ապա դա ոչ միայն ենթադրյալ ազգային սովորությունն է և ժամանակի շունչը՝ ***ինքնուրույնության*** և ***ազատասիրության*** ձգտումը, այլ նաև հետազոտական հայեցակարգում դիտարկված հայկական մասնավոր բիզնեսում ***գործատուի և աշխատողի*** հարաբերությունների բնույթը: Կողմերի իրավունքների և պարտավորությունների անհամամասնությունն ի օգուտ գործատուի, այդ նույն ***ինքնուրույն և ազատասեր հասարակական շերտի համար*** (բարձրագույն կրթությամբ երիտասարդներ) առաջացնում է համարյա անանցանելի հոգեբանական արգելք: Դրա արտահայտությունն այն է, որ երբ ուսանողներին առաջարկվել է աշխատանքային ոլորտներից ընտրել երկու ամենացանկալի ոլորտները, ապա որպես ամենացանկալի ոլորտ «մասնավոր բիզնեսում որպես վարձու աշխատող» նշել են ***միայն 2.7%-ը (!!),*** որպես երկրորդ ամենացանկալին՝ 6.9%-ը:

Հայկական բիզնեսում աշխատանքը պաշտպանված չէ, որի հետևանքվ տեղի է ունենում արտադրության արդյունքի անարդար բաշխում կապիտալի և աշխատանքի միջև: Մասնավոր բիզնեսում աշխատողների գերակշիռ մեծամասնությունը աշխատում է կամ առանց աշխատանքային պայմանագրերի կամ ձևական (կեղծ) պայմանագրերով (որոնք չեն արտացոլում գործատուի և աշխատողի միջև իրական պայմանավորվածությունները և պարտավորությունները): Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փոքր ու միջին (հայկական մասշտաբներով) բիզնեսը պետության նկատմամբ համարյա անպաշտպան է, ինչին լավատեղյակ են նաև ուսանողները

(դրա մասին են վկայում՝ էջ 122, **Աղյուսակ** 29, հարց 9-ի տվյալները), այն ամենը, ինչ փոքր բիզնեսը կորցնում է պետության հետ հարաբերություններում, «եռակի» փոխհատուցում է աշխատողի հետ հարաբերություններում[75]:

Որպես վերը նկարագրված իրողության մասնակի հետևություն, կարելի է համարել, որ Հայաստանում բացակայում է փոքր և միջին բիզնեսի նկատմամբ ***մասնագիտական հետաքրքրությունը***, ինչը դժվարացնելու է դրա զարգացումը[76]:

Հաջորդ աղյուսակում տրված է կապը ամենացանկալի աշխատանքային ոլորտի և կոռուպցիոն անհանդուրժողականության միջև:

Աղյուսակ 45. Ցանկալի աշխատանքային ոլորտը և կոռուպցիոն անհանդուրժողականությունը

Առաջին ցանկալի ոլորտը	Կոռուպցիայի նկատմամբ դիրքորոշումն է՝ «Այլասերում»
Դատարաններ, դատախազություն	51.0%
Հարկային կամ մաքսային մարմիններ	51.9%
Աշխատանք արտասահմանում	53.3%
Սեփական բիզնեսում	58.7%
Պետական կառավարման մարմիններ	60.0%
Միջազգային կազմակերպություններ	62.5%
Կրթություն, գիտություն	63.0%
ՆԳ կամ ԱԱ մարմիններ	64.3%
Ազգային բանակում	66.7%
Այլ	69.7%
Ընդամենը	59.6%

Եթե աղյուսակի վերին մասի տվյալները մեկնաբանության կարիք չեն զգում և պարզապես մատնանշում են Հայաստանյան կոռուպցիայի կարևորագույն բևեռները, ապա ուշագրավ և հուսադրող է Ներքին գործերի և Ազգային անվտանգության մարմիններում աշխատել ցանկացողների մոտ կոռուպցիոն անհանդուրժողականության մակարդակի գերազանցումը ընտրանքային միջինին: Այդ փաստը, հավանաբար, նշանակում է, որ երիտասարդության որոշակի հատվածը գիտա-

---

[75] Այստեղ՝ «պետություն - գործարար – վարձու աշխատող» հարաբերություններում, դժվար չէ տեսնել Բրոդելի «աշխարհ-տնտեսությունների» հայեցակարգի բևեռային և ծայրամասային տնտեսակարգերի միջև հարաբերությունների արտապատկերումը:

[76] Եթե, իհարկե, փոքր բիզնեսը չի նշանակում ընդամենը մանրածախ առևտուր:

կցում է, որ կոռուպցիան ***ազգային անվտանգությունը խարխլող երևույթ է:***

Հետևյալ աղյուսակում ընդհանրացված է պետական կառավարման առանձին ոլորտների վրա «կոռուպցիոն ճնշումները», որոնք կարող են առաջանալ ներկայիս ուսանողների այդտեղ աշխատելու դեպքում:

Աղյուսակ 46. Կոռուպցիոն անհանդուրժողականությունը պետական կառավարման ընդհանրացված ոլորտներում աշխատել ցանկացող ուսանողների մոտ

Պետական կառավարման ոլորտ	Կոռուպցիոն անհան-դուրժողականություն (կոռուպցիոն ռիսկ)
Ֆիսկալ և դատական պետական մարմիններ	51.3%
Պետական կառավարման այլ մարմիններ	60.0%
Ուժային պետական մարմիններ	65.4%

Կոռուպցիոն դիրքորոշումը վիճակագրորեն նշանակալից ասոցացված է միայն ***Կրթության և գիտության*** ոլորտում և ***Աշխատանք արտասահմանում*** պատասխանների ինտենսիվության հետ:

T: Գիտության և կրթության ոլորտում աշխատելու ցանկության աճը մեկ միավորով մեծացնում է կոռուպցիոն անհանդուրժողականության շանսը 16.0%-ով:

T: Արտասահմանում աշխատելու ցանկության մեկ միավորով աճը նվազեցնում է կոռուպցիոն անհանդուրժողականության շանսը 12.8%-ով:

Աղյուսակ 47. Աշխատանքային ոլորտի ազդեցությունը կոռուպցիոն դիրքորոշման վրա

Ցանկալի աշխատատեղը	B	Std. Error	Sig.	Exp(B)
Գիտության և կրթության ոլորտ	.149	.062	.016	1.160
Աշխատանք արտասահմանում	-.136	.062	.028	.872

Կոռուպցիոն դիրքորոշումը և ընդունելի կենսամակարդակի գնահատականը

Հնարավոր եկամտի մակարդակը կարևոր նշանակություն ունի զբաղմունքի և աշխատատեղի ընտրության, ինչպես նաև աշխատանքային մոտիվացիայի վրա: Պետական ծառայողի համար կենսամակար-

դակային նորմայի և իրականության տարբերությունը պոտենցիալ կոռուպցիոն գործոն է:

Հետազոտությունում դիտարկված են աշխատավարձերի այն մակարդակները, որոնք Երևանի ուսանողության կարծիքով ապահովում են նորմալ կենսակերպ: Խնդիրն ուսումնասիրվել է հետևյալ հարցի միջոցով.

«Ենթադրենք, Դուք ավարտել եք բուհը և աշխատում եք Ձեր մասնագիտությամբ: Ամենաքիչը որքա՞ն աշխատավարձ ստանալու դեպքում Դուք կհամարեք, որ մոտակա 5 տարիների համար այդ աշխատավարձի մակարդակը բավարար է և, ցանկության դեպքում, կարելի է նաև ընտանիք կազմել և երեխաներ ունենալ»:

Բացի այդ գնահատվել է պետական տարբեր մակարդակի պաշտոնյաների «կարգավիճակը» ուսանողների ինքնագնահատականների սանդղակում: Առանձին հարցախմբով ուսանողներին խնդրվել է պատասխանել, թե՝

«Ձեր կարծիքով, որքա՞ն պետք է լինի Հայաստանում ***որակյալ, ազնիվ և կողմնակի եկամուտներ չունեցող***.

- Նախարարի աշխատավարձը,
- Նախարարության միջին մակարդակի պաշտոնյայի աշխատավարձը,
- Նախարարության ստորին մակարդակի պաշտոնյայի աշխատավարձը»:

Ընդ որում, հարկ է նշել, որ հարցերը տրվել են միասնաբար և նշված հաջորդականությամբ: Նախ ստացվել է ուսանողի սեփական աշխատավարձի վերաբերյալ պատասխանը, այսինքն՝սահմանվել է սանդղակի հաշվարկային շեմը, որից հետո միայն՝ այդ շեմի նկատմամբ տեղադրվել են նախարարը, նախարարության միջին մակարդակի պաշտոնյան և վերջում՝ նախարարության ստորին մակարդակի պաշտոնյան:

Աղյուսակ 48.-ում տրված են աշխատավարձերի վերաբերյալ տրված պատասխանների կենտրոնական միտումները:

Աղյուսակ 48. Ուսանողների աշխատավարձային սպասումները և նրանց կողմից պետական պաշտոնյաների աշխատավարձերի գնահատականները

Աշխատավարձի մակարդակը, USD	Սեփական աշխատավարձը	Նախարարի աշխատավարձը	Միջին մակարդակի պաշտոնյայի աշխատավարձը	Ստորին մակարդակի պաշտոնյայի աշխատավարձը

Միջինը	690	1412	771	454
Մեդիանա	500	1000	500	300
Մոդա	500	1000	500	200
Ստ. շեղում	588	1677	774	467
Նվազագույնը	50	100	50	20
Առավելագույնը	4000	10000	5000	5000
Կենտրոնական միտումների համահարթեցման համար սեփական աշխատավարձը 5000$-ից ավել գնահատողները համարվել են «արտաընտրանքային» (outlayer) և չեն դիտարկվել:				

Աղյուսակի տվյալներից բխում է, որ.

T: Երևանի ուսանողության նորմալ կենսամակարդակի նմուշը մոտ է նախարարությունների միջին մակարդակի պաշտոնյաներին համապատասխանող կենսամակարդակին[77]:

Ուսանողների կողմից նախարարությունների ստորին մակարդակի պաշտոնյաներին համապատասխանող աշխատավարձի մակարդակը և դրա հետ ասոցացված կարգավիճակը դիտվում է որպես անցումային:

Քանի որ բարձրագույն կրթությամբ մասնագետի քաղաքացիական պաշտոնի անցումը կարող է սկսվել միայն ստորին մակարդակներից, հետևաբար.

T: Գոյություն ունի շատ մեծ հավանականություն, որ բուհի շրջանավարտի անցումը պետական ծառայության ուղեկցվելու է դերային կոնֆլիկտով, որի հիմքում ընկած է իր երկու դերերի (բարձրագույն կրթությամբ մասնագետ և ստորին օղակի քաղծառայող) հանրային և սեփական գնահատականների միջև տարբերությունը:

Եթե նույնիսկ ենթադրենք, որ պետական պաշտոնի անցման ժամանակ աշխատավարձերի մակարդակները կլինեն ճիշտ այնպիսին, ինչպես ***միջին հաշվով*** պատկերացնում է ներկայիս ***միջին ուսանողը.*** ապա այդ դեպքում նույնպես.

T: Ուսանողի անցումը քաղծառայության ուղեկցվելու է միջին հաշվով 235$ արժողությամբ սպասումների դեֆիցիտով, որը կոռուպցիոն գործոն է:

---

[77] Հետազոտությունում խնդիր չի դրվել Երևանի ուսանողության համար չափել սոցիալ-հոգեբանական հայտնի երևույթները՝ անհատի հակումն ավելի բարձ ինքնագնահատականի կամ՝ ոչ իրատեսական լավատեսության: Խնդիրն էր՝ կառուցել սպասումների և իրականության տարբերության պայմաններում հնարավոր ֆրուստացիայի քանակական գնահատականը:

Տարբեր ոլորտներում աշխատել ցանկացող ուսանողների նորմալ կենսամակարդակի ակնկալիքները տրված են Աղյուսակ 49-ում, որից բխում է, որ այդ ակնկալիքներն ամենից բարձրն են նրանց մոտ, ովքեր ցանկանում են աշխատել պետական կառավարման մարմիններում:

Աղյուսակ 49. Ուսանողների ցանկալի աշխատավարձը: Նախարարի, պետական միջին և ստորին մակարդակի պաշտոնյաների միջին աշխատավարձերը ըստ աշխատանքային ոլորտների

Առաջին գնահատական	Սեփ. աշխատ.	Նախար. աշխատ.	Միջին մակ. պաշտ. աշխ.	Ստորին մակ. պաշտ. աշխ.	N
1. Պետական կառ. մարմին	775	1461	783	437	71
2. Դատարան, դատախազություն	722	1197	770	457	46
3. Կրթություն և գիտություն	493	1186	653	443	41
4. Միջազգային կազմակերպ.	645	1238	670	404	89
5. Հարկային և մաքս. մարմ.	883	1646	650	346	26
6. ՆԳՆ և ԱԱ մարմիններ	704	1054	581	338	13
7. Աշխատանք արտասահմ.	722	1374	889	714	30
8. Ազգային բանակում	336	1241	539	327	11
9. Սեփական բիզնեսում	771	1692	900	485	101
10. Բիզնեսում՝ վարձված մասնագետ	430	794	550	394	10
Միջինը	**690**	**1412**	**771**	**454**	**425**
Ընդգծված են հավաստիության բարձր մակարդակ ունեցող աշխատատեղերը:					

Աղյուսակից բխում է, որ.

T: Պետական կառավարման մարմիններում աշխատել ցանկացող ուսանողների աշխատավարձային սպասելիքները ընդհանուր միջինից 85$-ով ավելի բարձր են:

Իրական պատկերն ավելի լարված է: Համեմատելու համար ապագա դիպլոմավորված մասնագետների՝ ուսանողների նորմալ կենսակերպին համապատասխանող աշխատավարձերի մակարդակները

ներկա իրադրության հետ, Աղյուսակ 50-ում տրված է Հայաստանում 2003 թվականին միջին աշխատավարձերն ըստ ոլորտների:

Աղյուսակ 50. 2003 թվին ամսական միջին (անվանական) աշխատավարձերը Հայաստանում ըստ տնտեսության ոլորտների

Տնտեսության ճյուղ	Ամսական միջին աշխատավարձ	
	AMD	USD
Վարկավորում, ապահովագրություն	133,483	**267**
Կառավարման ապարատ	***53,465***	*107*
Արդյունաբերություն	53,048	**106**
Շինարարություն	50,991	**102**
Տրանսպորտ	50,525	**101**
Գիտություն և գիտական սպասարկում	31,711	**63**
Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	25,155	**50**
Կրթություն	19,293	**39**
Մշակույթ	16,350	**33**
Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004թ. ***Դոլարային համարժեքը հաշվարկված է 1$= 450 դրամ կուրսով:***		

Միայն միջազգային կազմակերպություններն ունեն այնպիսի աշխատավարձի մակարդակներ, որոնք համապատասխանում են ուսանողների կենսամակարդակային նորմալ սպասելիքներին: Տնտեսության սեկտորներից միայն ֆինանսականն է, որտեղ աշխատավարձի մակարդակները որոշ չափով մոտ են այդ ակնկալիքներին: Քանի որ դժվար է սպասել, որ Հայաստանում մոտ ապագայում աշխատավարձերի մակարդակները կհասնեն ուսանողության սպասելիքներին, հետևաբար.

T: Հայաստանում բուհերի ուսանողների վրա, կրթության ավարտից հետո հարատևորեն ազդելու են արտագաղթի հակումը բարձրացնող գործոնները, որոնց շարքում առավել հզորներից է լինելու նորմալ կենսամակարդակի ապահովման գործոնը: Ներկայիս ուսանողներից կեսի համար այդ գործոնի միջին գնային համարժեքն է՝ 400$, իսկ մյուս կեսի համար՝ 900$:

Հաշվարկները ցույց տվեցին, որ սոցիալական շարժունության բարձր հակումով անձինք ունեն 200-300$-ով ավելի բարձր կենսամակարդակային սպասումներ: Հաշվարկների ժամանակ որպես սոցիալական շարժունության առավել բարձր հակումով անձինք են համարվել նրանք, ովքեր ***ավելի շատ ոլորտներում են*** բարձր գնահատել իրենց աշխատելու ցանկությունը, այն դեպքում, երբ այդ ցանկությունը չափվել է ***անկախ ինտերվալային սանդղակներով***:

Հարկ է նշել, որ սոցիալական շարժունության բարձր հակումով անձանց ակնկալվող կենսամակարդակային միջինների վիճակագրական հավաստիությունը գերազանցում է 0.05-ը, քանի որ ոլորտային միջինների հաշվարկին սկսում են մասնակցել նշանակալից ավելի շատ հարցվածներ:

Հետևաբար.

T: Հայաստանի հասարակության մեջ սոցիալական բարձր շարժունությամբ բարձրագույն կրթությամբ մասնագետների կենսամակարդակային ակնկալիքները ***միջին հաշվով*** 1000$ կարգի են՝ ***անկախ աշխատանքային ոլորտներից***:

Գծագիր 47-ը թույլ է տալիս գնահատել, թե բուհական ուսանողների ո՞ր հատվածն է, որը համեմատաբար զերծ է միգրացիոն հակումն ուժեղացնող կենսամակարդակային գործոնից:

Գծագիր 47. Ուսանողների աշխատավարձային ակնկալիքների բաշխումը՝ ԱՄՆ $

Եթե հիմք ընդունենք, որ Հայաստանում պաշտոնական միջին անվանական աշխատավարձի մակարդակը 2003 թվականին եղել է 34783 դրամ (մոտ 77$, եթե 1$-450 դրամ) և ենթադրենք, որ ներկայումս (2005թ.) այն հավասար է 45000 դրամի (100$), ապա.

T: Ուսանողության թվաքանակը, որի համար ընդունելի են ներկայիս միջին աշխատավարձերը 2.2%-ի կարգի է:

Եթե գծագրի արդյունքները կիրառենք պետական ծառայության ոլորտի միջին աշխատավարձերի նկատմամբ, ապա.

T: Քաղծառայության ստորին մակարդակի աշխատավարձերի այն բանական սահմանը, որի դեպքում աշխատավարձը կհամապատասխանի բարձրագույն կրթությամբ մասնագետների գոնե ընդունելի հատվածի սպասելիքներին հավասար է 300$: Այդ ուսանողները կազմում են ուսանողության ընդհանուր քանակի 25.3%-ը (չորսից՝ մեկը):

Այդ շեմը համապատասխանում է Գծագիր 47-ում տրված բաշխման ամենափոքր մոդային[78]:

Կոռուպցիոն դիրքորոշման կապը կենսակամակարդակային նորմալ սպասելիքների հետ տրված է Աղյուսակ 51-ում:

---

[78] Բաշխումը պայմանականորեն քառամոդալ է: Հաջորդ մոդաներն են՝ 500$, 1000$ և 2000$: Բաշխման մեդիանան համընկել է երկրորդ մոդային, իսկ միջինը՝ [համարյա] երրորդին: Ինչպես և բնական էր սպասել՝ «աշխատավարձային» բաշխումն ունի մեծ աջ շեղվածք՝ 9.07:

Աղյուսակ 51. Կոռուպցիոն հակվածության կախվածությունը աշխատավարձային ակնկալիքների մակարդակի հետ

Պարամետր	B	Sig.	Exp(B)
log(Սեփական աշխատավարձի ակնկալիք)	-0.692	0.02	0.500

T: Երբ աշխատավարձի ակնկալիքն ավելանում է 10 անգամ (lg-ը 1 միավորով), ապա կոռուպցիոն անհանդուրժողականության շանսը նվազում է 50.0%-ով:

Աղյուսակ 52-ում տրված է այն գծային ռեգրեսիոն մոդելը, որը նկարագրում է ուսանողի աշխատավարձային ակնկալիքների կախվածությունը նրա սեռից, ծննդավայրից, բիզնեսում որպես վարձու մասնագետ աշխատելու պատրաստակամության աստիճանից և պրագմատիզմի մակարդակից: Մոդելը կառուցվել է դրանում առկա փոփոխականների քանակի և մոդելի բացատրողական ուժի օպտիմիզացմամբ (գերադասելի է հնարավորինս փոքր քանակով փոփոխականներ, իսկ մյուս կողմից՝ հնարավորինս մեծ R^2):

Աղյուսակ 52. Աշխատավարձային ակնկալիքների կախվածությունը ուսանողի բնութագրիչների հետ

Պարամետր	B	Std. Error	t	Sig.
Կոնստանտ	2.689	.045	59.232	.000
Սեռ	.189	.034	5.562	.000
Ծննդավայր	.113	.034	3.341	.001
Բիզնեսում որպես վարձու մասնագետ	-.026	.012	-2.217	.027
Պրագմատիզմ	.041	.017	2.489	.013

Ճշգրտված $R^2 = 0.295$

Կախյալ փոփոխականն *է ուսանողի աշխատավարձային սպասման տասնորդական լոգարիթմը:*

Սեռ *փոփոխականի բազային արժեքն է* ***Արական*** *1 և* ***Իգական*** *– 0*

Ծննդավայրը *փոփոխականն ունի երկու արժեք՝* ***Երևան*** *– 1 և* ***Փոքր քաղաք կամ գյուղ*** *– 0 (բազային արժեք)*

Բիզնեսում որպես վարձու մասնագետ *փոփխական արժեքները գտնվում են [1; 5] միջակայքում:*

Պրագմատիզմի *արժեքները փոփոխվում են [-4.25; 2.25] միջակայքում:*

Մոդելից բխում է, որ.

T: Ուսանողների աշխատավարձային ակնկալիքները 1.545 անգամ ավելի բարձր են քան ուսանողուհիներինը:

T: Երևանում ծնված ուսանողների աշխատավարձային ակնկալիքները 1.3 անգամ ավելի բարձր են փոքր քաղաքներում կամ գյուղերում ծնված ուսանողների համեմատ:

T: Երբ մասնավոր բիզնեսում աշխատելու ուսանողի պատրաստակամությունն աճում է 1 միավորով, ապա այդ դեպքում նրա աշխատավարձային ակնկալիքները նվազում են 6%-ով:

T: Ուսանողի մոտ Պրագմատիզմ գործոնի միավոր աճը բերում է աշխատավարձային ակնկալիքների մոտ 10% աճի:

Առավել ամբողջությամբ բացահայտելու համար մոդելի բովանդակությունը, տրված են նրա կանխատեսումները մի քանի տիպական դեպքերի համար (Աղյուսակ 50):

Աղյուսակ 53 Ուսանողների աշխատավարձային սպասումների մոդելի կանխատեսումները

		Մոդելի գործակիցներ				Մոդել
	C	*B_1*	*B_2*	*B_3*	*B_4*	$Y=10^{**}(C+\Sigma B_iX_i)$
	2.689	0.189	0.113	-0.026	0.041	
		Պարամետրերի արժեքներ				Կանխատեսում
#	C	X_1	X_2	X_3	X_4	Y
1	2.689	0	0	5	-4.25	243
2	2.689	1	0	5	-4.25	375
3	2.689	0	1	1	-4.25	400
4	2.689	1	1	1	-4.25	618
5	2.689	0	0	5	0	362
6	2.689	1	0	5	0	560
7	2.689	0	1	1	0	597
8	2.689	1	1	1	0	923
9	2.689	0	0	5	2.25	448
10	2.689	1	0	5	2.25	692
11	2.689	0	1	1	2.25	738
12	2.689	1	1	1	2.25	1141

Մոդելն իրենից ներկայացնում է Աղյուսակ 49-ում տրված Մոդելի ձևափոխումը՝ կատարված է անցում աշխատավարձի լոգարիթմից, դեպի աշխատավարձի անվանական արժեքը, այսինքն՝ $lg(Y) \rightarrow Y$:
C – Մոդելի հաստատունը:
B_1 – Ուսանողի սեռը: B_1=0 աղջիկ, B_1= 1 տղա:
B_2 – Ուսանողի ծննդավայրը, B_2=0 գյուղ կամ փոքր քաղաք, B_2= 1 Երևան:
B_3 - Բիզնեսում վարձու մասնագետ աշխատելու ցանկության աստիճանը, նվազագույն արժեքը՝ B_3 =1, առավելագույն արժեքը՝ B_3 =5:
B_4 – Պրագմատիզմ գործոնով ուսանողի բեռնվածությունը, B_4 = -4.25 ուսանողի մոտ Պրագմատիզմի նվազագույն արժեքը, B_4 = 2.25 ուսանողի մոտ պրագմատիզմի առավելագույն արժեքը, B_4 = 0 պրագմատիզմի միջին արժեքը ամբողջ ընտրանքի համար:
Y – Ուսանողի կողմից ակնկալվող միջին աշխատավարձը պարամետրերի տվյալ արժեքների համախմբության համար, $:

Մոդելի կանխատեսումների մեկնաբանությունները.

Տող 1. Գյուղում կամ փոքր քաղաքում (0) ծնված ուսանողուհին (0), որը մեծ շատ ցանկություն ունի աշխատելու բիզնեսում որպես վարձու մասնագետ (5) և որի պրագմատիզմը ամենացածր մակարդակի վրա է (-4.25), ակնկալում է միջին հաշվով 243$ աշխատավարձ, որպեսզի համարի, որ մոտակա 5 տարիների համար այդ աշխատավարձը բավարար է և ցանկության դեպքում կարելի է ընտանիք կազմել և երեխաներ ունենալ:

Տող 4. Երևանում (1) ծնված երիտասարդը (1), որը բոլորովին չի ցանկանում բիզնեսում աշխատել որպես վարձու մասնագետ (1) և ունի պրագմատիզմի ամենացածր մակարդակը (-4.25)[79], ակնկալում է միջին հաշվով 618$ աշխատավարձ, որպեսզի համարի, որ մոտակա 5 տարիների համար այդ աշխատավարձը բավարար է և ցանկության դեպքում կարելի է ընտանիք կազմել և երեխաներ ունենալ:

Տող 12. Երևանում (1) ծնված երիտասարդը (1), որը բոլորովին չի ցանկանում բիզնեսում աշխատել որպես վարձու մասնագետ (1) և ունի պրագմատիզմի ամենաբարձր մակարդակը (2.25)[80], ակնկալում է միջին հաշվով 1,141$ աշխատավարձ, որպեսզի համարի, որ մոտակա 5 տարիների համար այդ աշխատավարձը բավարար է և ցանկության դեպքում կարելի է ընտանիք կազմել և երեխաներ ունենալ:

Մնացած տողերը մեկնաբանվում են համանման կերպով:

---

[79] Դիտարկվող մոդելի շրջանակներում նա պետական պաշտոնյայի լավագույն թեկնածուն է:

[80] Դիտարկվող մոդելի շրջանակներում նա պետական պաշտոնյայի վատագույն թեկնածուն է:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակական ընդհանուր միտումները և կոռուպցիան

Հայաստանում վերջին 20 տարիների հիմնական արտաքին և ամենաբարձր էներգիայով ընթացող գործընթացը՝ ***հասարակական բարքերի առևտրայնացումը,*** հասարակության մեջ առաջացրել է իրավիճակ, ինչպես նաև ածանցյալ գործընթացներ և միտումներ, որոնց ընդհանրացված ազդեցությունները և փոխազդեցությունները ուսանողության շրջանակներում բարձրացնում են կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Կոռուպցիոն հանդուրժողականությունն ավելի բարձր է հասարակության այն նիշաներում, որտեղ ավելի ***բարձր է տնտեսական ակտիվությունը***, ինչպես նաև այն հասարակական շերտերում, որոնք ավելի ինտենսիվ են ընդգրկված այդ հարաբերություններում, կամ սոցիալիզացվում են այդպիսի շերտերում:

Մասնավորապես, երևանյան ծագում ունեցող ուսանողների մոտ կոռուպցիոն հանդուրժողականությունն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերում կամ փոքր քաղաքներում ծնված ուսանողների մոտ:

Ուսանողուհիների մոտ կոռուպցիոն հանդուրժողականությունն ավելի ցածր է, քան ուսանողների մոտ, քանի որ Հայաստանում, ավանդաբար, կանայք նվազ են բեռնավորված տնտեսական հարաբերություններին ինտենսիվ մասնակցելու պարտավորությամբ:

Այն բնութագրերը, որոնք նպաստում են անհատի հասարակական կարգավիճակի և բարեկեցության բարձրացմանը, միաժամանակ նպաստում են նաև կոռուպցիոն հանդուրժողականության աճին: Այսինքն՝ կարգավիճակի և բարեկեցության աճի գործոնները «երանգավորված են» կոռուպցիոն հակվածությամբ:

Կոռուպցիան հասարակական հաջողության ապահովման ունիվերսալ գործիք է: Որքան ցածր է կոռուպցիոն հանդուրժողականությունն ու հակվածությունը, այնքան փոքր է անհատի ընդգրկվածությունը սոցիալ-տնտեսական հարաբերություններում: Այլ խոսքերով՝ ***կոռուպցիոն անհանդուրժողականությունը բարձրացնում է անհատի մարգինալացման ռիսկը***:

Մասնավորապես, ավելի ***բարձր կրթական մակարդակ*** ունեցող ծնողների երեխաներն ավելի հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ:

Առավել ***բարեկեցիկ*** ընտանիքների երեխաներն ավելի հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ:

Ընտանիքի ***բարեկեցության աճը*** նպաստում է այդ ընտանիքի զավակների կոռուպցիոն հանդուրժողականության աճին:

Կանանց հակակոռուպցիոն պոտենցիալն ավելի թույլ է, քան ***հասարակության առևտրայնացման կոռուպցիոն պոտենցիալը***, որի հետևանքով կանանց ընդգրկումն ակտիվ հասարակական կյանքում ավելի շուտ կայլասերի կանանց բարքերը, քան կնպաստի կոռուպցիայի նվազեցմանը: Կանանց՝ բարոյական արժեքները կրող և վերարտադրող պոտենցիալն առավել արդյունավետ է օգտագործել ընտանիքի պաշտպանության համատեքստում:

Երիտասարդության աշխարհայացը կազմավորող հիմնական գործոնները և դրանց ազդեցության տակ կազմավորված շերտերը

Բացի ***առևտրայնացման*** գործընթացից, Հայաստանում ընթացող մյուս մակերևութային, բարձր էներգիայով ընթացող գործընթացներն են՝ ***ազգային զարթոնքը,*** որը շաղկապված է հայկական ավանդական արժեքների վերակենդանացման հետ և արտաքին ազդեցությունների տակ ընթացող՝ ***եվրոպական արժեքների և ինստիտուտների ներմուծումը***, որի ազդեցության տակ ձևավորվում են նաև քաղաքացիական հասարակության հիմնական սուբյեկտները՝ հասարակական կազմակերպությունները և միավորումները: Այս երկու գործընթացներն էլ ունեն կոռուպցիոն հանդուրժողականությունը նվազեցնող ազդեցություն:

Նշված երեք ***հիմնական*** գործընթացները փոխազդում են միմյանց հետ: Նրանց հետ շաղկապված բազմաթիվ, տարաբնույթ, մշակութային, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական և անհատական հոգեբանական տարբեր մակարդակներում ազդող հասարակական ուժերը (գործոնները) ուսանող երիտասարդության աշխարհայացքի ձևավորման տեսակետից արտահայտվում են 6 հիմնական գործոնների տեսքով: Դրանք են. ***Պրագմատիզմ, Եվրոպամետ լավատեսություն, Ազգային պահպանողականություն, Ակտիվ ժողովրդավարություն, Իշխանամետ քաղքենիություն և Ակտիվ սոցիալիստական դիրքորոշում***, որոնք ուսանողի մոտ առաջացնում են համապատասխան աշխարհայացքային դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումները կազմող առանցքային դատողություններն են.

Պրագմատիզմ՝ «Ինչ էլ որ ասեն ու խոսեն՝ այսօր ամեն ինչ վճռում է փողը», «Այսօր ոչ ոք օրենքներով չի շարժվում, այդ պատճառով

օրինապաշտ լինելը միամտություն և հիմարություն է», «Քանի որ մեզ մոտ հաստատվել է կապիտալիզմը, ուրեմն պետք է ապրել կապիտալիզմի օրենքներով՝ «հաղթում է ուժեղը», «Հայաստանում խոշոր գործարարները, բանկիրները և օլիգարխները ավելի ու ավելի մեծ ազդեցություն և իշխանություն են ձեռք բերում»:

Գործոնի ազդեցության աճը բերում է կոռուպցիոն հանդուրժողականության աճին:

Եվրոպամետ լավատեսություն՝ «Եվրոպայի հետ հարաբերությունների խորացումը առավել լուսավոր հեռանկարներ է ստեղծում Հայաստանի համար», «Հայաստանում արդեն կայացել է ազատ մամուլն ու խոսքի ազատությունը», «Հինգ - տասը տարի հետո Հայաստանը կլինի անհամեմատ ավելի զարգացած և բարգավաճ երկիր»:

Կոռուպցիոն հանդուրժողականության վրա գործոնի ազդեցություն չի նկատվել:

Ազգային պահպանողականություն՝ «Արյունով նվաճվածը փողով չի վաճառվում», «Եվրոպական արժեքների ներթափանցումը Հայաստան խարխլում է մեր ազգային նկարագիրը», «Ինչքան էլ քաղաքակրթվեն, միևնույնն է՝ թուրքը մնում է թուրք»:

Գործոնի ազդեցության աճը բարձրացնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը:

Ակտիվ դեմոկրատ՝ «Երիտասարդությունը պարտավոր է ակտիվորեն մասնակցել երկրում ընթացող հասարակական և քաղաքական իրադարձություններին», «Ժողովրդավարությունը պարտադիր պայման է Հայաստանը ժամանակակից ու բարեկեցիկ երկիր դարձնելու համար»:

Գործոնի ազդեցության աճը բարձրացնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը:

Իշխանամետ քաղաքենիություն՝ «Այսօր Հայաստանին անհրաժեշտ է կենտրոնացված և ավտորիտար կառավարումը», «Զանգվածային լրատվամիջոցները, օգտվելով խոսքի ազատությունից, ավելի շատ բամբասանքներ են տարածում, քան տալիս հավաստի տեղեկություններ», «Հայաստանում արդար ընտրություններ այլևս հնարավոր չեն»:

Կոռուպցիոն հանդուրժողականության վրա գործոնի ազդեցություն չի նկատվել:

Ակտիվ սոցիալիստական դիրքորոշման գործոն՝ «Սոցիալիզմից հրաժարվելով մենք ավելի շատ բան կորցրեցինք, քան շահեցինք», «Մեզ մոտ իշխանություններին քո խոսքը և դիրքորոշումը հասցնելու ամենաարդյունավետ ձևը ցույցերն ու միտինգներն են»:

Կոռուպցիոն հանդուրժողականության վրա գործոնի ազդեցություն չի նկատվել:

Այս որոշակիորեն միմյանց հակադրվող գործոնների ազդեցության տակ ձևավորվել են ուսանողական աշխարհայացքային շերտեր (տիպեր), որոնց աշխարհայացքային պատկերացումներում առկա են նշված գործոնների հակասական ազդեցությունների հետևանքները: Ուսանողության մոտ առաջացել են ***քիմերային*** (անհեթեթ, կոգնիտիվ դիսոնանս պարունակող) աշխարհայացքային (պատկերացումների և դիրքորոշումների) համալիրներ, մասնավորապես այդպիսիք են հետևյալ երեք ուսանողական շերտերը.

Պրագմատիկ ազգայնական ուսանողական շերտ: Այս ուսանողական շերտը ձևավորվել է հիմնականում պրագմատիզմ և ազգային պահպանողականություն գործոնների ազդեցության տակ: Շերտի աշխարհայացքային քիմերայնության առաջին ինդիկատորն է այն կազմավորող գործոնների հակադիր ազդեցությունը կոռուպցիոն հանդուրժողականության վրա: Բացի այդ, շերտի անդամների մոտ միաժամանակ առկա են և՝ առևտրայնացված, անձնապաշտական, հակաօրինական վարքի դիրքորոշումները, և՝ ընդհանրական [ազգային] բարոյականին առնչվող դիրքորոշումները:

Կոռուպցիոն հակադիր դիրքորոշումների [գումարային] փոխազդեցություններում «հաղթել է» պրագմատիզմը՝ խմբում կոռուպցիոն հանդուրժողականությունը միջինից բարձր է:

Իշխանամետ ժողովրդավար ուսանողական շերտ: Այս խմբում նկատելի են իշխանամետ քաղքենիություն, երիտասարդ դեմոկրատ և պրագմատիզմ գործոնների ազդեցությունները, որոնք էլ հենց պայմանավորել են խմբի աշխարհայացքային քիմերայնությունը: Այդ գործոնները բովանդակային տեսակետից զույգ առ զույգ հակադիր են: Մյուս կողմից՝ պրագմատիզմը նվազեցնում է կոռուպցիոն անհանդուրժողականությունը, իսկ երիտասարդ դեմոկրատ գործոնը՝ աճեցնում: Շերտի անդամների համար հատկապես անընդունելի է ***ազգային պահպանողականությունն*** ու ***ակտիվ սոցիալիստական*** դիրքորոշումը: Այս բնութագրերն արդեն մատնանշում են շերտում բազմակի ստանդարտների առկայությունը, որը թույլ է տալիս շերտին վերագրել ***ունիվերսալ ադապտիվություն:*** Այս շերտն իրենից ներկայացնում է Հայաստանի ներկա գաղափարախոսական քիմերայնության առավել համապատասխան արտապատկերումը:

Շերտն ունի միջինից բարձր կոռուպցիոն հանդուրժողականություն:

Եվրոպամետ լավատես ուսանողական շերտ: Այս շերտը կազմավորող հիմնական գործոնը համանուն՝ եվրոպական լավատեսություն

գործոնն է, որը լավատեսների մոտ որոշակիորեն զուգորդված է իշխանամետ քաղքենության հետ: Շերտի պատկերացումների ֆոնային ռեժիմում առկա է նաև որոշակի չափով ազգային պահպանողականությունը՝ «թուրքնը այնուամենայնիվ թշնամի է» և «արյունով հետ նվաճված Հայրենիքը, այնուամենայնիվ, չարժե փողով վերադարձնել», եվրոպական արժեքներն էլ, գուցե, որոշակի չափով «հակադրվում են ազգային արժեքներին և վտանգ ներկայացնում դրանց համար»: Այս ուսանողներն ունեն միջին մակարդակի պրագմատիզմ:

Ակտիվ ժողովրդավար ուսանողական շերտ: Սա միակ ուսանողական շերտն է, որի պատկերացումներում բացակայում է քիմերայնությունը: Շերտը կազմավորվել է հիմնականում ակտիվ ժողովրդավարություն գործոնի և, որպես դրան հենարան, ազգային պահպանողականություն գործոնի ազդեցության տակ: Շերտի երկու բնութագրիչներն էլ բարձրացնում են կոռուպցիոն անհանդուրժողականությունը և, բացի այդ, միտված են հանրային շահերի գերակայությանը: Ժողովրդավարությունը՝ հանրային կառավարման և հասարակական հարաբերություններում, իսկ ազգայնականությունը՝ արտաքին միջավայրի հետ հարաբերություններում: Այս շերտում մերժելի են իշխանամետ քաղքենիությունը և պրագմատիզմը: Շերտի իդենտիֆիկացման համար եվրոպամետ լավատեսության գործոնը չունի որևէ նշանակություն (ինչը համապատասխանում է ազգային պահպանողականություն գործոնի, որպես խմբային բնութագրիչի, բարձր արժեքների հետ):

Սա ***միակ ուսանողական շերտն է,*** որտեղ շատ բարձր է կոռուպցիոն անհանդուրժողականությունը:

Մարգինալ ուսանողություն: Այս ուսանողական շերտն առաջացել է առևտրայնացման գործընթացի ածանցյալ գործընթացների՝ հասարակության աղքատացման և գերշերտավորման արդյունքում: Այս խումբը բնութագրվում է պրագմատիզմի, երիտասարդական ժողովրդավարական ակտիվության և ազգային պահպանողականության բացակայությամբ, այսինքն՝ այն գործոնների և պատկերացումների դեֆիցիտով, որոնք պարունակում են ***որևէ մոտիվացիա:*** Նրանց մոտ որոշակիորեն ցածր է եվրոպական դիրքորոշման նկատմամբ վերաբերմունքը: Միակ գործոնը, որն ունի միջինից բարձր արժեք՝ ակտիվ սոցիալիստական դիրքորոշման գործոնն է, որը լինելով ընդամենը պոտենցիալ, որոշակի պայմանների դեպքում կարող է ակտիվացվել, մասնավորապես՝ ուսանողական շրջանակներում չգիտակցված մարքսիստական դիրքորոշումների առկայության պայմաններում:

Երիտասարդության հիմնական կենսաոճային շերտերը

Տարաբնույթ հասարակական գործընթացների հետևանքով տեղի է ունեցել նաև ուսանողական կենսաոճերի ձևափոխում, որտեղ գլոբալ ինֆորմացիոն դաշտի կարևորագույն բաղադրիչը՝ Ինտերնետը, արդեն դարձել է կենսաոճի ձևավորման հզոր գործոն: Ընդ որում, Ինտերնետի դիտարկված բոլոր տարաբնույթ կիրառությունները՝ հետաքրքրությունների բավարարում, մասնագիտական կատարելագործում, հաղորդակցության միջոց, ժամանց, աշխատանքի փնտրում, ծանոթությունների հաստատում, շաղկապված են կոռուպցիոն հանդուրժողականության աճի հետ:

Ուսանողների կենսաոճերում դիտվում են հասարակության ***առևտրայնացման, աղքատացման, ինֆորմատիզացման*** և ***դասական մտավորականության վերարտադրման*** գործընթացների ազդեցությունները, որոնց ազդեցության տակ ձևավորվել են ուսանողական հետևյալ կենսաոճային շերտերը:

Ոսկե երիտասարդություն: Այս շերտը ներկայացնում է ուսանողներին, որոնք ազատ ժամանակն անց են կացնում թանկարժեք և բարքերի ազատականացված զվարճավայրերում՝ կազինո, գիշերային ակումբ, ջազ-ակումբ: Մնացած գործոնների տեսակետից նրանք էականորեն չեն տարբերվում «միջին ուսանողից» (ընտրանքային միջինից):

Դասական մտավորականության շերտ: Սա այն ուսանողներն են, ովքեր շատ են կարդում գեղարվեստական և մասնագիտական գրականություն, այցելում են դասական մշակույթի հետ կապված վայրեր՝ համերգ, թատրոն, թանգարան, ցուցահանդես և ավելի քիչ են հաճախում համարյա բոլոր այլ զվարճավայրերը:

Եվրոպական վերնախավային ոճի ուսանողական շերտ: Այս շերտի հիմնական բնութագիրն այն է, որ նրանք ավելի հաճախ են այցելում ռեստորան, սրճարան, բար և կինո: Այս ուսանողների մոտ առկա է նաև դասական մտավորականի գործոնի ազդեցությունը՝ նրանք միջինից ավելի շատ են կարդում մասնագիտական և գեղարվեստական գրականություն, սակայն «դասականությունը» նրանց համար ***երկրորդական*** գործոն է և իր նշանակությամբ զիջում է դասական մտավորականության խմբում ընդգրկված ուսանողներին:

«Կիբեռ»-ուսանողություն: Այս ուսանողների մոտ ամենահատկանշական բնութագիրն այն է, որ նրանք շատ հաճախ են օգտվում Ինտերնետից և շատ հաճախ են այցելու Ինտերնետ-սրճարաններ: Այս ուսանողների ժամանցին բոլորովին բնութագրական չեն ***եվրոպական վերնախավային*** ուսանողության կենսաոճի տարրերը:

Քաղքենիացված ուսանողություն: Սա ուսանողական այն շերտն է, որն ամենից քիչն է զբաղվում մասնագիտական և գեղարվեստական ընթերցանությամբ, շատ քիչ է հաճախում համերգ, թատրոն, ցուցահանդես, թանգարան, սակայն միջինից ավելի շատ է հաճախում ռեստորան, բար և սրճարան, սակայն ոչ՝ ոսկե երիտասարդությանը բնորոշ ժամանցի վայրերը: Ընդ որում, սրանց համար ավելի բնութագրական է «դասականության դեֆիցիտը», քան «եվրոպականության պրոֆիցիտը»:

Մարգինալներ: Այս ուսանողների մոտ միջինից ցածր են բոլոր վեր հանված գործոնները: Հավանաբար սրանք առավել ցածր բարեկեցությամբ և գյուղական և փոքր քաղաքներում ծնված ուսանողներն են:

Կոռուպցիոն բարձր հանդուրժողականությունն առկա է ***ոսկե երիտասարդություն*** և ***քաղքենիացված ուսանողություն*** կենսաոճային շերտերում, որոնք հասարակության ***առևտրայնացման*** և դրա ածանցյալ գործընթացների արդյունք են:

Կոռուպցիոն անհանդուրժողականությունն ամենից բարձրն է ***Դասական մտավորականության*** և ***մարգինալ*** կենսաոճային շերտերում, որոնցից առաջինը դասական մտավորականության վերարտադրման գործընթացի, իսկ երկրորդը՝ հասարակության աղքատացման և շերտավորման գործընթացների արդյունք է:

«Կիբեռ» ուսանողության հետագա ձևափոխումն ըստ կոռուպցիոն հանդուրժողականության կախված է, մի կողմից, հասարակության կրթա-դաստիարակչական և ինֆորմացիոն քաղաքականությունների, իսկ մյուս կողմից՝ գլոբալ ինֆորմացիոն դաշտի էներգիաների և բովանդակությունների փոխահարաբերություններից և դրանց փոխազդեցություններից:

Ինֆորմացիոն հասարակություն պետք է մտնել դասական մշակույթի հիմքի վրա:

Որպես օրինաչափություն դուրս է բերվել, որ ***պրեստիժային բարեկեցության*** հետ զուգընթաց, աճում է նաև կոռուպցիոն հանդուրժողականությունը:

Ենթամշակութային պատկանելությունը և կոռուպցիոն դիրքորոշումը

Երևանի ուսանողության շրջանակներում կոռուպցիոն դիրքորոշումները համանման են դիրքավորված և՝ «եվրոպական», և՝ «ասիական» ենթամշակութային խմբերում: Կոռուպցիոն անհանդուրժողականությունը կարող է զարգանալ և՛ մեկի, և՛ մյուսի շրջանակներում՝

կախված այն բանից, թե ինչ բարոյական արժեհամակարգերի վրա են հիմնված «եվրոպական» կամ «ասիական» ենթամշակութային տիպերը:

Կոռուպցիայի նկատմամբ առավել անհանդուրժողական, սոցիալապես ակտիվ և կոնստրուկտիվ Երևանի ուսանողական խումբը ձևավորվել է «ասիականացման» (ազգային զարթոնք, ավանդական արժեքների վերականգնում) և «եվրոպականացման» (ժողովրդավարական նորմերի և ինստիտուտների կայացում) գործընթացների ***սիմբիոտիկ միավորման արդյունքում***:

Ուսանողության պոտենցիալ տնտեսական վարքը և աշխատավարձային սպասումները

Կոռուպցիան Հայաստանում ոչ միայն օբյեկտիվորեն է հանդիսանում հասարակական հաջողության ունիվերսալ գործիք, այլև այդպիսին է գնահատվում նաև ուսանողական պատկերացումներում և այդտեղ իր նշանակությամբ գերազանցում է հաջողության հասնելու ավանդական պատկերացումներին՝ աշխատասիրությանը, համբերությանը, տաղանդին և գիտելիքներին:

Ուսանողներն իրենց ապագան տեսնում են հիմնականում ***սեփական բիզնեսում, միջազգային կազմակերպություններում և պետական կառավարման մարմիններում:***

Ուսանողների համար ամենաանցանկալի աշխատանքային դիրքն է՝ «մասնավոր բիզնեսում վարձված մասնագետը, ինչն արտապատկերում է Հայաստանում առևտրայնացման գործընթացի առանձնահատկություններից մեկը՝ ***աշխատանքի անպաշտպանությունը բիզնեսի նկատմամբ:***

Ուսանողական պատկերացումներում հարստանալու ամենաարդյունավետ ուղին է՝ «Լինել պետական կառավարման մարմիններում և հնարավորինս ավելի բարձր դիրք գրավել»: Սակայն, այնուամենայնիվ, ուսանողների մոտ առկա է տնտեսական (աշխատանքային) երկու վարքագծային հակվածություն՝ ***կոռուպցիոն*** և ***քաղաքացիական:*** Առաջինն իրենից ներկայացնում է հաջողության և բարեկեցության հասնելու հետ կապված պատկերացումային համալիրում կոռուպցիոն վարքագծային մոդելների գերակայությունը (լինել պետական մարմիններում, զբաղվել անօրինական բիզնեսով, հարմարվել իրականությանը), իսկ երկրորդը՝ ավանդական և քաղաքացիական վարքագծային մոդելների գերակայությունը (աշխատասիրություն, տաղանդ, գիտելիք, ժամանակակից և օրինապահ բիզնես):

Ուսանողներն ունեն ավելի բարձր աշխատավարձային սպասումներ, քան ներկայումս հասարակությունը կարող է նրանց տրամադրել, ինչը պարունակում է կոռուպցիոն և միգրացիոն ռիսկեր: Միջին աշխատավարձային սպասումը, որի դեպքում ուսանողները կհամարեին, որ դա «բավարար է մոտակա 5 տարիների համար և ցանկության դեպքում կարող են նաև ամուսնանալ և երեխաներ ունենալ» կազմում է մոտ 700$: Սակայն այդ միջինը տատանվում է բավական մեծ միջակայքում:

Աշխատավարձային սպասումները նվազեցնող գործոններ են՝ սեռը (ուսանողուհիների աշխատավարձային սպասումները 1.5 անգամ ավելի ցածր են քան ուսանողներինը), ուսանողի ծննդավայրը (երևանյան ծագումով ուսանողների աշխատավարձային սպասումները 1.3 անգամ ավելի բարձր են, քան գյուղում կամ այլ քաղաքում ծնված ուսանողներինը), մասնավոր բիզնեսում աշխատելու պատրաստակամությունը (որն արտապատկերում է ուսանողի անվստահությունն իր հնարավորությունների նկատմամբ), որի աճի դեպքում նվազում է աշխատավարձային ակնկալիքը և ուսանողության աշխարհայացքային համալիրը ձևավորող ամենահզոր գործոնը՝ պրագմատիզմը, որն արտահայտում է ուսանողի մոտ ***առևտրայնացված հասարակության արժեհամակարգի ինտերիորիզացվածության աստիճանը*** և որի աճը մեծացնում է նաև աշխատավարձային ակնակալիքները:

Այդ բնութագրերի փոփոխության դեպքում ուսանողների աշխատավարձային սպասումների միջինը տատանվում է մոտ՝ 240-1140 սահմաններում:

Ուսանողական դիրքորոշումները հակակոռուպցիոն պայքարի նկատմամբ

Հակակոռուպցիոն պայքարի միջազգային փորձը ցույց է տվել, որ դրա հաջողության կարևորագույն գործոններից է հասարակության վստահությունը պետության և նրա կողմից այդ պայքարը մղելու մտադրության լրջության նկատմամբ, ինչպես նաև, հասարակության լայն մասնակցությունը հակակոռուպցիոն պայքարին:

Երևանի ուսանողությունը հակակոռուպցիոն պայքարի նկատմամբ դիրքորոշումների տեսակետից բաժանվում է երեք՝ համարյա հավասար խմբերի՝ ա) նրանք, ում այդ խնդիրը առանձնապես չի հետաքրքրում (ունեն կոռուպցիոն բարձր հանդուրժողականություն), բ) հակակոռուպցիոն պայքարի նկատմամբ թերահավատներ և գ) իրենց վստահությունը պայմանավորողները:

Վերջիններս բաժանվում են երկու, համարյա հավասար ծավալներ ունեցող ենթախմբի՝ նրանք, ովքեր իրենց վստահությունը պայմանավորում են օրենսդրական, տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումներով և նրանք, ովքեր այն պայմանավորում են կոռուպցիոներներին պատժելու գործողություններով:

Կոռուպցիոն բարձր անհանդուրժողականություն ունի միայն երրորդ խումբը:

Համակարգային կոռուպցիան և սոցիալ-տնտեսական զարգացումների հիմնական սցենարները

Հայաստանի հասարակության սոցիալական դինամիկան պայմանավորող գործոններն ու գործընթացներն ունեն միմյանց հակադիր բնույթ, որի հետևանքով աճում է հասարակության կառուցվածքի՝ վերջին 10-ամյակում ձևավորված քիմերայնությունը: Հայաստանում առկա սոցիալական դինամիկայի միտումները ստեղծել են այնպիսի իրավիճակ, որը նմանություններ ունի խորհրդային տարածքում անցումային գործընթացներին նախորդող իրավիճակի հետ և որում անհրաժեշտ է հստակեցնել դիրքորոշումը զարգացման երկու սկզբունքային սցենարների ընտրության հարցում:

Սցենար 1[81].

Ներկա միտումների պահպանման դեպքում հնարավոր է պահպանել տնտեսական աճի տենդենցները, սակայն այդ տնտեսական աճը չի առաջացնի կոռուպցիայի նվազեցման բավարար պայմաններ[82]: Հայաստանում սոցիալական ստատուսի բարձրացումն ապահովող բոլոր բնութագրերը, պահպանելով կոռուպցիոն հանդուրժողականությունը մեծացնող հատկությունը, միջնաժամկետ ապագայում կձևավորեն հայաստանյան վերնախավ, որն էլ ավելի հանդուրժող կլինի կոռուպցիայի նկատմամբ, քան այսօր:

Համակարգային կոռուպցիայի պայմաններում տնտեսական աճը կզուգորդվի Հայաստանի մարդկային ռեսուրսների նվազման միտումներով, երբ բնակչության սահուն նվազման փուլերը, կարող են

---

81 Ներկայացված է ստացիոնար սցենարը՝ տարածաշրջանային լուրջ ցնցումների բացակայության ենթադրությամբ:

82 Հատկանշական է, որ Հայաստանի տնտեսությունը ներկայումս զարգանում է ցածր աշխարհ-տնտեսական նիշայում դիրքավորման ուղով, որտեղ կոռուպցիան ոչ միայն չի խանգարում, այլև զարգացման խթան է հանդիսանում, այն է՝ տուրիզմ և գյուղատնտեսություն:

միջարկվել կտրուկ նվազման միջակայքերով: Բնակչության նվազումը պայմանավորված կլինի հիմնականում գյուղատնտեսության խոշորացման արդյունքում առաջացող ցածր կրթամակարդակ և աշխատանքային հմտություններ ունեցող ավելորդ մարդկանցով: Քաղաքային աշխատաշուկան չի կարողանա աբսորբացնել այդ աշխատուժը:

Հայաստանը կշարունակի էժան, սակայն, իրենց պատրաստման արժեքի համեմատ, որակյալ մասնագետների մատակարարումը զարգացած երկրներին՝ չկարողանալով ստեղծել դրանց ներքին կիրառման որևէ լուրջ հնարավորություն:

Անցումային գործընթացները կհավասարակշռվեն Ասիա-աֆրիկյան տնտեսվարման մոդելների որևէ տարատեսակում, որտեղ բալանս կառաջանա օլիգարխիկ վերնախավի, նրան կցորդ դարձած իրավազուրկ մանր սեփականատերերի և մարգինալացված, իրավազուրկ ու սեփականազուրկ հասարակության միջև: Համակարգային կոռուպցիան կլինի հասարակական գործընթացների համահարթեցման հիմնական գործիքը: Ձևով դեմոկրատական, էությամբ կոռուպցիոն պետական ինստիտուտներն արտաքին աշխարհի համար կիրականացնեն միմիկրիայի ֆունկցիան: Իրավազուրկ և սեփականազուրկ շերտի հաստատուն և, հանրապետության ընդհանուր բնակչության համեմատ, նշանակալից ծավալի առկայությունը կպահպանի ներքին ընդվզումների հաստատուն բարձր պոտենցիալը, իսկ ազգային կապիտալը չի ունենա ներպետական հենարան, որի հետևանքով Հայաստանը բաց կլինի արտաքին ազդեցությունների համար և ստիպված կլինի հրաժարվելու որևէ տարածաշրջանային ամբիցիաներից:

Ամենակարևոր բացասական արդյունքը կլինի Հայաստանի առավել բարձր աշխարհ-տնտեսական նիշայի անցման բացառումը: Հայաստանում կառաջանա աշխարհ-տնտեսական հարաբերությունների «շրջված բուրգ», որտեղ ավելի ազդեցիկ կլինեն առավել ցածր տնտեսվարման տեխնոլոգիաները. նախ՝ աֆրիկյան մոդելի օլիգարխացված հարաբերությունները, հետո՝ ասիական մոդելինը: Իսկ շուկայական հարաբերությունները կսահմանափակվեն բրոդելյան սահմանման շրջանակներում, որի առավել մոտ նմանակն է միջերկրածովյան շուկայական հարաբերությունները:

Սցենար 2.

Այլ ուղի կարող է դառնալ Հայաստանի տեղափոխումը ժամանակակից, առավել բարձր աշխարհ-տնտեսական նիշա՝ կենտրոնացնելով հայկական կապիտալները և Հայաստանի 3-4 ռազմավարական

ճյուղերում ստեղծելով գլոբալ բարձրտեխնոլոգիական իրական սեկտորում տնտեսվարող մի քանի սուբյեկտներ: Այս սցենարի ձեռնարկման հիմքը կարող է դառնալ համակարգային գործողությունների միջոցով Հայաստանում առկա համակարգային կոռուպցիայի կազմալուծումը և մարգինալացումը: Դրա համար անհրաժեշտ պայման է ներկայումս Հայաստանում հաստատված ***առևտրայնացված հասարակական արժեհամակարգի*** փոխարինումն այնպիսի արժեհամակարգով, որում միահյուսված են համամարդկային և ազգային ավանդական, կրոնա-բարոյական արժեքները և օրենքի գերակայությունը: Այդ արժեհամակարգի ներդրումը պետք է իրականացվի ազգային և համաշխարհային դասական մշակույթի ձեռքբերումների հիման վրա:

Մյուս կարևոր խնդիրը, որը հնարավոր է լուծել միայն առաջին խնդրի արդյունավետ ռազմավարությունների շրջանակներում, դա Հայաստանի օլիգոպոլացված տնտեսության նպատակադրման կոռեկցիան է:

Դրա համար անհրաժեշտ է հստակորեն սահմանազատել երկու հիմնադրույթային հասկացություններ՝

1. Գերհամակենտրոնացված և համակենտրոնացված կապիտալները ցանկացած տնտեսական ոլորտում գրավում են առավել բարձր տնտեսակարգային նիշա, քան շուկայական տնտեսության սուբյեկտներ հանդիսացող կապիտալները:

Հետևաբար, պետք է ընտրել այն մի քանի ոլորտները, որտեղ պետք է համակենտրոնացվեն հայկական կապտալները, այդ թվում՝ պետական, ներքին՝ մասնավոր և Սփյուռքի:

2. Կապիտալի համակենտրոնացումը նույնական չէ կապիտալի մոնոպոլացմանը կամ օլիգոպոլացմանը:

Կապիտալի մոնոպոլացումը կամ օլիգոպոլացումը, որը համարժեք է սեփականության մոնոպոլացմանը, միշտ ունի համընդհանուր հասարակականորեն բացասական ազդեցություն[83]: Իսկ կապիտալի համակենտրոնացումը նշանակում է դրանց կորպորատիվ կիրառում, որտեղ ներդաշնակեցված են սեփականության տարբեր ձևերը և այդ ձևերի միջև բաշխված են ***նպատակադրման, կառավարման, բաշխման և վերահսկման*** ֆունկցիաները: Կապիտալի համակենտրոնացմումը ունակ է ձևավորելու ոչ միայն ինովացիոն տնտեսվարման, այլև

---

[83] Եթե որոշակի ժամանակաշրջաններում և որոշակի պետություններում այդ բացասական ազդեցությունը չի նկատվում, ապա, որպես կանոն, դա հետևանք է այն բանի, որ դրանք արտամղվում են առավել ցածր աշխարհ-տնտեսական նիշաներ (նախկինում դրանք անվանվում էին գաղութներ):

ինովացիոն սոցիալական կառավարման տեխնոլոգիաներ և համակարգեր: Դրա որոշակի տարատեսակներ կարող են ***Հայաստանի հասարակության ամբողջ մարգինալացված շերտը (բնակչության մոտ 50%-ը) ինտեգրել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումներում, որպես որոշակի իրավունքներ և հնարավորություններ ունեցող սուբյեկտներ:***

Կապիտալի համակենտրոնացումը և նպատակադրումը Հայաստանում հնարավոր է միայն պետական առաջնորդությամբ՝ պայմանով, որ համապատասխանորեն նորացված է ազգային և պետական գաղափարաբանությունը:

Հայկական կապիտալների համակենտրոնացման ռազմավարական սկզբունքները:

1. Հայաստանի ներսում պետությունը պետք է արտամղի և կանխարգելի կապիտալի համակենտրոնացումը շուկայական տնտեսության նիշաներից և կանխարգելի արտաքին համակենտրոնացված կապիտալների ներխուժումը:

Դրանք որպես կանոն կենցաղային օգտագործման և/կամ գյուղատնտեսական ապրանքների արտադրության և դրանց մանր ու միջին առևտրի ոլորտներն են: Այդտեղ օլիգոպոլացումը առաջացնում է կիսաֆեոդալական հարաբերություններ և արգելակում է բոլոր այլ հարաբերությունների զարգացումը, այդ թվում՝ տնտեսական, քաղաքական, հասարակական և մշակութային: Կապիտալը «սահում է» դեպի պարզունակ արտադրական նիշաները, կոռուպցիոն տեսակետից տեղի է ունենում «պետության գրավում» բիզնեսի կողմից, անհնար է դառնում գիտության, կրթության և մշակույթի զարգացումը:

Սակայն՝ ինչպե՞ս է հնարավոր արտամղել մոնոպոլիաներն ու օլիգոպոլիաները շուկայական հարաբերություններին համապատասխանող տնտեսական ոլորտներից: Դրա համար, նախ՝ պետությունը պետք է ազգային խոշոր կապիտալին ***ցույց տա*** նրա զարգացման ուղին այլ նիշաներում և տարածքներում, որոնք՝ ըստ սահմանման, գտնվում են գլոբալ «շուկայում» և աջակցի այդ ուղու առաջխաղացմանը[84]:

2. Ժամանակակից բարձր տեխնոլոգիական և բարդ արտադրական տեխնոլոգիաներով ոլորտների նիշաներում պետությունը պետք է խրախուսի կապիտալի համակենտրոնացումը:

---

[84] Սա իրենից ներկայացնում է պետության հիմնարար և առանցքային գեոէկոնոմիկական ֆունկցիոն: Տես՝

Жан К., Савона П., Геоэкономика, “Ad Magnum”, Москва. 1997.

Այդ զարգացման ուղին և նիշան կարող են համոզիչ լինել բիզնեսի և հասարակության համար միայն կոնկրետ և լուրջ երաշխիքների դեպքում, իսկ այդպիսիք ***միշտ և ամենուր*** եղել են ***պետական ուղղակի ինվեստիցիաները:***

Այս տրամաբանական շղթան ենթադրում է.

3. Տնտեսության մեջ պետության դերի լուրջ վերանայում և նրա, որպես տնտեսական կարևորագույն սուբյեկտի, կարգավիճակի վերահաստատում:

Օլիգոպոլացման տարալուծման հաջորդ ռազմավարությունը [պարադոքսալ կերպով] դրանց օլիգոպոլիաների «բազմացումն է»: Եթե 5-15 խոշոր սուբյեկտները կազմավորում են օլիգոպոլիան, ապա դրանց կարգի կապիտալներով սուբյեկտների քանակի ավելացումը մինչև 100 և ավելի վերացնում է օլիգոպոլիան: Այդ ռազմավարության ներուժը ներկայումս Սփյուռքում է: Հետևաբար, անհրաժեշտ է այդ նպատակին համապատասխան կերպով մշակել դրա իրականացման գործիքը՝ ***երկքաղաքացիությունը:*** Սփյուռքի կապիտալների համար Հայաստանի Հանրապետությունը պետք է դարձնել ազգային-պետական հենարան, որպեսզի գլոբալ շուկաներում դրանք աշխատեն Հայաստանի համար: Սակայն դրա համար անհրաժեշտ պայման է ***վստահությունը*** հայկական կառավարող վերնախավի և սփյուռքահայ կապիտալների միջև:

Իսկ ինչպե՞ս է հնարավոր ձևավորել այդ վստահությունը:

Հավանաբար դա հնարավոր է, եթե ազգային վճիռների ձևավորման և դրանց իրականացման վերահսկման գործընթացներում մասնակցություն ունենա ազգային մտավորականությունը (անկախ իր բնակության վայրից), որը կրում և զարգացնում է գիտելիք և բարոյական արժեքներ, որն ունակ է կազմավորելու և հնչեցնելու ազգային շահը, ներդաշնակեցնելով այնտեղ մեծ և փոքր խմբային շահերը:

Դրա համար անհրաժեշտ է և՛ ոչ ձևական, և՛ ինստիտուցիոնալ կերպով կազմավորել այնպիսի ազգային փորձագիտական համակարգ, որն ունակ կլինի համախմբել ազգային մտավոր ներուժը[85]***:***

---

[85] Ազգային փորձագիտական համակարգի ձևավորման տեխնոլոգիայի տարբերակի մասին տե՛ս

Ս. Ա. Մանուկյանխ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կառավարման համակարգի տվյալների բազայի մշակման հայեցակարգը, Օքսֆամ ՄԲ, Երևանյան գրասենյակ, Երևան 2005:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. INDEM հիմնադրամի հակակոռուպցիոն հետազոտությունից վերցված հարցերի ցանկը

«Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում այն քանին, որ մեզ մոտ քաղաքացիներն իրենց հարցերը լուծելու համար հաճախ կաշառք են տալիս»:

- «Դա մեր կյանքի անբաժանելի մասն է, առանց դրա ոչինչ անել հնարավոր չէ»:
- «Դրանից կարելի է խուսափել, սակայն կաշառքները հեշտացնում են գործերի առաջ տանելը»:
- «Դրանից անհրաժեշտ է ազատվել, քանի որ կոռուպցիան, կաշառակերությունը այլասերում են հասարակությունը և իշխանությունը»:

«Ձեր կարծիքով, որքանո՞վ է կոռուպցիան, կաշառակերությունը տարածված Հայաստանում: Նշեք միայն մեկ պատասխան»:

- Պաշտոնատար անձանց մեծ մասը կաշառք է վերցնում:
- Կաշառք վերցնողների և չվերցնողների քանակները համարյա հավասար են:
- Պաշտոնատար անձանց փոքր մասն է կաշառք վերցնում:
- Դժվարանում եմ պատասխանել:

«Ի՞նչ եք կարծում, ավելի հաճախ ու՞մ նախաձեռնությամբ և ինչ պատճառով են մարդիկ կաշառք տալիս (նշել միայն մեկ պատասխան)»:

- Պետական պաշտոնյան կաշառք վերցնելու համար ստեղծում է համապատասխան իրավիճակ, ակնարկում է այդ մասին կամ ստիպում է:
- Քաղաքացիներն իրենք են դա նախաձեռնում:
- Երկու կողմերն էլ նախօրոք գիտեն, որ կաշառքը տվյալ իրավիճակում հարցի լուծման ընդունված ձև է:
- Հարցերի լուծման այլ ձևեր մեզ մոտ պարզապես չկան:
- Դժվարանում եմ պատասխանել:

«Կաշառակերության պատճառների վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Բերված կարծիքներից յուրաքանչյուրի համար նշեք, թե որքանո՞վ եք դրանց հետ համաձայն»: 1-ը նշանակում է բոլորովին

համաձայն չեմ, 5-ը նշանակում է լիովին համաձայն եմ: Հետո՝ աջ վանդակներում 1 և 2 թվերով նշեք Ձեր կարծիքով երկու ամենակարևոր պատճառները:

- Կաշառակերության, կոռուպցիայի արմատները շուկայական հարաբերություններն են:
- Կաշառակերությունն ու կոռուպցիան մեր ժողովրդի ավանդական հատկանիշներն են:
- Կաշառակերության ու կոռուպցիայի ավանդույթները մենք ժառանգել ենք խորհրդային հասարակարգից:
- Կաշառակերությունն ու կոռուպցիան բխում են մարդու էությունից:

«Հաճախ խոսում են այն մասին, որ եվրոպական որոշ երկրներում կաշառակերություն համարյա չկա: Ձեր կածիքով, ո՞րն է դրա պատճառը»: (1 և 2 թվերով նշեք երկուսից ոչ ավելի պատասխան)

- Այդ երկրների մշակույթը և ավանդույթները խոչընդոտում են կաշառակերությանը:
- Այնտեղ իրավապահ մարմիններն անկաշառ են, իսկ օրենքները՝ խիստ, կաշառակերներին անմիջապես հայտնաբերում են և պատժում:
- Բարձր կենսամակարդակի դեպքում կաշառքներ պետք չեն:
- Այնտեղ քաղաքացիները և գործարարները կախում չունեն պետական պաշտոնյաներից, որի հետևանքով կարիք չունեն թույլտվություններ գնել իրենց ամեն մի քայլի համար:
- Իմ կարծիքով կաշառակերությունն այնտեղ համարյա նույնքան տարածված է:

«Ենթադրենք, Ձեզ պատմել են մի մարդու մասին, որը իմանալով, որ իր ղեկավարը կաշառք է վերցնում այդ մասին դիմում է գրել դատախազություն: Ընտրեք այն բառերը, որոնք, Ձեր կարծիքով, առավել ճշգրիտ են բնութագրում այդ մարդուն (1 և 2 թվերով նշեք եկուսից ոչ ավելի պատասխան)»

- Նախանձ մարդ
- Տարօրինակ, գիժ մարդ
- Քաջ մարդ
- Ներգամիտ
- Դավաճան
- Ազնիվ մարդ

- Այլ
- Դժվարանում եմ պատասխանել

«Շատ երկրներում կաշառակերության դեմ պայքարում են կաշառքի դեպքերի վերաբերյալ քաղաքացիների անանուն հեռախոսազանգերով: Որքանո՞վ եք համաձայն հետևյալ կարծիքների հետ (Շրջանակի մեջ վերցրեք համապատասխան թիվը)»

- Այդ ձևը Հայաստանում չի գործի, քանի որ այն դեմ է մեր սովորություններին:
- Այդ ձևը չարժե կիրառել, քանի որ դա կփչացնի ազգային բարքերը:
- Կարելի է փորձարկել այդ ձևը և տեսնել, թե դրանից ի՞նչ կստացվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ուսանողության բնութագրերի ազդեցության չափը կոռուպցիոն անհանդուրժողականության մակարդակի վրա

Աղյուսակում տրված են Երևանի ուսանողության շրջանակում նրա տարբեր բնութագրերի ազդեցությունների չափը ուսանողության, որպես միասնական խմբի, կոռուպցիոն անհանդուրժողականության մակարդակի վրա:

Այստեղ ***Կոռուպցիոն անհանդուրժողականության մակարդակ*** հասկացությունը կիրառվում է որպես Երևանի ուսանողության այն հատվածի ծավալը Երևանի ամբողջ ուսանողության նկատմամբ, որի անդամները կոռուպցիայի նկատմամբ ունեն հետևյալ դիրքորոշումները՝

> «Կոռուպցիայից անհրաժեշտ է ազատվել, քանի որ կոռուպցիան, կաշառակերությունը այլասերում են հասարակությունը և իշխանությունը»,

ի տարբերություն ուսանողության այն հատվածների, որոնք համարում են, որ.

> «Կոռուպցիան մեր կյանքի անբաժանելի մասն է, առանց դրա ոչինչ անել հնարավոր չէ» կամ՝

> «Կոռուպցիայից կարելի է ազատվել, սակայն կաշառքները հեշտացնում են գործերի առաջ տանելը»:

Բնութագրերի ազդեցություններն իրենցից ներկայացնում են տարբեր ռեգրեսիոն մոդելներում դիտարկվող բնութագրի ռեգրեսիոն գործակիցները:

Բնութագրերի ազդեցության չափերը կիրառելի են ***այլ հավասար պայմանների դեպքում*** ենթադրությամբ: Այսինքն, տարբեր բնութագրերի ***փոխ***-ազդեցությունները կարող են առաջացնել ընդհանուր այնպիսի ազդեցություն, որում տվյալ բնութագրի ազդեցությունն աղավաղված է:

B – ռեգրեսիոն գործակից:

exp(B) – ռեգրեսիոն գործակցի էքսպոնենտը: Այն թույլ է տալիս գործակցի մեկնաբանությունը փոխադրել շանսերի համեմատության հարթություն:

Շանսը – նոմինալ բնութագրի (փոփոխականի) համար իրենից ներկայացնում է ուսանողի բնութագրի տվյալ կատեգորիայում գտնվելու դեպքում «ուսանողի կոռուպցիոն դիրքորոշումը = Այլասերում» վիճակի հավանականությունը: Անընդհատ բնութագրի դեպքում՝ ցույց է տալիս

բնութագրի մեկ միավոր աճի դեպքում «ուսանողի կոռուպցիոն դիրքորոշումը = Այլասերում» վիճակի շանսի փոփոխությունը բնութագրի նախորդ արժեքի համեմատ:

Sig. - գործակցի վիճակագրական նշանակալիցությունը: Նոմինալ բնութագրի դեպքում դույց է տալիս «ուսանողի կոռուպցիոն դիրքորոշումը = Այլասերում» վիճակի շանսի փոփոխության վիճակագրական նշանակալիցությունը 1:1 (կամ 50%:50%) շանսի նկատմամբ: Անընդհատ բնութագրի դեպքում ցույց է տալիս դրա միավոր փոփոխության դեպքում շանսի փոփոխության վիճակագրական նշանակալիցությունը:

Աղյուսակում աստղանիշով (*) նշված են անընդհատ բնութագրերը: Այդպիսի նշում չունեցող բնութագրերը նոմինալ փոփոխականներ են:

Բնութագիր	B	Sig.	exp(B)	Շանսը
Սեռ				
Կին	0.611	0.000	1.842	64.8%
Տղամարդ	0.036	0.816	1.037	50.9%
Բնակավայրի տիպ				
Գյուղ կամ փոքր քաղաք	0.758	0.000	2.135	68.1%
Երևան	0.176	0.148	1.192	54.4%
Հոր կարգավիճակը				
Բիզնես	0.101	0.501	1.106	52.5%
Փոքր բիզնես	0.446	0.049	1.562	61.0%
Մասնագետ	0.575	0.002	1.778	64.0%
Բանվոր, գործազուրկ, թոշակառու	0.875	0.004	2.400	70.6%
Հոր կրթամակարդակը				
Գիտական կոչումով	-0.057	0.866	0.944	48.6%
Բարձրագույն	0.262	0.025	1.300	56.5%
Միջնակարգ-մասնագիտական	0.936	0.000	2.550	71.8%
Միջնակարգ	1.344	0.003	3.833	79.3%
Կենսամակարդակ				
Չի հանգստացել արտասահմանում (Բարեկեցությունը մոտարկող փոփոխական)	0.490	0.000	1.633	62.0%
Հանգստացել է արտասահմանում	0.111	0.564	1.111	52.6%

Կենսամակարդակի փոփոխություն				
Կենսամակարդակի միավոր նվազումը*	0.176	0.000	1.119	11.9%
Կենսառճի գործոններ				
Գործոն 1. Ոսկե երիտասարդություն*	-0.279	0.008	0.757	-24.3%
Գործոն 2.Եվրոպական վերնախավային*	-0.165	0.089	0.848	-15.2%
Գործոն 3. Դասական մտավորական*	0.429	0.000	1.535	53.5%
Գործոն 4. Ինֆորմացիոն*	-0.164	0.092	0.848	-15.2%
Կոգնիտիվ պատկերացումներ				
Կաշառակերության ու կոռուպ-ցիայի արմատները մեր ժողո-վրդի ավանդական հատկանիշ-ներն են*	0.314	0.000	1.369	36.9%
Կաշառակերության ու կոռուպցիան բխում են մարդու էությունից*	-0.229	0.000	0.795	-20.5%
Աշխարհայացքային գործոններ				
Գործոն 1. Պրագմատիզմ*	-0.433	0.000	0.648	-35.2%
Գործոն 2 Եվրոպամետ օպտիմիզմ*	-0.062	0.540	0.940	-6.0%
Գործոն 3. Ազգային պահպանողական*	0.392	0.000	1.480	48.0%
Գործոն 4. Երիտասարդ ժողովրդավար*	0.4	0.000	1.491	49.1%
Գործոն 5. Իշխանամետ քաղքենի*	-0.134	0.190	0.874	-12.6%
Գործոն 6. Ակտիվ սոցիալիստ*	-0.106	0.290	0.899	-10.1%
Տնտեսական վարքի դիրքորոշման գործոններ				
Գործոն 1. Կոռուպցիոն վարքա-գիծ*	-0.335	0.000	0.715	-28.5%
Գործոն 2. Քաղաքացիական վարքագիծ*	0.326	0.000	1.385	38.5%
Աշխատանքային ոլորտի կողմնորոշում				

Գիտության և կրթության ոլորտ*	0.149	0.020	1.160	16.0%
Աշխատանք արտասահմանում*	-0.136	0.030	0.872	-12.8%
Աշխատավարձի ակնկալիք				
log(Սեփական աշխատավարձի ակնկալիք*)	-0.692	0.020	0.500	-50.0%
Հասարակության տիպը				
Լիբերալ	-0.482	0.083	0.618	38.2%
Սոցիալ-դեմոկրատական	0.464	0.016	1.591	61.4%
Մարքսիստական	0.549	0.000	1.731	63.4%

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ուսանողի աշխատավարձի ակնկալիքի մոդելը

Մոդել

Պարամետր	B	Std. Error	t	Sig.
Կոնստանտ	2.689	.045	59.2	.000
Սեռ	.189	.034	5.5	.000
Ծննդավայր	.113	.034	3.34	.001
Բիզնեսում որպես վարձու մասնագետ	-.026	.012	-2.2	.027
Պրագմատիզմ	.041	.017	2.4	.013

Ճշգրտված $R^2 = 0.295$

Կախյալ փոփոխականն *է ուսանողի աշխատավարձային սպասման տասնորդական լոգարիթմը:*

Սեռ *փոփոխականի բազային արժեքն է* ***Արական*** *1 և* ***Իգական*** *– 0*

Ծննդավայրը. *փոփոխականն ունի երկու արժեք՝* ***Երևան*** *– 1 և* ***Փոքր քաղաք կամ գյուղ*** *– 0 (բազային արժեք)*

Բիզնեսում որպես վարձու մասնագետ *փոփոխական արժեքները գտնվում են [1; 5] միջակայքում:*

Պրագմատիզմ *փոփխականի արժեքները գտնվում են [-4.25; 2.25] միջակայքում:*

Մոդելի կանխատեսումները

		Մոդելի գործակիցներ				Մոդել
	C	B_1	B_2	B_3	B_4	$Y=10^{**} (C+\Sigma B_i X_i)$
	2.689	0.189	0.113	-0.026	0.041	
		Պարամետրերի արժեքներ				Կանխատեսում
#	C	X_1	X_2	X_3	X_4	Y
1	2.689	0	0	5	-4.25	243
2	2.689	1	0	5	-4.25	375
3	2.689	0	1	1	-4.25	400
4	2.689	1	1	1	-4.25	618
5	2.689	0	0	5	0	362
6	2.689	1	0	5	0	560
7	2.689	0	1	1	0	597
8	2.689	1	1	1	0	923
9	2.689	0	0	5	2.25	448
10	2.689	1	0	5	2.25	692
11	2.689	0	1	1	2.25	738
12	2.689	1	1	1	2.25	1141

Կանխատեսումները տրված են աշխատավարձի լոգարիթմից՝ դեպի աշխատավարձի անվանական արժեքը անցումից (lg(Y) → Y) հետո:
C – Մոդելի հաստատունը:
B_1 – Ուսանողի սեռը: B_1=0 աղջիկ, B_1= 1 տղա:
B_2 – Ուսանողի ծննդավայրը: B_2=0 գյուղ կամ փոքր քաղաք, B_2= 1 Երևան:
B_3 - Բիզնեսում վարձու մասնագետ աշխատելու ցանկության աստիճանը: Նվազագույն արժեքը՝ B_3 =1, առավելագույն արժեքը՝ B_3 =5:
B_4 – Պրագմատիզմ գործոնով ուսանողի բեռնվածությունը: Ուսանողի մոտ պրագմատիզմի նվազագույն արժեքն է՝ B_4 = -4.25: ՈՒսանողի մոտ պրագմատիզմի առավելագույն արժեքն է՝ B_4 = 2.25: Պրագմատիզմի միջին արժեքը ամբողջ ընտրանքի համար՝ B_4 = 0:
Y – Ուսանողի կողմից ակնկալվող միջին աշխատավարձը պարամետրերի որոշակի արժեքների համախմբության համար, $:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՀՌԾ, Երևան, 2003:
2. ԱՌՌԾ Միջոցառումների ցանկ, Երևան, 2004:
3. Եգանյան Ռ., Կուլումջյան Կ., Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան, 2004:
4. Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. Հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Թրանսփերենսի ինթրնեյշնլ Հայաստանյան մասնաճյուղ, Երևան, 2002:
5. Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Տարածաշրջանային զարգացման կենտրոն, Թրանսփերենսի ինթերնեշնլ Հայաստանյան մասնաճյուղ, Երևան, 2002:
6. Հայացք տնտեսությանը, թիվ 11 (23), սեպտեմբեր, 2002 թ.
7. Հակակոռուպցիոն միջոցառումների հավաքածու, Հակակոռուպ-ցիոն ռազմավարությունների միջազգային փորձը. գիտական նյութերի հատընտիր, Երևան, 2005:
8. Հարությունյան Գ. ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003:
9. Մանուկյան Ս. Ա., Աղքատության հաղթահարման ռազմավարա-կան ծրագրի կառավարման համակարգի տվյալների բազայի մշակման հայեցակարգը, Օքսֆամ ՄԲ, Երևանյան գրասենյակ, Երևան, 2005:
10. ՄԱԶԾ «Աջակցություն տեղեկատվական հասարակությանը և ժողովրդավարական կառավարմանը» ծրագրի աջակցությամբ իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքներ:
11. Մանուկյան Ս. Ա. Անցումային գործընթացները հայ հասարա-կության մեջ, ձեռագիր, ուսումնասիրությունն իրականացվել է 2002թ.:
12. Մանուկյան Ս. Ա., Հարավկովկասյան մայրաքաղաքների հասա-րակությունների որոշ բնութագրեր, Տարածաշրջան, #2, «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2005թ.:

13. Մանուկյան Ս. Ա. ՀՀ տեղական ինքնակառավարումը քաղաքական մշակույթի և էթնոհոգեբանության համատեքստում: // Համայնքը և տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական հասարակության կայացման գործընթացում, Երևան, 2003:
14. Մասնավոր ձեռնարկությունները սպասարկող հանրային ծառայությունների մասին ձեռներեցների կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն, Հայ ժողովրդական ֆորում, Երևան, 2001:
15. Ռոուզ-Ակերման Սյուզան, Կաշառվածությունը և պետությունը, Երևան, 2004:
16. Տնային տնտեսությունները սպասարկող հանրային ծառայությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտություն, Հայ ժողովրդական ֆորում, Հաշվետվություն, Երևան, 2001:
17. Ֆեստինգեր Լ. Կոգնիտիվ դիսոնանսի տեսությունը // «Գիտափորձը կոգնիտիվ դիսոնանսում», Երևան, 2002:
18. Антикоррупционная политика, под. ред. Сатарова, ИНДЕМ, М., 2004.
19. Армянский интернет, Анив, #1, 2005.
20. Бродель Ф., Динамика капитализма. Смоленск, 1993.
21. Валлерстайн И., Реалии отктытого простарнства-времени: к пониманию нашей исторической системы., “Historical Systems as Complex Systems” In European Journal of Operational Research, XXX, 2, June, 1987.
22. Дилигенский Г.Г., Социальнополитическая психология, М., “Наука”, 1994.
23. Жан К., Савона П., Геоэкономика, “Ad Magnum”, Москва. 1997.
24. Манукян С.А., Факторная структура и модели этнополитических характеристик студенчества города Еревана, Ереван, 2002.
25. Манукян С.А., Геоэкономические аспекты Иракской войны, Վերլուծական տեղեկանք «Նորավանք» ԳԿՀ, 2003 թ.:
26. Найшуль В.А., Либерализм обычные права и экономические реформы, 1990
27. Парсонс Т., Понятие общества: компоненты и их взаимоотношения //Американская социологическая мысль., М., 1996.
28. Попов В.В., Государств, демократия и экономический рост, Семинар «Стратегия развития”, 29 сентября, 2003г

29. Радаев В.В., Шкаратан О.И., Социальная стратификация., М., “Наука”, 1995.
30. Сатаров Г., О новом подходе построения обобщенных социологичеких переменных., http://www.indem.ru/satarov/28_04_2000.htm
31. Arnold J. Heidenheimer. Perspectives on the Perception of Corruption // Political Corruption., 1986.
32. Atlas S.H. The Problem of Corruption. – Singapore: Times Book International, 1986.
33. Buchanan J.M., Tullock G., The Calculas of Consent, Logical Foundation of Constitutional Democracy, Ann Arbor, University of Michigan Press, 1962
34. Seize the State, Seize the Day: Stata Capture, Corruption and Influence in Transition Economies (World Bank Policy Research Group Working PAper 2444), September, 2000. J. Hellman, G. Jones and D. Kaufmann.
35. Syed Hussein Atlas S. H. The problem of corruption. Singapure: Pang Guck Cheng, 1986.